ԵՐԲ ԱՐԹՆԱՆՈՒՄ ԵՆ ԿԻՆ ԱՌՅՈՒՇՆԵՐԸ

Արթնացի՛ր եվ փոխի՛ր քո աշխարհը

ԼԻԶԱ ԲԻՎԵՐ

Սիրելի՛ բարեկամ,

Աստված նախասահմանել է, որ Իր դուստրերն առանձնանան իրենց նպատակով, ջերմեռանդությամբ և վարպետությամբ: Մեզանից շատերը երկար ժամանակ են անցկացրել ստվերում ննջելով: Այժմ Աստված կոչ է անում մեզ արթնանալ, վեր կենալ և փոխել աշխարհը: Դու ստեղծվել ես ստեղծագործական և ռազմավարական եղանակով քեզ շրջապատող աշխարհի վրա ներգործություն թողնելու համար:

«Երբ արթնանում են կին առյուծները» գիրքն Աստծուց ներշնչված խոսք է այն մասին, որ դու ծնվել ես այս ժամանակի համար: Այն բաները, որ Աստված խոսել է այս ուղերձի միջոցով, զորացրել և մարտահրավեր են նետել իմ կյանքի ամեն բնագավառում: Աշխարհով մեկ անթիվ քույրեր վկայում են այն մասին, որ, նրանք մտնում են ուժի և ծառայության նոր մակարդակի մեջ, երբ Աստված նրանց սրտերը լցնում է այս հայտնությամբ:

Մեծ սիրով և աջակցությամբ այս գիրքն ուղարկում եմ ձեզ և ձեր ծառայակից ավագներին: Խնդրո՛ւմ եմ, փոխանցեք այս գիրքը և մյուս հասանելի նյութերը բոլոր նրանց, ում ճանաչում եք: Ես հավատում եմ, որ «Երբ արթնանում են կին առյուծները» գիրքը ձեզ կպատրաստի նրան, որ կարողանաք ցրել խավարը, ազատել անհույսներին և վեր կենալ ու միանալ մյուսներին՝ Աստծո արքայությունը երկրի վրա հայտնելու համար:

Սիրելի՛ս, այս ուղերձն իմ կյանքում հավիտյան փոխել է սիրելու, տալու, առաջնորդելու և ծառայելու բնագավառները: Ես աղոթում եմ, որ դու նույնպես վերափոխվես, երբ այս գրքի էջերում փնտրես այն, ինչ Աստված Իր սրտում ունի քեզ համար: Ես կցանկանայի լսել, թե ինչպիսի ազդեցություն է այս ուղերձն ունեցել քեզ և քո խնամքի տակ գտնվողների վրա:

Ամենայն անկեղծությամբ,

Լիզա Բիվեր
LisaBevere@ymail.com

MESSENGER INTERNATIONAL
MessengerInternational.org

ԵՐԲ ԱՐԹՆԱՆՈՒՄ ԵՆ ԿԻՆ ԱՌՅՈՒՇՆԵՐԸ

ԼԻԶԱ ԲԻՎԵՐ

Գովեստի խոսքեր՝
«Երբ արթնանում են կին առյուծները» գրքի համար

«Գիրքը թույլ կտա ձեզ տեսնելու այն փառահեղ ուժը և գեղեցկությունը, որ Աստված տվել է յուրաքանչյուր կնոջ: Այն կարթնացնի ձեր մեջ էգ առյուծի սիրտը և կներշնչի ձեզ վեր բարձրանալու առօրյա հոգսերից ու ծառայելու Աստծուն նորոգված ջերմեռանդությամբ»:

– ՋՈՅՍ ՄԱՅԵՐ, հանրաճանաչ հեղինակ և Աստվածաշնչի ուսուցիչ

«Լիզա Բիվերը ոչ միայն ոգեշնչում է մեզ «մոնչացող» ճշմարտություններով, այլև ապրում է կին առյուծի կյանքով: Նա նվիրված քրիստոնյա է, անվեհեր մայր, համարձակ քարոզիչ և արտասովոր հեղինակ: *«Երբ արթնանում են կին առյուծները»* գիրքը կխանդավառի ձեզ կատարելու Աստծուց սահմանված ձեր դերը երկրի վրա Աստծո արքայությունը տարածելու գործում: Այն ամենահուզիչ գրքերից մեկն է, որ երբևէ կարդացել ենք»:

– ՋԵՅՄՍ և ԲԵՏԻ ՌՈԲԻՍՈՆՆԵՐ, *«Կյանքն այսօր»* հեռուստահաղորդում

«Գիրքը կօգնի ձեզ արթնացնելու մեծության այն սերմերը, որ Աստված դրել է ձեր ներսում: Ուրիշներին զորացնելու Լիզայի ջերմեռանդությունը կօգնի ձեր մեջ բացահայտելու այն արժեքը, նպատակը և զարմանալի պարգևները, որոնք կարող եք առաջարկել ձեզ շրջապատող աշխարհին»:

– ՎԻԿՏՈՐՅԱ ՕՍՏԻՆ, «Լեյքվուդ» եկեղեցու հովիվ, Հյուսթոն, Տեխաս

«Գրքում Լիզա Բիվերը նկարագրում է համոզիչ պատկերը այն ներդրման, որ լիովին արթուն քրիստոնյա կինը կարող է ունենալ իր ազդեցության ոլորտներում՝ անձնական կյանքից մինչև եկեղեցի և աշխարհ: Ովքեր կկարդան այս գիրքը, կոգեշնչվեն ճեղքելու իրենց կյանքի սահմանները և կառչելու Աստծո նպատակներից»:

– ՍԹՈՎԱԼ ՈՒԻՄՍ, «Տոնակատարություն» եկեղեցու ավագ հովիվ, Ջեքսոնվիլ, Ֆլորիդա

«Լիզա Բիվերը փող է հնչեցնում կանանց՝ ամենուրեք արթնանալու և կառչելու այն զորությունից, որ Աստված տվել է իրենց: Կյանքի ինչ փուլում էլ լինեք, այս գիրքը կօգնի ձեզ գիտակցելու ձեր ուժը, քաջությունը և այն ուղղությունը, որ Աստված դրել է ձեր առջև»:

– ԷԴ ՅԱՆԳ, «Ընկերակցություն» եկեղեցու հովիվ և *«Դու. ճանապարհորդություն դեպի քո արժանապատվության կենտրոն»* գրքի հեղինակ

«Լիզայի գիրքը Աստծուց ներշնչված խոսք է կանանց: Ժամանակն է թոթափելու ճնշումը, ազատվելու այն ամենից, ինչը ձեզ գերության մեջ է պահել, ընդունելու Աստծո շնորհքը և անելու այն, ինչ Նա ասում է անել»:

– ՇԵՐՈՆ ԴՈՀԵՐՏԻ, «Հաղթանակ» քրիստոնեական կենտրոնի ավագ հովիվ, Տալսա, Օկլահոմա

«Որպես Քրիստոսից տրված առաջադրանքի գործակից՝ Լիզա Բիվերը հիշեցնում է, որ կանացիությունը ներառում է սեր, հույս, ուրախություն և քնքշություն, ինչպես նաև քաջություն, ուժ և վստահություն: Այս գիրքը կհիշեցնի ձեզ, որ Աստված տեսնում է ձեր երազանքներն ավելի շուտ, քան դուք երբևէ կտեսնեք: Այն կխանդավառի ձեզ արթնանալու ձեր կոչման համար և տարածելու Աստծո թագավորությունը երկրագնդով մեկ»:

– ԲՐԱՅԱՆ և ԲՈԲԻ ՀՅՈՒՍԹՈՆՆԵՐ, «Հիլսոնգ» եկեղեցու ավագ հովիվներ, Ավստրալիա

«Այս գրքում Լիզայի միջոցով մենք կարող ենք զգալ Աստծո սիրտը, որը կոչ է անում կանանց վեր կենալ ուժով և մոլեգին զորությամբ և պատրաստ լինել ձեռքերը կեղտոտելու: Դադարե՛ք անվտանգության և ավանդույթի վարագույրի ետևում թաքնվելուց և թո՛ւյլ տվեք, որ Նա հաստատի ձեզ Իր թագավորության մեջ «այս ժամանակի համար»: Մենք չենք կարող թույլ տալ, որ ավելի երկար սպասենք. այնքա՛ն շատ բան է վտանգված»:

– ՌՈՆ և ԿԵՏԻ ԼՅՈՒՍԻՆԵՐ, «Դեռահասների մոլուցք» ծառայության հիմնադիրներ

«Երկրագնդի վրա ապրող յուրաքանչյուր կին պետք է կարդա Աստծուց ներշնչված այս ուղերձը. կոչ՝ արթնանալու և մարտահրավեր նետելու ներկա իրավիճակներին: Լիզան հիշեցնում է, որ մենք՝ որպես կանայք, լավագույնս դրսևորվում ենք, երբ մի կողմ ենք դնում մեր տարբերությունները և գործում ենք միասին՝ բերելով լուծումներ աշխարհի խնդիրներին»:

– ՆԵՆՍԻ ԱԼԿՈՂՆ, «Գթություն» ծառայության հիմնադիր և նախագահ

«Անդիմադրելի և մտածելու տեղիք տվող. *«Երբ արթնանում են կին առյուծները»* գիրքը մարտահրավեր կնետի ձեզ լինելու այն, ինչ Աստված նախատեսել է, որ լինեք»:

– ՄԱՐԳԱՐԻՏ ՖԵՅՆԲԵՐԳ, «Սուրբ արձագանք» և «Աստվածայինի որոնումներում» գրքերի հեղինակ

«Լիզա Բիվերի աղոթքն է, որ այս գիրքը կարդալիս ինչ-որ մոլեգին, գեղեցիկ և վայրի բան արթնանա ձեր մեջ: Այս գիրքն արժանի է իր վերնագրին, քանի որ Լիզան մեկն է, ով աշխարհն ավելի լավ վայր է դարձնում»:

– ԴԻՆՈ ՌԻԶՈ, «Բժշկության վայր» եկեղեցու ավագ հովիվ

«Ձեր ներսում հույս կարթնանա, երբ պատկերացնեք, թե ինչ կարող է պատահել, եթե յուրաքանչյուր կին լիովին արթնանա պատմության իր ճիշտ ժամին: Կարդացեք այս գիրքը և արթնացրեք ձեր ներսի կին առյուծին»:

– ՇԱՐԼՈՏ ԳԵՄԲԻԼ, «Գուրգուրանք» կանանց ծառայության հիմնադիր և նախագահ, «Լիառատ կյանք» եկեղեցու հովվի օգնական, Մեծ Բրիտանիա

«Այս գիրքը թուլասիրտների համար չէ: Այն կոչ է կանանց՝ գործի անցնելու, թևքերը քշտելու, ձեռքերը կեղտոտելու և ոտք դնելու այս աշխարհի ցավի մեջ՝ բերելով Հիսուսի բժշկարար հպումը նրանց, ովքեր ծեծված են, խորտակված և կոտրված: Եթե հոգնել եք՝ ցանկանալով այն, ինչ չունեք, և պատրաստ եք ներդնելու ձեր կյանքը ու տալու այն, ինչ ունեք, ապա այս գիրքը ձեզ համար է»:

– ՄԵՐԻԼԻՆ ՍԿԻՆԵՐ, «Վատոտոյի մանկական խնամք» ծառայության համահիմնադիր

«Կին առյուծի մասին Լիզայի հայտնությունը և՛ պատեհա-

ժամ է, և կարևոր: Ամբողջ երկրագնդի վրա ականատես ենք լինում Աստծո համարձակ, գեղեցիկ կանանց բարձրացող սերնդի: Ոչ միայն սա, այլև կին առյուծների խմբի, որոնց ուժն ու վստահությունը վերականգնվում են Սուրբ Հոգու զորության և եկեղեցու բժշկարար սրբարանի միջոցով: Ոչ թե իշխանատենչ, այլ սիրող, խնամող կին, որը գիտի իր արժեքը և համապատասխանաբար քայլում է այս երկրագնդի վրա: Ոչ թե ամաչկոտ, երկչոտ արարած, այլ կին՝ սրտի նոր երգով, Քրիստոսում արմատական ազատության երգով: Այս խիզախ հաղթողը *հենց կին առյուծն է, որն արթնանում է:* Այս անդիմադրելի գիրքը բոլոր կանանց համար է, որոնք փափագում են լինել պատասխան այսօրվա աշխարհում: Թող որ գտնեք ձեր ներքին «մռնչոցը», երբ Լիզան առաջնորդի ձեզ դեպի Հուդայի ցեղի Ահեղ Առյուծը՝ իսկական Ասլանը՝ Հիսուս Քրիստոսը»:

– ՔՐԻՍ ՓՐԻՆԳԼ, «C3» եկեղեցու ավագ ծառայող

«Այս գիրքը ցույց է տալիս Լիզա Բիվերի՝ Աստծուց տրված կարողությունը՝ լույս սփռելու հոգևոր սկզբունքների վրա՝ ներկայացնելով մի աշխարհ, որտեղ կանայք բարձրանում են որպես վայրագ և գեղեցիկ կին առյուծներ, ինչպիսին ստեղծված են լինելու»:

– ՔՐԻՍՏԻՆ ՔԵՅՆ, «Զինել և լիազորել» ծառայության ղեկավար, «A21» քարոզարշավի հիմնադիր

««Երբ արթնանում են կին առյուծները» գրքում Լիզա Բիվերը մեր ուշադրությունը հրավիրում է կնոջ վայրագ, պաշտպանողական կողմերին և ցուցադրում կնոջ զորությունը իր և իր սիրելիների նախասահմանության համար պայքարի գործում: Թող նա սովորեցնի ձեզ, թե ինչպես գործեք Աստծո շնորհքի զորությամբ, որպեսզի չդառնաք հիասթափության և կոտրված երազանքների «զոհը», այլ «ընդունեք զորություն, լցվեք քաջությամբ և փոփոխություն բերեք աշխարհում»:

- ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՈՐՏՆԻ ՄԱԿԲԵՏ, «Գողգոթա» արթնության եկեղեցու ավագ հովիվ, Նորթֆոլկ, Վիրջինիա

ԵՐԲ ԱՐԹՆԱՆՈՒՄ ԵՆ ԿԻՆ ԱՌՅՈՒՑՆԵՐԸ

Արթնացի՛ր եվ փոխի՛ր քո աշխարհը

ԼԻԶԱ ԲԻՎԵՐ

Lioness Arising, by Lisa Bevere, Armenian
© 2022 Messenger International
MessengerInternational.org
Originally published in English as Lioness Arising

Additional resources in Armenian are available
for free download and video streaming at
MessengerX.com and on the **MessengerX** App
To contact the Author: LisaBevere@ymail.com

This book is a gift from Messenger International and is
NOT FOR SALE

«Երբ արթնանում են կին առյուծները», Լիզա Բիվեր, հայերենով
© 2022 Messenger International
MessengerInternational.org
Սկզբնապես հրատարակվել է անգլերենով, «Lioness Arising»
վերնագրով

Հավելյալ նյութեր հայերենով հասանելի են
անվճար ներբեռնման և հոսքային հեռարձակման համար
MessengerX.com կայքում և **MessengerX** հավելվածում:
Հեղինակի հետ կապ հաստատելու համար. LisaBevere@ymail.com

Այս գիրքը նվեր է «Messenger International» ծառայության կողմից և
ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ

GET IT ON Google Play Download on the App Store

App Store-ը Apple Inc.-ի ապրանքանիշն է, որը գրանցված է ԱՄՆ-ում և այլ երկրներում:
Google Play-ը և Google Play-ի պատկերանիշը Google LLC- ի ապրանքանիշերն են:

Իմ բոլոր քույր առյուծներին,
ովքեր զգում են, որ իրենց ներսում ինչ-որ
վայրի և մոլեգին բան է արթնանում:

Դու հիասքանչ ես:
Դու ծնվել ես այս ժամանակի համար:
Մի՛ վախեցիր քո ուժից, հարցերից կամ մտքերից:
Զարթնի՛ր, վե՛ր կաց և համարձակվի՛ր իրականաց-
նել այն ամենը, ինչի համար ստեղծվել ես:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Արթնացրո՛ւ կին առյուծին 13
2. Անտեսանելի ուժ 31
3. Արթուն և վտանգավոր 51
4. Ահի և զարմանքի միասնություն 73
5. Ուժը ծառայության համար է 95
6. Նույն առաքելության ներքո 109
7. Ողջունել և խնամել 133
8. Էգ առյուծները ռազմավարական են 149
9. Էգ առյուծներն ապրում են լույսի մեջ և որս են անում խավարում 173
10. Քայլել առյուծի հետ 209
11. Շշնջոցից՝ մռնչոց 225

Նշումներ 245

1

Արթնացրու՛ կին առյուծին

«Բնությունը ստեղծված է, որպեսզի գաղտնի կերպով համաձայնության գա հոգու հետ և ազատագրի մեզ»:

ՌԱԼՖ ՈՒԱԼԴՈ ԷՄԵՐՍՈՆ

1994 թվականն էր: Այդ գիշերը ոչնչով չէր տարբերվում իմ կյանքի այդ ժամանակաշրջանի մյուս գիշերներից: Տունը կարգի բերելու անհաջող փորձերից հետո սովորականից ավելի ուշ էի անկողին մտել: Այդ օրերին ես շատ խորն էի քնում, քանի որ ունեի երեք փոքր որդի և պատրաստվում էի լույս աշխարհ բերել չորրորդին: Հենց աչքերս փակում էի, անմիջապես քնում էի, և միայն արթնանում էի կա՛մ զարթուցիչի և երեխաների ձայնից, կա՛մ էլ սենյակ թափանցող արևի լույսից: Բայց այդ գիշեր քնեցի և արթնացա արշալույսին. ես ամբողջ էությամբ ցնցվում էի, քանի որ մի պայծառ և անսովոր երազ էի տեսել: Իրականում, եթե երազ անվանենք, կնշանակի, որ դա քնի մեջ եմ տեսել պատկերների և ստվերների տեսքով: Բայց դա այնպիսի երազ չէր, ինչպիսին սովորաբար տեսնում եմ: Քնած ժամանակ կարծես հայտնվեցի բոլորովին արթուն վիճակում: Իմ առջև մի տեսարան էր բացվել, որը գտնվում էր մեկ այլ վայրում, մեկ այլ ժամանակի մեջ, և ես զգացի, որ այլևս չեմ քայլում երկրային ճանապարհներով: Ես կանգնած էի մի

երկնային տիրույթում, որտեղ պայծառ, բայց ոչ շլացուցիչ լուսավորություն էր տիրում:

Ամենուրեք լույսի շողեր էին արձակվում, և ոչ մի մշուշ կամ ստվեր չկար, այլ միայն սքանչելի գույն էր երևում: Այդ կենդանի գույնով հագեցած երանգներն այնպիսի խիտ ստվերներից էին կազմված, որ դրանց անվանում տալ չեմ կարողանում: Գունանյութերը շերտավորված էին և տարածված էին ամենուրեք: Չգիտես ինչու, բայց շատ լավ հիշում եմ մանուշակագույնի (ոչ մեր իմացած) և կապույտի (կրկին՝ ոչ մեր իմացած) երանգները: Այնտեղ ո՛չ ծայր կար, ո՛չ սահման, մինչդեռ գունային ֆոնը պատում էր անբիծ, բաց շագանակագույն մի բարձր հարթակ, որի վրա հենվել էր մի ոսկեգույն էգ առյուծ: Նա կատվազգիների ընտանիքին պատկանող կենդանու կատարելություն էր՝ վեհապանծ, հզոր և հարուստ կառուցվածքով: Նա չէր շարժվում, բայց ես նույնիսկ կասկած չունեի, որ կենդանի էր. ավելի կենդանի, քան որևէ երկրային արարած, որ շարժման մեջ տեսել եմ: Առյուծի գլուխն ուղիղ էր, բայց ոչ՝ ձգված, իսկ նրա առջևի ոտքերն առաջ էին տարածված: Նրա մորթին ու աչքերը ոսկեգույն լույս էին շողարձակում: Նրա անթերի, բաց դարչնագույն մորթու տակից կարելի էր նշմարել կատարելապես ձևավորված մկանների ամեն մի կորությունը: Այս ապշեցուցիչ և հանգիստ էգ առյուծը շատ ավելի իրական, ցայտուն և կենդանի էր, քան մեր երկրի վրա բնակվող առյուծները: Ես չէի կարող չմտածել, որ նայում էի երկնային մի նախատիպի:

Անթերի հարթակի առջևի մասում փորագրված էր մեկ բառ և մեկ հռոմեական թիվ՝ Թվոց XXIII:

Էգ առյուծի համեմատ իմ կերպարանքը թվում էր թափանցիկ, աննշան և տարօրինակ: Ես կարծես անջատվել էի իմ մարմնից և անտեղյակ էի իմ հղիությունից: Ես գիտեի, որ այնտեղ եմ գտնվում, որպեսզի նայեմ, տեսնեմ և ուշադիր զննեմ, և այդ անելով՝ սովորեմ մի չգիտակցված բան: Ես գիտեի, որ անհրաժեշտ է հասկանալ այդ պատկերի կարևորությունը: Չնայած որ Էգ առյուծի հետ ես մենակ էի, այնուամենայնիվ, ոչ մի տագնապ կամ սպառնալիք չէի զգում, այլ վերապրում էի միայն զարմանք և հիացմունք: Հոգիս կարծես ընդարձակվում էր և կապ էր հաստատում այդ տեսարանի

հետ: Ես հնարավորինս կլանում էի այն ամենը, ինչ կատարվում էր իմ շուրջը, բայց հանկարծ ուշադրությունս շեղվեց, և նայեցի ուղիղ էգ առյուծի աչքերին: Այդ պահին իմ ետևից ինչ-որ ձայն լսվեց. *«Այս որդու ծնունդով դու կարթնացնես կին առյուծին»*:

Ոսկեգույն լույսը, մեծափառությունն ու հիացմունքը հետզհետե նվազեցին, և ամեն բան ավարտվեց. արդեն առավոտ էր, և ես լիովին արթուն էի: Բոլոր զգայարաններս արթուն վիճակում էին, բայց ոչ թե վախից, այլ՝ ցնցված լինելուց. այս ինչի՞ ականատեսը ես հենց նոր դարձա... Որոշ ժամանակ անց այն համոզման էի, որ մեր երկիրը ժամանակով սահմանափակված է, այն աղոտ կերպարանքն է կամ մասնակի հայտնությունը նրա, ինչը ինքնատիպ, անվերջ և ամբողջական է Երկնքում:

ՎԵՐ ԿԱՑ ՈՐՊԵՍ ԿԻՆ ԱՌՅՈՒԾ

Երբ լուսաբացին արթուն պառկած էի անկողնումս, և սիրտս արագ բաբախում էր, ու մարմինս դողում, հանկարծ զգացի, որ Աստված էգ առյուծի տեսիլքն ինձ ուղարկել էր այն պատճառով, որ հայտներ մի բան, որը հեշտությամբ կարող էի բաց թողնել առօրյա անցուդարձի մեջ: Այն գրավել էր իմ համակ ուշադրությունը, և ես լսում էի՝ լարելով բոլոր զգայարաններս: Իմ սենյակը չոր ու դատարկ էր թվում այն գույների աշխարհի համեմատ, որտեղից նոր էի վերադարձել: Երկրի վաղորդյան ձայները տարաշխարհիկ ինչեղ ձայնի համեմատ ավելի խուլ էին հնչում: Ես կանգ առա՝ վախենալով շարժվել ու կորցնել տեսիլքի վերջին նշույլները: Ես փակեցի աչքերս. բոլորն այնտեղ էին՝ էգ առյուծը, հարթակը, գրվածքը, ետնամասը և ձայնը:

Անցավ որոշ ժամանակ. երբ սիրտս հանդարտվեց, և մարմինս խաղաղվեց. ես բացեցի աչքերս: Հարթակի առաջամասի փորագրությունը շատ հետաքրքրեց, ուստի վերցրի Աստվածաշունչը: Ինձ հետաքրքիր էր՝ արդյո՞ք դա որևէ կապ ուներ սուրբգրային գլխի կամ համարի հետ: Եթե այո, ապա ի՞նչ էր գրված Թվոց 23-րդ գլխում: Էջերը թերթելիս՝ սիրտս նվաղեց, և երբ կարդացի վերնագիրը, ես հասկացա, որ այդ

հատվածը վերաբերում էր Բաղաամի մարգարեությանը: Ես գիտեի, որ նա ճիշտ, սակայն անպատիվ մարգարե էր: Ես սկսեցի կարդալ՝ առանձնապես ոչինչ չզգալով, մինչև որ հասա 19-րդ խոսքին.

«Աստված մարդ չէ, որ սուտ խոսի,
Ո՛չ էլ՝ մարդու որդի, որ զղջա.
Մի՞թե կասի և չի անի,
Կամ՝ կխոսի և չի կանգնեցնի:
Ահա հրաման առա՝ օրհնելու, և Ինքը օրհնեց,
Եվ ես ետ չեմ դարձնի:
Հակոբի վրա անօրենություն չզննեց,
Ո՛չ էլ անզգամություն տեսավ Իսրայելի վրա.
Նրա Եհովա Աստվածն իր հետ է.
Եվ նրա մեջ թագավորի ցնծության ձայն կա,
Աստված է Եգիպտոսից նրանց հանողը.
Միեղջերուի պես զորություն ունի նա,
Դրա համար Հակոբի դեմ կախարդություն չի լինի,
Եվ Իսրայելի դեմ՝ դյութություն.
Հակոբին և Իսրայելին կասվի ժամանակին,
Թե՝ Աստված ինչ՞ եր արեց» (Թվոց 23.19-23):

Այս խոսքերն այնքան շատ բան են ասում Աստծո հավատարմության մասին:

Նրա տված խոստումները հաստատ են և վստահելի, իսկ օրհնություններն՝ անփոփոխ: Աստծո հավատարմության շնորհիվ Իսրայելն ուներ անվտանգ և կախարդության ու անեծքի վարակիչ հետևանքներից ազատ ապագա: Այս ամենը հուսադրող էր, բայց Թվոց 23-ի հաջորդ խոսքն առանձնահատուկ գրավեց ուշադրությունս.

«Ահա այս ժողովուրդը մատակ առյուծի (անգլ.-ում՝ էգ առյուծի) պես պիտի վեր կենա
Եվ առյուծի պես պիտի բարձրանա.
Չի պառկի, մինչև որ որսը ուտի
Եվ սպանվածների արյունը խմի» (Թվոց 23.24, NLT):

Դողը սրտումս՝ կրկին կարդացի նուրբ թղթի վրա տպված հուժկու խոսքերը. *«Էգ առյուծի պես պիտի վեր կենա և առյուծի*

պես պիտի բարձրանա»: Այդ հուզիչ պատկերը կլանեց ինձ. ես տեսնում էի արու առյուծին և նրա էգին, որոնք բարձրանում էին խոտերի միջից: Եվ երբ նրանք բարձրացան, հարթավայրի դինամիկան այդ խաղաղ վիճակից վերածվեց հուզումնալից վիճակի: Յուրաքանչյուր կենդանի արարած զգում էր առյուծների դիրքի փոփոխությունը և ուշադիր հետևում էր նրանց. ոսկեգույն կենդանիներն արթնացել էին: Նրանք ձգվում էին, ստուգում, թե ինչ է տեղի ունենում մթնոլորտում և հետազոտում էին իրենց տարածքը, որպեսզի կարողանան տեղաշարժվել: Առյուծները հավանաբար քաղցած էին: Միգուցե նրանք անհանգստացած էին թշնամու ներկայությունից, որը խախտել էր նրանց տարածքի նշված սահմանները, և այժմ ժամանակն էր, որպեսզի առյուծները ցույց տային, որ իրենք այդտեղ են:

Այն պահից, երբ նրանք վեր կացան, լարվածությունն ուժեղացավ այնքան ժամանակ, քանի դեռ նրանք չէին դադարել շարժվել: Եթե առյուծներն անհանգիստ էին, ապա մյուս կենդանիները նույնպես հանգիստ չունեին: Նրանք չէին հանդարտվի այնքան ժամանակ, քանի դեռ առյուծների պայքարը կամ ճաշկերույթը չէր ավարտվել:

Երբ նրանք վեր կացան, հոգումս զգացի նրանց ուժի զորությունը: Ո՞վ չի սարսափում և հիանում, երբ արու կամ էգ առյուծը բարձրանում ու տեղաշարժվում է իր հանգիստ դիրքից: Դա մի հրաշք տեսարան էր, որ պարզապես պետք էր նայել, բայց, թե ի՞նչ կապ ուներ դա ինձ հետ… Ինչպե՞ս ես կարող էի որևէ կերպ կապ ունենալ այդ վայրի, ոսկեգույն և հզոր արարածների հետ:

Բացի սարսուռ զգալուց, պատկերը նաև վանում էր: Ինձ դուր էր գալիս այն գաղափարը, երբ էգ առյուծներն արևի տակ նիրհում էին, մինչև նրանց կորյունները չարաճճիություններ էին անում, սակայն որսալու և սպանելու պատկերները վախեցնում էին ինձ, նույնիսկ, զզվանք էին առաջացնում:

Երբ դիտում էի *«Ազգային աշխարհագրություն»* կամ *«Վայրի թագավորություն»* հաղորդումները, այն պահին, երբ մեծ կատուները կուլ էին տալիս իմպալաներին ու զեբրերին, ես աչքերս մի կողմ էի տանում: Եվ այս մտքերով տարված՝ վերհիշեցի գիշերային տեսիլքի խոսքերը. «Այս որդու ծնունդով դու

կարթնացնես կին առյուծին»: Ի՞նչ կարող էր դա նշանակել: Ես ոչ մի կապ չէի տեսնում հզոր, անվախ էգ առյուծի և անկողնում պառկած ծանրաքաշ և հղի կնոջ միջև: Ասել, որ ես կին առյուծ էի, ծիծաղելի էր թվում: Ես թոֆու (սոյայից կաթնաշոռ) ուտող և բուսակեր մի կին էի, և ոչ թե արյունախում գիշատիչ, և սարսափում էի իմ վերահսկողությունից դուրս գտնվող գրեթե ամեն ինչից, բայց մեծ մասամբ վախենում էի այն մարդկանցից, ում հանդիպում էի: Ես հայտնաբերել էի, որ ինձ հատկապես վախեցնում էին ուժեղ և իշխող կանայք:

Իմ հղիությունն ինչ-որ առումով ժամանակավոր թեթևություն էր ինձ համար, և հղիանալուց մի քանի ամիս առաջ, երբ ջերմեռանդ աղոթք էի անում՝ փորձելով մի կողմ դնել իմ բոլոր բողոքները՝ Աստծուն ասացի. «Շա՛տ լավ, շա՛տ լավ, ես Քո՛ննն եմ: Իմ կյանքում արա այնպես, ինչպես Դու ես ուզում: Ես կանեմ այն, ինչ Դու ես ցանկանում, և նույնիսկ կխոսեմ կանանց հետ, եթե այդպես ես ուզում»: Չնայած որ այդ ժամանակ ես գաղափար չունեի, թե ինչ էի ասում:

Եվ երբ հղիացա, հասկացա, որ իրավիճակն արմատապես փոխվեց: Ես պատկերացրի, որ իմ պատրաստակամությունն ու Աստծո տված հանձնարարությունը քննության նման մի բան էր, ինչպես Աբրահամի համար՝ իր միակ որդուն՝ Իսահակին զոհաբերելու հոժարությունը: Հավանաբար ես բոնուս կստանայի իմ հոժարակամ լինելու համար և երբեք ստիպված չէի լինի հետևել իմ խոստումի իրականացմանը: Բայց ինձ թվաց, որ այս տեսիլքով իմ նախահղիության գործարքը դեռ պահպանվում է:

Իսկ այն խոսքը, որ որդի էի ունենալո՞ւ…

Հղիությանս ընթացքում ենթադրում էի, որ աղջիկ եմ ունենալու, և այն մարդկանց, ում հանդիպում էի, նույն բանն էին ասում: Ոչ ոք չէր նշում տղա ունենալու հավանականության մասին. ես միակն էի, ով փայփայում էր ևս մեկ որդի ունենալու գաղտնի հույսը:

Ես անհավատությամբ շարժեցի գլուխս. *եթե* այս ամենից որևէ բան ճշմարիտ է, և ես կերպարանափոխվելու եմ կին առյուծի, ապա հաստատ ինչ-որ մեկը նույնպես տեսնելու է այս վերահաս փոխակերպումը: Այս տեսիլքը լուրջ կրկնակի հաստատություն է պահանջում:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՓՆՏՐԵԼ

Անցավ մի քանի շաբաթ, և մեր քաղաք եկավ մի կին ավետարանիչ, որի հանդեպ ես մեծ հարգանք ունեի: Ահա իմ հնարավորությունը: Նա ինձ և մեկ ուրիշ հղի կնոջ հրավիրեց ճաշի: Այդ ընկերուհիս մի բացառիկ գործարար կին էր, ով խորը ապաշխարություն էր վերապրել և այժմ Ավետարանով ցնցում էր Ասիայի տարածքը: *Հավանաբար էգ առյուծի տեսիլքը նրա համար էր,* և ես որոշեցի ընթրիքի ժամանակ հպանցիկ անդրադառնալ այդ թեմային ու տեսնել նրա արձագանքը:

Մեր ընթրիքը նշանակվել էր մի պայծառ և արևոտ օր՝ Ֆլորիդայի ձմեռային զբոսայգում: Որոշ ժամանակ փողոցներում շրջելուց հետո վերջապես նստեցինք ընթրիքի: Ինձ հետաքրքիր էր, թե ինչպես եմ կարողանալու գնումների մասին զրույցի ընթացքում խոսք բացել էգ առյուծից: Սակայն, ավելի ուշ, երբ արդեն ընթրում էինք, ես հնարավորություն ունեցա խոսել այդ մասին:

Ընկերուհիս, որը նույնպես հղի էր, ասաց, որ աղջկա է սպասում, իսկ ավետարանիչն արտահայտեց իր հիացմունքը՝ ենթադրելով, որ ես նույնպես աղջիկ եմ ունենալու:

- Իսկ եթե կրկին տղա լինի՞,- հարցրի ես:

Նա զարմացավ, որ ես այդպես եմ մտածում, և պատճառաբանեց, որ ի վերջո, ես ունեմ երեք որդի, և Ջոնը դստեր կարիք ունի, որ նրան խենթի պես սիրի:

Եվ հենց այդ ժամանակ էլ որոշեցի խոսել էգ առյուծի պատմության և որդուս ծնվելու մասին:

Ես վստահ չեմ, որ իմ ասածը որևէ իմաստ ուներ, քանի որ ինքս էլ լիովին համոզված չէի. միայն գիտեի, որ տեսիլքն իրական էր, բայց նյարդային վիճակում լինելով՝ շարունակում էի չհավատալ, որ որևէ կապ կա իմ և էգ առյուծի պատկերի միջև: Ես խոսում էի այդ կանանց հետ՝ փորձելով հաղորդել նրանց ինձ հետ կատարվածը, սակայն ինչպե՞ս կարող էի ակնկալել, որ նրանք ինձ կհասկանան, երբ հենց ինքս էլ այդպիսի շփոթության մեջ էի: Իմ ոչ կապակցված մտքերն արտացոլվեցին նրանց մտահոգված դեմքերին: Եվ ես գիտակցելով, որ կանգնել եմ փակուղու առջև՝ անմիջապես կանգ առա:

Երկարատև ընդմիջումից հետո այդ կին ավետարանիչը կասկածանքով նայեց ինձ ու հարցրեց.

- Ե՞րբ է ծնվելու երեխան:

- Հոկտեմբերի տասին,- երկչոտությամբ պատասխանեցի ես՝ թեթևություն զգալով այն բանից, որ, ի վերջո, իմաստալից մի բան ասացի:

Ավետարանիչը ետ հենվելով՝ գլուխը շարժեց և վստահությամբ ասաց.

- Ո՛չ, ո՛չ, *անհնար է*, որ մինչև այդ ժամանակահատվածը դու կին առյուծ դառնաս:

Ես ցանկանում էի գոռալ, որ համաձայն եմ, սակայն դա անիմաստ համարեցի, այդ պատճառով էլ գլխով արեցի: Ես մի կողմից թեթևություն զգացի, մյուս կողմից էլ բարկացա, հուզվեցի և վիրավորվեցի:

Ի՞նչ նկատի ուներ նա՝ ասելով, որ մինչև այդ ժամանակահատվածը ես չեմ կարող կին առյուծ դառնալ:

Այդ ժամանակ գարուն էր, իսկ մինչև հոկտեմբեր դեռ հինգ ամիս կար: Ի վերջո, որքա՞ն ժամանակ կարող էր պահանջել այդ կին առյուծի կերպարանափոխումը: Ինչո՞ւ ընդհանրապես նրանց հետ կիսվեցի իմ տեսիլքով: Ես պիտի սպասեի, մինչև պարզվեր, որ իսկապես որդի եմ ունենալու:

Այդ կինն զգաց իմ շփոթմունքը և բացատրեց հետևյալ կերպ.

- Աստված դեռ շատ գործ ունի քո ներսում անելու... Դու ազատ չես լինի մինչև հոկտեմբեր:

Սա արդեն այլ բան է: Չնայած որ ինձ դուր չեկավ նրա սուր պատասխանը, սակայն համաձայնեցի նրա տված գնահատականին: Ուստի, երբ լռեցի և այլևս չարտահայտեցի մտքերս, այդ ժամանակ խոսակցությունը կամաց-կամաց հանդարտվեց: Այդ կինը բարձրաձայնեց այն, ինչն ակնհայտորեն արձագանք էր գտել իմ մեջ: Կասկածն ու անապահովությունը տանջում էին ինձ: Նույնիսկ ամուսինս՝ Ջոնը, շարունակ ասում էր ինձ. «Լի՛զա, հավանաբար այնքան դժվար է ապրել քո ունեցած անհանգիստ և վախերով լի մտքերով»: Իհարկե, Ջոնը ճիշտ էր ասում, քանի որ ամեն բան ավելի ու ավելի էր դժվարանում: Եվ ես հոգնել էի այդ վերականգնման փուլից, որը բավականին երկար էր տևում:

ԱՅԼԵՎՍ Ո՛Չ ՄԻ ԱՐԴԱՐԱՑՈՒՄ

Տարիներ շարունակ ինքս ինձ արդարացնում էի: Ես մի կին էի, ով փոքր հասակում պայքարել էր քաղցկեղի դեմ, ունեցել էր դժվար անցյալ, իսկ այժմ նա մի տնային տնտեսուհի է, ով պարզապես ցանկանում է խնամել իր նախադպրոցական տարիքի երեխաներին: Մի՞թե հնարավոր էր, որ Աստված ավելի մեծ բան նախատեսեր ինձ համար: Մի՞թե ինչ-որ հզոր ու վայրագ բան պետք է արթնանար իմ ներսում, կամ, միգուցե, պետք է լցվեի խիզախությա՛մբ: Ի վերջո, մի՞թե երիտասարդ հասակում ես արկածային աղջիկ չէի եղել: Մի ժամանակ նույնիսկ երազում էի այնպիսի աշխատանքի մասին, ինչպիսին վարձու մարդասպանինն է կամ տիեզերագնացինը:

Այո՛, ես ցանկանում էի վերականգնել այն ուժը, որից զրկվել էի՝ փորձելով համապատասխանել հովվի կնոջ և սիրալիր քրիստոնյայի կերպարին: Ես պատրաստ էի մի փոքր ձգվել և վեր կենալ ուժով ու գեղեցկությամբ: Ես հոգնել էի մարդկանց վրա թույլ և նվնվան կնոջ տպավորություն թողնելուց, հոգնել էի նաև անցյալի ցավը հարություն տալուց. ես ոտքի էի կանգնել մարտահրավերի համար, և ինձ դուր էր գալիս, որ իմ ամուսինը ջերմեռանդ էր և ուժեղ, սակայն ես հոգնել էի ձևացնելուց, նրա ետևում թաքնվելուց և միտքս ոչ կարևոր բաներով լցնելուց: Միգուցե էգ առյուծի տեսիլքը հենց այն էր, ինչի կարիքը ես ունեի. սիրալիր ու ապահով թվալու փոխարեն ես պատրաստ էի մի փոքր վայրագ և նպատակասլաց երևալ:

Այդ օրն ընթրիքից հետո ավտոմեքենայով վերադարձա տուն: Ես ավտոմեքենայի ղեկն ավելի ամուր էի բռնել, քան անհրաժեշտ էր, և կամենում էի վերապրել էգ առյուծի զգացողությունը իմ՝ հարաբերականորեն ապահով «Հոնդա Սիվիկ» մակնիշի ավտոմեքենայի մեջ: Ես միացրի ժամանակակից քրիստոնեական երաժշտություն, իջեցրի մեքենայի ապակիները և թույլ տվեցի, որ ավելի շուտ քամին և ոչ թե օդորակիչը թափահարեր իմ «բաշը»: Այժմ այդ ամենը մի փոքր անհեթեթ է թվում (հատկապես այն առումով, որ էգ առյուծները բաշ չունեն): Ավտոմեքենայի կողքի հայելու մեջ իմ կատվաձև

«Ռեյ-Բան» տեսապակիների միջից տեսա գանգուր մազերս… *«Սպասի՛ր, արդյո՞ք այդ մազերի մեջ ես տեսնում եմ վայրի էգ առյուծի ոսկեգույնը: Մինչև հոկտեմբեր պատրաստ չեմ լինի… Հա՛, ես քեզ ցույց կտամ. կին առյուծը ես եմ»:*

Ընթրիքի ընթացքում տեղի ունեցած իմ անհաջող փորձի, ընկերուհուս կողմից տրված սուր գնահատականի և մի շարք իրար հետ կապ չունեցող իրադարձությունների համադրումը մի հետաքրքիր փոխակերպման սկիզբ դրեց: Կարծես ինձ ձեռնոց նետվեց, և մարտահրավերն ընդունվեց:

Իմ որդու՝ Արդեն Քրիստոֆերի (անվան նշանակությունն է՝ կրակոտ, նպատակասլաց, օծյալ) ծնունդը իմ ներսում ինչ-որ բան փոխեց: Չնայած նրան, որ ընտանիքում ևս մեկ երեխան ենթադրում էր մայրիկի բեռի ավելացում, միևնույն է, ես կենտրոնացա Աստծո դուստր լինելու վրա: Շատ մայրերի պես Աստծո հետ իմ կապը կարծես աղավաղվել էր: Ես գրեթե սուզվում էի առօրյա հոգսաշատ կյանքի մեջ և այնքան էի տարվել անընդմեջ պահանջ ներկայացնող ցուցակով, որ մոռացել էի իմ ով լինելը և լցվել էի ինքնակասկածանքով: Ես ունեի փոքրիկ, եսակենտրոն, մեկուսացած, աննշան, ապահով և անօգուտ կյանք: Ես հիշում էի իմ անունը, հիշում էի, թե ում հետ եմ ամուսնացել և ովքեր են իմ երեխաները, բայց այն, ինչ անում էի և ում համար պատասխանատու էի, ստվեր էր նետում Աստծո դուստր լինելու իմ զգացողության վրա:

Երբ, ի վերջո, գիտակցեցի դա, Աստված սկսեց ինձ ուժ հաղորդել և կոչել մեկ այլ անունով: Բոլորի համար ես ունեի մի անուն, որը կցված էր իմ «աշխատանքային պարտականություններին»: Երեխաներիս համար ես մայր էի, ամուսնուս համար՝ կին, եկեղեցու ժողովրդի համար՝ հովվի կին, սակայն Բարձրյալ Աստծո համար ես պարզապես *դուստր* էի: Եվ երբ կենտրոնացա այն բանի վրա, որ ես Նրանն եմ, և հասկացա, թե ինչ է այդ ամենը նշանակում, իմ առօրյան լցվեց կյանքով և ուժով, սիրտս լայնացավ, իսկ հոգիս հանգիստ գտավ:

Արդենի ծնունդից հետո ես փորձեցի դուրս գալ իմ անապահովության, վախի, անհաջողությունների և հարմարավետության գոտու ստվերից, որպեսզի կարողանամ հասնել

ուրիշներին: Փոքրիկ տղայիս կերակրելու ժամանակահատվածում գրեցի իմ առաջին՝ *«Ես վերահսկողությունից դուրս եմ, և դա ինձ դուր է գալիս»* գիրքը: Գիրք գրելն ինձ համար մի ուրիշ աշխարհ բացեց, և ես սկսեցի ավելի շատ գրքեր գրել այն պատճառով, որ մեր երկրում շատ կանայք փնտրում էին իրենց իսկությունը՝ ի պատասխան իրենց ցավի, ծարավի և առողջ կանացի փոխհարաբերություններ ունենալու ցայտուն կարիքի:

Անցավ որոշ Ժամանակ, և մենք արևոտ, շոգ և խոնավ Ֆլորիդայից տեղափոխվեցինք արևոտ, ցուրտ և չոր Կոլորադո: Կոլորադո տեղափոխվելը մեր ընտանիքին ստիպեց ավելի շատ ժամանակ անցկացնել տանը և համախմբվել կլոր սեղանի շուրջ: Այն նաև պատրաստեց մեզ դիմանալու շատ փոփոխությունների: Հաջորդ տասնամյակի ընթացքում ինձ մի քանի անգամ (չափազանց քիչ, որպեսզի նշեմ) կին առյուծ անվանեցին և, ի պատասխան, ես պարզապես ժպտում էի՝ գոհ լինելով այն ամենից, որ այլևս վախեցած և երկչոտ տնային կատու չեմ: Ես կարծում էի, որ էգ առյուծի պատմությունն ավարտված է, և իմ անձնական կերպարանափոխումը կայացած է, բայց՝ սխալվում էի:

ԴԱ ՔՈ ՄԱՍԻՆ ՉԷ, ԼԻԶԱ

2007 թվականի աշնանը էգ առյուծը կրկին այցելեց ինձ: Ես այն հյուրերից մեկն էի, ով ծառայում էր զարմանահրաշ Նոր Զելանդիայում տեղի ունեցող կանանց կոնֆերանսում: Հավաքույթներին այնքան շատ մարդ էր եկել, որ միջոցառումը կազմակերպող եկեղեցին ստիպված էր երկու լրացուցիչ կոնֆերանս անցկացնել՝ բոլոր կանանց տեղավորելու համար:

Առաջին կոնֆերանսը տեղի ունեցավ եկեղեցում, իսկ երկրորդը՝ Օքլենդի սպորտային համալիրում: Եվ մենք, ավարտելով առաջին կոնֆերանսը, եկել էինք սպորտային համալիր՝ երկրորդ կոնֆերանսն անցկացնելու համար: Հավաքույթներն արդեն սկսվել էին, և այնտեղ հավաքվել էին հզոր, ջերմեռանդ և հավատարիմ ծառայողներ: Բայց ինչ-որ անհասկա-

նալի պատճառով կեսօրվա ընդմիջման ժամանակ ես անհանգստություն զգացի: Այնպես չէր, որ ես ճնշվածություն էի զգում քարոզին պատրաստվելու առումով. ես կրկնելու էի այն, ինչ ասել էի առաջին կոնֆերանսի ժամանակ: Բայց և այնպես, նախքան Աստծո Խոսքը քարոզելը, ես շտապ աղոթելու կարիք զգացի. թվում էր, թե ինչ-որ հակառակություն կա: Ես գիտեի, որ այդ հակառակությունը ո՛չ ներկաներից էր գալիս, ո՛չ որևէ քարոզչից, ո՛չ էլ հյուրընկալող եկեղեցուց, քանի որ բոլորս էլ մեկ սիրտ ունեինք և պատրաստակամությամբ եկել էինք երկրպագելու Աստծուն, քարոզելու և քաջալերելու կանանց: Սակայն ինչ-որ բան կար, որի վրա Աստված փորձում էր ուղղել իմ ուշադրությունը: Ես պետք է մենակ լինեի և հասկանայի, թե ինչ է կատարվում: Այդ իսկ պատճառով վերադարձա իմ հյուրանոցային համարը, որի պատուհանները նայում էին Օքլենդի նավահանգստին:

Ձեռքերս տարածելով նավահանգստի ուղղությամբ՝ սկսեցի սենյակով քայլել և աղոթել, որպեսզի կարողանամ հասկանալ, թե ինչ է ուզում Աստված ասել: Ես միաժամանակ ձայնակցում էի իմ «iPod»-ով հնչող երաժշտության խոսքերին. «Աղաղակի՛ր Աստծուն հաղթանակի ձայնով»: Սրտիս դիրքն ուղղելով՝ շնորհակալություն հայտնեցի Աստծուն այն ամենի համար, որ անում է իմ կյանքում: Եվ, քանի որ ես այդ ժամանակ նոր էի ավարտել իմ՝ «Կնոջ դաստիարակչական ուժը» գրքի վերջին խմբագրումը, ուստի սկսեցի շնորհակալություն հայտնել Աստծուն գրելու և խմբագրելու գործընթացն ավարտին հասցնելու համար: Ինձ համար գիրք գրելը նման էր ծննդաբերության ցավ քաշելուն, այդ պատճառով էլ իմ աղոթքը մոտավորապես այսպիսին էր. *«Շնորհակալությո՛ւն, Աստվա՛ծ, որ այդ աշխատանքն ավարտվեց: Ես մեծարում եմ Քեզ»:* Ապա շարունակեցի. *«Առաջիկայում ես չեմ ցանկանում կրկին գրել»:* Եվ հանկարծ զգացի, որ Աստված խոսում է սրտիս. *«Ես ցավում եմ, որ դու այդպես ես զգում… որովհետև Ես կարիք ունեմ, որ դու կրկին գրես»*:

Ի՞նչ, Աստված իմ *կարի՞ք ունի:*

Եվ Նա շարունակեց. *«Ես ռազմավարություններ եմ տալիս Երկնքից, և դրանք գտնվում են Իմ Խոսքի մեջ: Ես դրանց*

որոշակի մասը կհայտնեմ քեզ, և դու կգրանցես այն, ինչ քեզ կասեմ, որպեսզի երբ Իմ դուստրերը հավաքվեն, ամբողջական պատկերը տեսնեն: Ռազմավարության ամբողջական պատկերը չի երևա, եթե քո ունեցած կտորը չդնես «փազլ»-ի մեջ»:

Եվ հանկարծ էգ առյուծը կրկին հայտնվեց իմ առջև: Մինչև ես նայում էի նրան իր ամբողջ զորությամբ և վայրագ գեղեցկությամբ, լսեցի, թե ինչպես Աստված ասաց. *«Ես ասացի, որ քո որդու ծնունդով դու կարթնացնես կին առյուծին, բայց ոչ թե դու ես կին առյուծը»:*

Եվ անմիջապես տեսա, թե որքան սահմանափակ, խղճուկ ու մարդկային էր եղել իմ հեռանկարը: Նա կրկին շարունակեց. «*Հիսուսը Հուդայի ցեղի Առյուծն է, և ժամանակն է, որ Նրա հարսնացուն արթնացնի կին առյուծին: Ուսումնասիրի՛ր էգ առյուծի առանձնահատկություններն ու հատկանիշները»:*

Այնուհետև լսեցի առաջին ռազմավարությունը. *«Էգ առյուծները միասին են որս անում»:*

Ես հանկարծակիի եկա. մի՞թե այն, ինչ ես լսում էի, աստվածաշնչյան է, և ի՞նչ էր դա նշանակում: Կանայք նոր էին ընտելանում այն գաղափարին, որ կանացիության մեջ զորություն կա, իսկ նրանց դաստիարակչական կարողության մեջ՝ արժեք: Ինչպե՞ս էր Աստված ինձ ասում, որ նրանց անվանեմ կին առյուծներ, և որքանո՞վ էր մեկը մյուսին համապատասխանում:

Ես մտածում էի. *«Միգուցե Աստված ցանկանում է ինչ-որ հուժկու և վայրի բան արթնացնել Իր քրիստոնյա կանանց մեջ»:*

Թվոց 23-րդ գլուխը կրկին հայտնվեց աչքերիս առջև, և նրանում տեսա այն հատվածը, որը քրիստոնյա կանանց կոչ էր անում՝ վե՛ր կաց: Եվ հենց այդ ժամանակ վճռեցի ուսումնասիրել էգ առյուծին ու զուգահեռներ գտնել նրա և Աստծո դուստրերի միջև: Վերջին երկու տարիներն անցկացրի էգ առյուծներին ուսումնասիրելով և նրանց նկարագրելով: Ես սկզբում մտածում էի կանանց և էգ առյուծների միջև կապ ստեղծել միայն գրական մակարդակի վրա՝ առանց խոսելու

այն տեսիլքի մասին, որ Աստված տվել էր ինձ, սակայն ժամանակի ընթացքում գիտակցեցի, որ այդ տեսիլքը միայն ինձ համար չէր: Էգ առյուծի տեսիլքն ինձ ցույց չտրվեց այն պատճառով, որ ես յուրահատուկ էի, կամ՝ որ ուժեղ տեսիլքի մարդ էի. դա ինձ ցույց տրվեց, որովհետև Աստված գիտեր, որ մի օր ես կլինեմ մեկը, ով կկարողանա բարձրաձայնել այդ մասին:

Ամեն անգամ, երբ արտաբերում էի «դու կարթնացնես կին առյուծին» արտահայտությունը, բառացիորեն տեսնում էի, թե ինչպիսի ազդեցություն էր այն թողնում կանանց վրա: Երբեմն նրանք, արցունքներն աչքերին, լուռ արձագանքում էին, և թվում էր, թե նրանց ներսում ինչ-որ աղբյուր էր բացվում: Երբեմն էլ նրանք ծանր շունչ էին քաշում՝ կարծես հայտնություն ստանալով ու գիտակցելով, որ բնական բան է գեղեցիկ և վայրագ լինելը: Ես հավատում եմ, որ արձագանքն ապշեցուցիչ կերպով դրական էր լինում այն պատճառով, որ Աստծո դուստրերից յուրաքանչյուրի մեջ թաքնված է ոչ միայն գառնուկը, այլև էգ առյուծը: Եվ ժամանակն է, որ այդ առյուծն արթնանա:

Երբ մտածում եմ էգ առյուծի մասին, դեմքիս ժպիտ է հայտնվում, ուսերս ետ եմ տանում և մի փոքր ավելի ուղիղ եմ կանգնում: Էգ առյուծը ստիպում է ինձ հպարտ լինել այն առումով, որ ես կին եմ: Նրա ուժի վրա ոչ ոք չի կասկածում, և ես կարծում եմ, որ չկա մի արարած, քան առյուծը, որը կստիպի տղամարդուն՝ որպես տղամարդ՝ իրեն ավելի հպարտ զգալ: Առյուծը ջունգլիների արքան է, և կասկած չկա, թե ով է թագուհին:

ՆԱՅՀՐ... ԵՎ ՍՈՎՈՐՀՐ

Սա առաջին անգամը չէ, որ Աստված ցույց է տալիս մեզ արարչության պարզությունը, որպեսզի մենք ճիշտ պատկերացում ունենանք: Հիսուսը հորդորում է մեզ նայել ծաղիկներին և սովորել նրանցից՝ վստահեցնելով, որ Աստված մեզ ավելի լավ կհագցնի և ավելի լավ հոգ կտանի մեր մասին (տե՛ս Մատթ. 6.28, Ղուկ. 12.27): Նմանապես երկնային տի-

րոյթները հռչակում են Աստծո փառքը և բացահայտ ցուցադրում Նրա արդարությունը (տե՛ս Սաղմ. 19.1, 50.6):

> «Երկինքները պատմում են Նրա արդարությունը,
> և բոլոր ժողովուրդները տեսնում են Նրա փառքը»
> (Սաղմ. 97.6):

Արարչության վայրի գեղեցկությունը ոչ այլ ինչ է, քան պատուհան, որն ակնարկում է այն Աստծո մասին, Ով ստեղծել է մեզ: Մենք պետք է բաց պահենք այդ պատուհանը և թույլ տանք, որ Աստծո վայրի ու անսահման գեղեցկությունը երկնային փառահեղություն արթնացնի մեր ներսում: Երբ մեր աչքերը բացում ենք՝ արարչության հրաշքին նայելու համար, այն մեր ներսում Աստծո հանդեպ խորը փափագ է արթնացնում: Մեր հոգին արձագանքում է այն ամենին, ինչ տեսնում է. այն միայն հռչակում է. «Կա՛ ավելին, քան տեսնում ես. ավելի՛ն, քան լսում ես. ավելի՛ն, քան մարդկային կյանքն է: Կա՛ Հավիտենական Աստված, Ով նստած է բարձունքում»:

Նախքան երկրի հիմքերը գցվելը, Հիսուս Քրիստոսը նախասահմանվել էր որպես Գառ, որ մորթվելու էր, սակայն Հայտնության գիրքը Նրան հայտնում է նաև որպես Առյուծ:

> «Եվ երեցներից մեկն ասաց ինձ. «Լաց մի՛ լինիր,
> ահա հաղթեց *Առյուծը, որ Հուդայի ցեղից է*՝ Դավթի արմատը, որ Գիրքը բացի և նրա յոթ կնիքները
> լուծի»» (Հայտն. 5.5):

Հիսուսը և՛ մեր Առյուծն է, և՛ մեր Գառը: Ինձ հետաքրքիր է՝ կարո՞ղ է արդյոք համադրություն լինել երկու առավել հակադիր պատկերների միջև: Աստվածաշնչի թարգմանության «Ուղերձ» տարբերակում ասվում է, որ Հուդայի Առյուծը «կարող է պատռել այդ յոթ կնիքները»: Իսկ Հովհաննեսը՝ Հայտնության գրքի հեղինակը, լաց եղավ, որովհետև ամբողջ երկինքը, երկիրը և նույնիսկ հանդերձյալ աշխարհը զննելուց հետո չգտնվեց մեկը, ով արժանի կլիներ բացելու յոթ կնիքները և կարդալու գրքի գրվածը: Այնժամ Հովհաննեսին ամենամոտ կանգնած երեցը քաջալերեց նրան նայել, որովհետև մեր Գառան մեջ Առյուծ լինելու հայտնություն կար. միայն Նա՛

է արժանի բացելու կնիքները:

Պատռելը ուժգին գործողություն է, և ես անմիջապես հիշեցի տաճարը բաժանող հաստ վարագույրը, որը երկու մասի պատռվեց (տե՛ս Մարկ. 15.38): Պատռվելու գործողությունը սկսվեց ամենաբարձր կետից և ավարտվեց ամենացածրում: Ինձ դուր է գալիս դա, որովհետև մեր Աստված միշտ պատռում է այն, ինչը խանգարում կամ բաժանում է մեզ Նրանից: Հայտնության առեղծվածային գրքում կարդում ենք, որ Երկնքի գրքերը բացելու գործողությունը շարժման մեջ դրեց ամբողջ երկիրը:

> Բնությունը ստեղծված է նրա համար, որ հոգու հետ գաղտնի համաձայնության գալով՝ ազատագրի մեզ:
>
> – ՌԱԼՖ ՈՒԱԼԴՈ ԷՄԵՐՍՈՆ

Նույնիսկ հիմա զգում եմ, որ Աստված փափագում է ինչոր չափով հայտնել Իրեն մեզնից յուրաքանչյուրին: Եթե դա այդպես չէ, ապա ինչո՞ւ պետք է Նա գրեր երկրագնդի պատմության այս դրամատիկ վախճանը: Հավատում եմ, որ մեզ կրկին առաջարկվում է ոչ թե հուսահատվել կամ լաց լինել, այլ բարձրացնել մեր աչքերը, նայել ու իսկապես տեսնել:

Մեր երկրագունդը Երկնքի հայտնությունների և իմաստության արձագանքն է:

Որքան հրաշալի է, որ մեր երկնային Հայրն այնպես է ստեղծել Իր արարչությունը, որ այն ստիպում է բացել մեր սիրտը: Ամեն մասնիկ, բույս, կենդանի ու բնատեսարան ասում է. «Վե՛ր կաց և եղի՛ր այն, ինչ ստեղծվել ես լինելու»: Հոբն իր գրքում գրում է, որ բնությունը մեզ սովորեցնելու կարողություն ունի:

> «Աստված, օգտագործելով թռչուններին ու գազաններին, ամբողջ արարչությունը դարձնում է գիտության դասարան՝ մեզ իմաստություն սովորեցնելու համար» (Հոբ 35.11, MSG):

Աստծո սիրո հրաշքը և իմաստության չափը, որ Նա պատրաստ է փոխանցել մեզ, չափազանց մեծ է ըմբռնելու համար: Սակայն մենք չպետք է զարմանանք. ի վերջո՝ Նա է Արարի-

չը, Ով հռչակում է.

> «Որովհետև Իմն են անտառի բոլոր գազանները և հազարավոր սարերի անասունները:
>
> Ես գիտեմ սարերի բոլոր թռչուններին, և վայրի գազաններն Իմ առջև են:
> Եթե սովածանամ, քեզ չեմ ասի, որովհետև Իմն է աշխարհը և նրա լիությունը» (Սաղմ. 50.10-12):

Մենք մեզ առանձնացնում ենք երկրի արարածներից, սակայն Աստված նրանց անուններով գիտի: Միգուցե մեզ թվում է, թե Նա հոգ չի՞ տանում Իր արարչության մասին, չէ՞ որ ամբողջ արարչությունն Իր համար է ստեղծել: Բնությունը շատ բան ունի հայտնելու իր Արարչի մասին, եթե մենք պարզապես լսենք նրան: Առակաց գրքում մեզ ասվում է. «Գնա՛ մրջյունի մոտ, ո՛վ ծույլ, նրա ճանապարհները տես և իմաստուն եղիր» (Առակ. 6.6):

Ես հավատում եմ, որ Աստված խնդրում է մեզ այդպիսի մի բան անել: Նա ուզում է, որ մենք նայենք էգ առյուծին ու սովորենք նրանից, և առաջարկում է հետևյալը. *«Դուստրե՛ր, նայե՛ք էգ առյուծին և ուշադի՛ր հետևեք նրան: Թո՛ւյլ տվեք, որ նա արթնացնի ձեր վայրի էությունը, ձեր վայրագ գեղեցկությունն ու անսանձ ուժը, որպեսզի դուք կարողանաք վեր կենալ և լինել այն համարձակ կանայք, որ կանչել եմ ձեզ լինելու»:*

Ինչպե՞ս կարող է էգ առյուծը կանանց ուժ և քաջություն տալ, և ինչպե՞ս կարող են կանայք առյուծի պես վեր կենալ: Այս հարցի վերաբերյալ մեզնից յուրաքանչյուրն իր ուրույն պատասխանը կտա, սակայն էգ առյուծի առանձնահատկությունների վերաբերյալ այս ակնարկը կարող է ձեզ որոշակի հասկացողություն տալ: Հաջորդ գլուխներում կտեսնենք, թե ինչ պատճառներով կարող է վեր կենալ աֆրիկյան արևի տակ հանգստացող էգ առյուծը:

> Նա վեր է կենում ուժ հավաքելու համար:
> Նա վեր է կենում մյուս առյուծներին ողջունելու և նրանց խնամելու համար:
> Նա վեր է կենում որս անելու համար:

ԵՐԲ ԱՐԹՆԱՆՈՒՄ ԵՆ ԿԻՆ ԱՌՅՈՒԾՆԵՐԸ

Նա վեր է կենում մնացած էգ առյուծների կողքին
կանգնելու համար:
Նա վեր է կենում կորյուններին ապահով վայր տե-
ղափոխելու համար:
Նա վեր է կենում հակամարտելու թշնամիներին,
որոնք սպառնում են խմբին:
Նա վեր է կենում իր թագավորի հետ քայլելու հա-
մար:

Նայելով էգ առյուծին՝ ես հասկանում եմ, որ Բարձրյալ Աստծո յուրաքանչյուր դուստր կարող է ուժ հավաքել, համարձակությամբ լցվել և իր աշխարհում փոփոխություն բերել: Արդյո՞ք քո ներսում էգ առյուծ կա թաքնված: Իմ աղոթքն է, որ այս գիրքն ընթերցելիս ստանաս քո պատասխանը, և այդ պատասխանով մի վայրագ ու գեղեցիկ բան արթնանա քո ներսում:

2

Անտեսանելի ուժ

«Եթե գա մի ժամանակ, որ աշխարհի կանայք միասին հավաքվեն պարզապես հոգուտ մարդկության, ապա նրանք կներկայացնեն մի ուժ, որի նմանը աշխարհը երբեք չի տեսել»:

ՄԵԹՅՈՒ ԱՌՆՈԼԴ, ՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՐ, ԲՐԻՏԱՆԱՑԻ ԲԱՆԱՍՏԵՂԾ ԵՎ ՓԻԼԻՍՈՓԱ

Միգուցե մենք արթնացել ենք հենց այս ժամանակի համար: Ես արտոնություն եմ ունեցել ականատես լինելու այս հավաքական ուժի նախատիպին: Եվրոպայի հեռավոր երկրներում և նույնիսկ Միացյալ Նահանգներում ես տեսել եմ այս կայացած շարժման առաջին պտուղները, երբ դուստրերն աշխուժանում են, և հավաքույթն արագ վերածվում է կանանց հզոր շարժի: Միթե այս բանաստեղծ-փիլիսոփայի խոսքերը քո ներսում չեն խոսում չգիտակցված ինչ-որ բանի մասին: Երբ առաջին անգամ կարդացի այս մեջբերումը, կանգ առա և բառացիորեն շունչս պահեցի:

Ես պատկերացնում եմ, որ *իմ* ֆիզիկական արձագանքը՝ *մեր* չգիտակցված հնարավորությունների հսկայական ծավալի հանդեպ ունեցած հակազդեցությունն էր: Այս գրքի վերնագրից արդեն գիտես, որ ես փափագում եմ քո ներսում ինչ-որ վայրի, իմաստուն և հրաշալի բան արթնացնել: Ես քեզ կոչ եմ անում, որ խորհես այն մասին, որ կանայք բարի նպատակների համար պետք է միասին հավաքվեն մի գաղա-

փարի շուրջ: Եթե անհրաժեշտ է, կրկին կարդա մեջբերումը, որովհետև նրանում թաքնված մի հույս կա, որին պետք է ոչ թե պարզապես հայացք նետես, այլ հատկացնես քո ամբողջ ուշադրությունը:

Համարձակ եղիր ինքդ քեզ հարցնելու. «Հնարավո՞ր է, որ Մեթյու Առնոլդի խոսքերն ավելին լինեն, քան պարզապես տեսություն, քաղաքական ճառ կամ հուսադրող ենթադրություն: Հնարավո՞ր է, որ նրա միտքը կանխորոշված, թույլատրելի, կամ, նույնիսկ, մարգարեական լինի: Արդյո՞ք նա առաջ նայելով տեսել էր մեր ժամանակի դուստրերին և խրախուսել նրանց՝ հավաքվել այս ժամանակի համար: Արդյո՞ք նա գիտեր, որ այդ հավաքույթը չէր կարող տեղի ունենալ իր օրերում, սակայն հույս ուներ, որ այն տեղի կունենա մեր օրերում: Արդյո՞ք նա գիտակցում էր, թե որքան մեծ է լինելու մեր ժամանակի կարիքը և արդյո՞ք նա այդ պահին նկատեց ինձ ու քեզ:

Ես հավատում եմ, որ այս հարցերի ամենաճշգրիտ պատասխանները գտնվում են յուրաքանչյուր կնոջ ներսում և լավագույնս ի հայտ են գալիս ոչ թե խոսքերով, այլ՝ թե ինչպես է կինն ընտրում ապրել իր կյանքը: Այս պատասխանի մեջ մեր դերը հայտնի կլինի նրանով, թե ինչպես մենք կարձագանքենք մեր ապրած ժամանակին, և, թե ինչպես հետագայում կպատրաստենք մեր որդիներին ու դուստրերին, որպեսզի նրանք էլ լավ ընտրություն կատարեն:

Արդյո՞ք մեր ժամանակի կանայք վեր կբարձրանան կանանց վերաբերյալ հակասող և սահմանափակող մշակութային ու կրոնական պատկերացումներից և դրանց հետևանքով առաջացած նախապաշարումներից: Արդյո՞ք այլ երկրներում բնակվող մեր խիզախ քույրերն առաջ կշարժվեն՝ չնայելով շատ բնագավառներում առկա կանանց խրախուսանքի բացակայությանը: Արդյո՞ք Արևմտյան աշխարհի բնակիչներս ետ կդառնանք թեթևամիտ զվարճություններից ու մեր ուշադրությունը կկենտրոնացնենք արժանի և ազնվական գործերի վրա:

> Վաղվա մեծահասակների խնդիրների լուծումը մեծ չափով կախված է նրանից, թե ինչպես են մեր երեխաներն այսօր մեծանում:
> - ՄԱՐԳԱՐԻՏ ՄԻԴ

Արդյո՞ք մենք դուրս կմղենք այն հակասող աղմուկն ու փաստարկները, որոնք ասում են, որ մեր ներդրումն անհրաժշետ չէ, և այն Աստծուց ներշնչված չէ: Արդյո՞ք մենք կըմբռնենք մեր ժամանակի լրջությունն ու հրատապությունը և մի կողմ կդնենք մեր վարդապետական տարբերություններն ու կարծիքները՝ միաբան լինելու համար: Արդյո՞ք մենք հաշվի չենք առնի մեր տարիքային տարբերությունը, երբ իրար միացնենք մեր սրտերն ու ձեռքերը: Արդյո՞ք կունենանք հավատքի միաբանություն, և արդյո՞ք այդ միաբանված հավատքը պարզապես կարտահայտի մեր համոզմունքների միասնական համակարգը: Իսկ այդ միաբանությունը կլինի պարտադրվա՞ծ, թե՞ կամովի: Կարո՞ղ է այդ միաբան հավատքը գործերի միջոցով ավելի ուժեղանա, և մենք միաժամանակ լինենք որպես ակնհայտ, անհաղթահարելի, մոլեգին և կարևոր բանի տնտեսներ: Արդյո՞ք մեր համախմբումն ակնհայտորեն կբացահայտի այն հույսը, որը փայփայում ենք մեր ներսում, և կհոչակի այն ամենը, ինչին իսկապես հավատում ենք: Կարո՞ղ է այդ հավատքն արտահայտվել ավելի շուտ անձնուրացաբար ուրիշներին հասնելով և տալով, քան՝ շրջվելով ու վերցնելով: Ես աղոթում եմ, որ այդպես լինի, որովհետև միայն այդ ժամանակ մեր աշխարհն ավելի ընդարձակ կտեսնենք և կկարողանանք ազդեցություն թողնել ուրիշների կյանքի վրա:

Այո՛, ես հասկանում եմ, որ այն ամենը, ինչ խնդրում եմ և ինչի համար հույս ունեմ, հենց հիմա մի փոքր լարվածություն ու ձգվածություն է պահանջում, սակայն առանց այդպիսի լարվածության մենք հեռու չենք գնա: Բավական չէ միայն նայել ու տեսնել, թե որտեղ ենք գտնվում. տարածվելու համար մենք պետք է ետ նայենք, մեր շուրջը նայենք և առաջ նայենք:

Եթե ետ նայենք՝ դեպի հազար ութ հարյուրական թվականները, կտեսնենք մի ժամանակաշրջան, երբ կանայք կա՛մ քիչ ձայն ունեին, կա՛մ էլ ոչ մի ձայնի իրավունք չունեին: Եթե նայենք մեր շուրջը, կգիտակցենք մեր ձայնի կարևորությունը: Իսկ առաջ նայելով՝ կհասկանանք, որ մեր կյանքն ու խոսքերն այնպես պետք է կառուցենք, որ ապագայում իմաստուն շինարարներ լինենք:

Ժամանակն է լայնացնենք մեր տեսողության շրջանակը

և ներգործություն ունենանք կյանքի շատ բնագավառներում: Ձգվելու այս շարժումը տեղի է ունենում այն ժամանակ, երբ մկանային խմբին հաղորդվում է լարվածություն, կորություն կամ ձգվածություն: Ձգվելու ընդունակությունը կարող է մեծ ճկունություն առաջացնել և կանխել վնասը:

Ներկայացնելով էգ առյուծի հատկանիշները՝ հույս ունեմ որոշակի ձգվածություն ավելացնել քո կյանքին: Ես ցանկանում եմ, որ այն օգնի տեսնել, թե ինչպես ես նայում ինքդ քեզ, քո կանացիությանը, քո գեղեցկությանը, քո ուժին, քո նպատակին, քո ամուսնությանը, քո աշխարհին և քո Աստծուն: Թո՛ւյլ տուր, որ էգ առյուծը մարտահրավեր նետի տղամարդկանց, ընկերների և ընտանիքի հետ ունեցած քո փոխհարաբերություններին և զարգացնի դրանք: Նույնիսկ էգ առյուծը գիտի, որ նախքան ցատկելու փորձ անելը, նա պետք է ձգվի:

Մեր անձնական կյանքի և աշխարհի կարիքների լարվածությունը մեր առջևում է: Իսկ այս ընդարձակ բնագավառին արձագանքելու համար մեզ անհրաժեշտ է մի տեսիլք, որը երկուսին էլ կպարփակի:

ԱՆԿԱՇԿԱՆԴ՝ ՈՒԺՈՎ, ՀԱՆԳԻՍՏ՝ ԶՈՐՈՒԹՅԱՄԲ

Նախքան առաջ անցնելը ցանկանում եմ քննարկել մի հարց, որն առաջացավ տեսիլքից հետո: Ես մտածում էի. *«Ինչո՞ւ էր դաժանության ենթարկված Աստծո ժողովուրդը համեմատվում էգ առյուծի հետ, որն այդպես անկաշկանդ ու հանգիստ էր»:* Որոշ ժամանակ ես խորհում էի տեսիլքի և այն մտքերի շուրջ, որոնց մասին հայտնությունն արթնացրել էր (և դեռ արթնացնում է) ինձ: Ահա այն մի քանի եզրակացությունը, որոնց ես հանգեցի:

Աստված էգ առյուծին ցույց չտվեց ու ակնկալեց, որ նրան անտարբերությամբ կամ վախով արձագանքեմ: Նրա պատկերի շնորհիվ ես բացահայտեցի, որ համակված եմ վախով և ունեմ սահմանափակ պատկերացում, ուստի այս ամենն իր հակառակ ազդեցությունն ունեցավ: Այս էգ առյուծը միջոց էր, որ բացեց իմ աչքերն ավելի լայն տեսարանի առջև և ընդարձակեց ավելի համարձակ գործելու իմ հնարավորությունը:

Աշխարհով մեկ ճանապարհորդելիս շատ շքեղ արձաններ եմ տեսել: Օրինակ՝ Դանիան, Հռոմը, Լոնդոնը և Փարիզն ունեն հուշարձաններ, որոնք կառուցված են ի հիշատակ փառահեղ սխրագործությունների, անցյալի նվաճումների և պատմական ազատագրումների: Ես լուսանկարել եմ արվեստի այս գործերը և հիացել եմ նրանց նրբագեղությամբ ու հավերժական գեղեցկությամբ, որոնք խոսում են մինչև օրս:

Սակայն իմ տեսիլքի առյուծը արձան չէր. այն հայտնություն էր:

Հայտնությունները պարունակում են բացահայտման և զարմանքի տարրեր: Էգ առյուծն անտարակույս զարմացրեց և ազդեցություն թողեց ինձ վրա այն ժամանակ, երբ հղի էի և գիշերազգեստով կանգնած դողում էի նրա առջև: Չնայած նա երբեք չշարժվեց, սակայն ավելի կենդանի էր, քան ես. նրա ուժի և գեղեցկության լույսի ներքո ես գիտակցեցի, թե ինչ եմ կորցրել: Վախի պատճառով ես զրկվել էի ուժից, կյանքից ու գեղեցկությունից: Ես կորցրել էի իմ իրական «ես»-ի զգացողությունը, և այդ պատճառով չգիտակցված էր մնացել այն, ինչ Աստված ցանկանում էր տեսնել իմ կյանքում:

Աստվածաշնչից ես հիշեցի այն հատվածը, թե ինչպես իսրայելցիներն իրենց տեսան իբրև մորեխներ, իսկ քանանացիներին՝ իբրև հսկաներ, սակայն Թվոց 23-րդ գլխից մենք գիտենք, որ քանանացիներն իսրայելցիներին տեսան իբրև բարձրացող արու և էգ առյուծներ:

Հեռանկարի և իրականության միջև այս հակադրությունը երևում է, երբ մեր առյուծ քրոջը համեմատում ենք մեզ հետ: Արդյո՞ք կարող ենք երբևէ նրա նման լինել, և արդյո՞ք կլինեն այնպիսի կանայք, ովքեր անկաշկանդ կլինեն իրենց ուժով և հանգիստ՝ իրենց զորությամբ, և կարո՞ղ ենք արդյոք ըստ արժանվույն կրել մեր գեղեցկությունը:

Էգ առյուծի ուժն ու կարճատև հանգիստը մի օրինակ է, որ պետք է լավ ըմբռնենք:

Երբ ժամանակը եկավ, էգ առյուծը վեր կացավ, և հիմա արդեն Ժամանակն է, որ դու վեր կանգնես և իմանաս, թե ով ես դու. ժամանակն է, որ բորբոքես ու արթնացնես ինքդ քեզ:

Ես հասկացել եմ, որ *ուժով անկաշկանդ և զորությամբ*

հանգիստ լինելը աստվածային կնոջ արտահայտիչ ու գեղեցիկ բնութագիր է: Սիրելինե՛րս, թույլ տվեք կոչ անել ձեզ՝ լինել անկաշկանդ՝ ձեր ուժով, և հանգիստ՝ ձեր զորությամբ:

Սովորաբար այս երկուսի զուգակցումը գալիս է ժամանակի ընթացքում: Դրանք միախառնվում են այն ժամանակ, երբ սկսում ես գիտակցել, որ կա մի զորություն, որ բնակվում է քո ներսում: Ինչպես որ արդարության մեջ մենք հանգիստ ունենք, այնպես էլ ապահով ենք՝ երբ զորություն ունենք: Մենք հանգիստ ենք գտնում այն ժամանակ, երբ դադարում ենք պայքարելուց:

> «Ձեր փրկությունը պահանջում է, որ ետ դառնաք դեպի Ինձ և դադարեցնեք ինքներդ ձեզ փրկելու անհեթեթ ջանքերը:
>
> *Ձեր զորությունը կգա այն ժամանակ, երբ հանդարտվեք և Ինձնից լիակատար կախվածության մեջ մնաք»* (Եսայի 30.15, MSG):

Դա ավելի լավ արտահայտել հնարավոր չէ: Հանդարտվի՛ր և լիակատար կախվածության մեջ եղի՛ր Աստծուց, ահա այդ ժամանակ կգա քո ուժը: Երբ մենք դադարում ենք պայքարել մեր սեփական կարողությամբ, հայտնվում է մեր իսկական ուժը: Աստված քեզնից ուժ չի պահում. Նա այն շնորհո՛ւմ է քեզ:

Ի հակադրություն մեր ընկեր էգ առյուծի՝ ես շատ կանանց եմ տեսել, ովքեր սարսափած են իրենց սեփական ուժից: Եթե նրանց ներսում ծածուկ մտքեր, հարցեր կամ բուռն ցանկություններ են արթնանում, նրանք վախից ընկրկում են: Ուժից չպետք է վախենալ. այն պետք է ընդունել: Մի՛ շփոթիր հեզությունը տկարության հետ: Այն վերահսկողության ներքո գտնվող չափավոր ուժ կամ հզորություն է:

Մովսեսին անվանում էին հեզ և խոնարհ, սակայն նա զորավոր առաջնորդ էր, և նրա զորության հետ պետք էր հաշվի նստել: Ինձ համար հետաքրքիր է՝ արդյո՞ք դա այն պատճառով էր, որ նա հանդիպել էր Մեկին, Ով կանգնած էր նրա յուրաքանչյուր խոսքի ետևում:

Բարու և չարի առանձնացված գիտակցումը պարուրում է

մեր մարդկային մերկությունը և աստվածային պատասխան աղերսում: Առանց Աստծո բարի գործեր անելը սահմանափակում է մեզ: Մեր ներկա աշխարհի հարցերն անհավանականորեն այնքան շատ են, որ անսահմանափակ պատասխանների կարիք ունեն:

Ինչպես Մովսեսը՝ մենք նույնպես Աստծո բարության մասին հայտնության կարիք ունենք, որպեսզի կարողանանք վախից դողացող մեր երկիրը խաղաղ պահել:

Այնպես որ, սիրելի՛ս, կհամարձակվե՞ս արդյոք հավատալ, որ դու կարող ես լինել այդ բարու հայտնության մի մասնիկը և, միանալով մյուսներին, նրանց հետ ռազմավարություն մշակել՝ Աստծո բարությունը մեր միջոցով տեսանելի դարձնելու համար:

ԱՌԱՔԻՆԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԱԿ

Ես միտումնավոր չսահմանափակեցի «բարին» պարզապես «հաճելի» կամ «ապահով» հասկացություններով: Ի վերջո, այն նույնպես ուժ է, ինչպես և *առաքինությունը:*

> «Առաքինի և ընդունակ կին ո՞վ կարող է գտնել. նա
> ավելի թանկ է, քան գոհարները:
> Նրա ամուսինը կարող է վստահել նրան,
> Եվ նա մեծապես կհարստացնի ամուսնու կյանքը»
> (Առակաց 31.10,11, NLT):

Չամուսնացած կանա՛յք, նախքան մտածելը, որ այս խոսքը ձեզ չի վերաբերում, հիշե՛ք, որ Հիսուսը ձեր փեսացուն է: Այստեղ հարցն այն չէ, թե ով է ընդգրկված. այս խոսքը վերաբերում է բոլորիս:

Այստեղ խնդիրը հետևյալն է. արդյո՞ք կարելի է այսպիսի պատասխանատվություն վստահել մեզ: Արդյո՞ք մենք կհարստացնենք մեզ շրջապատողների կյանքը: Արդյո՞ք մենք կլինենք առաքինի և ընդունակ, թե՞ մեզնից ոմանք կլինեն առաքինի, իսկ ոմանք՝ ընդունակ: Միայն մի դրսևորումը բավական չէ, մենք կարիք ունենք, որ մեկտեղ հավաքվեն առաքինի կանայք, ովքեր ընդունակ են ամեն ինչի: Մենք պետք է լի-

նենք այնպիսի կանայք, որոնք ընդունակ են ամեն անհրաժեշտ բանի:

Վերջին տասնամյակում ես հանդիպել եմ շատ հրաշալի կանանց, ովքեր խրախուսում են ուրիշներին, որպեսզի վերջիններս գիտակցեն, թե ինչի են իրենք ընդունակ: Քանի որ կանայք ավելի շատ են գիտակցում այն կարիքները, որ կան մեր օրերում, նրանք միտումնավոր սկսում են կրթվել և զարգացնել իրենց տաղանդները, որպեսզի կարողանան արձագանքել աշխարհի խնդիրներին:

Այդ կանայք խորաթափանց լինելով և պատշաճ հիմնավորումներ ունենալով՝ բավականին խելամիտ ձևով համապատասխան հարցեր են առաջադրում: Նրանք իրենց գիտելիքների որակը բարելավելով կարողացել են աճել ու դառնալ այն, ինչ իրականում կան: Այս կանայք տաղանդավոր, շնորհալի և անվախ են, սակայն՝ պատվաշատ. շփվող են, սակայն՝ զուսպ. այժմյան են, սակայն՝ հեռուներ հասնող. սրտացավ են, սակայն՝ մոլեգին. մաքուր են, սակայն՝ ոչ միամիտ. ուժեղ ու հեզ են, սակայն բարձրակարգ ռազմագետ են:

Եթե մեր պլաններն ու ծրագրերը չեն ազդում երկրի և նրա բնակիչների վրա, ապա դրանք միայն տեսություն են. այդ ծրագրերը պետք է կյանքի կոչվեն: Դրանք կգործեն միայն այն դեպքում, եթե մենք ամբողջությամբ տրվենք դրանց:

> Բավական չէ թղթի վրա միայն վիթխարի ծրագրեր գրել, ես պետք է իմ գաղափարները երկրի վրա գրեմ:
>
> – ԷՄԻԼ ՊԵՐԵԻՐԱ

Մեր աշխարհը տարբեր ուժերի ազդեցություն է կրել: Դարեր շարունակ մեր երկիրը ենթարկվել է բնության ուժերի, ինչպիսիք են՝ մրրիկները, ցունամիները և մուսոնները: Երկրագնդի կեղևը ճեղքվել է, և երկրաշարժերից ցնցվել են նրա հիմքերը: Զինված ուժերն իրար դեմ են դուրս եկել թե՛ ազնիվ, թե՛ անազնիվ շարժառիթներով ու նպատակներով: Զորքերի կոալիցիաները հանդիպել են մարտադաշտերում և իրենց ետևից ավերածություններ թողել:

Բայց այդ ի՞նչ ուժ է, որն իր զորությամբ հայտնվելու է ո՛չ վախեցնելու, ո՛չ սպառնալու, ո՛չ էլ կործանելու համար: Այս ուժի անդամները կունենան ռազմավարական յուրահատուկ

դերեր. ոմանք՝ տեսանելի, ոմանք՝ անտեսանելի, բայց բոլորն էլ՝ արժեքավոր: Ինչ կլինի, եթե այս ուժը միաժամանակ անձնուրաց լինի իր շարժառիթների, և պարզունակ՝ իր նպատակների մեջ. ինչպիսին կլինի այն:

Ալեքսանդր Մակեդոնացին ասել է.

> «Ես չեմ վախենում առյուծների բանակից, որոնց առաջնորդում է ոչխարը. ես վախենում եմ ոչխարների բանակից, որոնց առաջնորդում է առյուծը»:

Ինչ զարմանահրաշ պատկեր է նկարագրված մեր մասին: Մենք ոչխարների բանակ ենք, որոնց առաջնորդում է առյուծը, և քանի որ հետևում ենք առյուծին, ապա չպետք է պատերազմենք վախկոտ ոչխարների պես: Հետևորդ լինելու հարցում մենք հեզ ենք, իսկ կռվելու հարցում՝ վայրագ: Եթե ուսումնասիրենք մարդկային ուժերի բնականոն ընթացքն ու պատմությունը, ապա ականատես կլինենք մի օրինակի. սկզբում՝ իշխանության ձեռք բերում, ապա՝ ուժի քայքայում, այնուհետև՝ իշխանության կորուստ, իսկ վերջում՝ ներսից փլուզում:

Իսկ ինչ, եթե գոյություն ունի մեկ այլ օրինակ, և եթե կա չձևավորված ու դեռևս չարտահայտված մի ուժ:

Ես այս գիրքը տպում եմ շատ ավելի մեծ տառաչափով, քան պիտի տպագրվի, որովհետև ինձ համար հետզհետե ավելի է դժվարանում մոտիկից փոքր տառերը տեսնելը, մինչդեռ ես կարողանում եմ շատ ավելի լավ տեսնել մեծ բաները մեծ հեռավորության վրա:

Հեռվում ես տեսնում եմ երկու հակասող պատկերներ՝ մեծ դժվարություն և հսկայական հաղթանակ: Մոտիկ և հեռու ափերում տեսնում եմ խորը ընկճվածություն, սակայն տեսնում եմ նաև փառավոր վերելք: Ես տեսնում եմ, թե ինչպես է համընդհանուր չարությունն ու անարդարությունը բացահայտվում և պարտության մատնվում տարբեր կողմերից՝ հանդիպելով Աստծո անխուսափելի լույսին և անժխտելի արդարությանը: Ես տեսնում եմ, թե ինչպես են Աստծո դուստրերն էգ առյուծի պես ճգվում՝ պատրաստվելով ցատկի: Ես այս ամենը տեսնում եմ ապագայում, և համոզված եմ, որ այն,

ինչ ասացի, չի զարմացնում քեզ: Ինչպես դու, այնպես էլ ես այս ամենը տեսնում եմ ոչ թե այն պատճառով, որ թերթեր եմ կարդում, այլ՝ որ կարողանում եմ տեսնել Հոգու մեջ:

Բայց ես ոչ միայն տեսնում եմ, այլ նաև լսում եմ: Ես լսում եմ հեռվից ու մոտիկից եկող աղաղակներ և անհույս մարդկանց աղերսանքներ, որոնք գտնվում են խավարի բանտերում: Ամեն օրը պայքար է հեղձուցիչ ճնշման դեմ, որը սպառնում է լռեցնել նրանց ձայները, իսկ հետո ձգտում է խլացնել նրանց երեխաների աղաղակները: Այս հուսահատ մայրերի միակ հույսն այն է, որ իրենց երեխաների համար ինչ-որ բան ավելի լավ կլինի:

Մի երիտասարդ մարմնավաճառ աղաչում էր, որ մենք վերցնեինք իր ութամյա դստերը և հոգ տանեինք, որովհետև երեխան թաքնվում էր մահճակալի տակ, մինչև մայրը ծառայություն էր մատուցում իր այցելուներին: Բարեբախտաբար, Ջեյմս և Բեթի Ռոբիսոնների «Կյանք» սոցիալական ծրագիրը փրկեց այդ փոքրիկ աղջկան, սակայն մայրը, ով վախեցած էր և հուսահատված, այդպես էլ մնաց հասարակաց տանը:

ՀՈՂՄԱՇՈՒՆՉ ԽՈՍՔԵՐ

Լինում են ժամանակներ, երբ ապշում եմ նրանից, ինչ լսում եմ, իսկ գիտե՞ք, թե ինչու: Ավելի հեշտ է տեսած կամ լսած *չլինել,* որովհետև, շատերը երես են թեքում այդ անհանգստացնող ձայներից ու պատկերներից և իրենց ուշադրությունն ուղղում են տարբեր զվարճալի բաների վրա: Հենց դա է պատճառը, որ զբոսաշրջությունը ծաղկում է սեռական թրաֆիքինգի հետ միասին: Ես դիտում էի, թե ինչպես էին Թաիլանդ այցելած օտարերկրացիները ձևացնում, թե այն, ինչ իրենք տեսնում են, հավանաբար, կազմակերպված երեկո է: Մի ամերիկացի գործարար, ում հետ զրուցում էի, իրեն այնպես էր պահում, կարծես նրա անպարկեշտությունը բարձրացնում էր Թաիլանդի տնտեսությունը:

> «Ով որ լսելու ականջ ունի, թող լսի և հասկանա»
> (Մատթ. 11.15, NLT):

Այս պարտականությունը չվերջացավ, երբ Հիսուսը՝ մար-

դու Որդին, համբարձվեց, և որպես Աստծո Որդի՝ գրավեց Իր արդար դիրքը: Հայտնության գրքում Նա կրկին խոսում է այն մասին, որ մենք այնպիսի մարդկանց կարիք ունենք, ովքեր բավականաչափ համարձակ են լսելու համար:

> «Արդյո՞ք արթուն են ձեր ականջները: Լսե՛ք հողմաշունչ խոսքերին, որ Հոգին փչում է եկեղեցիների միջով» (Հայտն. 2.7, MSG):

Մենք պետք է պատասխանենք Նրա հարցին. արդյո՞ք մեր ականջներն արթուն են:

Ես կասեմ ավելին, արդյո՞ք ցանկանում ենք, որ մեր ականջներն արթնանան: Սիրելինե՛րս, բոլորս գտնվում ենք մի իրավիճակում, որ ոչ միայն չենք լսում, այլ նաև ճիշտ չենք հասկանում: Երբ դու արթնանաս, արմունկով քեզ թեթև հրի և հարցրու. «Դու լսեցի՞ր այդ ձայնը»:

Ցավալի է, բայց մենք նման ենք քնկոտ հարսնացուի, ով շուռ ու մուռ է գալիս իր շքեղ անկողնում և իրեն ծածկում է բարձերով, որպեսզի խլացնի այն ձայնը, որ կարող է արթնացնել իրեն: Որքա՞ն բարձր պետք է հնչի մեր ժամանակի տագնապի ազդանշանը, որպեսզի մենք վեր կենանք և լիովին արթնանանք:

Մեր խոցված աշխարհում ակնհայտ մի ճիչ է լսվում, որի կողքին մեկ այլ ձայն է մեզ կանչում, բայց այն չի ճչում: Աշխարհի աղմուկի մեջ դա այն ձայնն է, որը լսելու համար պետք է լարես ուշադրությունդ: Եվ դա Հոգու մեղմ ձայնն է, որն ուժգնանում է, երբ արձագանքում ենք նրան:

Ինձ դուր է գալիս «հողմաշունչ խոսքեր» արտահայտությունը: Աստված Իր Խոսքը հաստատել է քամիների վրա, իսկ Սուրբ Հոգին նմանեցվում է քամու կամ օդի հոսանքի, որոնք կյանք և զորություն են շշնջում և խոսքեր տարածում: Մենք չենք կարող տեսնել քամին, բայց տեսնում ենք նրա ազդեցությունը: Քամին քո կյանքում ինչ-որ բաներ բերելու և ինչ-որ բաներ տանելու զորություն ունի: Նրա էներգիան պտտում և շարժման մեջ է դնում նավերին: Քամու ուժն ալեկոծում է ծովերը և քայքայում լեռները: Գոյություն ունեն հանդիպակաց քամիներ, որոնք պայքարում են առաջընթացի դեմ, կան նաև

ուղեկցող քամիներ, որոնք արագացնում են մեր ճանապարհը: Քամին անընդհատ շրջապատում է մեր աշխարհը՝ ճամփորդելով երբեմն արագ, երբեմն էլ՝ դանդաղ: Այն մի տեղից մյուսն է տանում Աստծո շշնջոցը:

Հաճախ մեզ շրջապատող արհեստական աղմուկը խլացնում է Հոգու *հողմաշունչ խոսքերն* ուշադիր լսելու մեր ընդունակությունը:

Եվս մեկ խոչընդոտ կա լսելու ընդունակության համար: Դա այն է, երբ քո լսածն արդեն ծանոթ է քեզ: Երբ ինչ-որ բան կրկին ու կրկին լսում ենք, այդտեղ վտանգ կա, որ կարող ենք շեղվել և դադարել լսելուց:

Եթե գիտենք, թե ինչ պետք է ասի տվյալ մարդը, մենք այլ կերպ ենք լսում նրան: Մի քանի տարի առաջ Աստվածաշունչ կարդալիս ինձ հայտնաբերեցի հենց այսպիսի իրավիճակում: Ես այնքան ծանոթ էի Աստվածաշնչի որոշ թարգմանություններին, որ երբ կարդում էի, գիտեի, թե հաջորդ խոսքը որն էր: Հավանաբար, քեզ հետ էլ է այդպես պատահել: Եվ դա ստիպեց ինձ որոշ չափով կորցնել այն մանկական զարմանքը, որ ունեի Աստծո Խոսքի հանդեպ: Իմ անտարբերությանը հակազդելու նպատակով ես սկսեցի պրպտել Աստվածաշնչի թարգմանության «Ուղերձ» տարբերակը:

Իսկ գիտե՞ք, թե ինչու, որովհետև ցանկանում էի զարմանալ, այդ պատճառով էլ այս գրքում շատ մեջբերումներ արել եմ հենց «Ուղերձ» տարբերակից, որպեսզի դու էլ զարմանաս ու հիացմունք վերապրես: Ես Աստվածաշունչը չեմ փոխարինում այլ արտահայտություններով, պարզապես ավելի հարմար ու հասկանալի լեզու եմ օգտագործում և լրացուցիչ հետազոտություն եմ ներկայացնում: Սակայն դու կարող ես ազատ լինել ուսումնասիրելու քո նախընտրած աստվածաշնչյան տարբերակը:

Ես այդ ամենն արել եմ այն պատճառով, որ ինչպես դու, այնպես էլ ես, իսկապես ցանկանում եմ լսել: Երբ մեր ականջները բաց են, մենք չենք կարող չբարձրացնել մեր ձայնը:

> «Դու բերանդ բաց համրի համար և բոլոր անխնամների դատի համար:

Բա՛ց բերանդ, դատի՛ր արդարությամբ և տե՛ս աղքատի և տնանկի դատը» (Առակ. 31.8,9):

Այս հատվածում Սողոմոնի մայրը՝ Բերսաբեն, իր որդուն՝ Սողոմոն թագավորին, հանձնարարում է իր հզոր ձայնը բարձրացնել նրանց համար, ովքեր տանջվում են անարդարության լծի տակ: Այս գլուխը վերաբերում է նաև առաքինի կնոջը (տե՛ս Առակ. 31.10-31): Սողոմոնի մոր պես արդյո՞ք մենք կխրախուսենք մեր աշխարհի տղամարդկանց՝ խոսելու նրանց համար, ում ձայները լռեցված են: Մեր Աստծո առջև այսօր մենք թագավորներ և քահանաներ ենք: Ուստի, եթե նույնիսկ մյուսները լուռ մնան, մենք կխոսենք:

Իբրև «մեծ մայրիկ» (տատիկ)՝ ես ցանկանում եմ համոզված լինել, որ այն, ինչ մեր որդիներն ու դուստրերը կժառանգեն, իսկապես մեծ կլինի: Համաշխարհային ուսումնասիրությունները, որպես բացակայող օղակ, ավելի ու ավելի են մատնացույց անում գենդերային հավասարությանը՝ համաշխարհային աղքատության և նույնիսկ ահաբեկչության ալիքը դադարեցնելու համար: 2001 թվականին Համաշխարհային բանկը մի ազդեցիկ ուսումնասիրություն կատարեց «Գենդերային զարգացում. ձայնի, իրավունքների և ռեսուրսների հարցում գենդերային հավասարություն» թեմայով՝ փաստելով, որ գենդերային հավասարության խթանումը վճռական է համաշխարհային աղքատության դեմ պայքարի գործում: «Զարգացող երկրներում աղջիկների կրթության մեջ ներդրում անելը կարող է ամենաբարձր փոխհատուցվող ներդրումը լինել»,- գրել է Լորենս Սամերսը, որը այդ ժամանակվա Համաշխարհային բանկի գլխավոր տնտեսագետն էր: «Հարցն այն չէ, թե արդյոք պետություններն ի վիճակի՞ են կատարել այս ներդրումը, հարցն այն է, թե արդյոք նրանք կարո՞ղ են իրենց թույլ տալ չկրթել ավելի շատ աղջիկների»[1]: Միացյալ ազգերի զարգացման ծրագիրը նույնպես ուսումնասիրություն է անցկացրել՝ անելով հետևյալ եզրակացությունը. «Կանանց զարգացումը օգնում է բարձրացնել տնտեսական արդյունավետությունը»[2]:

Մեր ժամանակների ահաբեկչությունը անվտանգության մասնագետներին նույնպես դրդել է գենդերային ուսումնասի-

րություն անցկացնել, և ահա թե ինչ են նրանք հայտնաբերել.

> «Այդքան շատ մահմեդական ահաբեկիչների առկայությունը քիչ կապ ունի Ղուրանի հետ, այն ավելի շատ կապված է մահմեդական շատ երկրներում տնտեսության և հասարակական կյանքի մեջ առողջ կանանց մասնակցության բացակայության հետ: Աղջիկներին կրթելն ու զարգացնելը, ըստ ռազմական բնագավառի մասնագետների, կթուլացնի ահաբեկիչներին»[3]:

Մեծ ծախսեր և ջանքեր են հատկացվել այդ վճռական, խորաթափանց և ընդարձակ ուսումնասիրությունների համար: Ես միշտ սարսափում եմ, երբ մեր մարդկային իմաստությունը մատնացույց է անում այն, ինչ Աստված արդեն ասել է: Շատ վաղուց, երբ չկար համաշխարհային խնդիր, կար համաշխարհային պատասխան, որ կոչվում է «կին»:

> «Լավ չէ, որ մարդը մենակ լինի. նրա նման մի օգնական շինեմ իրեն հարմար» (Ծննդ. 2.18):

Իսկապես լավ չէր, որ մարդը մենակ էր: Եվ հիմա, ինչպես այն ժամանակ էր, կանանց հավասար իրավունքներ և հնարավորություններ տալը բազմապատիկ բարություն է բերում տղամարդկանց, կանանց, երեխաներին և այն աշխարհին, որը պատկանում է բոլորիս: Մեկուսացած կյանքն առաջարկում է այն, ինչը «լավ չէ»: Մարդկային արարածները ստեղծվել են մեկը մյուսի հետ փոխհարաբերություն հաստատելու համար: Չնայած դրան՝ պարզվում է, որ միայն արական սեռի ներկայացուցիչներից կազմված խոշոր միությունները կարող են պոտենցիալ աղետի վտանգ հանդիսանալ: Ծննդոց գրքի տեղեկություններից և մեր ներկա հետազոտություններից կարող ենք եզրակացնել, որ այն մշակույթներում, որտեղ գերիշխում են տղամարդիկ, շատ հարցերում անհավասարակշռություններ կան:

Դու չես ստեղծվել ստրուկ լինելու համար. դու ժառանգակից ես: Կանայք Աստծո պատասխանն են: Կանանց ձայների ավելացումն ընդլայնում է երեխաների կրթական հնարա-

վորությունները, խթանում է տնտեսությունը և ակնհայտորեն նվազեցնում ահաբեկչության վտանգը:

Բայց ինչպիսի՞ն է այդ պատասխանը:

Երբ հայտնաբերեցի, որ Աստված կնոջը կանացի է ստեղծել, հասկացա, որ ես չեմ ուշացել. որպես դուստր, կին և մայր ես պատասխան եմ, իսկ եթե ես պատասխան եմ, ապա տրամաբանական է, որ այն քույրերը, ովքեր շրջապատում են ինձ, նույնպես պատասխան են: Աստծո աչքերին մենք երկրորդական քաղաքացիներ չենք: Սիրելի՛ս, դու ունես ներուժ՝ լինելու կենդանի լուծում մարդկային խնդիրներին:

Ճանապարհորդելիս երբ հռչակում եմ այս պարզ ճշմարտությունը երիտասարդ ու տարեց կանանց կյանքերում, ինձ համար դժվար է լինում բացատրել նրանց արձագանքը: Կանայք սրտի թրթիռով ոչ միայն լսում են, այլև բարձրաձայն կրկնում են ու հավատում ասածներիս. «Ես պատասխան եմ»:

Այդ պահին նրանք կարծես ձգվում են և հայտնություն ստանում: Նրանք վերակողմնորոշվում են, և նրանց աչքերը բացվում են՝ տեսնելու համար իրենց կանացիությունն այնպես, ինչպես Աստված է միշտ տեսել. կինն այն արարածն է, ով լրացնում է: Բայց այս գիտակցումը դեռ սկիզբն է:

Կանայք կարող են ոչ միայն խթանել տնտեսությունը, այլև անել ավելին: Լուծումներ տալու մեր կարողության շնորհիվ նոր հարցեր կծագեն: Մենք հաստատում ենք նոր օրենքներ, որտեղ կանայք հավասար դիրք են գրավում տղամարդկանց հետ և հավաքվում ենք՝ ձևավորելու մի աշխարհ, որտեղ կանանց և երեխաներին ոչ թե շահագործում, այլ գրկաբաց ընդունում են:

Ահա որոշ բաներ, ինչ ես գիտեմ Երկնքի դստեր մասին.

Նա հաճելի է, խոհեմ և ընդունակ:

Կյանքում ավելի շուտ շփվող է, քան մեկուսացած:

Սիրված է Աստծո կողմից և ատելի՝ սատանայի կողմից:

Աշխարհով մեկ ճնշված է թե՛ աննկատ, և թե՛ ակնհայտ միջոցներով:

Իսկ հարցն այն է, թե ինչպիսին նա կլիներ, եթե համընդհանուր աջակցություն և ռազմավարություն ունենար:

ԱՐԹՆԱՅՐՈ՛Ւ ԱՅՆ ԱՆԴԻՄԱԴՐԵԼԻ ՈՒԺԸ, ՈՐ ԹԱՔՆՎԱԾ Է ՔՈ ՆԵՐՍՈՒՄ

Ես արտոնություն եմ ունեցել ճանապարհորդել Հարավային Ասիայով և Հնդկաստանով՝ որպես «Կյանք» սոցիալական ծրագրի գործընկեր՝ հույս ունենալով գրառել պատմություններ, որոնք բավականաչափ ազդեցիկ կլինեն ուրիշներից արձագանքներ ստանալու համար: Կամբոջայում, Թաիլանդում և Մումբայում ականատես եմ եղել աղքատության պատուհասին և սեռական թրաֆիքինգի անարգանքին: Սակայն տեսել եմ նաև հույս և վերականգնման խոստում, երբ մարդիկ մեծահոգաբար արձագանքել են այս խնդրին, և կազմակերպությունները միասին գործի են անցել՝ փոխելու այդ իրավիճակը: Մենք տեսնում ենք, որ ամենուրեք համագործակցության և արձագանքի խիստ կարիք կա:

Մի անգամ ընկերոջս հետ նախաճաշում էի Ուկրաինայի սրճարաններից մեկում, երբ սրահ մտավ մի գեղեցիկ, երիտասարդ կին: Սա այդ երկրի համար անսովոր չէ, քանի որ այն հայտնի է իր գեղեցիկ կանանցով, սակայն այս կնոջն ուղեկցում էր մի մարդ, ով վաթսուն տարեկանի տեսք ուներ: Կինը հագել էր բարձրակրունկ կոշիկներ և տաք տաբատ: Նա տասնութ տարեկանից ավելի չէր երևում, նրանք զբաղեցրել էին մեր կողքի սեղանը, և ես հետևում էի, թե ինչպես էր տարեց մարդը կուլ տալիս իր ուտելիքը, մինչև որ աղջիկն ըմպում էր սև սուրճը և բութ հայացքով պատուհանից դուրս էր նայում: Վաճառասեղանի ետևում կանգնած երիտասարդ տղամարդիկ շշնջում, քմծիծաղ էին տալիս և մատնացույց էին անում նրան: Շատ չանցած՝ մեկ այլ երիտասարդ աղջիկ, որ երկու անգամ ավելի մեծ էր նրանից, միացավ նրանց սեղանին: Ես ուզում էի աղաղակել... Աղջիկն այնպիսի միայնակ և կորած տեսք ուներ: Ակնհայտ էր, որ նա «բարձր գին» ունեցող մարմնավաճառ էր: Սակայն մենք տեսանք ընդամենը այն, որ նա սիրո ծարավ ունեցող մի աղջիկ էր, ով խաղարկվում էր երկու անառակ գործարարների միջև, որոնք խժռում էին նրա կյանքը:

Ես խոսել եմ մեր քույրերից մի քանիսի հետ, ովքեր թրաֆիքինգի զոհ են դարձել: Այո՛, նրանք մեր քույրերն են, և

իրենք իրենց ընտրությամբ չեն դարձել մարմնավաճառ. նրանք պարզապես այն զոհերն են, ովքեր բարեբախտաբար կենդանի են մնացել:

Մի խոնավ օր, երբ Հնդկաստանում էի, երիտասարդ ու տարեց կանանցից լսեցի սրտաճմլիկ պատմություններ: «Կյանք» սոցիալական ծրագիրն այդ կանանց հավաքել էր մի փոքրիկ բնակարանում: Նրանցից յուրաքանչյուրն ուրույն կերպով պատմում էր իր պատմությունը՝ ոմանք արցունքներն աչքերին, ոմանք էլ առանց որևէ ակնհայտ հույզերի:

Ես համոզված եմ, որ նրանք զարմանում էին, թե ինչու էի ցանկանում լսել նրանց պատմությունները: Արդյո՞ք ես կարեկցում էի նրանց, իսկ միգուցե դատո՞ւմ էի: Մի՞թե ես կարող էի ընդհանրապես հասկանալ նրանց և կարո՞ղ էի որևէ պատասխան ունենալ նրանց համար:

Այդ խիզախ կանանցից մեկը, ում կանվանեմ Սամա, պատմում էր, որ ինքն ապրում էր Նեպալի հեռավոր գյուղերից մեկում: Երբ նա փոքր էր, բազմաթիվ երազանքներ ուներ, սակայն մայրը նրան շարունակ հուսախաբ էր անում: Մի օր նրա քեռին թաքուն ականջ է դնում նրանց վիճաբանությանը և Սամային մի կողմ քաշելով՝ առաջարկում է իր հետ տանել Մումբայ, որտեղ նա հնարավորություն կունենար կրթություն ստանալ և իրականացնել իր երազանքները: Խոստումն անդիմադրելի էր:

Նախքան արշալույսը, Սաման քեռու հետ գաղտնի հեռանում է իրենց փոքրիկ գյուղից: Նեպալից դեպի Հնդկաստան նա երկար ու վտանգավոր ճանապարհ է անցնում: Եվ ժամանելով Մումբայ՝ քեռին աղջկան տեղավորում է մի խղճուկ հյուրանոցային սենյակում, որպեսզի հանգստանա: Աղջիկը քնում է, և մինչև նրա արթնանալը, քեռին վաճառում է նրան:

Սաման արթնանում է և շփոթված նայում իրեն շրջապատած օտարականներին. ժամանակն էր, որ նա աշխատեր այն գումարը, որ նրա քեռուն վճարել էին:

Օտարականները Սամային տանում են տեղի հասարակաց տունը և փակում մի մութ սենյակում: Աղջիկը նույնիսկ գաղափար չուներ, թե ինչ էր տեղի ունենալու: Նա նույնիսկ այնտեղի լեզուն չէր հասկանում: Եվ ահա դուռը բացվում է, և ներս

է մտնում հաճախորդը, որին Սաման պետք է ծառայեր: Երբ Սաման սկսում է դիմադրել, չորս կին պահում են աղջկան, մինչև տղամարդը բռնաբարում է նրան:

Այդ ժամանակ Սաման տասներեք տարեկան էր: Նա սովորում է այնտեղի լեզուն և հատուցում է իր պարտքը՝ ժամանակի ընթացքում դառնալով ճարպիկ գործարար կին: Չունենալով ուրիշ հեռանկարներ և գնալու որևէ տեղ՝ նա մեծանում է հասարակաց տան միջավայրում՝ դառնալով հասարակաց տան տիրուհի: Նա ինքն է սկսում գնել և վաճառել երիտասարդ աղջիկների: Եվ նրա հրամանով հպատակեցնում էին թրաֆիքինգի ենթարկված երիտասարդներին: Սաման վերահսկում էր բռնաբարության նախապատրաստական փուլը և հրամայում էր հպատակներին ծեծել այնքան, մինչև որ նրանք հնազանդվեին:

Երբ ես հանդիպեցի Սամային, դժվար էր հավատալ, որ այն ամենը, ինչ նա պատմում էր, ճշմարիտ է: Նա այլևս տիրուհի չէր. նա միջին տարիքի մի զուսպ կին էր: Ինչ-որ մեկը պատմել էր նրան Աստծո սիրո մասին, և նա դարձել էր քրիստոնյա: Նրան նաև հնարավորություն էր տրվել դուրս գալ այնտեղից: Սաման խիզախություն էր ունեցել հասարակաց տներից հեռանալու: Այժմ նա անդադար աշխատում էր փրկելու հենց այն աղջիկներին, որոնց ինքը մի ժամանակ ճնշել էր:

Երբ միասին զրուցում էինք, ես փորձում էի հասկանալ, թե ինչպես էր Սաման դարձել տիրուհի: Մի՞թե նա մոռացել էր, թե ինչ ահաբեկված վիճակում էր հայտնվել, երբ տասներեք տարեկանում բռնաբարել էին իրեն: Ես նրան հարցրի.

«Սամա՛, ինչպե՞ս էիր կարողանում նայել երիտասարդ աղջիկներին, որոնց առևանգում, բռնաբարում և ծեծում էին»:

Նա հոգոց հանեց և գլուխը շարժելով ասաց.

«Մենք անում էինք այն, ինչ ստիպված էինք անել... որպեսզի գոյատևեինք»:

Շատերի առջև դրված է գոյատևման խնդիրը:

Ես մագլցել եմ «մերժվածության սարը» և քայլել կեղտոտ փողոցներով, որտեղ տներն այնքան խարխուլ ու ժամանակավոր են, որ զարմանալի չէ, որ նրանցում ապաստան գտածներն անհույս վիճակում են: Ես ծպտված սողոսկել եմ

հասարակաց տները: Տեսել եմ Արևմուտքի աննպատակ կյանքով ապրող կանանց ընկճվածությունը: Հետևել եմ, թե ինչպես են նրանց միջոցները վատնվում, որովհետև մենք մոռացել ենք, թե ով ենք: Ես անմիջականորեն ականատես եմ եղել այդ խնդիրներին, և իմ մեծագույն հույսն է, որ տեսնեմ նաև դրանց պատասխանները:

Ահա մի խթանող հանձնարարական *«Երկնքի կեսը»* գրքի վերջաբանից, որը ներշնչող և միաժամանակ մարտահրավեր նետող է:

> «Պատմության ընթացքը կանանց բեռնակիր կենդանուց և սեռական խաղալիքից վերածում է հասուն մարդկային արարածների: Կանանց զարգացնելու տնտեսական առավելություններն այնքան մեծ են, որ երկրներին համոզում են շարժվել այդ ուղղությամբ: Շուտով սեռական ստրկությունը, պատվի համար սպանությունները և թթվային ազդեցություններն այնքան անընմբռնելի կլինեն, որքան ոտքերը կապելը: Սակայն ո՞րքան կտևի այդ փոխակերպումը, և մինչև դրա ավարտը որքա՞ն աղջիկներ կառևանգվեն ու կբերվեն հասարակաց տներ, և արդյո՞ք մեզնից յուրաքանչյուրը կդառնա այդ պատմական շարժման մասնիկը, թե՞ պարզապես կողմնակի դիտորդ կլինի»[4]:

Սա այն հարցն է, որ դրված է յուրաքանչյուրիս առջև:

Ես գրում եմ սա, որպեսզի դու ողողվես այս հայտնությամբ: Իմ անկեղծ աղոթքն է, որ այս խոսքերը քո ներսում ինչ-որ հուժկու բան արթնացնեն: Ես հույս ունեմ, որ դու վեր կկենաս կին առյուծի ուժով և Աստծո հրաշքը կտանես ամեն տեղ, ուր որ գնաս: Հետո միասին կդառնանք այն ուժը, որ աշխարհը երբևէ չի տեսել: Շարունակե՛ք կարդալ այս գիրքը, իմ առյո՛ւծ քույրեր, և արթնացե՛ք:

3

Արթուն և վտանգավոր

«Բարեկիրթ կանայք հազվադեպ են պատմություն կերտում»:

ԼՈՈՒԻԶԵԼ ՏԵՉԵՐ ՈՒԼՐԻ

Էգ առյուծին տարբեր իրավիճակներում և փուլերում ուսումնասիրելու նպատակով սկսեցի գրքեր ու հոդվածներ կարդալ, տեսաժապավեններ, փաստագրական ֆիլմեր և նույնիսկ «You Tube»-ում տեղադրված տեսահոլովակներ դիտել: Չնայած, որ եղել էի աֆրիկյան սաֆարիում, իմ ամերիկյան պատկերացումն էգ առյուծի վերաբերյալ սահմանափակ էր: Նույնիսկ այժմ ինձ չեմ համարում էգ առյուծների գիտակ, սակայն կարող եմ ասել, որ հիացած դիտորդ եմ:

Այդ փաստագրական ֆիլմերից մեկը պատմում է երկու էգ և մեկ արու առյուծի մասին, որոնց վերաբնակեցնում են Հարավային Աֆրիկայի մի նոր արգելոցում: Արուն առյուծների խմբի գլխավորն էր, և երկու էգերի օգնությամբ նա հաջողությամբ հաստատել էր իր տիրապետությունը: Նրանք երեքով թագավորում էին հարավաֆրիկյան արգելոցի լայնարձակ տարածքում:

Առյուծների խմբի շարժմանն ու առաջընթացին հետևելու նպատակով արու առյուծին պարանոցակապ էին ամրացրել: Արգելոց բերելուց հետո երկու տարի էր անցել, և այժմ ժամա-

նակն էր հանել պարանոցակապը, քանի որ այլևս կարիք չկար վերահսկելու առյուծին: Բացի այդ, պարանոցակապը խանգարում էր առյուծի բաշին, և այն պետք է հանվեր, որպեսզի բաշը, որքան հնարավոր է, լայն երևար: (Առյուծներն օգտագործում են միմյանց բաշերի լայնությունը, որպեսզի որոշեն՝ արդյոք արժե՞ մարտահրավեր նետել մյուս առյուծին՝ տարածքի գերիշխանության համար: Եթե հակառակորդի բաշը մարտահրավեր նետողին շատ ավելի լայն է թվում, նշանակում է, որ նա չի կարողանա իր ծնոտով բռնել մյուս առյուծի կոկորդը, և այդպես նա չի կարող գնալ հակամարտության):

Այն առյուծը, որի վրա արգելոցի պահապանները երկու տարի առաջ պարանոցակապ էին դրել, այլևս երիտասարդ, հնազանդ և հեշտ նվաճվող առյուծ չէր: Նա հզոր էր և էգ առյուծների օգնությամբ խմբին հաջողությամբ բնակեցրել ու պաշտպանել էր օտար նվաճողներից: Նա շարունակ ապացուցել էր, որ ինքը փորձառու պահապան է: Այժմ նրան բռնելը հեշտ չէր, քանի որ նա սովորել էր համարձակ, ազատ և վայրի կերպով շրջել իր տարածքում: Արգելոցի պահապանները պետք է նրան հանգստացնեին, որպեսզի կարողանային հանել պարանոցակապը: Նրանք առյուծի նկատմամբ հարմար դիրք գրավեցին և անվտանգ հեռավորությունից նրա վրա թմրեցնող դեղամիջոց կրակեցին: Առաջին կրակոցը հազիվ թե անհանգստացրեց նրան. նա մի փոքր ցնցվեց՝ ահռելի հայացքն ուղղելով պահապաններին: Նրանք կրկին կրակեցին. առյուծը երերաց և վայր ընկավ: Արգելոցի պահապաններն արագ գործի անցան. նրանց մեքենան մոտեցավ ընկած առյուծին:

Հենց այն պահին, երբ նրանք պատրաստվում էին դուրս գալ իրենց ավտոմեքենայից և հանել առյուծի պարանոցակապը, ինչ եք կարծում, ո՞վ հայտնվեց. իհարկե գլխավոր էգ առյուծը: Քանի որ էգ առյուծը հմտորեն կարողացել էր թաքնվել տարածքում, այդ պատճառով էլ արգելոցի պահապանները չէին նկատել նրա ներկայությունը մինչև այն պահը, երբ նա ինքը որոշեց հայտնվել նրանց առջև: Այն, որ պահապաններն անտեղյակ էին էգ առյուծի ներկայությունից, չէր նշանակում, որ նա էլ էր անտեղյակ նրանց ներկայությունից: Երբ էգ առյուծն իմացավ, որ իր արուն վայր է ընկել, նա վեր կացավ,

դուրս եկավ թաքստոցից և համարձակորեն հայտնեց իր ներկայությունը: Վայր ընկած առյուծի և եռանդուն պահապանների միջև տեղակայվելով՝ էգ առյուծը ետ ու առաջ անելով՝ սպառնաց ու մռնչաց: Ցցելով ականջները և մորթը՝ նա պահապաններին ցույց էր տալիս, որ այն, ինչ տեղի էր ունենում, իրեն դուր չէր գալիս:

Նախքան թմրեցնող դեղամիջոցի ազդեցությունը թողնելը, արգելոցի պահապանները քիչ ժամանակ ունեին առյուծին հասնելու և պարանոցակապը հանելու համար, սակայն էգ առյուծն անհնար էր դարձնում իրականացնելու այդ գործողությունը: Նրանց մոտ ընդամենը մեկ թմրեցնող դեղամիջոց էր մնացել: *Արու առյուծին մոտենալու համար նրանք պետք է թմրեցնեին էգին:* Նշանաձիգը կրկին կրակեց, և ներարկիչը դիպավ էգ առյուծին: Առյուծը կատաղած շրջվեց դեպի պահապանները և վայր ընկավ: Երբ նրանք մոտեցան թմրած առյուծին, մթնոլորտում ակներև լարվածություն էր տիրում. ինչպես էգ առյուծը, այնպես էլ արու առյուծը անկարող, բայց գիտակից վիճակում էր, և արու առյուծի աչքերը հետևում էին պահապանների յուրաքանչյուր շարժմանը:

Շշուկով խոսելով՝ պահապաններից մեկը սուր որսորդական դանակով կտրեց առյուծի պարանոցակապը, իսկ հետո նրա մարմնից հանեց երկու թմրեցնող նետերը: Հետո նրանք հեռու գնացին և իրենց ուշադրությունն ուղղեցին էգ առյուծի վրա: Նրանք պետք է արագությամբ գործեին, նախքան վիթխարի կատուներից որևէ մեկը կամ, միգուցե, երկուսն էլ ուշքի կգային: Էգ առյուծը պառկել էր կողքի վրա՝ ակնհայտ դարձնելով կրծքավանդակի հաստացած մաշկը, ինչը հղիության նշան էր: Պահապանները մեղմորեն և առավել զգուշությամբ բարձրացրին նրա իրանը և արագ հանեցին նետը:

Գետնին պառկած առյուծը մռնչաց և փորձեց վեր կենալ, սակայն դեռևս անկարող էր ոտքի կանգնել: Արգելոցի պահապաններն, առանց ետ նայելու, արագությամբ վերադարձան դեպի մեքենան: Մեքենայի շարժիչը միացավ, և նրանց խումբը թեթևացած շունչ քաշեց: Այդ փաստագրական ֆիլմի մեկնաբանն իր նախկին հանգիստ տոնը փոխելով՝ բացատրեց. «Չկա ավելի վտանգավոր բան, քան գտնվել լիովին արթուն առյուծների կողքին»:

ԹՄՐԱԾ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐ

Երբ լսեցի «վտանգավոր» և «լիովին արթուն» բառերի զուգակցումը, այն գրավեց իմ ուշադրությունը: Ինչ կպատահեր, եթե մենք առյուծների պես վտանգավոր և լիովին արթուն լինեինք: Միայն այդ ժամանակ սպառնալիք կհանդիսանայինք խավարի համար, որը շատերին է գերության մեջ պահում:

Սիրելիներս, այս պահին ես աղոթում եմ, որ մեզնից յուրաքանչյուրը գիտակցի, որ մենք իսկապես վախեցնում ենք մեր թշնամուն, և նա ամեն բան անում է, որ մեզ ետ պահի Աստծո գործն առաջ տանելուց: Եվ եթե մենք լիովին արթուն և գործուն լինենք, նա չի կարող մոտենալ այնքան, որ գերի ու շղթայի մեզ: Եվ այդ ամենը հաշվի առնելով՝ նա մեզ թմրեցնող դեղամիջոց է տալիս, որպեսզի չկարողանանք անել այն, ինչ Աստված կանչել է մեզ անելու: Սակայն իմ տեսիլքի առյուծի պես մենք պետք է արթնանանք, վեր կենանք և հիշենք, թե ով ենք, և լույսի միջոցով դեմ կանգնենք չարին, որն այս աշխարհի մեջ է:

ԹՄՐԱԾ՝ ԱՌՕՐՅԱ ՀՈԳՍԵՐՈՎ

> «Սակայն, այնպես արեք, որ հոգնատանջ չլինեք և չտարվեք ձեր ամենօրյա պարտականություններով, որ կորցնեք ժամանակի գիտությունն ու ննջեք՝ մոռանալով Աստծուն: Գիշերը վերջանում է, և մոտենում է արշալույսը: *Արթուն եղեք և իմացեք, թե ինչ է Աստված անում:* Աստված ավարտին է հասցնում փրկության գործը, որ սկսեց, երբ մենք հավատացինք: Մենք չենք կարող ոչ մի րոպե կորցնել: Մենք չպետք է այդ թանկարժեք ցերեկային ժամերը վատնենք թեթևամիտ արարքների և զվարճության, քնի ու շվայտ կյանքի, կռիվների ու հափշտակությունների մեջ: Դուրս եկեք անկողնուց և հագնվեք: Մի՛ հապաղեք ու պարապ ման մի՛ եկեք մինչև վերջին րոպեն: Քրիստոսի՛ն հագեք և արթուն ու պատրաստ եղեք» (Հռոմ. 13.11-14, MSG):

Այս խոսքերի մեջ ուշադրություն դարձրեք բառերի ընտրությանը. մի՛ տարվեք և հոգնատանջ մի՛ եղեք ձեր ամենօրյա պարտականություններով, քանի որ դրանք կարող են գողանալ ձեր արժեքավոր ժամանակը կամ կարող են ստիպել ձեզ՝ քնել: Կյանքի այս գրվածքները հրատապ կոչ են վեր կենալու, արթուն լինելու և գիտակցելու, թե ինչ է Աստված անում: Երբ արթուն լինես և իմանաս, թե ինչ է Աստված անում, այդ ժամանակ կիմանաս, թե դո՛ւ ինչ պիտի անես: Հապաղելու ժամանակն ավարտված է. այժմ վեր կենալու և գործի անցնելու ժամանակն է: Տագնապի ազդանշանը ժամեր առաջ արդեն հնչել է:

Վեր կենալու այս կարիքը յուրովի շեշտադրվեց վերջերս ընկերոջս հետ ունեցած հեռախոսազրույցի ընթացքում: Նա պատմում էր, թե ինչ բավականություն էր ստացել, երբ ամուսնու հետ ընթրիքի սեղանի շուրջ զրուցել էր մի հայտնի հրեա վարդապետի հետ: Նա բացել էր իր սիրտը՝ ասելով, թե որքան է մտահոգվում հրեա ամերիկացիների վիճակի համար: Նա երկրով մեկ ճանապարհորդում էր և ժողովարաններում ու կոնֆերանսներին դասախոսություններ կարդում՝ աղերսելով հրեա ամերիկացիներին՝ աղոթել Ամերիկայում բնակվող քրիստոնյաների համար, որպեսզի նրանք միասին ոտքի կանգնեն և գիտակցեն իրենց իշխանության մասին: Նա մտահոգված էր, որովհետև մեր երկրի հրեա բնակչությունը չափազանց փոքր է իրեն պաշտպանելու համար, և քրիստոնյաները՝ որպես պաշտպաններ, պետք է նրանց կողքին կանգնեն՝ դիմակայելով բոլորիս դեմ բարձրացող հակասեմիտական և հակաքրիստոնեական հոսանքին:

Շատերը հիասթափված ու թմրած են, կա՛մ էլ անտեղյակ են, թե ինչ է տեղի ունենում այս աշխարհում: Միգուցե դա այն պատճառով է, որ չափազանց երկար ժամանակ է, որ մենք լսում ենք «հանգստացնող» ավետարան, որը շատ քչերին է դրդում փրկել կորածներին: Արդյո՞ք շարժման և հոգևոր վարժության պակասը մեզ ծուլացրել ու թմրեցրել է: Արդյո՞ք օրինապաշտական ճնշումը կամ մեղքի հանդեպ ունեցած սովորական վերաբերմունքը դանդաղեցրել է մեր գործողությունները՝ ուշացնելով կամ բթացնելով մեր արձագանքները: Միգուցե Աստված թափահարում է մեզ, որ վեր կացնի և արթուն

ու վտանգավոր դարձնի: Եթե այդպես է, ապա դա առաջին անգամը չէ, որ Աստված անում է:

Իսրայելի զավակներն անապատում թափառեցին ավելի երկար, քան անհրաժեշտ էր: Նրանք մեծաքանակ ոչխարների պես աննպատակ ճամփորդում էին. երբեմն շեղվում ու դժգոհում էին, երբեմն էլ հնազանդվում էին՝ ցերեկը հետևելով ամպի սյունին, իսկ գիշերը՝ կրակի սյունին: Երբեմն նրանք լսում էին իրենց հովիվ Մովսեսին, իսկ երբեմն էլ՝ ոչ: Բայց երբ նրանք հավաքվեցին, որ վրան խփեն Մովաբի դաշտավայրում, որը սահմանակից էր Խոստացված երկրին, նրանց հավաքական ներկայությունն ակնհայտ դարձավ, և հարևան ազգերն իմացան նրանց ժամանելու մասին: Երկրի բնակիչների համար անապատի անփորձ թափառաշրջիկների այս կանգառը հզոր պատերազմողների հավաք թվաց:

Բռնության ենթարկված ստրուկները՝ իսրայելցիները, որպես Աստծո թագավորական ընտանիք, կորցրել էին իրենց ինքնությունը (Իսրայել՝ նշանակում է «Աստծո իշխան»): Տարիներ շարունակ անապատում թափառելուց հետո նրանք պատրաստվում էին այնտեղ բնակություն հաստատել: Հավանաբար, նույնիսկ այն ժամանակ Աստծո զավակները բաց թողեցին այն, ինչն այդքան ակնհայտ և տեսանելի էր թագավորների, Բաղաամ մարգարեի և Իսրայելին շրջապատող թշնամի ազգերի համար: Նրանք այլևս թափառական չէին. նրանք Աստծո ընտրյալ երկրպագողներն էին և անտեղյակ պատերազմողները:

Ցավոք, առանց գիտակցելու, թե իրականում ովքեր էին իրենք, և չունենալով ճիշտ տեսանկյուն իրենց շրջապատող թշնամի ազգերի մասին՝ Աստծո զավակները կորցրին իրենց տեսիլքն ու նպատակը: Նրանք մի կողմ դրեցին իրենց սուրբ զսպվածությունը և ճակատագրական սխալ գործեցին: Նախքան Խոստմունքի երկիր մտնելը հիմարաբար անսուրբ դաշինքներ կնքեցին, և նրանց այդ սխալը մեզ համար զգուշացում է. վտանգավոր է, երբ արթնանում ես՝ մոռանալով, թե ով ես դու:

Պարզ ասած՝ անապատում նրանք պաշտամունք մատուցեցին կուռքերին, և Իսրայելի տղամարդիկ սեռական հարաբերությունների մեջ մտան մովաբացի կանանց հետ,

որոնք նրանց ճամբար էին ուղարկվել Բաղաամ մարգարեի խորհրդով (տե՛ս Թվոց 25.1,2, 31.16, Հայտն. 2.14): Կանայք իսրայելցի տղամարդկանց հրավիրեցին մասնակցելու Մովաբի աստվածների երկրպագությանը: Հետևանքը կործանարար էր, և Աստծո ժողովուրդը ժամանակավորապես մոլորվեց իր ճանապարհից: Իսրայելի համար դա աղետ էր, նա այդ ժամանակ ուներ նախանձավոր մի քահանա՝ Մովսեսը, և հաստատուն թշնամի՝ մադիանացիները: Եվ Աստված պատվիրեց Մովսեսին հաշվել ժողովրդին, որից հետո ժողովուրդը վերախմբավորվեց:

Ինչևէ, Իսրայելի թշնամիները չկարողացան հաղթել նրան: Երբ իսրայելցիները հնազանդվում էին, հաղթանակն ապահովված էր լինում, բայց երբ անհնազանդ էին լինում Աստծուն, դատաստանն անխուսափելի էր դառնում: Նրանք ապաշխարեցին, և Աստված վերացրեց աղետը, բայց մինչև այդ քսանչորս հազար իսրայելցի մահացավ:

Իսկ ի՞նչ դաս ենք քաղում սրանից. եթե մեր թշնամին չի կարողանում մեզ պահել թմրած, հանգիստ և պասիվ վիճակում, ապա այդ ժամանակ նա մեզ գայթակղում է՝ պղծելով մեր հանգստի վայրը և տանելով մեզ երկրպագության անբարեպաշտ ու այլասերված ճանապարհներով:

Ինչպիսի՞ն են այն թմրած քրիստոնյաները, որոնք ասում և հավատում են հետևյալ բաներին.

- Աշխարհն անդունդն է գնում... հուսով եմ, որ հափշտակությունը շուտով կլինի, և բոլորս կկարողանանք փախչել վերահաս աղետից:
- Ինչո՞ւ ես և ամուսինս չպետք է նայենք ուսուցողական ֆիլմեր, որտեղ պատկերվում է, թե ինչպես են ուրիշ ամուսնական զույգեր սեռական հարաբերություն ունենում:
- Այդ ամենն այնքան սարսափեցնող է. ավելի լավ է փակեմ աչքերս (հորանջում է) և մի փոքր ննջեմ:
- Աստված գիտի, որ ես մարդկային արարած եմ և ունեմ սեռական կարիքներ, որոնք չեն բավարարվում կողակցիս կողմից: Ես գիտեմ, որ չպետք է դա անեի, բայց չէ՞ որ ես արդեն ներված եմ...

- Սա այն նախագահը չէ, որին ես ձայն եմ տվել, այդ իսկ պատճառով, չեմ աղոթի նրա համար:
- Սեռական և մարդկային թրաֆիքինգը ողբերգական բան է, սակայն այն դրսի խնդիրն է, այնպես չէ՞:
- Ինչ ցավալի է, որ այդքան մարդ մահացավ Հայիթիի և Չիլիի երկրաշարժից, և հրաշալի է, որ հայտնի մարդիկ դրամական միջոցներ են հավաքում՝ նրանց օգնելու համար:

Երբեմն ցանկանում եմ լաց լինել, որովհետև վախենում եմ, որ մենք մոռացել ենք, թե ով ենք: Մենք մե՛զ չենք պատկանում, մենք պատկանում ենք Աստծուն: Մենք սուրբ ժողովուրդ ենք և առանձնացված ենք Նրա և Նրա նպատակների համար: Մենք անկարգ, մաքառող և անհայր փախստականների խումբ չենք, որը պարտվել է մեղքից և կասկածում է Աստծո գոյությանը, այլ՝ մենք Քրիստոսի ամբողջական մարմինն ենք, և որպես այդպիսին՝ կանչված ենք ցնծության, հաղթանակի, նշանների ու հրաշքների համար: Բայց ցավոք, մեր քույրերից ոմանք դեռ չգիտեն այդ մասին:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ ԵՎ ՈՉ ԹԵ ԽՆԴԻՐՆԵՐ

Մենք արդեն հակիրճ լուսաբանել ենք այն, որ դու ոչ թե խնդիր ես, այլ՝ պատասխան: Այս մասին ես գրել եմ 2005 թվականին, իմ՝ *«Կռվի՛ր աղջկա պես»* գրքում: Մեկ այլ ուշագրավ և հետաքրքիր գիրք, որը կոչվում է *«Երկնքի կեսը»,* հետևյալ հաստատումն է անում. «Կանայք ոչ թե խնդիր են, այլ՝ լուծում»[1]: Այս գիրքը գրվել է Պուլիցերի լրագրողական մրցանակ ստացած ամուսիններ Նիկոլաս Դ. Քրիստոֆի և Շերիլ Վուդանի կողմից: Գրքի նպատակն է՝ արթնացնել աշխարհին և ցույց տալ, որ կանայք էլ ունեն հավասար արժեքներ, կրթական և տնտեսական հնարավորություններ. սա հրատապ կարիք է: Նրանց աշխատանքը բարեբախտաբար հզոր ալիք բարձրացրեց աշխարհի դերասանների, ակտիվ գործիչների և լրատվամիջոցների շրջանակներում:

Ես կրկին բարձրացնում եմ այդ հարցը, որովհետև ինձ տխրեցնում է այն փաստը, որ եկեղեցին առաջինը չէր, որ

դեմ կանգնեց սեռերի միջև անհավասարությանը: Մենք կարծես նման ենք Հովնանին՝ հին օրերի քնկոտ մարգարեին, ով ննջում էր տախտակամածի մութ թաքստոցում, մինչև անձնակազմը խելակորույս փորձեր էր անում՝ շրջանցելու ճակատագրական փոթորիկը: Առաջինը մե՛նք պետք է լինեինք տախտակամածի վրա և Աստծո լուծումը փնտրեինք մեր աշխարհի հավասարակշռությունը խախտող անարդարության դեմ: Սակայն, ի տարբերություն Հովնանի, մեր առջև առանձին փոթորիկ չի բարձրացել, որը սպառնում է հարվածել օվկիանոսի միակ նավին: Այսօր ամբողջ աշխարհն է փոթորկվում՝ ենթարկվելով բնապահպանական աղետալի հարձակումների և ֆինանսական ցնցումների: Այսօր անարդարությունը ցնցում և ճոճում է մեր երկրագունդը: Եվ այս տագնապալի իրավիճակում մարդիկ շրջվում են դեպի քրիստոնյաները և հարցնում. «Ինչպե՞ս դա պատահեց»: Վիրավոր, գերի ընկած և շփոթված մարդիկ մեր կողմն են շրջվում և հարցնում, թե ինչպես ենք կարողանում քնել, երբ պետք է աղաղակենք Աստծուն, որպեսզի միջամտի տվյալ իրավիճակի համար, քանի դեռ չափազանց ուշ չէ: Սակայն եկեղեցում շատերը թույլ են տվել, որ համատարած շարժն օրորի և անհանգիստ քնի մեջ մտցնի իրենց, կա՛մ էլ դրդի վիճաբանելու ոչ կարևոր բաների շուրջ:

Հովնանի օրերում Աստված փոթորիկ ուղարկեց, որպեսզի մարգարեին արթնացնի իր անհնազանդ վիճակից և հիշեցնի, որ Նինվեի ժողովուրդը վատ ճանապարհի վրա է: Աստված երբեք չի ցանկանում մարդկանց թողնել վնասակար ճանապարհի վրա, մինչդեռ Հովնանն այնքան դժկամ էր, որպեսզի կանխեր այն կործանումը, որ պատել էր հնագույն քաղաքին: Եվ նա վազեց ու թաքնվեց նավի խորքում. Հովնանը ճանապարհ ընկավ հակառակ այն ուղղության, որ Աստված ասել էր նրան: Քանի դեռ նա նավի մեջ քնած էր, Աստված այնպիսի ուժեղ փոթորիկ ուղարկեց, որ քիչ էր մնում նավը խորտակվեր: Իսկ ինչո՞ւ Հովնանը փախավ. քանի որ նա չէր ցանկանում փրկել նրանց, ում ինքն անարժան էր համարում: Նայե՛ք Աստծո հետ նրա ունեցած զրույցին այն բանից հետո, երբ Աստված խնայեց թե՛ նրան, թե՛ քաղաքը:

> «Եվ Հովնանը տրտմեց մեծ տրտմությունով և զայրացավ: Եվ աղոթք արեց Աստծուն ու ասաց. «Ո՛հ, Աստված, սա չէ՞ր իմ խոսքը, քանի դեռ իմ երկրում էի. դրա համար էլ աճապարեցի, որ փախչեմ Թարսիս, որովհետև գիտեի, որ Դու ողորմած, գթած, երկայնամիտ և բազումողորմ Աստված ես և կզղջաս չարիքի համար»» (Հովնան 4.1,2):

Հովնանն ուզում էր, որ Աստված դատեր ու պատժեր քաղաքը, բայց Աստված ցանկանում էր շնորհք և ողորմություն ցույց տալ: Հովնանն ուզում էր, որ Աստված բնաջնջեր մարդկանցով լի այդ քաղաքը: Նա այնքան վրդովված էր, որ պատրաստ էր մահանալ չորացած ծառի ստվերում:

> «Այն ժամանակ Աստված Հովնանին ասաց. «Մի՞թե լավ է, որ բարկացել ես դդմենու վրա»:
>
> Հովնանն ասաց. «Լավ է, որ բարկացել եմ մինչև մահ»:
>
> Աստված ասաց. «Դու ափսոսում ես դդմենու համար, որի վրա աշխատություն չքաշեցիր, և որին չմեծացրիր, որը մեկ գիշերվա մեջ եղավ և մեկ գիշերվա մեջ փչացավ: Իսկ ես չափսոսա՞մ Նինվե մեծ քաղաքի համար, որի մեջ կան հարյուր քսան հազար մարդուց ավելի, որոնք չեն հասկանում իրենց աջ ու ձախ ձեռքը, և շատ անասուն»» (Հովնան 4.9-11):

Մի՞թե մենք էլ ենք կորցրել այն հեռանկարը, թե որն է Աստծո համար կարևոր: Մի՞թե մենք ավելի մտահոգված ենք մեր կացարանով ու հարմարավետությամբ, քան նրանով, ինչ Աստված արժեքավոր է համարում. Բարձրյալը Երկնքում չի ցնծում կործանման հեռանկարով, Նա փափագում է ազատել նրանց, ովքեր վատ ճանապարհի վրա են: Եկե՛ք հույսներս չկորցնենք նրանցից, ում Աստված ցանկանում է փրկել: Ես աղոթում եմ, որ թույլ տաս, որ Աստված արթնացնի քո ներսի կին առյուծին և քեզ այնպիսի դիրքում դնի, որ ոչ թե դատես, այլ փրկես ուրիշներին այն աղետից, որը սպառնում է հաղթել ու կործանել նրանց:

Ժամանակն է հնազանդվել Աստծո կոչին. Նա մեզ է վստահել աշխարհին ուղղված Բարի լուրի ուղերձը և պատվիրել է, որ սիրենք միմյանց: Նա հանձնարարել է մեզ հոգ տանել որբևայրիների, որբերի, օտարականների և աղքատների մասին: Նույնիսկ հիմա Նա խրախուսում է երիտասարդ ու տարեց դուստրերին, որպեսզի նրանք աշխարհի խնդիրների շուրջ իրենց լուծումները տան: Աստված առաջարկում է մեզ, որ մի կողմ դնենք միմյանց միջև մեր տարբերությունները և միասին աշխատենք Աստծո գործի համար:

Ոմանք դեռևս շարունակում են միմյանց նկատմամբ սիրալիր լինել, ոմանք չափազանց զբաղված են կորցրած բաների համար լաց լինելով, իսկ ոմանք էլ պայքարում են անմիտ վարդապետական հարցերի շուրջ՝ հակառակվելով Քրիստոսի մարմնի մյուս անդամներին:

Սիրելինե՛րս, ես չեմ ցանկանում, որ Հովնանի պես մեզ նավից դուրս նետեն, կամ իսրայելցիների նման ստիպված լինենք ժամանակավոր բնակություն հաստատել անապատում, որ արթնանանք: Ուրեմն, նայենք աշխարհում տեղի ունեցող չար բաներին ու խնդիրներին և թույլ տանք, որ դրանք արթնացնեն մեզ:

Հոգումս տեսնում եմ արթնացած և կրակոտ մարդկանց, ովքեր պատրաստ են փոխել իրենց շրջապատող աշխարհը:

ԴՈՒ ՅՈՒՐԱՀԱՏՈՒԿ ԵՍ ՔՈ ԱՐՏԱՀԱՅՏՉԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ

Այս գիրքը գրելիս իմ խմբագիրներն ինձ խրախուսում էին այնպիսի կանանց օրինակներ բերել, ովքեր լիովին արթուն են, որպեսզի ընթերցողը կարողանա տեսնել, թե ինչ կարող է իրականացնել լիովին արթուն կինը: Սակայն, չեմ ցանկանում սահմանափակվել միայն նրանով, ինչ մենք տեսել ենք: Լիովին արթուն և վտանգավոր լինելու մասին պատմությունը դեռ գրվում է: Եվ ես հավատում եմ, որ աշխարհը դեռ պետք է տեսնի, թե ինչ է տեղի ունենում, երբ քրիստոնյա կանայք լիովին արթուն ու վտանգավոր են դառնում, երբ գործում են թե՛ անհատապես, թե՛ միասնաբար:

Աստված երկու անգամ հանձնարարել է ինձ սկսել քրիս-

տոնյա կանանց *արթնացնելու գործընթացը:* Ես նույնիսկ գաղափար չունեմ, թե ինչ կարող է տեղի ունենալ, երբ մենք *լիովին արթուն* լինենք, սակայն միանգամայն համոզված եմ, որ մենք վտանգավոր կլինենք խավարի համար: Այս մասին խորհելով՝ այն կարծիքին եմ, որ մենք դեռևս չենք կարող տալ քրիստոնյա վայրագ կին առյուծի լիարժեք սահմանումը:

Կարծում եմ նաև, որ մարդիկ սիրում են, երբ իրենց ասում են, թե ինչ պետք է անեն, բայց այն քրիստոնեությունը, որ քայլ առ քայլ սովորեցնում է, թե ինչ պետք է անենք, շատ բաներում մեզ կզրկի Աստծո խորհրդից: Այնպես որ, սա «ինչպես անելու» ուղերձ չէ: Ես ցանկանում եմ, որ դու արթնանաս՝ վեր բարձրացնես քո ներսի կին առյուծին և քայլես քո յուրահատուկ արտահայտչականությամբ: Միայն դու և Աստված կարող եք որոշել, թե ինչպիսին կլինի այն կին առյուծը, որը լիովին կարթնանա քո ներսում:

Վերջերս իմ աշխատակազմին խնդրեցի բառերով կամ պատկերներով արտահայտել, թե ինչ է իրենց մեջ արթնացնում կամ բարձրացնում կին առյուծը: Ես չզարմացա, երբ լսեցի նրանց պատասխանները, որոնք տատանվում էին *շնորհքի ու քնքշության, վայրագի ու անվախի միջև:* Ահա թե ինչպիսի լայնարձակ ներուժ ունի արթնացնելու արձագանքը:

Սուրբ Գիրքը քննելով՝ հայտնաբերել եմ, որ Աստված հաճախ իր ժողովրդին կամ մարգարեներին ասում է. «Գնա՛ այնտեղ, այսինչ բա՛նն արա, այնինչ բա՛նն ասա», առանց հստակ նշելու, թե ինչ է լինելու հետո: Դրա վառ օրինակը Եղիսեն է, որը որբևայրի կնոջն ասաց. «Գնա՛ դրսից՝ քո բոլոր դրացիներից դատարկ ամաններ ուզիր. քիչ չհավաքես: Եվ տունդ մտի՛ր ու դուռը քո ետևից և քո որդիների ետևից կողպի՛ր և յուղը լցրո՛ւ այն բոլոր ամանների մեջ և լցվածները վե՛ր առ» (Դ Թագ. 4.3,4): Սա փոքր-ինչ անսովոր է թվում, քանի որ նա դեռ պետք է լուծեր մաքսավորների հետ կապված խնդիրը, ովքեր սպառնում էին ծառա դարձնել այդ կնոջ որդիներին: Եվ երբ կինն արեց այն, ինչ իրեն ասվել էր, նա վերադարձավ Աստծո մարդու մոտ: Այն ժամանակ մարգարեն նրան ասաց. «...յուղը ծախի՛ր և պարտքդ վճարի՛ր և մնացածով ապրի՛ր դու և տղաներդ» (Դ Թագ. 4.7):

Ինձ հետաքրքիր է, թե որքան գերբնական բաներ ենք

Աստծուց բաց թողնում այն պատճառով, քանի որ առաջին քայլը դեռ չավարտած՝ ցանկանում ենք իմանալ երկրորդ, երրորդ և չորրորդ քայլերի մասին: Ուստի, պատկերացրու, որ քո ձեռքին մի այսպիսի գիրք է, որտեղ գրված է. «Կարդա՛ այս խոսքերը, աղոթի՛ր և թո՛ւյլ տուր Աստծուն, որ լցնի այն բոլոր անոթները, որ դրել ես Նրա առջև»:

Խնդրի՛ր, որ Աստված լցնի քո միտքը կին առյուծի գաղափարով՝ օգտագործելով այն ձևը, տեսքը կամ միջոցը, որով Նա ցանկանում է քեզ ոգևորել:

Մի՛ վախեցիր այն պատկերից, որ մենք կին առյուծներ ենք, կամ Հիսուսն Առյուծ է. սա նույն բանն է, երբ ասում ենք, որ Հիսուսը մեր հովիվն է, իսկ մենք՝ Նրա ոչխարները: Մի՞թե բառացիորեն նկատի ունենք, որ մենք ոչխարներ ենք, կամ էլ Աստված խնդրում է մեզ հետևել ու վստահել Իրեն՝ բառացիորեն համարելով մեզ ոչխարներ: Հիսուսը նույնպես մեր փեսան է, իսկ մենք Նրա հարսնացուն: Սրանք այլաբանական պատկերներ են. Հիսուսը միաժամանակ և՛ Հովիվ է, և՛ Թագավոր, և՛ Աստված, և՛ Մարդ, և՛ Փեսա, և՛ Եղբայր, և՛ Առյուծ, և՛ Գառ, ինչպես նաև Սկիզբն ու Վերջը: Մի՞թե զարմանալի է, որ Նա ցանկանում է «ընդարձակել» մեզ: Իմ նպատակն է, որ արձագանքես այս ամենին քո յուրահատուկ ընկալումներով և ուժի ու ազդեցության մակարդակով:

ԱՐԹՆԱՑՆԵԼՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Երբ սովորում էի քոլեջում, մեր կանանց ակումբը առանձին ննջապատշգամբ ուներ: Ես համոզված չեմ, թե ինչու էր այն այդպես կոչվում, որովհետև ո՛չ շենքից դուրս էր գտնվում, ո՛չ էլ դեպի դուրս որևէ մուտք ուներ: Այն երկրորդ հարկում տեղակայված երկար, մութ սենյակ էր՝ լի երկհարկանի մահճակալներով, որոնցից մի քանիսը դասավորված էին պատի երկայնքով, իսկ մյուսներն ուղղահայաց շարքով դրված էին մութ պատուհանների մոտ:

Քանի որ այդ ընդհանուր սենյակից շատերն էին օգտվում, այդ պատճառով մեզ թույլ չէին տալիս զարթուցիչներ օգտագործել: Փոխարենը, մենք հերթով կատարում էինք իմ՝ ամենից քիչ սիրված աշխատանքը՝ արթնացնելու պարտա-

կանությունը: Նախքան գիշերն անկողին մտնելը՝ քույրերն իրենց անվանաքարտերը դնում էին ժամատախտակի սանդղակի այն գծի վրա, երբ ցանկանում էին արթնանալ: Սա նշանակում էր, որ այն մարդը, ում վրա դրված էր արթնացնելու պարտականությունը, պիտի իմանար, թե որտեղ էր քնած նրա քույրերից յուրաքանչյուրը: Եվ այդ գիշեր նա քնում էր խմբից հեռու՝ մեկ այլ սենյակում, որտեղ կարող էր զարթուցիչ օգտագործել:

Երբ իմ հերթն էր լինում, ես զարթուցիչի զանգը դնում էի ամենավաղ նշանակված ժամից կես ժամ առաջ, որպեսզի կարողանայի լոգանք ընդունել. առանց հերթի լոգանք ընդունելը առաջինն արթնանալու միակ արտոնությունն էր:

Երբ արթնացնելու պահը գալիս էր, երկուսից երեք ժամվա ընթացքում ես շրջում էի սենյակով և տասնհինգ րոպեից մինչև կես ժամը մեկ արթնացնում էի աղջիկներին: Ես սողոսկելով անցնում էի մութ ննջասենյակով և փորձում էի միաժամանակ և՛ ուտել, և՛ ինքս ինձ կարգի բերել: Կրկին ու կրկին կամաց ներս էի մտնում, փակում էի դուռը, այնուհետև շարունակում էի քայլել մութ սենյակով՝ ուշադիր հաշվելով մահճակալները և աշխատելով չարթնացնել քնած քույրերին: Եվ երբ գտնում էի այդ քրոջը կամ քույրերին, զգուշությամբ, սակայն հաստատուն կերպով արթնացնում էի նրանց:

Ես մեծ պատասխանատվություն էի զգում, որովհետև գիտեի, որ քույրերից յուրաքանչյուրի ժամանակին արթնանալն ինձնից էր կախված, քանի որ նրանք պետք է դասերի հաճախեին, ստուգարքներ հանձնեին, դիտումների մասնակցեին և, իհարկե, հանդիպեին իրենց ընկերներին:

Մի օր այնպես ստացվեց, որ ես այդքան էլ լավ չկատարեցի իմ պարտականությունը: Սովորաբար, ես չափազանց հանգիստ և մեղմ էի լինում, բայց այդ անգամ, երբ փորձեցի արթնացնել ավագ քույրերից մեկին, նա փնթփնթալով պատասխան տվեց, և ես ենթադրեցի, որ նա արթնացել է, բայց՝ սխալվեցի. նա պարզապես քնի մեջ խոսում էր: Այդ օրը ճաշի ժամին նա ինձ խիստ նախազգուշացում արեց և հայտնեց, թե նրա համար ինչ արժեք ունեցավ իմ ոչ արդյունավետ հերթապահությունը:

Երբեմն լինում են սխալներ, որ չես կամենում երկրորդ ան-

գամ կրկնել: Եվ ես շուտով հասկացա, որ կան քույրեր, որոնց անհրաժեշտ է լավ թափ տալ, հասկացա նաև, որ կան այնպիսի քույրեր էլ, որոնց բավական է միայն մեղմ հպումը, և նրանք արթնանում են, իսկ ոմանք էլ անմիջապես արթնանում ու նստում են, երբ նրանց ականջին շշնջում ես իրենց անունը: Որոշ քույրեր շնորհակալություն էին հայտնում ինձ, որոշներն էլ կշտամբում ու հրամայում էին՝ իրենց հանգիստ թողնել:

Ամենաճարպիկները նրանք էին, ովքեր արթուն էին երևում և նույնիսկ ասում էին. «Եղա՛վ, եղա՛վ, ես արդեն արթնացել եմ», իսկ հետո կրկին քնում էին: Ես սովորել էի, որ այդպիսի քնկոտ քույրերի մոտ պետք է մնալ այնքան ժամանակ, մինչև նրանք դուրս գան իրենց անկողնուց և երկու ոտքով կանգնեն հատակին:

Մեկ այլ դժվար իրավիճակ էր լինում այն ժամանակ, երբ արթնացնում էի սխալ մարդու: Չնայած նրան, որ փորձում էի լուռ և ուշադիր լինել, բայց երբեմն արթնացնում էի վերևի կամ կողքի մահճակալին քնած քրոջը: Եվ նա արթնանում էր, թևիցս քաշում ու շշնջում էր. «Հե՛յ, ես արթնացել եմ, իմ անունը հանի՛ր ցուցակից»:

Ամաչում եմ ասել, բայց ես պատկանում էի կշտամբող, չարախոսող, դժվար արթնացող աղջիկների տեսակին: Ինձ գրեթե միշտ հարկավոր էր լինում երկրորդ անգամ արթնացնել: Պարտականությունը կատարելով՝ ես գիտեի կանոնները. եթե աղջկան երկու անգամ արթնացնում էին, բայց նա դեռ մնում էր մահճակալի մեջ, երրորդ անգամ այլևս չէին արթնացնում: Այդ պատճառով շատ կարևոր էր արթնանալ երկրորդ զգուշացումից, քանի որ այն վերջինն էր: Երբ աղջիկներն արդեն արթուն էին և պատրաստվում էին վեր կենալ անկողնուց, ես այլևս պատասխանատու չէի նրանց վերահսկելու համար, անհրաժեշտ էր միայն, որ ավարտեի ինձ կարգի բերելու ընթացքը:

Մեր գթառատ Աստված չի գործում աղջիկների հանրակացարանի կանոններով. Նա ավելի քան ուրախ է, որ մինչև վերջին րոպեն շարունակում է արթնացնել մեզ, քանի դեռ չկա հրատապ կոչի մերժում: Ես զգում եմ, որ նույնիսկ հիմա որոշ քույրեր արձագանքում են արթնանալու այն կոչերին, որոնք ուղղված են իրենց շրջապատող քնկոտ կանանց:

ԱՐԹՆԱՑՆԵԼ ԻՆՉ-ՈՐ ՄՈԼԵԳԻՆ ԲԱՆ

Ինձ համար տարօրինակ է, որ կյանքի այս ժամանակաշրջանում ես կրկին արթնացնելու պարտականություն եմ կատարում, միայն թե այս անգամ պատասխանատվությունն անհամեմատ մեծ է: Երբեմն թվում է, թե ես շրջում եմ մութ սենյակների մահճակալների կողքով և (հիանալի ժամանակներ) զգուշորեն թափ եմ տալիս, համառորեն կանգնում և երբեմն էլ ընդամենը շշնջում եմ իմ քույրերի անունները, և նրանք արթնանում ու վեր են կենում:

Գիտեմ, որ ես մենակ չեմ՝ արթնացնելու այս առաջադրանքի հարցում, և Աստծո դուստրերից յուրաքանչյուրը կարձագանքի նիրհից արթնանալու տարբեր միջոցներին ու մեթոդներին:

Ես պարտավորվում եմ մի քանի վայրի սկզբունքներ ու գեղեցիկ պատկերներ դնել ձեր առջև: Եվ իմ աղոթքն է, որ այս փառահեղության և ուժի հայտնությունը ձեր մեջ ինչ-որ մոլեգին բան արթնացնի, որպեսզի, երբ լիովին արթուն լինեք, իմանաք, թե ինչ պետք է անեք:

Սիրելի՛ առյուծ քույր, աշխարհը կարիք ունի, որ ոչ միայն արթնանաս, այլև արտահայտես քո աստվածատուր, վայրագ կողմը: Ինչպե՞ս կարելի է նկարագրել վայրագ քրիստոնյա կնոջը. մի՞թե նա գոռում և ճչում է, կա՛մ էլ ճանկռում և ոտքով է հարվածում. միգուցե դրա ժամանակն էլ գա, բայց ես գիտեմ, որ եթե իմ զավակներից կամ թոռներից որևէ մեկի վրա հարձակվեն, իմ արձագանքն այդպիսին և դրանից ավելի կատաղի կլինի: Աստված Ովսեի գրքում անդրադառնում է մայր արջի և էգ առյուծի հակազդմանը և հաստատում է, որ Ինքն էլ է այդպիսին:

> «Ձագերը կորցրած արջի պես պիտի պատռեմ քո սիրտը:
> Պիտի կուլ տամ քեզ քաղցած էգ առյուծի պես և պատառեմ քեզ վայրի գազանի պես» (Ովսե 13.8):

Աստվածաշնչյան այս խոսքն, անկասկած, ներառում է մոլեգինի կատաղի, հուժկու կողմը, սակայն այն ավելի խորը

իմաստ ունի: Այլ կերպ ասած՝ մոլեգին՝ նշանակում է *ուժգին, վայրագ, հզոր, փոթորկալից, հուժկու, բոցավառ և հարձակողական:* Ես չեմ կարող պատկերացնել բառերի այնպիսի հավաքածու, որն ավելի ճշգրիտ ներկայացնի այն, ինչ բորբոքվում է իմ ներսում: Անկասկած՝ ինչ-որ փոթորկալից բան է արթնացել, որն իր հետ ավելի մեծ պարզություն և ուժ է բերել: Եվ այս ուժն անձնական ալեկոծություն չի պատճառել, այլ՝ այն նպատակ և կենտրոնացում է բերել: Դրա շնորհիվ ես ջերմեռանդ եմ դարձել այնպիսի բաների նկատմամբ, որոնցից նախկինում անտեղյակ եմ եղել:

Շատ անգամներ այս արթնանալու պահերն ինձ մի փոքր հանկարծակիի են բերել: Դրանցից մեկը տեղի ունեցավ 2007 թվականի հոկտեմբերի վերջին կամ նոյեմբերի սկզբին: Ես լոգարանում (որը բոլոր վայրերից ամենահարմարն էր) ամսագիր էի կարդում: Երբ թերթում էի էջերը, առաջին անգամ հանդիպեցի Թաիլանդում տեղի ունեցող սեռական թրաֆիքինգի դաժանություններին: Ավարտելով հոդվածը՝ մի քանի պարբերություն կրկին կարդացի՝ գրեթե չհավատալով նրան, ինչ այնտեղ գրված էր: Մի՞թե մարդիկ կարող էին այդքան դաժան լինել: Մի՞թե այդպիսի բան կարող էր պատահել, և ես դրան անտեղյակ լինելով՝ սկսեցի լաց լինել (բոլոր վայրերից ամենահարմար սենյակում՝ լոգարանում), իսկ հետո աղոթեցի. *«Աստվա՛ծ, եթե ես այս հարցում խոսքով կամ ուժով կարող եմ որևէ օգնություն ցուցաբերել, ուրեմն ես Քո դուստրն եմ»:* Եվ այս զարթոնքի աղոթքով ինչ-որ բան փոխվեց:

Մի քանի շաբաթ անց «Կյանք» սոցիալական ծրագրից հեռախոսազանգ ստացա. «Լի՛զա, մենք խումբ ենք հավաքում Թաիլանդ ուղարկելու համար և ուզում ենք սեռական թրաֆիքինգի կանխարգելման համար դրամական միջոցներ հավաքել և իրազեկություն տարածել, կարծում ենք՝ դու այն մարդն ես, ում պետք է ուղարկել»: Ընդամենը երեք ամիս անց ես մեկնեցի Թաիլանդ՝ մասնակցելով «Կյանք» սոցիալական ծրագրի կողմից մարդկային թրաֆիքինգի դեմ կազմակերպած առաջին նախաձեռնությանը:

Իսկ ի՞նչ կլիներ, եթե ես այդ օրը չաղոթեի, այլ պարզապես լաց լինեի, գլուխս տարուբերեի ու շարունակեի թերթել էջերը, իհարկե՝ շուտով կհասնեի մաշկի խնամքի նորագույն մի-

ջոցներին, նորաձևությանը, կամ էլ՝ դիետայի գաղտնիքների մասին պատմող հոդվածներին: Եթե աղոթելու փոխարեն ես շարունակեի կարդալ, ապա, ամենայն հավանականությամբ, այդ գիշեր կգնայի քնելու՝ առանց ձայնս երկինք բարձրացնելու: Իսկ երբ այդ հարցը կրկին գրավեր իմ ուշադրությունը, միգուցե ես նման մի բան ասեի. «Այո՛, ես այդ մասին լսել եմ... Ամսագրի մեջ եմ կարդացել... Դա այնքա՛ն, այնքա՛ն տխուր է»:

Երբ դու *արթուն* ես, չես կարող *չարձագանքել:* Մի՛ շփոթիր արթուն լինելը վրդովված լինելու հետ: Եթե որևէ բան վրդովեցնում է քեզ, դու կարող ես այդ պահին հակազդել, սակայն ինչ-որ բանի համար վրդովելը չպետք է քեզ ետ պահի էջերը թերթելուց. դու կարող ես վրդովվել, սակայն չարթնանալ, բայց դու չես կարող լիովին արթուն լինել և չարձագանքել աշխարհի խնդիրներին: Ահա այդ է պատճառը, որ, երբ կարդացի երիտասարդ աղջիկներին առևանգելու և հասարակաց տներ տանելու մասին հոդվածը, ես աղոթեցի Աստծուն՝ որ պատրաստ եմ անել այն, ինչ Նա կցանկանա, որպեսզի դեմ կանգնենք այդ դաժանությանը: Իմ աղոթքը հնարավորություն ստեղծեց. մի՞թե ուրիշ հնարավորություններ չէին եղել: Գուցե, սակայն ես կարող էի բաց թողնել նաև այդ մեկը:

ԱՍՏՎԱԾ ՉՓՐԿԵՑ ՔԵԶ ՍԱՆՁԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Աստված չի հայտնում Իր անսահմանությունը՝ մեզ սահմանափակելու համար, այլ՝ ճիշտ հակառակը՝ Նա ցանկանում է Իր սիրտը դնել մեր ներսում: Իմ ընկերուհի Քրիստինը տալիս է դրա լավագույն ձևակերպումը. «Աստված չփրկեց քեզ սանձելու համար»:

Աստված չի փնտրում այնպիսի մարդկանց, ովքեր վարվում են քրիստոնյաների պես, այլ՝ Նա ցանկանում է, որ մենք լինենք քրիստոնյաներ: Քրիստոնյա՝ նշանակում է «օծված կամ Քրիստոսի նման»: Հիսուսը չէր շրջում «բարի լինելով». Նա շրջում էր՝ «բարի անելով» և ազատելով նրանց, ովքեր ճնշված էին: Ինչո՞ւ է Նա քեզ օծել:

> «Տիրոջ Հոգին Ինձ վրա է. որի համար էլ օծեց Ինձ.
> Նա Ինձ ուղարկել է աղքատներին ավետարանելու,

> սրտով կոտրվածներին բժշկելու,գերիներին թողություն քարոզելու և կույրերին տեսողություն տալու, խոցվածներին ազատ արձակելու, *Տիրոջ ընդունելու տարին քարոզելու*» (Ղուկ. 4.18,19):

Եթե Աստծո Հոգին Հիսուսի վրա էր այդ ամենն անելու համար, և եթե մենք ծնված ենք այդ նույն Հոգուց, ուրեմն մենք էլ պետք է անենք այն, ինչ Նա արեց. աղքատներին Բարի լուր քարոզենք, խոցվածներին ազատ արձակենք և հռչակենք, որ սա Աստծո գործելու տարին է: Ես հավատում եմ, որ յուրաքանչյուր տարի Աստծո գործելու տարին է, և Նա սպասում է, որ մենք Նրա անունից գործի անցնենք:

Այս հանձնարարության համար Աստված կարիք չունի տնային պայմաններին ընտելացած դուստրերի, որոնք իրենց օրն անցկացնում են համեղ թխվածքներ պատրաստելով և իրենց բարեկիրթ պահելով: Թխելու մեջ վատ բան չկա, սակայն, եթե դա այն ամենն է, ինչ մենք անում ենք, Աստված չի գործածի մեզ պատմություն փոխելու համար:

> Բարեկիրթ կանայք հազվադեպ են պատմություն կերտում:
> – ԼՈՈՒՐԵԼ ՏԵՉԵՐ ՈՒԼՐԻ

Ես գիտեմ, որ այս մեջբերումը ոմանց մարտահրավեր կնետի: Այդպես պատահեց և ինձ հետ, երբ առաջին անգամ կարդացի այն: Սա ոչ թե անպարկեշտ լինելու հորդոր է, այլ գիտակցելու, որ փոփոխությունը միշտ էլ գալիս է այն ժամանակ, երբ մարտահրավեր է նետվում ներկա իրավիճակին:

Հարավային մշակույթի և ավտոբուսային ընկերության կարծիքով սևամորթ Ռոզա Փարքսը ճիշտ չվարվեց, երբ հրաժարվեց զիջել իր տեղը և տեղափոխվել ավտոբուսի ետևի մասը, որը նախատեսված էր սևամորթների համար: Ահա այդ մեկ կնոջ ընտրությունը, որն իրենը պնդելով՝ տեղը չզիջեց, փոխեց ռասայական խտրականության հանդեպ մեր երկրի վերաբերմունքը: Ես կասկածում եմ՝ արդյոք նա գիտակցե՞ց, որ այդ պահին պատմություն էր կերտում. միայն ժամանակն է ի զորու՝ հայտնելու մեր ընտրության շարժառիթներն ու հետևանքները: Միգուցե Ռոզան պարզապես

հոգնել էր առանձնանալուց և ընդամենը պահանջեց մարդկային արժանապատվության իր աստվածատուր իրավունքը:

Իսկ ի՞նչ կասեք Դեբորայի, Հայելի, Թամարի, Եսթերի, Բերսաբեի, Աբիգեայի, Ռախաբի և նույնիսկ Մարիամի մասին (սրանք պարզապես աստվածաշնչյան հերոսների օրինակներ են, որովհետև իրականում ավելի շատ օրինակներ կան):

Արդյո՞ք Դեբորան բարեկիրթ վարվեց, երբ ժողովրդին հրահրեց գերիշխող կեղեքչին դեմ դուրս գալ և տղամարդկանց հետ պատերազմի մեջ մտավ: Նրա ժամանակի առաջնորդները կարծում էին, որ նա իրեն ճիշտ չէր պահում: Եվ քանի որ Դեբորան ապստամբեց, նրա դեմ զորք դուրս եկավ, սակայն չկարողացավ հաղթել: Բայց երբ Աստծուց ընտրված տղամարդ առաջնորդ Բարակը երկմտեց, Դեբորան լավագույն ձևով կատարեց Աստծո հրահանգը:

Իսկ ի՞նչ կասեք Հայելի մասին: Մի՞թե նա պետք է օգտագործեր վրանի ցիցը՝ թշնամուն սպանելու համար, և մի՞թե նա չէր կարող հանձնել նրան իշխանությունների ձեռքը, քանի դեռ թշնամին քնած էր: Հավանաբար՝ կարող էր, բայց նա այդպես չվարվեց. Աստված հանգիստ նայեց նրա արած ընտրությանը, և նույնիսկ երգ հորինվեց՝ նրա սխրանքը գովերգելու համար:

Իսկ հիմա անդրադառնանք Թամարին: Այս կրկնակի այրիացած կինը ձևացրեց, թե մարմնավաճառ է և կենակցեց իր այրիացած սկեսրոջ՝ Հուդայի հետ: Նրա վարքագիծը բազմաթիվ առումներով ցնցող է. ոչ մի տեղ չկա ապացույց այն մասին, որ Աստված կարգադրեց նրան անել դա, և նա ընտրեց գործողությունների այս ընթացքը: Սակայն այս համառ կնոջ որդին ընդգրկվեց Քրիստոսի տոհմածառի մեջ, և կինն արդար համարվեց:

Եսթերի մասին խոսելով՝ կարող ենք ասել, որ նա չհնազանդվեց թագավորի այն հրամանին, որ կարող էր նրա մոտ մտնել միայն այն ժամանակ, երբ թագավորը կանչեր: Եսթերը շատ լավ գիտեր, որ անհնազանդության պատճառով Վաշթին՝ Ասվերոս թագավորի առաջին կինը, զրկվեց թագուհի լինելուց: Սակայն Եսթերն ընտրեց իրեն ոչ ճիշտ պահելու տարբերակը և այդկերպ կարողացավ փրկել իր ժողովրդին:

Բերսաբեն շնացող մի կին էր, ով դարձավ Սողոմոն իմաստունի մայրը:

Ռախաբը պոռնիկ էր, ով սուտ խոսեց իր թագավորին և թաքցրեց թշնամու լրտեսներին: Նրա հավատքի քայլերը ոչ միայն նրա ընտանիքին ազատեցին Երիքովի կործանումից, այլև նրա որդուն ընդգրկեցին Դավթի և Հիսուսի տոհմածառի մեջ: Աբիգեան թլփատեց իր ամուսնուն. նրա այդ ընտրությունով փրկվեց նրա ընտանիքը, և նա շահեց Դավիթ թագավորի սիրտը:

Պարզվեց, որ Մարիամն անօրինական երեխա էր կրում, որն Աստծո Որդին էր: Իսկ ինչ կլիներ, եթե նա ասեր. «Առանց ամուսնանալու հղիանալն անպարկեշտություն է: Հնարավոր չէ՞ սպասել, մինչև ամուսնանամ»:

Միայն պատմությունն է արդարացնում այս կանանց արած ընտրությունը. նրանց սրտերն արթուն էին և բորբոքված:

Ինչպե՞ս դու կարձագանքես, եթե լիովին արթուն լինես, և ինչ պատմություն կկերտես. արդյո՞ք վայրագ էգ առյուծի պես թմրած վիճակից կարթնանաս և վեր կկենաս, որպեսզի պաշտպանես քո ընտանիքը, հասարակությանը, քեզ շրջապատող աշխարհը: Դու արթո՞ւն ես. եթե այո, ապա ինչ է բորբոքվում քո սրտում:

4

Ահի և զարմանքի միասնություն

«...ահավոր և զարմանալի կերպով ստեղծվեցի. զարմանալի են Քո գործերը...»:

ՍԱՂՄՈՍ 139.14

Էգ առյուծներն ուժեղ են և հանգիստ: Նրանք քաջ գիտակցում են, որ իրենց և իրենց կորյունների կյանքը կախված է իրենց ուժի և հմտությունների ժառանգությունից: Քայլելիս նրանց մորթին մեղմ ծփում է, և ի տարբերություն մեզ՝ նրանց չի մտահոգում, որ իրենց մաշկը կախվում է կամ պոչը չափազանց երկար է, կամ՝ որ բոլորն իրար նման են. նրանք իրենց հարմար են զգում իրենց կաշվի մեջ: Էգ առյուծներն ապշեցուցիչ են:

Երբ նրանց ուսումնասիրում ես վայրի բնության մեջ, համոզվում ես, որ նրանք իրականում *գիտեն* դա: Այն հակադրությունը, թե ինչպես ենք տեսնում ինքներս մեզ, և թե ինչպես է էգ առյուծն ընկալում իրեն, տեսանելի կլիներ այն ժամանակ, եթե մարդկային արարածներն ու առյուծները կարողանային միմյանց հետ խոսել: Մի պահ պատկերացնենք, թե մենք խոսում ենք նրանց հետ:

- Էգ առյո՛ւծ, դու ապշեցուցիչ ես:

Էգ առյուծը պատասխանում է.

- Գիտեմ: Ուզո՞ւմ ես տեսնել, թե ինչ կարող եմ անել:

Մենք սարսռելով պատասխանում ենք.

- Այո՛:

- Տեսնո՞ւմ ես իմ թաթը, ահա նայի՛ր:

Մենք սարսափած նայում ենք, թե ինչպես է նա իր ճանկերը հանում թաթի միջից:

- Այս թաթով ես կարող եմ եղնիկին գետնին տապալել ու նրանով կերակրել իմ ձագերին և խմբի անդամներին:

Ուշադրությո՛ւն դարձրու. նա ետ է քաշում իր ճանկերը, և թաթը կրկին թավշյա տեսք է ստանում:

- Այս թաթով ես խաղում եմ ձագերիս հետ և վարժեցնում եմ նրանց, որպեսզի ուժեղ լինեն:

Մենք գլխով ենք անում և նայում մեր եղունգներին՝ նկատելով, որ վրայի լաքը տեղ-տեղ մաքրվել է:

Իսկ էգ առյուծը նորից է խոսում.

- Նայի՛ր իմ ատամներին:

Մենք ետ ենք քաշվում՝ սարսափելով այդքան տարբեր և սուր ատամներից:

- Այս ատամներով ես պաշտպանում, սպանում և ուտում եմ, սակայն այս նույն ատամներով ձագերիս մի վայրից մյուսն եմ տեղափոխում՝ առանց նրանց վնասելու:

Մենք գլխով ենք անում՝ նկատելով հակադրությունը:

Հետո առյուծը բավարարված հոգոց է հանում՝ ամփոփելով իր գեղեցկության մասին նկարագրությունը.

- Ես ահավոր և զարմանալի կերպով եմ ստեղծված:

Իսկապես մենք կարող ենք համաձայնել, որ նա ահի և զարմանքի իրական միասնություն է:

Բայց սպասի՛ր... դո՛ւ էլ ես այդպիսին:

> «...ահավոր և զարմանալի կերպով ստեղծվեցի.
> զարմանալի են Քո գործերը» (Սաղմոս 139.14):

Ես կոչ եմ անում քեզ բարձրաձայն ասել էգ առյուծի խոսքերը, որոնք նաև քեզ են վերաբերում: Անկեղծ ասած՝ սիրելի՛ս, դու Աստծո հրաշալի ստեղծագործությունն ես, նմանապես և քեզ շրջապատող տղամարդիկ ու կանայք: Մեզնից շատերը պարզապես մոռացել են, որ հրաշքը չի ավարտվում,

երբ մենք արգանդից դուրս ենք գալիս:

Վերջին անգամ ե՞րբ ես զրուցել որևէ կնոջ հետ, ով մի փոքր էգ առյուծի է հիշեցրել:

Ստորև ներկայացված է այն, թե առավել հավանականությամբ ինչ կլսեիր, երբ մի կին խոսեր մյուսի հետ.

- Դու գեղեցի՛կ ես:

- Շնորհակալությո՛ւն, բայց, իրականում, ես դեռևս չեմ կորցրել այն քաշը, որ ձեռք եմ բերել վերջին երեխան ունենալուց հետո:

Ցանկացած կին, ով ծննդաբերել է (կամ տեսել է, թե ինչպես է մեկ ուրիշ կին ծննդաբերում), կգիտակցի, որ մենք իսկապես ահավոր և զարմանալի կերպով ենք ստեղծված: Ինչ-ինչ պատճառներով մենք մոռացել ենք այդ մասին, սակայն էգ առյուծը չի մոռացել: Նա գիտի, որ իր գեղեցկությունը բացահայտվում է իր ուժի մեջ: Կարևորը ոչ թե այն է, թե ինչպիսին է նրա մարմինը, այլ այն, թե ինչ կարող է անել այդ մարմինը: Նրա գրավչությունն անհերքելի է, որովհետև նրա ուժն անվիճելի է: Նա գիտի, թե ինչի է ընդունակ իր մարմինը և վայելում է այդ հրաշքը: Էգ առյուծի վայելքը փառք է բերում իր Արարչին. նա հզոր է ու հմուտ և հենց այդպես էլ վարժեցնում է իր խմբի կորյուններին, որպեսզի նրանք էլ այդպիսին լինեն:

Կարևոր է, որ մենք հիշենք ուժի գեղեցկությունը և գործենք այդ գիտակցմամբ: Ես չեմ խոսում ֆիզիկապես ավելի նիհար լինելու մասին, այլ՝ որ մենք պետք է և՛ ֆիզիկապես, և՛ հոգևորապես պատրաստ ու տեղյակ լինենք կատարելու ցանկացած հանձնարարություն, որ Աստված կտա մեզ: Եթե ուզում ենք իսկական կին առյուծներ լինել, ապա պետք է ուժ ունենանք: Ես բացահայտել եմ, որ մեր իրական ուժի հարցում շատ հեշտությամբ ենք սխալվում:

ՍԽԱԼՎԵԼ ԱՄՐԱԿԱԶՄ ԼԻՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ

Ահա թե ինչպես սկսվեց իմ մեկ շաբաթյա մոլորությունը: Աշխարհի մյուս ծայրում հավաքույթներ անցկացնելուց հետո ես բավականին հոգնել էի: Հինգ հավաքույթներն էլ ավարտված էին, օրը կիրակի էր, և առջևում ազատ երեկո ունեինք: Ինձ հրավիրել էին հանդիպելու կոնֆերանսի ավագների թի-

մի հետ, որն առանց ջանք խնայելու աշխատել էր, որպեսզի հավաքույթները բարեհաջող ընթացք ունենային: Բոլորս մի փոքր «տրորված», անփույթ տեսք ունեինք քնի պակասի և ուտելիքի առատության պատճառով:

Եվ քանի դեռ այս վիճակում էինք, ավագներից մեկը կիսվեց ինձ հետ. «Գիտե՞ս, ասում են, որ ես դիպուկ համեմատություններ եմ անում: Եվ այսօր կիրակնօրյա հավաքույթի ընթացքում պարզեցի, թե ում ես դու ինձ հիշեցնում»:

- Ո՞ւմ,- հարցրի ես:

Առանց երկմտելու նա ասաց.

- Դու նման ես Սառա Կոննորին:

Երկար ընդմիջում եղավ, մինչև փորձեցի ընկալել նրա ասածը:

- Սպասի՛ր... նա շիկահեր չէ՞ր,- անվստահությամբ հարցրի ես:

- Այո՛, այո՛, բայց խոսքը նրա մազերի մասին չէ:

Նա շարժեց գլուխը և անփութորեն թափահարեց ձեռքը:

- Ես նկատի ունեմ նրա դեմքի կառուցվածքը, նրա կեցվածքը և ամրակազմ լինելը,- բացատրեց նա:

Իրո՞ք նա ասաց «ամրակազմ»:

Դա գրավեց իմ ամբողջ ուշադրությունը: Նույնիսկ եթե համեմատությունը չափազանցված էր, միևնույն է, ես ցանկանում էի նմանվել այդ Սառա Կոննորին: Ես գլխով արեցի՝ չկամենալով բաց թողնել որևէ միտք կամ պատկեր իմ ամրակազմ լինելու վերաբերյալ: Ես շուտով կվերադառնամ Միացյալ Նահանգներ և կդիտեմ «Տերմինատոր» ֆիլմը, որտեղ խաղում էր այդ ամրակազմ կինը:

Վերադառնալով տուն՝ ես դիմեցի որդուս՝ Ալեքի օգնությանը, ով հեռուստատեսային գիտակ է:

- Կարո՞ղ ես ինձ համար գտնել իսկական Սառա Կոննորին: Ես պետք է տեսնեմ նրան. մարդիկ ասում են, որ նման եմ նրան:

Որդիս կասկածանքով անցավ գործի և գտավ Սառա Կոննորի գովազդային ցուցանակը, որտեղ նա կրում էր նեղ շապիկ, փոքր, կլոր արևային ակնոցներ և որսորդական հրացան: Այդքանը բավական էր հասկանալու համար, որ նա

վայրագ և ֆիզիկապես ուժեղ տեսք ուներ: Ես չեմ կարող ասել, որ անմիջապես տեսա նրա մայրական կողմը (սա ինձ համար կարևոր էր, որովհետև այն ժամանակ ես խոսում էի այնպիսի թեմաներից, ինչպիսիք են մայրությունը և հոգատարությունը): Բայց այդ դեպքում մի՞թե մայրական կողմը կապ չուներ այդ իրավիճակի հետ: Ի՞նչը կարող էր ավելի մայրական լինել, քան այն, երբ ֆիզիկապես մարզվում և սովորում ես զենք օգտագործել՝ իմանալով, որ կյանքիդ նպատակը որդուդ վարձու մարդասպաններից պաշտպանելն է:

Ալեքը նաև տեսահոլովակների մի հավաքածու գտավ շատ ցածրորակ մոնտաժով, որն արվել էր 1980-ականներին: Խճանկարը պատկերում էր Սառա Կոննորին մոտոցիկլետ վարելիս, ով մի ձեռքով հրացանն էր լիցքավորում, իսկ մյուսով՝ հոգեբուժական հիվանդանոցի սենյակում շրջած մահճակալի վրա ֆիզիկական ձգումներ էր անում. այդ պահին ես նրա մեջ ինձ տեսա... Հենց այն ժամանակ ես կարող էի վերջ դնել իմ խառնաշփոթությանը, եթե միայն ինձ ուղղեի այս պարզ հարցը. *«Լի՛զա, դու երբևէ ձողից բռնած ձգումներ արե՞լ ես»:*

Բայց ես այդպես չվարվեցի, փոխարենը՝ շարժեցի երևակայությունս: Նայելով, թե ինչպես էր Սառա Կոննորը ձգումներ անում, ես պատկերացրի, որ իմ թևերը նույնքան ուժեղ են, որքան նրանը, և ճիշտ դրդապատճառ ունենալու դեպքում էլ կարող էի նրա նման ձգումներ անել: Անշուշտ, ես գրեթե այնքան ամրակազմ էի, որքան նա էր երևում, չնայած այն ժամանակ, երբ ես լավ ֆիզիկական վիճակում էի գտնվում, միևնույն է, ավագ դպրոցում՝ ստուգարքի ժամանակ, հազիվ էի կարողանում ձգվել ձողի վրա (ես դա անում էի՝ պատկերացնելով, որ ոտքերիս տակ կոկորդիլոսներ կան):

Ես բոլորովին մոռացել էի, որ վնասել էի երկու ուսերս. մեկը դահուկ վարելիս, մյուսը՝ մի պատահարի ժամանակ, որի մասին նույնիսկ չարժե խոսել:

Եկեք մտածենք այն մասին, որ ես երբեք ֆիզիկական ձգումներ չեմ արել, բայց դա կարևոր չէր. եթե Սառան անում էր, ուրեմն ես էլ կարող էի անել:

Ես ոչ միայն ցանկանում էի նրա նման լինել, այլև ցանկանում էի նրա նման վարվել: Ինչո՞ւ էր նա մարզվում. որ երբ

նրա ժամը գար, նա ուժեղ և պատրաստ լիներ՝ իր որդուն փրկելու և պաշտպանելու համար: Օ՜, ես սիրում եմ այն կանանց, ովքեր գիտեն, թե ինչպես օգտագործեն իրենց դժվար ժամանակները, որպեսզի ուժ հավաքեն: Սառան և ես... Ինչո՞ւ: Մենք գրեթե քույրեր էինք:

Այս պատրանքի մեջ ես արեցի մի բան, որ երբեք չէի արել. հիշեցի, որ լսել էի «Gold's Gym» մարզասրահի մի հիանալի մարզիչի մասին: Այնպես որ, զանգեցի և խնդրեցի, որ հեռախոսը փոխանցեն այդ մարզչին: Ես հազիվ կարողացա պահել հուզմունքս, երբ Ռոբերտից հարցրի, թե արդյո՞ք նա այդ օրը որևէ ազատ ժամ ունի: Ես պատկերացրի, որ երեք կամ չորս պարապմունք հետո ես և Սառան կդառնանք երկվորյակներ: Այո՛, երկվորյակներ... տարբեր գույնի մազերով, որովհետև ես այլևս շիկահեր չէի, և մենք կունենայինք այնպիսի կազմվածք, որ մեր հղկված, մկանուտ թևերն արտացոլեին մեկը մյուսին:

Ռոբերտը համաձայնեց մի քանի ժամից տեսնել ինձ՝ գնահատելու նպատակով: *Գնահատում* բառը կարող էր կանգ առնելու պատճառ դառնալ ինձ համար, սակայն այդպես չեղավ. ես կախեցի լսափողը, ոգևորվեցի և խնդրեցի Ալեքին, որպեսզի ինձ համար մարզվելու ռիթմիկ երգեր ձայնագրի: Եվ երբ նա ավարտեց, ես հայտարարեցի.

- Ես գնում եմ մարզասրահ, ո՞վ է ցանկանում գալ ինձ հետ:

Երկու որդիներս միացան ինձ, և մենք ճանապարհ ընկանք. նոր երգերով բեռնած իմ iPod-ով մտանք մարզասրահ: Հավանաբար, հաջորդ անգամ ես նեղ շապիկ կհագնեմ, որպեսզի մարզիչս հեշտությամբ կարողանա տեսնել, թե ինչ կապ կա իմ և Սառա Կոննորի միջև:

Հուզմունքից ես մի փոքր շուտ էի տեղ հասել և հեռվից տեսնելով ապագա մարզիչիս՝ մտածեցի, որ նա շատ ուրախ էր լինելու՝ իր նոր աշակերտուհու հետ հանդիպելու համար: Նա հաճույքով մարզելու էր մեկին, ով արդեն բավականին մոտ էր իր նպատակին: Կամ, միգուցե, դա իմ երևակայությունն էր:

Ռոբերտը մարզում էր մի կնոջ, և ինձ նկատելով՝ ձեռքով մատնացույց արեց վազքուղու կողմը, որպեսզի ես մի փոքր նախավարժանք անեի: Ես նկատեցի, որ այդ կինը մոտավո-

ռապես իմ տարիքին էր և սկսեցի նրա ու իմ միջև համեմատություն անել:

Նա ոչ միայն բարեկազմ էր և արևից թխացած, այլև իր նեղ շապիկով և քողարկված տաբատով Սառայի տեսքն ուներ: Եվ այդ պահին ես վերապրեցի իմ առաջին հիասթափության զգացումը: Մարզասրահի լույսերի ներքո ես զննեցի իմ թևերը և նկատեցի, որ դրանք թուլացած, գունատ և մի փոքր կանաչ տեսք ունեին:

Բայց, սպասեք, ես չէի պատրաստվում ընկճվել, քանի որ, եթե իմ օրվա գրաֆիկը կարողանայի կարգավորել, ես էլ կարող էի թխանալ:

Որպես բացահայտ մրցահրավեր՝ վազքուղին մի քանի աստիճան էլ բարձրացրի. ահա՛, ամրակազմ Լիզան շուտով կհայտնվի: Մի քանի պարապմունքից և արևի տակ որոշ ժամանակ անցկացնելուց հետո ես կդառնայի այդ կնոջ նման: Ի վերջո, մի՞թե Սառան թխանում էր իր բանտախցում...

Ես մի կողմ նայեցի, միացրի իմ iPod-ը և ամենայն լրջությամբ սկսեցի քայլել:

Կարճ ժամանակ հետո մոտեցավ իմ մարզիչը և խրախուսական ժպիտ պարգևեց ինձ:

- Շարունակի՛ր ևս տասնհինգ րոպե, այնուհետև մենք կհանդիպենք, որպեսզի խոսենք քո նպատակներից: Ես դեռ աշխատում եմ այցելուի հետ:

«Տասնհինգ րոպե՞, մի՞թե նա լուրջ էր ասում»: Ես հիշեցի, որ կարդացել եմ, որ ութ րոպեն բավական է ցանկացած մարդու գնահատելու համար, բայց ես չեմ ցանկանում հիասթափվել կամ շտկել մարզիչիս մեր հանդիպման հենց առաջին օրը, ուստի ժպտացի ու ենթարկվեցի:

Երբ տասնհինգ րոպեն լրացավ, ես իջա վազքուղուց, ուղևորվեցի կանանց հանդերձարան, որպեսզի կշռվեմ: Ես մոռացել էի կշռվել և ենթադրեցի, որ մարզիչին անհրաժեշտ կլինի իմանալ իմ քաշը: Սա նշանակում էր, որ ես պետք է քայլեի այդ ամրակազմ կնոջ կողքով. անցնելիս նա ձայն տվեց:

- Հեյ, դուք Ռոբերտի հե՞տ եք մարզվում,- շնչակտուր հարցրեց նա: Ես գլխով արեցի՝ անտարբերությամբ կում անելով ջրի շշից:

- Նա սպանում է ինձ,- հևալով ասաց նա՝ շարունակելով մարզվել աստիճաններով վազքուղու վրա: Ես միշտ զբաղվել եմ սպորտով, սակայն Ռոբերտն «ուրիշ մակարդակի» մարզիչ է:

Ես կանգ առա ու ասացի.

- Բայց դուք ամրակազմ եք...

Նա շարժեց գլուխը, կարծես ինձ պատասխանելն ավելի շատ ուժ էր պահանջում, քան նա այդ պահին կարող էր հավաքել:

Ռոբերտը մարզասրահի մյուս կողմից կանչեց իմ անունը և ձեռքով ցույց տվեց իր առանձնախցիկի կողմը: Ես մոտեցա նրան ավելի պակաս վստահությամբ, քան մտել էի մարզասրահ:

- Պարզապես ուզում էի կշռվել,- ասացի ես:

Սակայն մարզիչին իմ քաշը չէր հետաքրքրում. Ռոբերտը ցանկանում էր իմանալ, թե որքան ուժեղ էի ես:

- Սրբիչ բերե՞լ եք,- հարցրեց նա:

- Ո՛չ,- պատասխանեցի ես ու բացատրեցի, որ մարզվելիս հազվադեպ եմ քրտնում: Հավանաբար, ավելի ճիշտ կլիներ ասել, որ ես հազվադեպ եմ մարզվում:

ՃԱՐՊՈՏ ՆԻՀԱՐ

Ես չեմ կարող հստակ հիշել, թե ինչպես սկսվեց իմ խոնարհվելու գործընթացը, սակայն շատ լավ հիշում եմ հետևյալը, որ Ռոբերտն ինձ ուղեկցեց դեպի մարզասրահի կենտրոն, այլ ոչ թե առանձին սենյակ, որտեղ ենթադրում էի, որ կկատարվեին բոլոր գնահատման աշխատանքները: Երբ մենք հասանք այնտեղ, Ռոբերտն ինձ կարգադրեց իջնել լիովին մաքուր հատակին և տասն անգամ հրում կատարել:

Ես հասկացա, որ նա նկատի ուներ հրում վարժությունը, պարզապես վստահ չէի, թե որ տեսակն էր ցանկանում:

- Դուք նկատի ունեք ծնկի վրա կատարվող վարժությունը, այնպես չէ՞:

- Ո՛չ, սովորական,- հպանցիկ պատասխանեց նա՝ վերցնելով մատիտն ու նոթատետրը:

Ես իջա հատակին և տասը անփույթ, դողդոջուն ծռմռված հրում կատարեցի:

Առանց ընդմիջում տալու կամ որևէ ձևով խրախուսելու՝ նա շարունակեց.

- Այժմ քսանհինգ ցատկ՝ տեղից:

Ես խուճապի մատնվեցի. գիտեի, որ տեղում ցատկ կատարելը հեշտ է, սակայն չէի հիշում, թե ինչպես է դա արվում:

- Ձեռքերս վերև պահած,- հարցրի ես:

Ռոբերտը չպատասխանեց:

Ես ցատկեցի այնպես, ինչպես պատկերացնում էի: Ցատկելիս նկատեցի, որ գրավում էի մարզասրահի մյուս անդամների ուշադրությունը: Նույնիսկ տղաներս ինձ նայելով՝ թափահարում էին գլուխները և ծիծաղում:

- Իջի՛ր և կրկին տասը հրում կատարի՛ր,- ասաց Ռոբերտը:

Շունչ քաշելով և ժամանակ գողանալով՝ ես հարցրի.

- Այս անգամ դուք նկատի ունեք հրո՞ւմ, ցա՞տկ, թե՞ մեկ այլ բան:

- Հրում,- պատասխանեց նա:

Ես իջա հատակին, բայց այս անգամ այդ վարժությունն անելն ավելի դժվար էր, քանի որ ձեռքերս դողում էին և շատ խղճալի վիճակում էին, և ես հազիվ էի կարողանում որովայնս պահել:

Ռոբերտը ոչ մի մեկնաբանություն չէր անում:

- Եվս քսան ցատկ՝ տեղից:

Ես ցանկանում էի այս անգամ ճիշտ կատարել, ուստի կրկին հարցրի.

- Ձեռքերս վերև պահա՞ծ:

Ձայնս զարմանալիորեն լարված էր հնչում:

- Կարևոր չէ... սկսի՛ր,- հրամայեց նա:

Իսկ ինձ համար դա կարևոր էր. կարևոր էր նաև որդիներիս համար, ովքեր հայտնվել էին ծանր իրավիճակի մեջ՝ տեսնելով, թե ինչպես է իրենց մայրն ամբողջ մարզասրահի մեջտեղում ցատկեր կատարում:

Սակայն սա միայն իմ հոգեվարքի սկիզբն էր, և այն ավարտվեց կից սրահում, որտեղ ես փորձելու էի աթոռին նստած ոտքերը բարձրացնելու վարժությունը. այս մեկը հաստատ գիտեի ինչպես անել:

Ես նստեցի աթոռին և սպասեցի մարզիչի հրահանգներին:

- Ուզում եմ, որ տասնհինգ անգամ կատարես այդ վարժությունը,- ասաց նա:

Ոտքերս բարձրացրի մինչև գոտկատեղ՝ ամբողջ ընթացքում մտածելով, որ իմ կառուցվածքը հիանալի է:

- Ո՛չ, այդպես չէ,- կարգադրեց Ռոբերտը,- ուզում եմ, որ ոտքերդ ուղիղ պահես... և մինչև այստեղ բարձրացնես:

Նա ձեռքը գոտկատեղիցս ավելի բարձր պահեց:

Որքան հնարավոր է ես բարձրացրի ոտքերս, սակայն չկարողացա հասնել նրա ցույց տված բարձրությանը:

- Ավելի՛ բարձր,- քաջալերեց նա:

Մի՞թե սա կատակ էր. տասնհինգ անգա՞մ, ես նույնիսկ մեկ անգամ չէի կարողանում այդ անել, բայց փորձեցի մի քանի անգամ հարվածել նրա ձեռքին, սակայն, իմ կարծիքով, նա իր ձեռքը վերև էր բարձրացնում:

Որքան հիշում եմ, հաջորդը մարզագնդերի վարժությունն էր: Ես նստել էի նստարանին, մինչև Ռոբերտը մեկ զույգ մարզագունդ էր ընտրում: Նա վերադարձավ երեք ֆունտանոց (մոտ. 1,3 կգ) մարզագնդերով: Ես ժպտացի. այս անգամ պետք է նրան զարմացնեի իմ ուժով:

- Ռոբե՛րտ, ես սովորաբար բարձրացնում եմ տասներկուսուկես (մոտ. 5,6 կգ) ֆունտանոց մարզագնդեր,- ասացի ես:

- Ե՛կ սկզբում սրանք փորձենք,- պատասխանեց Ռոբերտը:

Քրտնած և դողացող ձեռքերով ես վերցրի մարզագնդերը:

- Ա՛յ, այսպես բարձրացրու:

Ես գլխով արեցի և հեշտությամբ բարձրացրի:

- Ո՛չ, այդպես չէ, այսպես՝ մինչև վերջ վերև և մինչև վերջ ներքև,- ասաց նա՝ թեթևակիորեն փոխելով արմունկիս դիրքը:

Ինչ-որ բան այնպես չէր, ես չէի կարողանում մի քանի մատնաչափից ավելի բարձրացնել: Հավանաբար, պատճառը հրում վարժությունն էր, որովհետև թևերս չէին գործում: Ես կրկին փորձեցի, բայց դարձյալ չկարողացա մեկ կամ երկու մատնաչափից ավելի բարձրացնել: Ցնցված նայեցի Ռոբերտին, սակայն նա արդեն շրջվել էր, որպեսզի ավելի թեթև

մարզագնդեր բերեր, իրականում ամենաթեթևը, որ մարզասրահում կար, բայց ինչպե՞ս էր դա հնարավոր:

- Անկեղծ ասած՝ ես սովորաբար տասներկու ֆունտանոց մարզագնդեր եմ բարձրացնում, իսկ երբեմն էլ տասնհինգ,- կմկմացի:

- Դու սխալ ես բարձրացրել,- եզրակացրեց նա:

Տանջանքն, ի վերջո, ավարտվեց. Ռոբերտն առաջարկեց ինձ դուրս գալ մարզասրահից: Կրծքավանդակս ծանրացել էր, ոտքերս դողում էին, և իմ կերպարը՝ համեմատած Սառա Կոննորի կերպարի հետ, լիովին անհետացել էր:

Քանի որ ես չէի անցել ֆիզիկական գնահատման ոչ մի փուլ, մենք միասին գնացինք մարզասրահին կից սենյակը, և Ռոբերտը հանդիսավոր կերպով մի սխեմա կազմեց: Նա հարցրեց իմ քաշը և թվերը գրանցեց այնտեղ: Ապա հարցրեց վնասվածքների մասին, և ես բացատրեցի, որ դժվարություններ ունեմ ձախ ծնկի և ձախ ուսի հատվածում, նա դրանք էլ նշեց: Հետո տվեց ինձ ձեռքի մի սարք, որը նման էր Նինթենդոյի հեռակառավարման վահանակին:

- Սա երկու ձեռքով պահի՛ր քո առջևում,- կարգադրեց Ռոբերտը,- այս սարքը էլեկտրական հոսանք կուղարկի քո մարմնի մեջ և ճշգրիտ կկարդա քո ճարպի տոկոսը:

Նա սեղմեց կոճակը, և կարճատև դադարից հետո էկրանին մի թիվ հայտնվեց:

Ես չզարմացա, բայց Ռոբերտը ցնցվեց՝ տեսնելով, թե որքան բարձր էր իմ ճարպի տոկոսը:

- Միգուցե ես ճիշտ չէի պահում,- ասացի:

Մենք կրկնեցինք գործողությունը, և ինչ-որ ձևով ճարպի տոկոսը մեկ նիշով ավելացավ:

- Միգուցե այն լավ չի՞ աշխատում, կամ ես ջրազրկվե՞լ եմ:

Այդ պահին սենյակ մտավ իմ որդին՝ Ալեքը:

- Կարո՞ղ եմ ես փորձել,- հարցրեց նա:

Զարմանալի՜ է, նրա ճարպի տոկոսը 5.2 էր:

- Քո ճարպի տոկոսն ինքա՞ն էր, մայրի՛կ:

Առանց պատասխանելու ես նրան դուրս հրավիրեցի:

Գլուխը թափահարելով՝ Ռոբերտը մի թուղթ հանեց, որի վրա երկու նկար էր պատկերված, որոնք նման էին մսի լայն

կտորների, և դրանցից մեկը յուղալի էր, իսկ մյուսը՝ ոչ. ես «յուղալի» կտորն էի:

- Դուք այն եք, ինչ մենք, մեղմ ասած, անվանում ենք «ճարպոտ նիհար»,- ասաց նա:

Ես սարսափեցի և անմիջապես առարկեցի, ասելով, որ ես շատ ակտիվ, թերևս չափազանց զբաղված անձնավորություն եմ: Ես չէի պատրաստվում նստել այդ մարզաթոռին և թույլ տալ, որ ինձ վրա փակցնեին «նստակյացի» պիտակը:

Ռոբերտը միտումնավոր գլխով արեց.

- Քանի որ դուք ակտիվ եք և անընդհատ շարժման մեջ եք, հավանաբար բավականաչափ սպիտակուց չեք ընդունում, որ պահպանեք այն էներգիան, որ մարմինը պահանջում է, ուստի էներգիա ստանալու համար ձեր մարմինն ավելի շուտ ձեր մկաններն է այրում, քան ճարպը:

Նկատելով իմ ապշահար վիճակը՝ նա շարունակեց.

- Դա նման է ճարպոտ միս ուտելուն. ինչ եք դուք անում՝ կտրում եք ճարպոտ մասը, հետո ուտում միսը: Մարմինն էլ նույն բանն է անում. այն սնվում է մսով, այսինքն՝ ձեր մկաններով, և երբ կորցնում եք մկանային քաշը, կորցնում եք ֆիզիկական ուժը: Եվ միակ միջոցը, որ կարող եք այն վերականգնել, ֆիզիկական մարզումներն են, որոնք վերականգնում են մկանները:

Նա ավելի վիրավորեց ինձ, երբ մատնացույց արեց դահլիճում մարզվող մի քանի կանանց, ովքեր ավելի խոշոր մարմին ունեին, քան ես, սակայն նրանց ճարպի տոկոսն ավելի ցածր էր, քան իմը: Նա նաև որոշեց, որ իմ ճարպի մեծ մասը (այժմ ես իսկապես խոցելի էի դառնում) ոչ թե մարմնիս միջին հատվածում է կամ ազդրերում, այլ՝ թևերում:

Ցավոք, մարմնիս այն հատվածը, որն իմ երևակայությամբ ամենամկանոտն էր, պարզվեց, որ ամենաթույլն էր:

Այն պատկերները, որտեղ ես և Սառա Կոննորը ձգումներ էինք անում, անհետացան: Այժմ իմ առջև իրական ընտրություն էր. արդյո՞ք ես ցանկանում էի շարունակել այրել մկաններս և թուլացնել ուժս: Արդյո՞ք ես երջանիկ էի «ճարպոտ նիհար» կամ «կեղծ ամրակազմ» տիտղոսներով, թե՞ պատրաստ

էի իսկապես ուժեղանալ: Սակայն վրդովված և շփոթված՝ ես ուժեղ լինելու որոշում կայացրի: Ինձ համար հագուստով գեղեցիկ երևալն այլևս կարևոր չէր, և դա հաջողվում էր անել «Ճարպոտ նիհար»-ին: Ինձ համար կարևորը մարմնի թույլ և խոցելի մասերը գտնելն էր և դրանք էներգիայի և ուժի աղբյուր դարձնելը:

Ես կարիք չունեի քաշ կորցնելու. ինձ պարզապես պետք էր ուժ հավաքել:

Ես հասկացա, որ քաշը իմ կառուցվածքի ճշգրիտ արտացոլումը չէր: Ինչի՞ց էի ես կառուցված. վճռական իրավիճակում արդյո՞ք ուժ կունենայի դիմակայելու փորձությանը: Ես կարող էի մեծ արագությամբ կարճ տարածություն վազել, քանի դեռ թեքություն չկար: Սակայն հենց տարածությունը երկարեր կամ դիմադրությունն ավելանար, ես տեղի կտայի: Ինչո՞ւ, որովհետև չափազանց թույլ էի ավել ծանրություն կրելու համար:

Ես կարող էի ոչ շատ ծանր քաշով մարզագունդ բարձրացնել միայն սահմանափակ դիրքերից: Եվ սա էր պատճառը, որ չկարողացա Ռոբերտի տված մարզագնդերն այլ դիրքից բարձրացնել: Իմ ուժը թուլացավ այն ժամանակ, երբ նա առանձնացրեց այն մկանային խումբը, որը թույլ և խոցելի էր քիչ օգտագործվելու պատճառով:

Իմ վերաբերմունքի մեջ այնպիսի փոփոխություն կատարվեց, որ նույնիսկ հիմա, երբ տպում եմ այս բառերը, հազիվ եմ կարողանում զսպել ինձ մարզասրահ չգնալու համար: Ես գնացի մարզասրահ, որպեսզի մի բան հաստատ իմանայի, որ ես ամրակազմ եմ, և այս ու այն կողմից չլսեի, որ թույլ եմ: Ինձ դուր չեկավ այն, ինչ լսեցի, սակայն որքան հրաշալի է իմանալ ճշմարտությունը և թույլ տալ, որ դա այնպես գործի քո կյանքում, որ կարողանաս ուժեղացնել թույլ կողմերդ: Այսօր ես *ցանկանում* եմ գիտակցել իմ թույլ կողմերը, որպեսզի հայտնաբերեմ, թե ինչպես կարող եմ ուժեղանալ: Սակայն դա մենակ չեմ կարող անել: Ինձ հարկավոր կլինի մի մարզիչ, որը կպահանջի գին վճարել և ջանք գործադրել:

ԱՆՊԱՐՏԵԼԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Այս դեպքից հետո ինձ հետաքրքրում էր այն հարցը, թե մեզնից քանիսն են «ճարպոտ նիհար», բայց ոչ թե ֆիզիկապես, այլ հոգևոր առումով: Մենք կոկիկ ենք երևում, սակայն եթե մեր կյանքին չափից շատ ծանրություն ավելանա, չենք կարողանա այն տանել: Մենք մեզ լավ ենք զգում, երբ քայլում ենք հարմարավետ վայրերով՝ հարթ մակերեսին, սակայն կյանքը վազքուղային վարժությունների սարք չէ, որը մենք ենք վերահսկում: Մենք Աստծո հետ մի ճանապարհի վրա ենք գտնվում, և ես զգում եմ, որ այդ ճանապարհը հետզհետե դժվարանում է:

Ինչո՞ւ այս ամենը պատմեցի ձեզ, որովհետև հավատում եմ, որ Քրիստոսի մարմինը լիակատար կերպարանափոխման և անպարտելի վերելքի եզրին է: Սակայն այս միտքը միայն իմը չէ: Աստված ասում է.

> «Վե՛ր կաց ու կալը կալսի՛ր, ո՛վ Սիոնի աղջիկ: Ես քեզ անպարտելի ժողովուրդ եմ դարձնում» (Միքիա 4.13, MSG):

Ուշադրություն դարձրեք, որ Աստված չասաց անտեսանելի, այլ՝ անպարտելի: Աստծո դուստրերի ներկայությունն այս երկրի վրա շատ հզոր պետք է լինի: Որքա՞ն է անցել այն ժամանակվանից, երբ դու քեզ անպարտելի էիր զգում: Հավանաբար դա շատ վաղուց էր, երբ փոքր աղջիկ էիր և վազում ու խաղում էիր քո փոքրիկ աշխարհում: Դու նախատեսված չես մթության մեջ թաքնվելու և փախուստի հույս փայփայելու համար. դու լույսը և հույսը կրողն ես, և դու պիտի լինես Սիոնի անպարտելի, աննվաճելի ու անդրդվելի դուստրը: Նույնիսկ այժմ ես լսում եմ այս ձայնը. «Վե՛ր կաց, դո՛ւստր, կրկի՛ն ոտքի կանգնիր: Աստված ցանկանում է, որ դու անպարտելի լինես»:

Հաճախ մենք հոգևոր ուժ ենք հավաքում կալսվելով և զտվելով: Միքիայի 4-րդ գլուխն օգնում է մեզ հասկանալ, թե ինչպիսին կարող է լինել այդ ծանր մարզման գործընթացը.

«Աստված քեզ նոր կյանք է տալու:
Նա քեզ ազատելու է քո թշնամիներից:
Սակայն հենց հիմա նրանք ժողովվել են քո դեմ,
Բազմաթիվ անաստված ազգեր՝ ասելով.
«Ոտքով խփենք նրան, քանի նա ընկած է, դաժանաբա՛ր վարվենք նրա հետ:
Մենք ուզում ենք տեսնել, թե ինչպես է Սիոնը սողում կեղտի մեջ»:
Աստծուն հայհոյողները գաղափար չունեն, թե
ինչ է Աստված մտածում և անում:
Նրանք չգիտեն, որ այդպես Աստծո ժողովուրդն է ձևավորվում.
որ նա ցորեն է, որ կալսվում է, ոսկի, որ զտվում է»:

Միքիա 4.10-12, MSG

Ես սիրում եմ այս հատվածում գրված խոսքերը: Երբ թվում է, թե քո թշնամիները մոտենում են քեզ սպանելու, այդ ժամանակ Աստված գործ է անում՝ քեզ ոսկու պես զտելով: Աստված օգտագործում է դժվարությունը որպես կատալիզատոր, որպեսզի իր ժողովրդին դարձնի ոսկու պես մաքուր, թանկ և կայուն:

Երբ լրատվամիջոցները կամ անհատները քննադատում են քրիստոնյաներին, նրանց ասածի մեջ երբեմն ճշմարտության նշույլ կա: Մենք պետք է խոնարհությամբ վերաբերվենք այդ քննադատությանը և ընդունենք այն ճշմարտությունը, որ կա դրանցում: Եթե ինչ-որ մեկն ասում է, որ մենք կոպիտ ենք, դատող կամ չսիրող, այս գնահատականը մերժելու փոխարեն ավելի լավ է նայենք մեզ Աստծո Խոսքի լույսի ներքո: Մենք պետք է ստուգենք ինքներս մեզ և ներողություն խնդրենք, եթե դրա կարիքը կա:

Մենք ենթարկվում ենք նաև մեր թշնամու՝ սատանայի կատաղի մեղադրանքներին: Երբեմն նրա հարձակումները բացարձակ սուտ են, ինչպես օրինակ, երբ հայհոյվում է մեր Տիրոջ անունը: Մեկ ուրիշ դեպքում նրա հարձակումները չարիք են հետապնդում, երբ, օրինակ, Աստծո զավակներին ստիպում են ուրանալ իրենց Տիրոջը, հակառակ դեպքում նրանց մահվան կդատապարտեն (այստեղ պատկերացրեք Ինկվի-

զիցիան): Այս հարձակումների հետ չպետք է բանակցություններ գնալ, այլ դրանց պետք է հաղթել ճշմարտության և Աստծո հավատարմության համարձակ հռչակումներով: Մենք տեսնում ենք, թե ինչպես է սա լուսաբանվում Հայտնության գրքում.

> «Եվ նրանք հաղթեցին նրան Գառան արյունով
> և իրենց վկայության խոսքով և
> չսիրեցին իրենց հոգին մինչև մահ» (Հայտն. 12.11):

Երբ կարդացի Միքիայի 4.13-րդ խոսքը, կարծես լսեցի, թե ինչպես Աստված բղավեց. «Բավակա՛ն է, դուք կարծում էիք, թե կործանել եք Իմ ժողովրդին, սակայն այդպես չէ: Փոխարենը դուք պատրաստել եք նրան»: Իսրայելը մեր օրինակն է: Երբ իսրայելցիները շեղվում էին ճշմարտությունից, նրանց թշնամիներն ուժեղանում էին, և այս դժվար կացությունը նրանց կյանքում զտման գործընթաց էր դառնում: Եվ Աստված հայտնեց Իր ժողովրդին՝ որպես վերափոխված և հաղթական ժողովուրդ, այն ժամանակ, երբ թշնամիները կարծում էին, որ պարտության են մատնել նրանց:

ՀՈԳԵՎՈՐ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ ինչպե՞ս ենք մենք սկսում այս ուժային մարզանքը. մեր հավաքական և անհատական հոգևոր վիճակի ազնիվ գնահատումից: «Ճարպոտ նիհար» արտահայտությունը որոշ առումով կարելի է համեմատել Հիսուս «մարզիչի» խոսքերի հետ: Կարդացե՞լ եք Հայտնության գրքում Նրա տված գնահատականների մասին: Յոթ եկեղեցիներից միայն երկուսն անցան Նրա սահմանած ուժային խիստ քննությունը: Ահա գնահատականներից երկուսը, որ տրվեցին այն եկեղեցիներին, որոնք չանցան քննությունը.

> «Ես նայում եմ քո գործերի միջով: Դու արթուն և
> առույգ լինելու համբավ ունես, սակայն մեռած ես,
> ամբողջովին մեռած:
> *Ոտքի՛ կանգնիր, խորը շունչ քաշի՛ր, միգուցե քեզանում դեռ կյանք կա: Սակայն Ես դա չեմ իմանում՝*

> *քո զբաղվածությանը նայելով. Աստծո գործից ոչինչ չի ավարտվել: Քո վիճակն անհուսալի է:* Մտածի՛ր այն պարգևի մասին, որ մի ժամանակ ունեիր, այն ուղերձի մասին, որ քո ականջներով լսել էիր. կրկի՛ն ընդունիր այն և Աստծո՛ւն դարձիր» (Հայտն. 3.1-3, MSG):

Ինչպես իմ ամբողջ ֆիզիկական ակտիվությունն ավելի շուտ նվազեցրեց, քան ավելացրեց իմ մկանային ուժը, այնպես էլ հոգևոր զբաղվածությունը հոգևոր ուժ չի ավելացնում: Այն շեղում և հեռացնում է մեզ Աստծո գործից: Հիսուսը տալիս է եկեղեցու առաջընթացի գծագիրը.

> «*Գիտեմ քեզ ներսից ու դրսից, և քիչ բան կա, որ Ինձ դուր է գալիս.* ո՛չ սառն ես, ո՛չ տաք. շատ հեռու ես սառը կամ տաք լինելուց: Դու հնացած ես, լճացած: Դու ստիպում ես Ինձ փսխել: Դու պարծենում ես. «Ես հարո՛ւստ եմ, ես եմ այդ ամենն արել, ես որևէ բանի կարիք չունեմ»: Դու մոռանում ես, որ իրականում թշվառ ես, ողորմելի, անտուն և կույր մուրացկան» (Հայտն. 3.15-17, MSG):

Ի՞նչ է սա. Աստված անտուն է անվանում այն մարդկանց, ովքեր տներում են ապրում, և հնացած ու լճացած է անվանում նրանց, ովքեր հարուստ են: Մարդկանց երկու խումբն էլ իրեն միևնույն կերպ էր տեսնում. միայն Հիսուսը կարող է ցնցել նրանց՝ հայտնելով նրանց իրական վիճակը: Ինչո՞ւ պետք է մեր Բարի Հովիվն այդքան խիստ լիներ: Նա Ինքն է պատասխան տալիս այս հարցին.

> «Որոնց որ սիրում եմ, նրանցից հաշիվ եմ պահանջում. խոցում եմ, ուղղում և առաջնորդում, որպեսզի նրանք լավագույն կյանքով ապրեն: Ուրեմն, ոտքի՛ կանգնիր: Շրջվի՛ր: Գնա՛ Աստծո ետևից» (Հայտն. 3.19, MSG):

Աստված ազնիվ է մեր հոգևոր վիճակի հարցում, որովհետև Նա սիրում և մարզում է մեզ, որպեսզի կարողանանք

հնարավորինս լավ ապրել մեր կյանքը: Այս կերպարանափոխումն ավարտելու համար Հիսուսը կամենում է մեզ ցնցել և մտցնել ճիշտ գործունեության մեջ: Կարիք չկա Նրա հանդիմանությանն արձագանքել ամոթով, մեղքի զգացումով կամ դատապարտությամբ: Փոխարենը, եկե՛ք ոտքի կանգնենք, շրջվենք և ամբողջ ուժով հետևենք Աստծուն:

ՀԱՎԱՍԱՐԱԿՇՌԵԼ ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

Ես ավելի վաղ նշեցի, որ իմ ձախ ուսն ու ծունկը միշտ անհանգստացնում էին ինձ: Իմ մարզական վիճակը գնահատելու ժամանակ հասկացա, թե ինչու էր այդպես. մարմնիս այդ մասերը խնդիր ունեին, որովհետև ամեն անգամ ճամփորդության գնալիս պայուսակներս գրեթե միշտ կրում էի մարմնիս ձախ կողմում: Սակայն, հետագայում, երբ սովորեցի հանգիստ տալ ձախ ուսիս և ծնկիս, դրանք բուժվելու հնարավորություն ստացան, իսկ վարժության միջոցով ձախ կողմս ավելի ուժեղացավ: Պայուսակներն ու համակարգիչը տեղափոխելիս՝ օգտագործելով մարմնիս երկու մասերը՝ ես այն հավասարակշռության բերեցի: Մեզնից քանի՞սն են հոգևոր առումով վնասված այն պատճառով, որ չափազանց ծանր բեռ են քարշ տալիս կամ մարմնի միայն մեկ կողմն են օգտագործում՝ ծանրությունը կրելու համար: Սա ոչ միայն արտացոլում է այն կարիքը, որ Քրիստոսի մարմինն ունի, այլև ցույց է տալիս, թե ինչպես մենք՝ որպես անհատներ, պետք է ուժեղացնենք մեզ ամբողջապես՝ մեր հոգին, շունչն ու մարմինը: Ժամանակն է, որ դադարենք պահպանել հին վնասվածքները և Աստծո հետ միասին առաջ շարժվենք:

Սաղմոս 144-ում Աստված գեղեցիկ պատկեր է նկարում այն մասին, թե հոգևոր առումով ինչի է նման, երբ Իր որդիներն ու դուստրերը միասին որոշակի ծանրություն և բեռ են կրում:

> «Որ մեր որդիները մեծանան տղայությունից՝ ինչպես նորատունկ ծառեր, և մեր աղջիկներն՝ ինչպես անկյունի սյուներ՝ պալատների ձևով քանդակված» (Սաղմ. 144.12):

Աստվածաշնչի «Նոր կենդանի թարգմանության» մեջ ասվում է. «Որ մեր որդիները *ծաղկեն իրենց երիտասարդության մեջ»:* Մտածեք այս մասին. որդիների սերունդ, որը ծաղկում է, այսինքն՝ ավելանում է, բարգավաճում, բազմանում և նույնիսկ ցուցադրում է Աստծո բարությունը, քանի դեռ երիտասարդ է: Ինչպիսի հակադրություն կա այն ամենի միջև, ինչ մենք սովորել ենք ակնկալել. մենք սովոր ենք տեսնել դեռահասների և պատանիների, ովքեր շռայլում են իրենց երիտասարդության ուժն ու կենսունակությունը:

Դուստրերն այստեղ նկարագրվում են որպես սյուներ: Ես նայել եմ *սյուն* բառի սահմանումը և հայտնաբերել եմ, որ այն երկու գլխավոր նշանակություն ունի. առաջին նշանակությունն է՝ *աջակցություն, պաշտպանություն,* ինչպես օրինակ՝ սյուն, հենարան կամ հենակ: Երկրորդ նշանակությունը *առաջնորդն* է: Այս անվան տակ գտա այն նույն բառերը, որոնք նշված են վերևում:

Ես հավատում եմ, որ այս հատվածում Աստված նկարում է Իր տան ճարտարապետական պատկերը: Արդյո՞ք մենք՝ կանայքս, պատրաստ ենք օգտագործվել ավելի քան միայն «զարդարանքի» համար, և պատրա՞ստ ենք արդյոք պահել Աստծո տան տանիքը:

Սա կրկին մատնանշում է ուժի անհրաժեշտությունը և այն ձեռք բերելու համար անհրաժեշտ մարզման կարիքը:

> *««Վազե՛ք, որ հաղթե՛ք»: Բոլոր լավ մարզիկները քրտնաջան մարզվում են:* Նրանք դա անում են ոսկե շքանշանի համար, որը կորցնում է իր փայլը և հնանում, իսկ դուք վազում եք մի պսակի համար, որը հավիտյան ոսկի է մնում: Չգիտեմ՝ դուք ինչպես, սակայն ես քրտնաջան վազում եմ՝ վերջնագծին հասնելու համար: Դրա համար ես տալիս եմ այն ամենը, ինչ ունեմ. թափթփված կյանքն ինձ համար չէ: Ես մնում եմ զգոն և լավագույն մարզական վիճակում: Եվ բոլորին պատմելով այս ամենի մասին՝ ես չեմ պատրաստվում ննջել և բաց թողնել իմ մրցանակը» (տես Ա Կորնթ. 9.24-27, MSG):

ՄԻ ԿՈՂՄ ԴՆԵԼ ՆԱԽԿԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Ես երբեք լավ մարմնամարզուհի չեմ եղել: Ավագ դպրոցում լողի թիմի կազմում էի, քանի որ սիրում էի լողալ և շփվել թիմի անդամների հետ, սակայն երբեք չէի լողում հաղթելու համար: Ես պարզապես չէի ցանկանում վերջինը լինել, այդ իսկ պատճառով՝ երրորդ կամ չորրորդ տեղը գրավելը միանգամայն բավական էր ինձ: Ես այնքան էի ատում լողի մրցույթները, որ յուրաքանչյուր մրցաշարից առաջ հիվանդանում էի: Եվ շատ հաճախ ինքս ինձ տրամադրելով՝ ասում էի. *«Պարզապես մի քիչ լավ լողա, հետո դա կվերջանա, և դու կվերադառնաս քո ընկերների մոտ»:*

Ցավոք, ես երբեք չեմ գիտակցել, որ թիմը իմ կարիքն ունի. ես միայն իմ մասին եմ մտածել: Ես ունեի վախեր, բայց չունեի շարժառիթներ, և քանի որ երբեք չէի մտածում թիմակիցներիս մասին, երբեք էլ չէի ստիպում ինձ շատ աշխատել: Այլ կերպ ասած՝ ես երբեք չէի ակնկալում հաղթել, դրա համար էլ երբեք չէի հաղթում: Ես ոչ մի առավելություն չէի տալիս իմ թիմին, այլ ընդամենը թիմի մշտական անդամ էի: Եվ այժմ, երբ ետ եմ նայում, համոզվում եմ, որ ավելի շատ վախենում էի հաղթելուց, քան պարտվելուց: Եթե ես աչքի ընկնեի, ապա պետք է պարտավորված լինեի պահել դա, իսկ ես չէի կամենում դրա համար գին վճարել: Ես նաև վախենում էի, որ եթե տայի ամեն բան և դարձյալ ձախողվեի, ապա դա շատ ցավոտ կլիներ, ուստի ես տալիս էի ոչ ավելի, քան 70 կամ 80 տոկոսը: Ես իսկապես չգիտեմ, թե ինչու էի այսպիսի ընտրություններ կատարում, բայց հիմա գիտեմ, որ անտարբերությունն այլևս ընդունելի չէ ինձ համար, հատկապես հոգևոր անտարբերությունը: Երբ սթափվեցի այն փաստից, որ իմ կյանքը ներառում է ավելին, քան միայն «ես և իմ»-ը, սկսեցի հրելով առաջ շարժվել իմ բոլոր նախկին սահմանափակումների միջով:

Կին առյուծին արթնացնելու համար դու պետք է նույնն անես: Ուժ հավաքելու առաջին փորձերն անելիս միգուցե ձա-

խողվես, սակայն այստեղ նաև սովորելու բան կա: Ես չեմ ճանաչում մեկին, ով առաջին փորձից կարողանա գերազանց հմտություն ցուցաբերել:

Պետրոսի Երկրորդ թղթի 3-րդ գլխի 1-ին և 7-րդ խոսքերում ասվում է.

> «Ձեր միտքն անշեղ և ուշադիր պահեք...
> Աստված պատրաստ է կրկին խոսել Իր Խոսքը,
> կրկին ահազանգ տալ» (Բ Պետր. 3.1,7, MSG):

Ուշադրություն դարձրու, որ *դու* պատասխանատու ես միտքդ զգոն պահելու համար: Յուրաքանչյուր օր դու իշխանություն ունես լինելու կամ ուշադիր և կենտրոնացած, կամ անուշադիր և ցրված: Իսկ հիմա գործողության անցնելու ժամանակն է, որովհետև մեր Աստված պատրաստ սպասում է: Նա մտադիր է ուղղել այն, ինչը սխալ է այս աշխարհում: Նա մարտական է տրամադրված և վստահ է, որ կհաղթի: Երբ մեր Բարձրյալ Աստված ազդանշան տա, արդյոք դու էգ առյուծի պես ուժեղ, ճարպիկ և ցատկելու պատրաստ կլինես:

Թույլ տուր, որ Սուրբ Հոգին Աստծո Խոսքի լույսի ներքո գնահատի քո ուժը, և դժվարությունը դառնա մարզման դասընթաց, և դու իմանաս, որ նրանից հաղթանակած ես դուրս գալու: Թույլ տուր, որ Աստծո Խոսքի կշիռը և Սուրբ Հոգու կոփումն ու մարզումը աշխուժացնեն և զարգացնեն քո կյանքի թույլ կամ վնասված բնագավառները: Ուշադրություն դարձրու ոչ թե նրան, թե ինչպես ես հագնված, այլ՝ թե ով ես դու հոգու մեջ: Մի՛ վախեցիր քո ուժից, այլ՝ էգ առյուծի պես դրանով փառաբանի՛ր Աստծուն: Հիշի՛ր, որ երբ ամբողջ աշխարհը լցված է վախով և չի հասկանում, թե ինչ է կատարվում շուրջը, այդ ժամանակ երկնքի և երկրի Աստված՝ ամենի Արարիչը, կոչ է անում քեզ ցուցադրել Իր հրաշքը քո կյանքով:

Դու հավատո՞ւմ ես դրան, իսկ ի՞նչ կա քո մեջ, որ զարմանք է առաջացնում. դու կարո՞ղ ես «լսել» քո սրտով, կարո՞ղ ես ռազմավարություն մշակել: Հմո՞ւտ ես, թե՞ ստեղծագործող: Մա՞յր ես, թե՞ ուսուցիչ: Կարող ես սեմինա՞ր կազմակերպել,

թե՞ ընտանիք միավորել: Կարո՞ղ ես թափթփված և քաոսային սենյակը գեղեցիկ դարձնել, թե՞ դատարկ մի էջ ես, որի վրա դեռ պետք է գրել:

Ոչ ոք չի կարող իսկական բավարարվածություն գտնել, մինչև չգիտակցի, որ ինքը մեկն է, ով ուժ է տալիս շատերին: Սիրելի՛ քույր առյուծ, մենք քո անվեհեր ուժի կարիքն ունենք: Այն իսկապես զարմանալիորեն գեղեցիկ է:

5

Ուժը ծառայության համար է

«Մեզնից յուրաքանչյուրը պետք է բարիք փնտրի իր շուրջը գտնվող մարդկանց համար՝ ինքն իրեն հարցնելով. «Ինչո՞վ կարող եմ օգնել»»:

ՀՌՈՄԵԱՑԻՆԵՐԻ 15.2, MSG

Էգ առյուծների աշխարհում մի վայրի խաղաղություն կա, որը կարելի է նկատել միայն վայրի բնության մեջ: Ես հիշեցի դա, երբ մի փաստագրական ֆիլմ էի դիտում, որը պատմում էր հարավային Աֆրիկայի շրջաններից մեկում գիշատիչ կատուների վերաբնակեցման մասին: Հաղորդման սկզբում մեկնաբանը նկարագրում էր առյուծների երկու խմբի, որոնց առաջին անգամ ծանոթացնում են նոր արգելանոցին: Առաջին խումբը բաղկացած էր երկու երիտասարդ էգ առյուծներից և մեկ արուից:

Մինչև այդ, երեք առյուծներն ապրում էին մի փոքր և փակ տարածքում, որը ժամանակավոր գտնվում էր արգելանոցի սահմանին՝ էլեկտրական ընդարձակ ցանկապատի մոտ: Պահապանները ցանկապատի որոշակի հատված ծակել էին, ինչն առյուծների համար անծանոթ և չուսումնասիրված մեծ տարածք էր բացել: Այդ բացված տարածքից վախեցած՝ առյուծների եռյակը չգիտեր ինչպես արձագանքել փոփոխությանը:

Պահապանները, ակնկալելով այս հակազդումը, մշակել

էին մի ռազմավարություն, թե ինչպես պետք է օգնեին երիտասարդ առյուծներին՝ մտնելու այդ նոր բացված տարածքը: Նրանք որոշել էին մի քանի օր չկերակրել առյուծներին, որպեսզի սովը ստիպեր նրանց՝ դուրս գալ իրենց սահմանափակ վիճակից և մտնել նոր բնակավայր՝ թարմ որսի խոստումով:

Ես հետաքրքրությամբ դիտում էի, թե ինչպես զբոսայգու պահապաններն իրենց մեքենայից հանեցին հսկա այծյամի դին և դրեցին առյուծների նոր բնակավայրում՝ ցանկապատից ոչ շատ հեռու: Առյուծներն ուշադիր նայում էին և երբ այծյամի հոտն առան, բարձրացրին գլուխները:

Չնայած որ այդ երիտասարդ առյուծները քաղցած էին, բայց նաև շատ զգույշ էին. արու առյուծին դժվար է հանել աֆրիկական թփուտի իր ապահովության վայրից: Մինչ նա նայում էր, երկու էգ առյուծները մոտեցան բաց ցանկապատին՝ կասկածամտորեն ետ ու առաջ քայլելով: Կարծես թե նրանք փորձում էին վերհիշել այն սահմանները, որտեղ մի ժամանակ եղել էր էլեկտրական ցանկապատը: Նրանք միասին հոտոտեցին օդը, ապա՝ գետինը, իսկ հետո նահանջեցին՝ կրկին վերադառնալու և բացված ցանկապատի առջև կանգնելու նպատակով: Թվում էր, թե նրանք փորձում էին հասկանալ, թե ինչ է կատարվել: Ինչո՞ւ էր հանկարծակի բաց տեղ հայտնվել նրանց առջև, և արդյո՞ք դա մի խաղ չէր:

Ի վերջո էգ առյուծներից մեկը որոշեց առաջ գնալ: Նրա քաղցը հաղթեց երկմտանքին. նա համարձակությամբ հատեց գիծը և մոտեցավ մորթված այծյամին: Ճանապարհի կեսին նա հայացք նետեց իր քրոջ վրա՝ կարծես հրավիրելով նրան միանալ իրեն: Երկրորդ առյուծը ևս մի պահ կանգնած մնաց ցանկապատի մոտ, ապա գնաց միանալու քրոջը: Երկուսով շրջապատեցին այծյամին, հոտոտեցին նրան՝ համոզվելով, որ ամեն բան կարգին է: Սակայն արու առյուծը մնաց ցանկապատի ետևում: Մինչ նա նայում էր, էգ առյուծներն այծյամից մի կտոր փորձնական համտեսեցին: Որսը լավն էր, միսը՝ թարմ, սակայն «ճաշկերույթը» սկսելու փոխարեն, նրանք մի հետաքրքիր բան արեցին: Էգ առյուծները բռնեցին այծյամի վզից ու ոտքից և նրա մարմինը քարշ տվեցին դեպի ցանկապատը, որպեսզի արու առյուծն էլ կարողանար ուտել

իր բաժինը: Նրանց գործողություններն ինձ մտածելու տեղիք տվեցին: Ինձ վրա տպավորություն թողեց այն, որ նրանք իրենց «ճաշկերույթի» մեջ ներառեցին նաև կասկածամիտ առյուծին: Ինձ դուր եկավ, որ նրանք չկամեցան առանց նրա «խնջույք» անել. գեղեցիկ է, երբ կանայք գիտեն ինչպես դա անել:

ՕԳՆԵԼ ՆՐԱՆՑ, ՈՎՔԵՐ ԹՈՒԼԱՑԵԼ ԵՆ

Արդյո՞ք մենք թույլ կտանք, որ մեր քույր առյուծների ազնվական օրինակը ոգեշնչի մեզ մեր գործերի, փոխհարաբերությունների և մեր արձագանքների մեջ: Արդյո՞ք մենք կլինենք այնպիսի կանայք, որ ժամանակ կտրամադրեն և ջանք չեն խնայի իրենց ցուցաբերած Աստծո բարությունը սփռելու նոր տարածքներ, որ Աստված բացում է իր դուստրերի առջև:

Այո՛, ես հասկանում եմ, որ ետ շրջվելը կամ ուրիշներին սպասելը դանդաղեցնում է քո ընթացքը, սակայն դա միայն սկզբում է լինում. բարության, մեծահոգության և իմաստության միտումնավոր դրսևորումը վերջում միշտ էլ հաղթում է: Երբ Աստված սկսում է նոր կյանք և ազատություն տալ իր ժողովրդին, ոմանք այն ընդունում են ուրախությամբ և մեծ սպասումով, ոմանք երկմտում են՝ սպասելով, թե ինչ տեղի կունենա, իսկ մյուսներն էլ դիմադրում են:

Իմ աղոթքն է, որ Աստծո բոլոր դուստրերը ոտքի կանգնեն և մտնեն այն ազատության ու նպատակի մեջ, որ Նա դնում է նրանց առջև: Եվ նրանք, ովքեր ավելի ուժեղ են, ավելի ազատ կամ ավելի հաստատված ճշմարտության մեջ, թող ետ շրջվեն և քաջալերեն նրանց, ովքեր շեմին կանգնած են մնացել:

Ինձ դուր է գալիս, թե ինչպես է սա արտահայտված Հռոմեացիների 15-րդ գլխում.

> «Մենք, որ զորավոր ենք և հավատքի մեջ կարող, պետք է քայլ անենք և օգնության ձեռք մեկնենք նրանց, ովքեր թուլանում են, և չանենք միայն այն, ինչն ամենից հարմար է մեզ: *Ուժը ծառայության, այլ ոչ թե դիրքի համար է*» (Հռոմեացիների 15.1,2, MSG):

Ուժեղ և կարող կանայք պետք է քայլ անեն, աջակցեն և ձեռք մեկնեն նրանց, ովքեր թուլացել են, երկմիտ են, կանգ են առել կամ էլ տկարացել են իրենց որոշման մեջ: Ինձ դուր է գալիս, թե ինչպես են այդպիսի կանայք օգնում մյուսներին: Այնքան շատ երիտասարդ և տարեց կանայք կան, ովքեր զգում են, որ իրենց ներսում ավելի մեծ բան կա, և ցանկանում են առաջ շարժվել ու նվաճել այն տարածքը, որը շրջապատում է իրենց: Նրանք շեմին կանգնած նայում են ու երկմտում՝ արժե՞ արդյոք մտնել այն վայրի բնության մեջ, որ Աստված կանչում է իրենց:

Վերջերս մի հաճելի, անկեղծ երիտասարդ աղջիկ հավաքույթից հետո մոտեցավ ինձ: Նրա ներսում թաքնված Աստծո երազանքն այնքան մեծ էր, որ մեր հանդիպումը ժամանակի առումով հնարավորություն չտվեց նրան պատմելու այն ամենը, ինչ նա զգում էր: Ուստի նա գնաց տուն և մի էլեկտրոնային նամակ գրեց ինձ՝ արտահայտելով այն ամենը, ինչ կուտակված էր նրա ներսում: Կարդալով նրա գրած նամակը՝ հասկացա, որ նա վրդովված է և անհանգստացած, սակայն ամենևին էլ դրա կարիքը չկար: Ես ապշած էի այն բանից, թե ինչպես էին այդ աղջկա խոսքերն արձագանքում այն զգացմունքներին, որոնք ինքս էի ունեցել նույնատիպ անցումային շրջանում. դա էր պատճառը, որ ես նրան լավ էի հասկանում:

Հաճախ բավական է միայն իմանալ, որ ուրիշները մեզնից առաջ արդեն անցել են կամուրջը և մյուս կողմում ապահով վայր են գտել: Երբեմն նրանք, ովքեր թուլացած են, պարզապես կարիք ունեն, որ քույրերից մեկը, ով արդեն մյուս ափին ապահով կանգնած է՝ ետ նայի իրեն: Հետադարձ հայացքը բավական է, որ ասի. «Հե՛յ, քույրի՛կ, ես այստեղ եմ, և այստեղ ոչ միայն ամեն բան պարզ է, այլև ամեն բան լավ է»:

ԹՈԹԱՓԵԼ ԿՐՈՆԻ ԾԱՆՐՈՒԹՅՈՒՆԸ

Հաճախ կանայք թուլանում են՝ հանձնվելով: Չնայած ավելի ու ավելի շատ կանայք են հայտնաբերում այն ազատությունը, որ Աստված ունի նրանց համար, այնուամենայնիվ ոմանք դեռ սայթաքում են կրոնի ծանրության տակ գտնվելով: Միայն վերջին տասնամյակում է, որ կանանց հրավի-

րում են խոսել տղամարդկանց և կանանց բազմության առջև: Շատ կանայք և եկեղեցիներ դեռ պայքարում են այս ազատությունն ընդունելու համար. սա վերաբերում էր նաև ինձ:

Աստծո դուստրերի հետ հավաքույթ անցկացնելիս ես անվախ ու համարձակ էի, սակայն հենց բազմության մեջ հայտնվում էին տղամարդիկ, սկսում էի բառացիորեն քրտնել: Ես վախենում էի սխալվելուց, այդ իսկ պատճառով նյարդայնանում և կորցնում էի ինքս ինձ: Դա շարունակվեց այնքան ժամանակ, մինչև որ մի առավոտ, ծառայությունից առաջ, ինձ հրավիրած հովիվը և իմ անվախ ընկերուհիներից մեկը խնդրեցին ինձ վերջ դնել այդ ամենին:

- Ինչո՞ւ տղամարդկանց առջև քեզ նույն ձևով չես պահում, ինչպես որ պահում ես կանանց առջև,- մարտահրավեր նետեցին նրանք:

Ես ճշմարտացի պատասխան տվեցի.

- Անկեղծ ասած՝ չգիտեմ...

- Ուրեմն, շտապի՛ր և լուծի՛ր այդ հարցը: Մենք ուզում ենք, որ դու դադարես անվճռական լինելուց:

Նրանց խոսքերը հարվածեցին ինձ: Ես հավատում եմ, որ առողջ եկեղեցի ունենալու համար անհրաժեշտ է և՛ տղամարդու, և՛ կնոջ ձայնը: Ես զորությամբ չէի բարձրացնում իմ ձայնը, և իմ անվճռականությունն իրականում քայքայում էր այս համոզմունքը: Ըստ էության, ես տղամարդկանց առջև գրեթե ներում հայցողի պես էի ներկայանում, քանի որ ես կին էի: Երբ ինձ մատնացույց արվեց իմ դժկամությունը, ես սկսեցի լուծել դրա հարցերը:

Մինչև հիմա էլ նախընտրում եմ կանանց հետ խոսել, բայց երբ ինձ խնդրում են ծառայել տղամարդկանց, ես այլևս ներում չեմ հայցում: Իմ փորձառությունից գիտեմ, որ երբ տղամարդը խնդրում է քեզ քարոզել, ապա նա ցանկանում է, որ դու ամբողջությամբ տրվես այդ գործին: Երբ հանդիպում ես նրանց հետ, նրանք բարձրացնում, քաջալերում, ուղղում և օգնում են, որ առաջ գնաս, և դու հասկանում ես, որ իսկական ընկերների հետ ես հանդիպել: Բայց, ցավոք, շատ հաճախ ճշմարիտ է հակառակը:

«Որովհետև ծանր և դժվարակիր բեռներ են կապում և դնում մարդկանց ուսերին, բայց իրենց մատով չեն ուզում շարժել նրանց» (Մատթեոս 23.4):

Հիսուսի օրերում կրոնական առաջնորդները հաճույք էին ստանում, երբ տեսնում էին, թե ինչպես են ուրիշները ծանր աշխատանք կատարում: Ձեր կարծիքով ինչո՞ւ էր այդպես: Ես ենթադրում եմ, որ նրանք իրենց մեծարված կամ վերադաս էին զգում այն պատճառով, որ ուրիշները չարչարվում էին հենց իրենց ստեղծած օրենքներով: Եվ դրանից նրանք իրենց ինչ-որ կերպ Աստծուն ավելի մոտ էին զգում:

Վերոնշյալ հատվածը հետաքրքիր միտք է հաղորդում: Աստծո օրենքը պետք է ոչ թե բեռ լինի, այլ՝ խնջույք: Ուտելիքը ուժ է տալիս, սակայն աշխատանքը քամում է այդ ուժը: Մենք կանչված ենք ներկայացնելու այն, ինչ Աստված անում է, և այն ամենը, ինչ Նա առաջարկում է որպես խնջույք: Մենք պետք է ծառայենք ուրիշներին՝ դրսևորելով Աստծո բարությունը: Երբեմն սա մեզնից կպահանջի թոթափել այն կրոնական բեռը, որը դրվել է Աստծո որդիների և դուստրերի վրա:

Հավանաբար հիմա մտածում ես, *թե նկատի ունեմ, որ նույնիսկ չամուսնացած տղամարդը կամ կինը կարող է ծառայել:* Այո՛, եկե՛ք մի կողմ նետենք այն բեռը, որ դու պետք է ամուսնացած լինես, որպեսզի ծառայես Քրիստոսի մարմնին. Պողոսն ամուսնացած չէր: Եկե՛ք կոտրենք այն կարծրատիպը, որն ասում է, թե կանայք կարող են աշխատել երեխաների, բայց ոչ չափահասների հետ: (Արդյո՞ք մենք ավելի շատ չպետք է անհանգստանանք, թե ով է աշխատում մեր երեխաների հետ): Կարող ենք կոտրել ևս մի կարծրատիպ, որն ավելի արմատացած է, ըստ որի մենք պետք է կատարյալ դառնանք, որ կարողանանք խոսել Աստծո խոստմունքների մասին: Ոչ ոք կատարյալ չէ, և այս հավակնության մեջ մեր համառությունը նողկալի է դարձնում մեզ շրջապատող աշխարհը: Եկե՛ք հանենք դիմակները և միասին ընդունենք մեր սխալները, սովորենք դրանցից և առաջ շարժվենք՝ մեծարելով Հիսուսին:

Արդյո՞ք մենք կամենում ենք օգտագործել մեր ազատությունը, որպեսզի թոթափենք այն ծանրությունը, որ կրո-

նը սխալմամբ դրել է այլ մարդկանց վրա: Երբ Աստված կոչ է անում մեզ ինչ-որ նոր բան անել, այսինքն՝ նոր հիմք գցել կամ ոտք դնել անծանոթ տարածք, այդ ժամանակ մենք հակված ենք լինում սխալվելու և սայթաքելու: Վերջին տասը տարիներին եկեղեցին շատ առաջխաղացումներ է ունեցել, և դա հրաշալի է, սակայն դեռ ոչ բոլորն են պատրաստ արագացնելու իրենց ընթացքը: Աստված շարունակում է գործել՝ բացելով նախկինում փակված դռները: Նա մարդկանց սրտում ծարավ է առաջացնում՝ առաջ գնալու և վախերը հաղթահարելու համար:

Վերջերս մի կնոջից էլեկտրոնային նամակ ստացա, ով երեք թե չորս տարի առաջ լսել էր իմ քարոզն այն մասին, որ սրբված և օծված կանայք կարող են և պետք է ձայն ունենան Աստծո տան մեջ: Այս գաղափարն ի սկզբանե տագնապ էր առաջացրել նրա հոգում, որովհետև դա բացահայտ հակասում էր այն ամենին, ինչ նա գիտեր: Իմ խոսքերը նրան շփոթության և անհանգստության մեջ էին գցել, սակայն երբ նա սկսեց աղոթել և ուսումնասիրել Աստծո Խոսքը, Աստված հաստատեց այն, ինչ ես սովորեցնում էի, և նույն դուռը բացեց նաև նրա առջև: Այդ ժամանակ նա հասկացավ, որ իր մեջ առաջացած ներքին բախումն իրականում Աստծուց էր եղել: Այդ կնոջ անհանգստությունը պատճառ դարձավ, որ Աստված խոսի նրա հետ այս հարցի շուրջ: Այն խոսքերը, որ ես խոսել էի տարիներ առաջ, այդ կնոջ կյանքում եղել էին սերմեր, որոնք այժմ պտուղ էին տալիս:

Մեզ պատվիրված է խոսել ճշմարտությունը սիրով և ապրել այնպիսի կյանքով, որը կհրավիրի մյուսներին՝ միանալ մեզ: Մենք չպետք է մեր ետևում թողնենք տկարներին ու քաղցածներին:

Եզեկիելի 19.2-րդ խոսքում գրված է. «Ինչ է քո մայրը. մի էգ առյուծ, որ առյուծների մեջ է պառկում...»:

Երբ առաջին անգամ կարդացի այս խոսքը, մտածեցի. *«Ի՞նչ է սա նշանակում»:* Եվ որպեսզի կարողանայի հասկանալ, ես վերանայեցի Եզեկիելի 19-րդ գլխի համատեքստը: Այն նկարագրում է էգ առյուծին, որը մեծացնում է իր երկու կորյուններին, որպեսզի նրանք ուժեղ և հզոր առյուծներ դառնան: Եվ ես հասկացա, որ *ցանկանում եմ առյուծների մեջ*

լինել էգ առյուծ: Իսկ ո՞վ չի ցանկանում լինել այնպիսի կին, ում կյանքը և արած ընտրությունը ի զորու են կրթելու ուժեղ դուստրերի և որդիների: Ես բազմաթիվ կանանց միջավայրում ջերմ ընդունելության պատիվ ունեմ, սակայն ցանկանում եմ արժեքավոր լինել նաև տղամարդկանց միջավայրում: Ես ցանկանում եմ բարձրացնել *նրանց,* ովքեր երկչոտ են, տկար կամ էլ պայքարի մեջ են. դո՛ւ էլ կարող ես նույն բանն անել, քանի որ Աստված իր դուստրերի էության մեջ ուրիշներին բարձրացնելու ցանկություն է դրել:

ՀՈՒՅՍ ԱՆՀՈՒՅՍՆԵՐԻՆ

Երբեմն այն մարդկանց մեջ, ովքեր տատանվում են, հույս արթնացնելը նույնքան կարևոր է, որքան նրանց օգնության ձեռք մեկնելը: Վերջերս, երբ «Կյանք» սոցիալական ծառայության հետ միասին Կամբոջայում էի, շրջում էի գիշերային փողոցներով և զրույցի էի բռնվում մարմնավաճառությամբ զբաղվող աղջիկների հետ: Երբ մոտենում էի այդ գիշերաշրջիկ դուստրերին, նրանք պաշտպանողական դիրք էին գրավում և գրեթե ծաղրանքով էին վերաբերվում իմ և իրենց միջև հնարավոր փոխազդեցությանը: Այսօրինակ արհամարհանքը շարունակ կրկնվում էր՝ անկախ նրանից՝ ես մոտենում էի անհատի՞ն, թե՞ ամբողջ խմբին: Նրանք իմ հարցերին պատասխանում էին մեկ բառով և իրար մեջ բռնազբոսիկ ժպտում էին: Ես համոզված եմ, որ նրանց զարմացնում էր այն, թե ինչու էր սպիտակամորթ, միջին տարիքի ամերիկուհին դիմում իրենց: Բայց երբ հաջողվում էր խոսակցությունն առաջ տանել, ես նրանց հարցնում էի իրենց երազանքներից:

«Եթե հնարավոր լիներ, կյանքում ի՞նչ կցանկանայիր դառնալ և ի՞նչ կանեիր»:

Առանց բացառության՝ ես տեսնում էի, թե ինչպես էր նրանց դեմքը կերպարանափոխվում, երբ նրանց առաջարկվում էր երազել և հուսալ, որ իրենց կյանքում կարող էր ավելին լինել. արդյո՞ք գիշերային մղձավանջի մեջ հայտնվել էր մեկը, ով իրականում խնդրում էր նրանց երազել: Եվ հանկարծ հաջորդաբար ստանում էի արագ պատասխաններ,

որոնք իմ թարգմանիչը հազիվ էր հասցնում թարգմանել:

«Ես ցանկանում եմ վարսավիր դառնալ»:

«Ես ցանկանում եմ ռեստորան բացել»:

«Ես ցանկանում եմ առևտրի կենտրոնում իմ սեփական տաղավարն ունենալ, որտեղ գեղեցիկ իրեր կվաճառեմ»:

«Ես ուզում եմ կատարել ցանկացած աշխատանք, որտեղ մարդիկ այլևս վավաշոտ հայացքներ չեն նետի ինձ վրա»:

«Ես ցանկանում եմ այնքան գումար վաստակել, որ կարողանամ դրանից որոշ մասն ուղարկել ընտանիքիս»:

Աղջիկները չէին կարողանում ընդհատել իրենց խոսքը. նրանք մի քանի րոպեով թողել էին իրենց գայթակղիչ կեցվածքը և նմանվել էին պարմանուհիների, ինչպիսին իրականում կային:

Այս աղջիկները գիտեին, թե ինչ են իրենք ցանկանում, միայն թե նրանց վանդակը բաց դուռ ունենար: Հնարավորության սահմաններում մենք առաջարկեցինք մեր օգնությունը՝ նրանց բանտից ազատելու համար: Աղջիկներից ոմանք ընդունեցին մեր առաջարկը, սակայն առաջ շարժվեցին միայն նրանք, ովքեր կարողացան «հաղթել իրենց ամոթը»: Այս աղջիկներից շատերն ամոթի և մեղքի զգացողության պատճառով ոչ միայն ֆիզիկական, այլ նաև հոգևոր գերության մեջ էին:

Այսպիսի հուսահատ իրավիճակներում բավական չէ միայն երազել և իմանալ, թե ինչ ես ուզում: Մեծ մասամբ այդպես թակարդված, խաբված լինելով՝ մարդիկ թաքնվում են ցանկապատի ետևում՝ չնկատելով, որ դուռը լայն բացված է: Ուստի մենք ոչ միայն առաջարկում էինք մեր օգնությունը՝ այդ աղջիկներին մարմնավաճառության ճանապարհից հանելու համար, այլև Աստծո բարությունն էինք բերում նրանց ներփակված կյանքերում: Մենք նրանց պատմում էինք Հիսուսի մասին՝ ասելով, որ Նա կանգնած է նրանց կողքին, և միայն Նա է գերագույն Հույսը անհույսների համար:

Հիսուսին իրենց սրտի և կյանքի մեջ հրավիրելն արդեն նրանց գործն էր: Ես և դու կարող ենք քայլել ուրիշների կողքով և քաջալերել առաջ շարժվել, սակայն վերջնական ընտրությունը նրանցն է:

ՃՇՄԱՐՏՈՒԹՅՈՒՆ ԷԳ ԱՌՅՈՒԾԻ ՄԱՍԻՆ

Մի պահ վերադառնանք փաստագրական ֆիլմում ցուցադրված էգ առյուծներին, որոնց մասին նշեցի այս գլխի սկզբում. նրանք հաստատ այլ ընտրություններ ունեին, բայց ինչո՞ւ կենդանու մարմինը բերեցին առյուծի մոտ: Իրականում հսկա այծյամին ցանկապատից ներս բերելը շատ անհարմար էր և հարմար տարբերակը նրանց համար այն էր, որ սկզբում նրանք կուշտ ուտեին որսի մսից, հետո մնացածը թողնեին այնտեղ, որպեսզի առյուծը գար և ուտեր: Եվ մի տարբերակ էլ կար, որ նրանք կարող էին կուշտ ուտել որսի մսից, հետո մնացորդները բերել առյուծին, քանի որ նրանց ավելի հեշտ էր տեղափոխել այծյամի մի մասը, քան ամբողջ մարմինը: Նրանց վարքագիծը կարծես ճիշտ հակառակ պատկերն էր այն ամենի, ինչ մենք կակնկալեինք՝ հաշվի առնելով ջունգլիների օրենքը: Եթե կենդանիների թագավորությունը հիմնված է գոյատևման վրա, ապա ինչո՞ւ էին այդ էգ առյուծներն այդքան մեծահոգի: Ի վերջո՝ քաղցած առյուծի հետ կերակուրը կիսելը նշանակում էր, որ նրանց քիչ բաժին կհասներ:

Թերևս այս էգ առյուծները գիտեին մի բան, որը մենք մոռացել ենք: Չնայած երիտասարդ և ոչ հասուն լինելուն՝ նրանք բնազդաբար հասկացել էին, որ իրենց ապագան և իրենց ձագերի գոյատևումը անմիջականորեն կախված է արու առյուծի նկատմամբ ունեցած իրենց վերաբերմունքից: Նրանք վարվեցին այդպես, որպեսզի առյուծն իր ուժի ծաղկուն շրջանում հիշեր նրանց: Էգ առյուծները ուշադրություն չդարձրին թփերի մեջ կծկված արու առյուծի ներկա կեցվածքին, այլ պատվեցին նրան որպես հզոր առյուծի: Կգար այն օրը, երբ արուն լիովին կհասունանար, համարձակ կդառնար և կհիշեր, որ էգ առյուծներն իրեն ուտելիք էին բերել, երբ նա դեռ երիտասարդ էր և չափազանց վախեցած էր պահանջելու այն, ինչն իրեն էր պատկանում: Այդ օրը նա կիմանար, որ կարող է վստահել էգ առյուծներին և կյանքն անցկացնել նրանց հետ: Էգ առյուծների բնազդը կպահեր խմբին և կշահեր արու առյուծի մտերմությունը:

Մեզնից քանի՞սն են ընդունում այս վերաբերմունքը. ավելի ճիշտ՝ արդյո՞ք մենք ընդունում ենք նրանց վերաբերմունքը, թե՞

որդեգրել ենք անազնիվ գոյատևման դիրքորոշումը: Միգուցե մեր վերաբերմունքն այսպիսին է. «Հե՛յ, քեզ համար այդտեղ շատ վատ է, իսկ ինձ համար այստեղ շատ լավ է. Աստված Իր դուստրերի համար խնջույք է պատրաստում: Եթե չես կամենում միանալ մեզ, այդպես էլ մնա քո ցանկապատի մեջ»:

Մենք իմաստուն կլինենք, եթե սովորենք այս ճշմարտությունը. *«Այժմ ավելի քիչ վերցնելը չի նշանակում ապագայում ավելի քիչ ունենալ»:* Պատվի արարքները երբեք չեն մոռացվում:

Ուժը մեզ տրված է ծառայության, այլ ոչ թե դիրքի համար (տե՛ս Հռոմ. 15.2): Հետաքրքիր է, թե որքան դժվարություններ ու խնդիրներ կկասեցվեին աշխարհում, եթե յուրաքանչյուրն իմանար և ընդուներ այս սկզբունքը: Ի՞նչ կլիներ, եթե մենք իմանայինք, որ մեր ուժը տկարներին և երկչոտներին ծառայելու համար է, իհարկե, այդ ժամանակ ամեն բան լավ կլիներ: Ես հավատում եմ, որ այս կյանքի վերջում մենք բոլորս կցանկանանք լսել Հիսուսի հետևյալ խոսքերը. «Ապրե՛ս, բարի և հավատարիմ ծառա»:

ՎԵ՛Ր ԿԱՑ ԳԵՐԱԶԱՆՑ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Ծառայություն բառը բազմաթիվ կիրառություններ ունի: Որպես բայ՝ «ծառայել» նշանակում է «վերանորոգել, ստուգել, ուղղել և զննել»: Հիսուսն Իր զոհի միջոցով մեծ *«ծառայություն»* մատուցեց մեզ և հնարավոր դարձրեց Սուրբ Աստծո առջև կանգնելը: Մեր ապրած կյանքով մենք պետք է արտացոլենք այս կենարար *ծառայությունը*. Նա կոտրվեց, որպեսզի մենք նորոգվենք: *Ծառայությունը*՝ որպես գոյական, կարող է նշանակել «արարողություն, ծես կամ խորհուրդ»: Երբեմն վախենում եմ, որ մենք մոռացել ենք, որ եկեղեցական *ծառայության* նպատակն է՝ սովորել, թե ինչպես պետք է ծառայել Աստծուն և մեկս մյուսին: Շատ քրիստոնյաներ համախմբվում են սխալ ակնկալիքով. նրանք գալիս են տեսնելու, թե ինչպես է Աստված *ծառայելու* իրենց: Սակայն, փոխարենը, մենք պետք է համախմբվենք այն նպատակով, որ հասնենք նրանց, ովքեր թուլացած են մեր եկեղեցիներում և մեր եկեղեցիներից դուրս:

Ազատության, բարեհաճության և մեր առջև բացվող նոր հնարավորությունների խոստումով եկե՛ք Աստծո գործերում առաջ շարժվենք և թույլ չտանք, որ որևէ մեկը ետևում մնա: Ինձ դուր է գալիս այս հանձնարարությունը.

> «Թող ամեն մարդ այսպես համարի մեզ՝ ինչպես Քրիստոսի պաշտոնյաներ և Աստծո խորհուրդների տնտեսներ: Արդ, տնտեսների մեջ այն է պահանջվում, որ մեկը հավատարիմ գտնվի» (Ա Կորնթացիների 4.1,2):

Մենք պետք է տնտեսներ լինենք, այլ ոչ թե հսկիչներ: Մենք պետք է ուրիշներին նույնպես հրավիրենք արքայության մեջ, այլ ոչ թե հեռու պահենք Աստծո խորհրդից: Մեզ հանձնարարված է լինել վստահելի տնտեսներ, որոնք ճշգրիտ գիտելիքներ ունեն: Եկե՛ք օգտվենք այն հնարավորություններից, որոնք Աստված տալիս է մեզ, և եթե անհրաժեշտ է, շրջվենք, որ կարողանանք ձեռք մեկնել ետևում մնացածներին:

Որպես Բարձրյալի դուստր՝ դու պետք է ձեռք մեկնես մարդկանց և՛ մեծահոգաբար, և՛ ազնվորեն. Աստծո կյանքն ազատագրում է, իսկ օրենքը՝ բեռնավորում: Դու ազատվել ես քրիստոնեության հանդեպ «աչքի դեմ՝ աչք» և «ատամի դեմ՝ ատամ» մոտեցումից: Սակայն այսօր չափից շատ «կույր» և «անատամ» մարդիկ կան Քրիստոսի մարմնում:

Երբեք մի՛ մոռացիր, թե ով ես. դու ուժեղ ես, վսեմ, անվախ, մոլեգին, պաշտպանողական, հանգիստ և անխռով:

Աստված Իր արքայական զավակների ուժը շարունակ համեմատում էր արու և էգ առյուծների ուժի հետ:

> «Առյուծի պես նստեց-պառկեց, և մատակ (անգլ.-ում՝ էգ) առյուծի պես. ո՞վ կզարթնեցնի նրան...» (Թվոց 24.9):

Եթե դու մոռանում ես քո մոլեգին ու անվախ էությունը, ապա վտանգի տակ են հայտնվում նրանք, ովքեր նայում են քեզ որպես պաշտպանողի և ուղեկցողի: Քրիստոսի մարմինը կազմված է ազնիվ և զորավոր տնտեսներից, ովքեր արթուն

են և գիտակցում են, որ Աստված լայն տարածություն է բացել իրենց առջև:

Սիրելի՛ քույրեր, կին առյուծնե՛ր և ընկերնե՛ր...

> «Չեմ կարող ասել՝ որքան եմ ցանկանում, որ դուք մտնեք այս լայն բացված, ընդարձակ կյանքի մեջ: Մենք չենք սահմանափակել ձեզ: Այն սահմանափակումը, որ զգում եք, գալիս է ձեր ներսից: Ձեր կյանքերը սահմանափակ չեն, պարզապես դո՛ւք եք այդպես ապրում: Ես խոսում եմ մեծ սիրով և այնքան պարզ, որքան կարող եմ: Բացե՛ք ձեր կյանքերը: Ապրե՛ք բաց և ընդարձակ կյանքով» (Բ Կորնթացիների 6.11-13, MSG):

Լսո՞ւմ եք. մեզ առաջարկվում է մտնել Աստծո վայրի և լայն բացված տարածությունները: Սա կոչ է՝ այստեղ և հիմա լայնարձակ կյանքով ապրելու համար: Կարիք չկա սպասել, թե երբ է երկնային զորությունն ամբողջությամբ արձակվելու երկրի վրա. Աստված չի ցանկապատել քեզ:

Առյուծներն իրենց ցանկապատած վայրից այն կողմ չշարժվեցին, մինչև նրանց քաղցը չգերազանցեց ապահով լինելու ցանկությունը: Նույնպես էլ տեսիլքի կամ ինչ որ բանի հանդեպ քաղցի պակասը կարող է սահմանափակել և ետ պահել մեզ վայրի բնության մեջ մտնելուց: Մենք քաջալերվում կամ գերության մեջ ենք մնում՝ ելնելով նրանից, թե ինչպես ենք տեսնում ինքներս մեզ, մեր աշխարհը և մեր Աստծուն: Քեզ համար «այնտեղի» աշխարհը կարող է վախեցնող թվալ, եթե այն պատկերացնես իբրև մի մութ, սարսափազդու վայր:

Բա՛ց աչքերդ և հիշի՛ր, թե ով ես դու. դու լույս կրող ես և խավարը ցրելու զորություն ունես: *«Այն Հոգին, որ ձեր մեջ է, շատ ավելի ուժեղ է, քան որևէ բան աշխարհում»* (Ա Հովհաննես 4.4, MSG): Նույնիսկ համեմատություն անել չի կարելի, քանի որ, այն Հոգին, որ քո մեջ է, գերազանցում է ցանկացած հակառակության զորության, որ կարող ես հանդիպել այս աշխարհում: Քեզ ցանկապատված կյանքից դուրս կանչողը Բարձրյալ Աստված է, Նա ուղարկեց Իր Որդուն, որ մահա-

նա խաչի վրա, որպեսզի դու կարողանաս տեղափոխվել մահից՝ կյանք և այս աշխարհի սահմանափակ վայրերից դեպի հավիտենական տարածություն: Նույնիսկ նախքան քո լույս աշխարհ գալը Աստված արդեն ճանապարհ էր պատրաստել քեզ գերությունից ազատելու համար: Նա ընտրեց սահմանափակել Իրեն և ապրել մեր փոքր, ցանկապատված կյանքով, որպեսզի դու կարողանաս միանալ Նրան՝ արքայության լայնարձակ ազատության մեջ:

Նույնիսկ հիմա Նա կանչում է յուրաքանչյուրիս՝ ասելով. «Անցի՛ր և մտի՛ր»:

6

Նույն առաքելության ներքո

«Ամեն անգամ, երբ մենք ազատում ենք կնոջը, իմացե՛ք, որ ազատում ենք տղամարդուն»:

ՄԱՐԳԱՐԻՏ ՄԻԴ

Առյուծների աշխարհում չկա սեռերի խառնաշփոթ. արուները չեն փորձում էգ լինել, իսկ էգերն էլ չեն փորձում արու լինել: Սեռերից ոչ մեկը մյուսին չի նմանակում կամ էլ չի մրցում մյուսի դերը ստանձնելու համար: Երկուսն էլ իրենց լավ են զգում իրենց դերում և ընդունում են իրենց սեռի առանձնահատուկ ուժեղ կողմերը: Էգ և արու առյուծներից բացի խմբի մեջ կան նաև գլխավոր արու և էգ առյուծներ, սակայն նրանք իրենց կարգավիճակը կիրառում են որսը ուտելու ժամանակ:

Առյուծները կատվազգիների ընտանիքի միակ անդամներն են, որոնք ակնհայտ և անմիջականորեն տեսանելի տարբերություն են ցուցադրում սեռերի միջև: Այս տարբերությունը նկարագրելու համար օգտագործվում է սեռական դիմորֆիզմ արտահայտությունը: Պարզ ասած՝ սեռին վերաբերող մի քանի հատկանիշ գոյություն ունի. արու առյուծներն ունեն լայն բաշ, որն օղակում է նրանց վիզը և շրջանակում է երեսը: Այս բաշն ընդգծում է այն առանձնահատուկ դերը, որ գլխա-

վոր առյուծն ունի իր խմբի մեջ, ինչպես նաև աֆրիկական հարթավայրում այդ բաշը առյուծին սարսափազդու տեսք է տալիս: Էգ առյուծի բաշի բացակայությունը նրան թվացյալ գունավորում է տալիս, ինչը թույլ է տալիս, որ նա անտեսանելի կերպով հետապնդի զոհին: Առանց բաշի լրացուցիչ ծանրության նա կարող է պահել արագությունը և ավելի երկար տարածություններ անցնել:

Առողջ արու և էգ առյուծները գիտեն, որ նրանք միմյանց կարիքն ունեն և երբեք չեն երազում ապրել առանց մեկը մյուսի: Նրանց աշխարհում մեկի ուժը պակաս կարևոր չէ, քան մյուսինը. արու առյուծը պաշտպանում է, էգը՝ մատակարարում: Այս կարևոր հավասարակշռությունը ենթադրում է, որ խմբի առողջ, ուժեղ գլխավոր արուներն առանց հզոր էգերի օգնության չեն կարող ապրել: Առյուծների աշխարհում արուները պայքարում են, որպեսզի շահեն էգ առյուծների խմբին և դրանով մուտք ունենան նրանց տարածք: Իսկ ինչո՞ւ է այդպես. տարածքը սովորաբար վերահսկում են ազգակցական էգ առյուծները, այլ ոչ թե արուները: Արու առյուծների միությունը, որն առաջնորդում է խմբին, փոխվում է յուրաքանչյուր երկու կամ երեք տարին մեկ, սակայն էգ առյուծների խումբը չի փոխվում:

Գլխավոր առյուծը գիտի, որ եթե նա ցանկանում է բարգավաճել (ոչ թե պարզապես գոյատևել), ապա պետք է իր ուժը ցույց տա էգ առյուծներին: Այնուհետև, որպեսզի իր հետնորդները պահեն խմբի տարածքը, նրան անհրաժեշտ է ուժեղ և կարող էգ առյուծների օգնությունը: Նա իրեն չի շրջապատում թույլ և պասիվ էգ առյուծներով՝ հույս ունենալով, որ նրանց կստիպի հնազանդվել իրեն. նա փնտրում է էգ առյուծների բարձրորակ հավաքական միություն:

Նա ընդունում է նրանց ուժը և նպատակադրված ընտրում է այն էգերին, որոնք ապացուցել են իրենց հմտությունն ու տոկունությունը՝ որսալու, ձագերին պահելու, դրանով իսկ իրենց տարածքը պահպանելու և ընդարձակելու հարցում: Արու առյուծը փնտրում է ուժեղ էգերի՝ իմանալով, որ նրանք խմբի համար ավելի լավ մատակարարներ և ձագերին վարժեցնելու համար ավելի ընդունակ մայրեր կլինեն: (Արու առյուծները մասնավորապես չեն զբաղվում ձագերի խնամքով):

Առողջ և ուժեղ էգ առյուծները պատրաստ են ավելի հաճախ ծնել, ինչը արուին հնարավորություն է տալիս զուգավորվել և ավելի ուժեղ սերունդ հաստատել:

Էգ առյուծը չի կարող վերարտադրել, եթե վախենա, որ ձագերը կերակուրով չեն ապահովվի կամ լավ պաշտպանված չեն լինի: Եվ սա է պատճառը, որ էգ առյուծին ավելի շուտ գրավում են ուժեղ գլխավոր առյուծները, քան թույլերը: Գլխավոր առյուծը կամ առյուծները (դա հաճախ ազգակցական եղբայրների խումբ է) պետք է իրավունք վաստակեն՝ վայելելու այն մատակարարումը, ուժը և խնամքը, որ էգ առյուծները տալիս են խմբին: Այս արտոնությունը ձեռք է բերվում առյուծների խմբերի միջև ուժի բացահայտ ցուցադրման միջոցով:

Մրցույթն ավարտվում է այն ժամանակ, երբ ավելի թույլ առյուծները հաղթվում են ավելի ուժեղների կողմից: Երբեմն գլխավոր առյուծը սպանում է իրեն մարտահրավեր նետող առյուծին: Եվ եթե պարտված առյուծը կենդանի է մնում, նա արտաքսվում է խմբի տարածքից, ինչն էլ ենթադրում է, որ նա զրկվում է լավագույն որսից: Այս առյուծը կա՛մ հեռանում և միանում է էգ առյուծների մեկ այլ խմբի, կա՛մ էլ միայնակ ուտելիքի մնացորդներ է փնտրում:

Էգ առյուծները կողմնակի դիտորդներ են: Նրանք ցանկանում են, որ ամենահզոր առյուծը հայրություն անի իրենց ձագերին և պաշտպանի իրենց ցեղը հարձակումներից ու ճնշումներից: Էգ առյուծները հայտնի են առյուծներին մեկը մյուսի դեմ դուրս բերելու գործում, որի նպատակն է՝ համոզվել, թե ով է ամենազորեղը: Տարածքը գրավելով՝ առյուծն ապացուցում է, որ իր սերունդը գոյատևման ավելի մեծ հնարավորություններ ունի վայրի բնության դժվարին պայմաններում:

Երբ հաստատվում է արու առյուծի գերիշխանությունը, նա շահում է էգ առյուծների հավատարմությունը: Խմբում մնացած ցանկացած արու կարող է դուրս քշվել: Գլխավոր առյուծը հոժարությամբ կհրաժարվի նրանց ընկերակցությունից, սակայն ոչ մի դեպքում չի թողնի իր «աղջիկներին»: Պատճառն այն է, որ նա ցանկանում է ոչ միայն առողջ սերունդ ունենալ, այլև չզրկվել կերակուր մատակարարողներից: Որքան ուժեղ և ապշեցուցիչ լինի էգ առյուծների խումբը, այն-

քան ապահով կլինի գազանների հզոր արքան՝ առյուծը:

Այլևս կարիք չկա իշխելու, երբ քո շուրջը գտնվողներն արդեն գիտեն, որ դու քո զորությամբ ամեն բան կանես նրանց պաշտպանելու համար: Առյուծի հզոր լինելը անվտանգություն է ապահովում թե՛ էգ առյուծների, թե՛ ձագերի համար. իշխել փորձում են միայն նրանք, ովքեր անվստահ են իրենց ուժերում:

Հաստատվելով՝ հզոր առյուծը կարիք չի զգում ճնշելու էգ առյուծներին՝ ցուցադրելով իր ուժը: Այլևս ինչ պետք է ապացուցի. նա հաղթել է, ո՞վ կգերազանցի նրան: Այդպես է վարվում նաև մեր Թագավորը՝ Հուդայի ցեղի Առյուծը. Նա չի ճնշում մեզ, այլ՝ բարձրացնում է:

ՆՈՒՅՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ՆԵՐՔՈ

Արուն հրավիրում է էգ առյուծին հանգստանալ իր պաշտպանության ծածկոցի տակ, իսկ վերջինս հրավիրում է նրան վայելել այն բարությունն ու խոստումը, որ նա պարգևում է: Արու առյուծը պաշտպանում է էգ առյուծի կյանքը, իսկ վերջինս, իր հերթին, նրան ժառանգություն է ապահովում:

Մի պահ խորհի՛ր *«հնազանդություն»* բառի շուրջ: Ի՞նչ է մտքովդ անցնում. Հավանաբար, Եփեսացիների 5.22-ը, որտեղ խոսվում է այն մասին, որ կանայք պետք է հնազանդվեն իրենց ամուսիններին: Հետաքրքիրն այն է, որ շատ քրիստոնյաներ այս բառի համար մշակել են ծայրահեղ մի սահմանում: Ես համոզված եմ, որ *«հնազանդություն»* բառն աղավաղվել է և այլևս չի համապատասխանում այն իմաստին, որն Աստված սահմանել է: Շատ քրիստոնյա կանայք հավատացել են, որ իրենց հիմնական արժեքը տղամարդկանց ծառայելու կարողության մեջ է: Նրանք չեն գիտակցել, որ եկեղեցում խոսելը, հարգանքով իրենց կարծիքը հայտնելը կամ ավագության պատասխանատվություն ստանձնելը *հենց ծառայություն է:*

Ես լսել եմ *հնազանդություն* բառի մի սահմանում, որը համահունչ է այն տեսակետին, որ Աստված նախատեսել է ոչ միայն զույգերի, այլև բոլոր քրիստոնյաների համար: Մտածի՛ր այս մասին. հնազանդությունը անգլերեն *«submission»* բառն է, որը կազմված է «sub» (տակ, ներքո) նախածանցից

և *«mission»* (առաքելություն, առաջադրանք) արմատից: Կապակցի՛ր միմյանց և կստացվի «submission», որը նշանակում է «միևնույն առաջադրանքի կամ առաքելության ներքո»: Անձամբ ես և Ջոնը նույն առաքելությունն ունենք: Մենք պարտավորություն ունենք մեծացնել աստվածապաշտ երեխաներ և կերտել առողջ, ուժեղ ամուսնություն: Իսկ եկեղեցում մեր առաքելությունն է հաստատել հովիվներին և ուժեղացնել անհատներին:

Սակայն, մի պահ մտածենք. մի՞թե մենք կորածների համար հաշտության ծառայողներ, այսինքն՝ Աստծո դեսպաններ չենք: Հետևյալ երկու խոսքերը բնութագրում են մեր առաքելությունը՝ որպես Աստծո տղամարդ և կին դեսպանների.

> «Որովհետև Աստված Քրիստոսում աշխարհը հաշտեցրեց Իր հետ՝ մեղքերի թողության միջոցով աշխարհին նոր սկիզբ տալով: Աստված մեզ տվել է առաջադրանք՝ պատմելու բոլորին, թե ինչ է Նա անում: Մենք Քրիստոսի ներկայացուցիչներն ենք: Աստված *գործածում է մեզ, որպեսզի տղամարդկանց և կանանց համոզի՝ թողնել իրենց տարբերությունները և մտնել Աստծո գործի մեջ՝ կարգավորելով միմյանց միջև հարաբերությունները»* (Բ Կորնթացիների 5.19,20, MSG):

Այստեղ ո՞րն է գլխավոր միտքը. երբ մենք իրար սիրենք և միմյանց հետ լավ աշխատենք, այդ ժամանակ մարդիկ կիմանան, որ մեր Հիսուսն իրական է: Եվ սա պետք է լինի բոլոր տղամարդկանց և կանանց (ամուսնացած, թե չամուսնացած, առաջնորդ, թե շարքային) ընդհանուր նպատակը: Մեղանչելու ուժն այլևս գոյություն չունի, և Աստծո ներումը ձրի առաջարկվում է բոլորին: Կարիք չկա ինչ-որ մեկին մեղադրել, քանի որ Նրա զոհը բոլորիս անմեղ է դարձրել: Փոխարենը բոլորին ասելու, թե ինչ է *Աստված անում,* մենք չափազանց զբաղված ենք մեկս մյուսին ասելով, թե ինչ կարող ենք մենք անել կամ չանել:

Աստված ցանկանում է, որ մենք միասին աշխատենք և տղամարդկանց ու կանանց քաջալերենք՝ համոզելով մի կողմ

դնել իրենց ընդհարումները (ինչպիսին էլ դրանք լինեն) և մտնել Նրա գործի մեջ: Այդ ընդհարումները վերաբերում են մարդկային փոխհարաբերությունների և փոխազդեցությունների բոլոր բնագավառներին: Այս հանձնարարությունը չի վերաբերում միայն գենդերային (սեռային) հարցին. այն վերաբերում է նաև ռասայական, սոցիալ-տնտեսական, ընտանեկան, եկեղեցական և առևտրի բնագավառներին: Աստված բոլորիս համար հաշտություն է ցանկանում:

> «Այժմ մենք ներսն ենք նայում և տեսնում ենք՝ ով միանում է Քրիստոսին, նոր սկիզբ է ստանում. նա նոր ստեղծված է: Հին կյանքն անհետանում է, և փարթամորեն աճում է նոր կյանքը: Նայե՛ք, այս ամենն Աստծուց է, Ով շտկեց Իր և մեր միջև փոխհարաբերությունը, հետո կանչեց մեզ շտկելու միմյանց միջև հարաբերությունները» (Բ Կորնթացիների 5.17,18, MSG):

«Ամեն մեկը»՝ նշանակում է *ամեն մեկը:* Ցանկացած տղամարդ, ցանկացած կին, ցանկացած երեխա, ով միանում է Քրիստոսին, նոր ստեղծված է: Հին կյանքն անհետանում է: Վերոնշյալ խոսքում «փարթամորեն աճել» խոսքն ունի «սնկի պես աճելու» իմաստը: Սա բառերի հետաքրքիր ընտրություն է, որովհետև սնկերը պայթյունի պես տարածվում են. նրանք բազմանում, շատանում և արագ աճում են այնպիսի վայրերում, որտեղ նախկինում, բացի փտած բաներից, ոչինչ չի եղել: Մեր նոր կյանքը Քրիստոսում ավելին է, քան պարզապես փոխարինման գաղափար. այն ներսից աճող կյանք է, որը հասանելի է բոլորին:

Արու և էգ առյուծները վաղուց կարգավորել են իրենց հարաբերությունները: Էգ առյուծները հասկանում են, որ ինչպես արու առյուծները, իրենք նույն առաքելության մեջ են: Իսկ ո՞րն է նրանց առաքելությունը. ժառանգություն թողնել և առյուծների ուժեղ սերունդ հաստատել: Եվ դա իրականացնելու համար նրանք մեծացնում, պաշտպանում ու մատակարարում են իրենց ձագերին: Թե՛ արու, թե՛ էգ առյուծն այդ առաքելության մեջ իր դերն ունի, և մեկը մյուսի դիրքը չի ոտնահարում:

Այս հարցի վերաբերյալ մարդկային փոխհարաբերություններում առկա է երկու ծայրահեղություն. մի կողմից՝ կանայք ճնշվել են հնազանդության անվան տակ, իսկ մյուս կողմից՝ որոշ կանայք իրենց կանացիությունը բարձրացրել են մինչև աստվածության մակարդակի: Քիչ հետո այս մասին ավելի շատ կխոսեմ, բայց, նախ և առաջ, ցանկանում եմ խոսել հնազանդության խեղաթյուրման մի օրինակի մասին:

ԽԵՂԱԹՅՈՒՐՄԱՆ ՕՐԻՆԱԿ «TWITTER» ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՑԱՆՑՈՒՄ

Հավանաբար լսել կամ մասնակցել եք «TWITTER» կոչվող սոցիալական կայքում տեղի ունեցող էլեկտրոնային հաղորդակցությանը: Այն լավ միջոց է տեղեկատվություն ստանալու և կյանքի տարբեր հարցերի շուրջ մտքեր առաջադրելու համար:

Մեկ օր այնտեղ իմ միտքն արտահայտեցի, որի մասին մանրամասն անդրադարձել էի իմ՝ *«Կռվի՛ր աղջկա պես»* գրքում: Այն մի մեջբերում էր ավագության վերաբերյալ. «Ինչպես որ սեռն ինքնին չի որակավորում տղամարդուն առաջնորդելու համար, այնպես էլ այն չպետք է որակազրկի կնոջը[1]: Առաքինությունն է, որ որակավորում է թե՛ տղամարդուն, թե՛ կնոջը»: Խնդրո՛ւմ եմ, ուշադրություն դարձրեք, որ իմ ասածը չէր վերաբերում միայն եկեղեցուն կամ ամուսնությանը: Ես պարզապես նշեցի, որ առաքինությունն անհրաժեշտ որակ է առաջնորդի համար՝ լինի տղամարդ, թե կին:

Արտահայտածս տեղադրեցի «TWITTER»-ում և իմ ֆեյսբուքյան էջում: Հետո անցա առօրյա գործերիս: Ես չէի կարծում, որ իմ ասածը վիճաբանության թեմա կդառնար: Պարզապես մտածում էի, որ դա փաստ է, և նույնիսկ գաղափար չունեի, թե ինչպիսի արձագանքներ կունենար:

Երբ ստացա հարյուրից ավելի արձագանքներ, հասկացա, որ դիպչել եմ «ցավոտ տեղին»: Մինչ զբաղված էի առօրյա գործերով, Ֆեյսբուքում բանավեճ էր սկսվել. մի քանի քրիստոնյա կանայք բարկությամբ էին լցվել:

-Ինչպե՞ս ես համարձակվում ասել, որ կինը կարող է առաջնորդել իր ամուսնուն, եթե նա իրեն ավելի առաքինի է համարում,- գրում էր մի կին:

Լավ... մի՞թե ես այդպես էի ասել:

Մյուսները մեղադրում էին ինձ, որ աչքաթող էի արել այն աստվածաշնչյան տեղերը, որտեղ ասվում է, որ միայն տղամարդը կարող է եկեղեցու առաջնորդ կամ երեց լինել: Մի՞թե ես եկեղեցու երեցության մասին էի նշել: Հետո ընդհանուր առմամբ քննարկում եղավ առաջնորդելու մասին: Որոշ կանայք ֆեյսբուքի լսարանին բացատրում էին, որ կինը երբեք նախատեսված չի եղել առաջնորդ լինելու համար:

Մի անկեղծ աղջիկ, փնտրելով հստակ պատասխան, հետևյալ հարցն էր բարձրացրել.

- Դուք ուզում եք ասել, որ ավագ հովվի կինը առաջնորդ չէ՞:

Եվ այս հարցին ամպագոռգոռ պատասխան էր տրվել.

-Ո՛չ, նա առաջնորդ չէ, այլ՝ պատիվ ունի սատարելու իր ամուսնուն:

Այժմ ես շփոթված էի: Կարծիքների հոսքի հետ երկխոսությունը վերածվեց հնազանդության վերաբերյալ քննարկման: Ոմանք վիճում էին, որ ես առաջնորդ եմ, մյուսներն ասում էին, որ ես առաջնորդ չեմ զուտ այն պատճառով, որ կին եմ: Հետո ինձ թույլատրեցին առաջնորդ լինել միայն այն պատճառով, որ ես ամուսնուս ենթակայության տակ էի:

Կանգ առնենք և միասին քննենք. ինչո՞ւ է այդպես, որ երբ սեռերի մասին քննարկում է ծագում, այն կարծես իջեցվում է ամուսնու հանդեպ կանանց հնազանդության հարցի մակարդակին: Եթե ես առաջնորդ եմ, պատճառն այն է, որ Աստված է ինձ այդպիսին դարձրել: Պարզ ասած՝ առաջնորդներն ունեն մարդիկ, ովքեր հետևում են իրենց: Մեզնից ոմանք առաջնորդներ են, անկախ նրանից՝ գրանցվել են դրա համար, թե՝ ոչ: Աստված օգնում է բոլորիս առաջնորդվել օրինակով: Խառնաշփոթության հարցը լուծելու համար կարդանք այն հատվածը, երբ Պողոսը ավագության հանձնարարություն է տալիս Տիմոթեոսին.

> «Բայց եպիսկոպոսին պետք է անարատ լինել, մեկ կնոջ ամուսին, զգաստ, խոհեմ, պարկեշտ, հյուրասեր, սովորեցնելու հարմար. ո՛չ գինեմոլ, ո՛չ զարկող, այլ՝ հանդարտ, կռիվ չանող, ո՛չ արծաթասեր: Իր

> տանը բարի վերակացու լինող, որ որդիներ ունենա հնազանդության մեջ ամեն պարկեշտությունով (բայց եթե մեկն իր տանը վերակացու լինել չգիտենա, ինչպե՞ս նա Աստծո եկեղեցուն խնամք կտանի): Ո՛չ նորահավատ, որ չգոռոզանա և սատանայի դատաստանն ընկնի: Բայց պետք է նրան, որ դրսիններից բարի վկայություն էլ ունենա, որ չընկնի նախատինքի և սատանայի որոգայթի մեջ: Այնպես էլ սարկավագները պետք է ծանրաբարո լինեն. ո՛չ երկու լեզվանի, ո՛չ գինու մոլի, ո՛չ ամոթալից շահ սիրող, այլ՝ հավատքի խորհուրդը սուրբ խղճմտանքի մեջ ունեցող: Եվ սրանք առաջ թող փորձվեն և հետո այն պաշտոնը մտնեն, եթե անարատ լինեն» (Ա Տիմոթեոս 3.2-10):

Վերոհիշյալ խոսքերում Պողոսը թվարկում է տղամարդու առաջնորդության որակավորումները, ապա շարունակում է.

> «Այնպես էլ կանանց համար չկա ոչ մի բացառություն՝ *նույն որակավորումները*. լուրջ, ծանրաբարո լինեն, ո՛չ չարախոս, ո՛չ գինեմոլ: Եկեղեցու ծառայողները պետք է նվիրված լինեն իրենց ամուսիններին, ուշադիր լինեն իրենց երեխաների նկատմամբ և աշխատասեր լինեն իրենց գործերում: Որովհետև այս ծառայողական աշխատանքը կատարողները մեծ հարգանք կշահեն և լավ համբավ կունենան այն հավատքի մեջ, որ Հիսուսում է» (Ա Տիմոթեոս 3.11-13, MSG):

Ինչո՞ւ պետք է Պողոսը կանանց համար ավագության որակավորումների ցանկ տար, եթե նրանց սեռը միայն որակազրկում էր նրանց: Երբ Ջոնը և ես մեր ծառայության մեջ որևէ պաշտոնի համար աշխատող ենք վարձում, մենք որակավորումների մի ցուցակ ենք տալիս: Եվ եթե թեկնածուները որակավորված չեն, ապա չենք վարձում նրանց: Տարբերություն չկա՝ տղամարդ, թե կին: Պողոսը չասաց, որ եթե առաջնորդը տղամարդ չէ, մի՛ վստահեք նրան: Նա ասաց, որ լինի տղամարդ, թե կին, եթե չի համապատասխանում այս որակավորումներին, մի՛ նշանակեք նրան: Պողոսի շեշտադրումն արված էր որակավորումների ցուցակի հիման վրա: Պողոսն

ասաց, որ ոչ մի բացառություն չպետք է անել կանանց համար. նրանք պետք է նույն չափանիշների օրինակը լինեն: Դու միգուցե հարցնես. «Իսկ ի՞նչ կասեք այն հանձնարարականի մասին, որ երեցը պետք է մեկ կնոջ ամուսին լինի»: Դե, կանայք բազմաթիվ ամուսիններ չունեին, ուստի այդ հրահանգը բացառապես տղամարդկանց էր վերաբերում:

Տիմոթեոսի առաջին թղթի 3.11-13-ում Պողոսը Տիմոթեոսին ներկայացրեց այն որակավորումները, որոնք պետք է ունենային ավագության դիրքում գտնվող կանայք, ապա շարունակեց իր միտքը՝ խոսելով եկեղեցու կին-ծառայողների կամ սարկավագների մասին: Որտեղի՞ց գիտեմ դա: Կարդանք 1-ին և 2-րդ խոսքերը և տեսնենք, թե ինչ էր ասվել նախքան տղամարդկանց մասին մանրամասն նկարագրություն տալը:

«Եթե որևէ մեկը ավագություն է ցանկանում, լավ է, բայց կան նախապայմաններ» (Ա Տիմոթեոս 3.1,2, MSG):

Ուշադրությո՛ւն դարձրեք «որևէ մեկը» խոսքին: Նույն ձևով ասվում է թե՛ Աստվածաշնչի «Անգլերեն ստանդարտ թարգմանության», թե՛ «Նոր կենդանի թարգմանության» մեջ:

Ինչո՞ւ կանայք կարող են առաջնորդ լինել ամեն տեղ, բացի եկեղեցուց: Եթե Աստված խնդիր չունեցավ լիազորել կանանց նախքան մեղանչումը և դրանից հետո, ապա ինչո՞ւ ենք մենք այդքան զուսպ՝ փրկագնումից հետո նրանց լիազորելու հարցում:

Մի պահ կանանց միջև ընթացող ֆեյսբուքյան բանավեճն այնքան թեժացավ, որ մի տղամարդ ներխուժեց խոսակցության մեջ ու հարցրեց.

«Կանա՛յք, ինչո՞ւ եք ինքներդ ձեր դեմ վիճում: Մենք ձեր ներդրման կարիքն ունենք, սակայն դուք ինքներդ կանգնեցնում եք մեկդ մյուսին»:

Նրա խոսքերում ճշմարտություն կար: Մենք հաճախ կանգնեցնում կամ փոքրացնում ենք մեկս մյուսին: Քրիստոսի համար միմյանց աջակցելու և քաջալերելու փոխարեն հավերժացնում ենք այն ճնշումը, որը մեզ անզոր է դարձնում լինելու այն, ինչ պետք է լինենք որպես կին և որպես քրիստոնյա:

Սոցիալական ցանցում տեղի ունեցած այս անսպասելի

դեպքը հիշեցրեց ինձ այն, որ գենդերային (սեռային) հարցերի մասին պետք է խոսել ոչ միայն ընտանիքում, այլև եկեղեցում: Այն աշխարհը, որտեղ մենք ապրում ենք, պետք է տեսնի Աստծո ճշմարիտ սիրտը և Նրա սկզբնական մտադրությունը Աստծո որդիների ու դուստրերի առաջնորդության և կյանքի յուրաքանչյուր բնագավառի համար:

ՍԵՌԱԿԱՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ

Շատ կուզեի մտածել, որ ամերիկյան եկեղեցում այլևս չպետք է խոսել սեռային խտրականության վերաբերմունքի մասին: Այո՛, ես միտումնավոր առանձնացնում եմ իմ երկիրը, քանի որ ճանապարհորդելով և հնարավորություն ունենալով ընդլայնել աշխարհայացքս՝ տեսնում եմ, որ կանանց ներդրման պակասը, որն ընդունված է մեր երկրում, չի գործում երկրագնդի մյուս կողմերում: Որոշ երկրներում եկեղեցի չէր լինի, եթե չլիներ կանանց ներդրումը:

> «Որովհետև Աստծո բոլոր ստեղծվածները *բարի* են, և *գոհությունով պետք է ընդունվեն:* Ոչինչ չպետք է ծաղրել և դուրս նետել: Որովհետև սրբվում է Աստծո Խոսքով և աղոթքով» (Ա Տիմոթեոս 4.4,5, MSG):

Եթե Աստծո ստեղծած ամեն բան բարի է և գոհությամբ է ընդունվում, ապա որքան առավել *մարդիկ* պետք է ընդունվեն այսկերպ: Տղամարդիկ և կանայք *բարի են:*

Եթե որևէ բան Աստծով է ստեղծված, ապա մեզ վրա պատասխանատվություն է դրված չծաղրել կամ դուրս չնետել այն: *Ծաղրել*՝ նշանակում է արհամարհել, քմծիծաղ տալ, քիթը վեր տնկել կամ ծիծաղել: Այս ամենն արժեզրկում է մարդուն կամ նրա դերն ու ներդրումը:

Դուրս նետել բառն ինքնըստինքյան պարզ է, սակայն նայենք նրա առավել դիպուկ նշանակություններից մեկին: Գցելու, շպրտելու հետ մեկտեղ նետել բառը կարող է ունենալ խառնել, նեղը գցել, խճճել կամ շփոթեցնել նշանակությունը, իսկ *դուրս* բառը նշանակում է նաև բացակա դարձնել. ահա և *մերժման* պատկերը: Միգուցե սա հենց այն է, ինչ չափա-

զանց հաճախ պատահում է եկեղեցու կանանց հետ. առանց ընդունելու նրանց մի կողմ են նետում, և արդյունքում բացակայում է նրանց ձայնը, արժեքն ու ներդրումը: Եվ *երկու* սեռերն էլ թույլ են տալիս դա հնազանդության անվան տակ:

Հետևաբար թե՛ տղամարդիկ, թե՛ կանայք արժեքի զգալի կորուստ են ունենում: Ակնհայտորեն տղամարդիկ եկեղեցում շատ հաճախ ավելի բարձր ավագության պաշտոններ են ստանում, քան կանայք, սակայն երբեմն նրանք կաղում են կանանց խորաթափանցության բացակայության պատճառով: Բայց արդյո՞ք մենք շնորհակալ ենք տղամարդկանց համար, և արդյո՞ք նրանք մեզ համար նույնքան լավն են, որքան Աստծո համար: Թե՛ ծաղրանքով ենք վերաբերվում նրանց: Ինչ որ իմաստով անհնար է չծիծաղել մարդկանց վրա: Միայն այն փաստը, որ մենք գոյություն ունենք, խոսում է այն մասին, որ Աստված հումուրի մեծ զգացում ունի: Այստեղ ես երկու սեռերին զգուշացնում եմ ծաղրելու և նսեմացնելու մասին: Ես վստահ եմ, որ դա ավելի շատ է կատարվում, քան դու գիտես: Մեր ժամանցի ոլորտը մշտապես անարգում է տղամարդկանց և ընդգծում կանանց սեռական գրավչությունը (սեքսուալությունը):

Մենք թույլ ենք տվել, որ սեռական խտրականությունը հասցնի այն աստիճանին, որ կանայք, ովքեր իրենց արժեզրկված են զգում, զայրույթով լցվեն տղամարդկանց հանդեպ: Իսկ որոշ կանայք էլ մեկ այլ սոսկալի ծայրահեղության մեջ են:

ԿՆՈՋ ԱՍՏՎԱԾԱՑՈՒՄԸ

Այս գիքրը գրելիս «Amazon» ինտերնետային կայքում պատահաբար նկատեցի երկու ուրիշ գրքերի վերնագրեր, որոնք դրված էին իմ նախորդ գրքերից մեկի կողքին: Երկուսի հեղինակներն էլ «Կնոջ աստվածացումը» աստվածաբանության պաշտպաններ էին, որոնք հավատում էին կին աստվածությունների կամ ինքնադրսևորվող աստվածուհուն: Ես լսեցի, թե ինչպես Աստված շշնջաց. *«Գնի՛ր քո գրքի աջ և ձախ կողմում տեղադրված գրքերը, և պարզի՛ր, թե ինչպես ենք մենք կորցրել այդ կանանց ձայները»:*

Թերթելով էջերը և կարդալով նշումներն ու հարցերը՝ սրտումս ցավ և տանջանք զգացի. նրանք երկու հզոր և ազդեցիկ կանայք էին, որոնք խորապես վիրավորվել և հիասթափվել էին եկեղեցուց: Ես ուզում էի լաց լինել նրանց փայլուն մտքի կորստի համար:

Ինչն էր նրանց ստիպել Աստծո տնից դուրս աստվածուհու պաշտամունք ստեղծել. մի՞թե նրանք ուրիշ ընտրություն չունեին:

Մի՞թե նրանց հարցերն այնքան սուր կամ դիպուկ էին, որ մարտահրավեր էին նետել առկա իրավիճակին (ստատուս քվոյին): Արդյո՞ք նրանց մտավոր ունակություններն այնքան վառ էին, որ վախեցրել էին եկեղեցու առաջնորդներին: Եվ արդյո՞ք նրանց ձայները եկեղեցում լռեցվել էին հնազանդության չափազանցված սահմանման կամ փրկագնման ոչ լիարժեք ներկայացման պատճառով:

Ես կասկած չունեմ, որ այս կանայք իրենց հարցերով վախեցրել էին թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց:

Հավանաբար դու երբեք չես անցել այն որոնումների և հիասթափության միջով, որ նրանք անցել են, սակայն ես հաստատ վերապրել եմ դա: Եվ գիտեմ, որ մենակ չեմ: Ես շարունակ նամակներ էի ստանում, որոնց մեջ կրկնվում էր այս հարցը. «Խնդրո՛ւմ եմ, ասե՛ք ինձ կրկին, որպես Բարձրյալի դուստր՝ ի՞նչ արժեք ես ունեմ»:

Հետևյալ հատվածը մեջբերում է Սյու Մոնկ Քիդսի՝ «Այլախոհ դստեր պարը» գրքից: Հեղինակն ընդհանուր առմամբ նկարագրում է ավետարանական եկեղեցու դստեր փորձառությունը:

> ««Կինը սկզբում պետք է մեղք գործեր, ապա՝ ստեղծվեր»,- ասում էր նա: Հետո խոսում է Եվայի մասին՝ ասելով, որ նա ստեղծվել էր տղամարդու օգտի համար, սակայն անարժան գտնվեց, որովհետև չհնազանդվեց Աստծուն և Ադամին առաջարկեց արգելված պտուղը...
> Սիրտս նվաղեց. եթե ես կարողանայի բառերով արտահայտել իմ զգացմունքը, ապա կասեի. «Աստվա՛ծ, ինչպե՞ս կարող էիր»»[2]:

Հեղինակը շարունակում է խոսել այն մասին, թե իր համար որքան դժվար էր եղել Աստծո մասին ունեցած ընկալումը համաձայնեցնել եկեղեցու տեսակետին: Ես համաձայն եմ. Աստված երբեք այսպիսի անհույս ընդհանրացում չէր անի որևէ մեկի մասին՝ լինի տղամարդ, թե կին:

Եթե մենք ասում ենք, որ կանայք առաջնորդելու ոչ մի հնարավորություն չունեն, քանի որ Եվան և նրա դուստրերը հեշտությամբ խաբվում են, այդ դեպքում պետք է դուռը շրխկոցով փակենք Ադամի և նրա որդիների երեսին: Ադամն իմանալով՝ մեղք գործեց և չարդարացրեց Աստծո վստահությունը:

Եվայի և Ադամի օրինազանցությունները կարելի է համեմատել կրքից դրդված հանցանքի և կանխամտածված սպանության հետ: Եվան հանկարծակիի եկավ, բայց Ադամը քաջ գիտակցում էր, թե ինչ էր անում:

> «Եթե մեղք եք գործում՝ առանց իմանալու, թե ինչ եք անում, Աստված դա հաշվի է առնում: Սակայն, եթե մեղք եք գործում՝ քաջ գիտակցելով, թե ինչ եք անում, դա բոլորովին այլ պատմություն է» (Հռոմեացիների 2.12, MSG):

Ինչպիսի՞ կրոնական աշխարհ ենք մենք ձևավորել, որ ճշմարտությունը որոնող խելամիտ կանայք չեն կարողանում եկեղեցում պատասխաններ գտնել: Եթե մենք այդ ուղղությամբ քայլ չանենք, ապա ի՞նչ կպատահի մեր դուստրերի հետ, եթե նրանք համարձակվեն նման հարցեր բարձրացնել:

Եթե մենք այսպես ենք շարունակելու, ապա թող Աստված օգնի տղամարդկանց: Նրանք առողջ և ուժեղ չեն դառնա, եթե կանայք լուռ մնան: Տղամարդիկ ավելի են ուժեղանում, երբ ավելանում են մեր ձայները, որովհետև դուստրերի կողմից հարցերի առաջադրումը տղամարդկանց ավելի է բարձրացնում, ինչն էլ նրանց ավելի ազատ է դարձնում: Կանանց կարծիքը չափավորում և կատարելագործում է տղամարդկանց ճիշտ այնպես, ինչպես տղամարդիկ կանանց համար ստեղծում են այնպիսի միջավայր, որտեղ նրանք կծաղկեն:

«Կնոջ աստվածացումը» փիլիսոփայության հեղինակների ակնարկները կարդալիս ոչինչ ինձ հանկարծակիի չբերեց:

Նրանք ստացել էին դատարկ պատասխաններ, որոնք պարզապես փշրեցին սիրտս:

Ես զգում եմ, որ կարծես կանացի արցունքների մի ծով է բաժանում մեզ. տեսնում եմ նրանց հեռավոր ափին ու տխրում: Այդ կանայք իրենց այլախոհներ և աստվածուհիներ են անվանում, սակայն ես նրանց կկոչեի ընկերուհիներ և Բարձրյալի դուստրեր: Նրանց մեղադրանքները դեռ բարձր հնչում են իմ ականջներին, որովհետև ես ավելի շատ նրանց բողոքներում եմ ճշմարտություն գտնում, քան նրանց գտած պատասխաններում:

Գրքում բազմաթիվ տխուր պատմություններ էին գրված. մեկին գրավել էր մի մանկաբարձի պատմությունը, ով շարունակ վկայություն էր տալիս ամերիկացի մայրերի մասին, ովքեր ներողություն էին խնդրում իրենց ամուսիններից՝ աղջիկ ծնելու համար: Լինելով չորս որդիների մայր՝ այս գաղափարը գրեթե անըմբռնելի է ինձ համար: Ես ունեմ ամուսին, ով սիրում է կանանց: Չնայած նա ուրախությամբ տոնեց մեր որդիներից յուրաքանչյուրի ծնունդը, սակայն նա դուստր ունենալու հույս ուներ: Երբ նրան պատմեցի այս պատմությունները, նա պարզապես ցնցվեց: Եթե մենք երբևէ դուստր ունենայինք, ցույց կտայինք, որ նա սիրելի և ցանկալի է մեզ համար:

Կրոնի պատերի ներքո չգտնելով պատասխաններ, արժեք կամ ներդրման հնարավորություն՝ այս դուստրերը հիմնադրեցին պաշտամունքի մի աշխարհ, որը դուրս է այն ամենից, ինչը նրանք համարում են «նահապետական բռնակալություն»: Նրանք անցան անտառներով և ծովափերով ու հասան այնտեղ, ինչն իրենց ընկալմամբ աստվածային թագուհու ավելի բարի, ավելի մեղմ աշխարհ էր:

Սխալ բան չմտածեք: Ես չեմ պաշտպանում նրանց ընտրած ուղին և չեմ ընտրում ո՛չ նրանց թագուհուն, ո՛չ էլ կրոնի զայրացկոտ թագավորին. ես ընտրում եմ մեր Արարչին՝ Բարձրյալ Աստծուն:

ԱՍՏՎԱԾԱՅԻՆ ՆՊԱՏԱԿԻ ՈՐՈՆՈՒՄ

Լսե՛ք «Կնոջ աստվածացումը» փիլիսոփայության առաջնորդներից մեկի՝ Մարիաննա Ուիլիամսոնի հուսահատ հրավերը նրա՝ *«Կնոջ արժեքը»* գրքից.

> «Երբ ես ասում եմ՝ գնա՛ և խոսի՛ր Մարիամի հետ, նկատի ունեմ՝ գնա՛ և խոսի՛ր Մարիամի հետ, այսինքն՝ գնա՛ եկեղեցի, մոմ վառի՛ր, նստի՛ր նստարանին և շատ լուրջ վերաբերվի՛ր այդ ամենին: Ասա՛ նրան. «Մարիա՛մ, ես ցանկանում եմ իմանալ, թե ով եմ ես՝ որպես կին կամ ընկերուհի, մայր կամ դուստր: Ես ցանկանում եմ լինել այնպիսի կին, ինչպիսին կարող եմ լինել: Ես ցանկանում եմ ունենալ քո մաքրությունը, պարզությունն ու իմաստությունը: Թող իմ կանացիության էությունն ավելի պայծառ դառնա, քան իմ արտաքին «ես»-ը»»[3]:

Սխալ չէ աղոթել և խնդրել լինել այնպիսի կին, ինչպիսին կարող ես լինել: Հարցն այն է, թե ում է նա առաջարկում ուղղել մեր աղոթքները: Այն մարդկանց, ում կաթոլիկությունը չի բավարարում, Ուիլիամսոնն առաջարկում է հետևյալը.

> «Եթե Մարիամը քեզ չի սփոփում, դա նույնպես բնական է: Գտի՛ր հունական որևէ աստվածուհի, կա՛մ հնդկական կին ավատարի (աստծո մարմնացում), կա՛մ աստվածուհու որևէ այլ խորհրդապատկեր, ում կարող ես դիմել, և սկսի՛ր նրա հետ փոխհարաբերություն հաստատել»[4]:

Նրա հետ փոխհարաբերությո՞ւն: Այս առաջարկից անմիջապես հետո նա կիսում է իր բարկության պատճառը.

> «Աշխարհը, որպես այդպիսին, շատ քիչ է օգտագործում քո կին լինելը: Դու համարվում ես ավելի թույլ սեռ և քեզ հետ վարվում են որպես սեռական օբյեկտի: Բացի երեխաներ ծնելուց քո գոյությունը բոլորովին պարտադիր չէ: Քո արժեքը որոշվում է քո երիտասարդությամբ, իսկ անարժեքությունը՝ տարիքով: Որպես կին՝ քո ինքնության կամ քո պահպանության համար մի՛ նայիր աշխարհին, որովհետև դրանք այնտեղ չես գտնի. աշխարհն արհամարհում է քեզ, իսկ Աստված պաշտում է քեզ»[5]:

Ես այնքա՞ն շնորհակալ եմ, որ հեղինակն ավարտում է այն ճշմարտությամբ, որ Աստված պաշտում է քեզ: Սակայն այստեղ ակնհայտ է նրա ցավը. նա ընդունում է իրական կնոջ աստվածացման կապը: Այստեղ նա այնքան հեռու է գնում, որ առաջարկում է հունական աստվածուհու՝ հույս ունենալով, որ կանացի գեղեցկություն և ուժ կրող աստվածային կերպարին դիմելով կվերագտնի այն, ինչն այնպես հուսահատորեն պակասում է մեր փոխհարաբերությունների մեջ: Եվ ես աղոթում եմ, որ նա գտնի այն ճշմարտությունը, որ փնտրում է:

Որպես նախկին կաթոլիկ՝ ես հասկանում եմ նրա առաջարկը: Ես Մարիամի պաշտամունքի կողմնակիցը չեմ, սակայն երբ բողոքական շարժումը մերժեց Մարիամի աստվածությունը (ինչը ճշմարիտ է), այն նաև հաջողությամբ ջնջեց նրան՝ որպես կնոջ օրինակի:

Մարիամն աստված չէ, սակայն աստվածապաշտ էր: Նա արձան չէ, որի առջև պետք է մոմեր վառել, սակայն նա մի կին էր, ում օրինակը լույս է վառում մեր ճանապարհին: Նա նախապատկերն էր այն դուստրերի, ովքեր պիտի գործակցեին Աստծո հետ և հայտնեին Հիսուսին:

Արդյո՞ք ես Հիսուսի անունը տվեցի. հետաքրքիր միտք է: Ես զննեցի *«Կնոջ արժեքը»* գրքի էջերը և գրեթե ոչ մի հիշատակում չգտա Հիսուսի՝ Մարիամի Որդու մասին: Ինչպե՞ս կարող է Մարիամը հայտնի լինել առանց Հիսուսի: Ուստի, ո՞րն է այստեղ իրական հրավերը:

Խոսքը ո՛չ Մարիամի, ո՛չ Աթենասի, ո՛չ էլ Աֆրոդիտեի մասին է: Այն մեր կերտվածքի անանուն հոգու մասին է:

«Կնոջ աստվածացման» գաղափարախոսության հեղինակները խոսում են Աստծո և աստվածուհիների, կրոնի և տղամարդկանց մասին, սակայն հազվադեպ են խոսում սքանչելի Փրկչի՝ Աստծո Որդու, Հիսուս Քրիստոսի մասին: Նրանք խոսում են թագուհիների, հմայողների և մայր կրիաների, սակայն ոչ Որդու մասին, Ով հարություն առավ մեռելներից: Ինչո՞ւ են մայրերը խուսափում Որդու մասին ունեցած հայտնությունից: Նրանց խոսքերը պտտվում են Հիսուսի շուրջը: Նրանք նույնիսկ օգտագործում են Հիսուսի խոսքերը, սակայն չեն նշում Նրա անունը:

Սա զարմանալի չէ. եթե ես կարող եմ ինձ բարձրացնել մինչև աստվածային աստիճանի, էլ ինչիս է պետք Փրկիչը: Աստվածուհու դիրքը պարզապես իշխանության դիրք չէ. այն երկրպագություն է պահանջում: Բայց մենք չպետք է երկրպագենք տղամարդուն, կնոջը կամ արարչությանը. մենք պետք է երկրպագենք միայն Աստծուն: Եթե եկեղեցին քարոզի ճշմարտությունը և Աստծո սկզբնական մտադրությունը, ապա կարիք չի լինի ստեղծել կին աստվածություն, որպեսզի այն ավելացնի կնոջ արժեքը:

Երկնքի և երկրի Աստված՝ Բարձրյալ Տերը, բացահայտ հռչակեց կանանց արժեքն Իր փրկագնման ծրագրում: Աստված ծնունդ տվեց իր Որդուն առանց տղամարդու սերմի: Հովսեփին հանձնարարվեց պաշտպանել Մարիամին և այն սուրբ երեխային, որ նա կրում էր: Աստծո Հոգին կյանք արթնացրեց եբրայեցի երիտասարդ, փոքր-ինչ վախեցած աղջկա կուսական արգանդում: Նա չէր պարծենում և իրեն աստվածուհի չէր անվանում: Մարիամը հոժարակամ էր և նույնիսկ կասկածում էր, որ կարող էր այդ հանձնարարությունը կրել: Երանի մենք արձագանքենք նրա խոսքերին և դրանք դարձնենք մերը. *«Երկնային Հա՛յր, թո՛ղ մեզ լինի Քո խոստումների համաձայն. մենք հավատում ենք, որ այն, ինչ Դու ասացիր, կանես, իսկապե՛ս կանես: Բարձրացրո՛ւ երկրի ճնշվածներին և հայտնի՛ր Քո Որդուն մեր միջոցով»:*

Մեր աստվածային նպատակի որոնումներն իրենց պատասխանը չեն գտնի, եթե մեզ տղամարդկանցից վեր բարձրացնենք՝ փորձելով դրսևորել մեր ներսի աստվածուհուն: Կանանց վրա իշխելով՝ տղամարդիկ իսկական ուժ կամ ազատություն չեն գտնի: Կանայք նույնպես արդյունավետ չեն լինի, երբ թույլ տան, որ ավելորդ ուսմունքները զավթեն իրենց ուժը: Երկու սեռերն էլ դաշնակիցներ և խնամակալներ են, այլ ոչ թե թշնամիներ ու աստվածներ:

Պաշտամունքի առարկա դառնալու ցանկությունը քննություն է յուրաքանչյուրիս համար: Դա հենց այն է, որից Արուսյակը ձախողվեց: Իշխանության ցանկությունն անբարեպաշտություն չէ. ամեն մեկս (տղամարդ, թե կին) ինչ-որ չափով հավատքի, իշխանության և ազդեցության տնտեսներ ենք:

Մարդկային արարածները երբեք չեն ստեղծվել բացար-

ձակ իշխանության համար: Դա մի դեր է, որը հրեշտակնե-
րի համար կրելը չափազանց դժվար է, և նույնիսկ Հիսուսը՝
Աստծո Որդին, չհամարձակվեց Իրեն Աստծուն հավասար
ընդունել: Փիլիպեցիներին ուղղված Պողոսի նամակում մեզ
հանձնարարվում է չհետևել իշխանության այս հեթանոսա-
կան դիրքորոշմանը:

> «Ձեզնից ամեն մեկը թող այն մտածի, որ Քրիստոս
> Հիսուսում էր (անգլ.-ում՝ ինչպես Քրիստոս Հիսուսն
> էր մտածում Իր մասին), որ Աստծո կերպարանքում
> լինելով՝ հափշտակություն չհամարեց Աստծուն հա-
> վասար լինել: Այլ՝ Իր անձն ունայնացրեց և ծառայի
> կերպարանք առնելով՝ մարդկանց նման լինելով և
> կերպարանքով մարդու պես գտնվելով՝ Իրեն խո-
> նարհեցրեց և հնազանդ եղավ մինչև մահ, և այն էլ՝
> խաչի մահ: Նրա համար էլ Աստված շա՛տ բարձրաց-
> րեց Նրան և մի անուն շնորհեց, որ ամեն անունից
> ավելի բարձր է: Որ Հիսուսի անունով ծալվի ամեն
> ծունկ երկնավորների և երկրավորների և երկրի
> տակ լինողների, և ամեն լեզու դավանի, թե Հիսուս
> Քրիստոսը Տերն է Հոր Աստծո փառքի համար» (Փի-
> լիպ. 2.5-11):

Մեր աշխարհը ծառաների կարիք ունի: Ես չեմ կարող
պատկերացնել, որ իմ Հիսուսը, Ով կռանում էր, որպեսզի
բարձրացներ ամեն ընկածի, այնքան պահանջկոտ լիներ,
որքան շատերս: Միգուցե մենք սխալ ենք ներկայացրել մեր
Թագավորին. ինչո՞ւ պիտի խաղաղության համաշխարհային
առաջնորդներն այդքան արդարացի լինեին՝ ասելով. «Եթե
քրիստոնյաները չլինեին, ես քրիստոնյա կդառնայի»: Իսկ
Մահաթմա Գանդին ասել էր. «Ինձ դուր է գալիս ձեր Քրիս-
տոսը, բայց ինձ դուր չեն գալիս ձեր քրիստոնյաները: Նրանք
չափազանց տարբեր են ձեր Քրիստոսից»[6]:

Դու լսո՞ւմ ես աղաղակի և ծայրահեղ կարիքի ձայն՝ արթ-
նանալու որպես ճշմարտության անվեհեր որոնող: Մենք
պետք է դադարենք անպտուղ լինելուց. մեզ հանձնարարված
է անաչառ սիրով սիրել, հասնել կորածներին և ցավից տանջ-
վողներին:

Եթե եկեղեցին քեզ տեղ չտա, միևնույն է, տարածի՛ր այդ սերը գլխավոր և երկրորդական ճանապարհներով: Մեր պատերից դուրս շատ ու շատ կոտրված ու վիրավոր սրտով մարդիկ կան, ովքեր կընդունեն քեզ. հասի՛ր քո համայնքին, քո անտուն-թափառականներին, քո աշխատավայրին, քո դպրոցին... Ստեղծի՛ր այնպիսի ընդարձակ ու լուսավոր կյանք, որ անհնար լինի այն չնկատելը:

Ժամանակն է հասնելու այնպիսի բարձրության, որ մարդիկ կարողանան տեսնել քեզ:

Ի՞նչ ենք մենք անում. շարունակում ենք այնպիսի հարցեր բարձրացնել, որոնք Աստված արդեն լուծել է: Կարո՞ղ ենք հավասարակշռված վիճակի բերել մեր մտածելակերպը՝ խուսափելով հնազանդության և կնոջ աստվածացման ծայրահեղություններից: Կարո՞ղ ենք պատվել տղամարդկանց: Եկե՛ք հետևենք արու և էգ առյուծի օրինակին և տղամարդկանց հետ միասին բարձրանանք՝ ո՛չ որպես ստրկամիտ ստորադրյալներ, ո՛չ էլ որպես զայրացած աստվածուհիներ:

ՈՒԺԵՂ ԿԱՆԱՆՑ ԱՐԺԵՔԸ

Երբ գիրք եմ գրում, «TWITTER»-ում և Ֆեյսբուքում ուղերձներ եմ տեղադրում, կամ հավաքույթների ժամանակ և եթերում կանանց հետ եմ զրուցում, մի խոսքով՝ ամեն հնարավորություն օգտագործում եմ, որպեսզի կանանց հայտնեմ իրենց արժեքի մասին: Ես միտումնավոր հիշեցնում եմ, որ նրանց ձայնի և ներդրման կարիքը կա թե՛ եկեղեցում, թե՛ եկեղեցուց դուրս, ինչպես տեղական, այնպես էլ համաշխարհային մակարդակով: Իմ աղոթքն է, որ նրանք ոչ միայն հավատան և ընդունեն դա, այլև ապրեն դրանով:

Այս մասին խոսելուց հետո ես շարունակ լսում եմ հետևյալ հարցը. «Կարո՞ղ եք ասել սա տղամարդկանց»: Նրանց առաջարկները շշուկով են արվում, կարծես թե վտանգ կա, որ ինչ-որ մեկը կարող է թաքուն ականջ դնել և հայտնաբերել, որ իրենք համարձակվել են ինձ ասել, որ ես բացահայտ խոսեմ դրա մասին:

Ես մտածում էի, որ բավական է քաջալերել միայն կանանց: Անգնահատելի արժեք կա կանանց հետ մտերմիկ և

ապահով միջավայրում խոսելու մեջ: Բայց քանի որ Աստծո դուստրերի այս ճանապարհորդությունը շարունակվում է, ես գիտեմ, որ միայն կանանց խրախուսելը բավական չէ, ինչպես որ սխալ է հարցի միայն մեկ կողմին նայելը:

Վերջին մի քանի տարիներին ես մեծ ազդեցություն եմ ձեռք բերել և ցանկալի հյուր դարձել կիրակնօրյա եկեղեցական հավաքույթներում: Այստեղ, իհարկե, ներառված են նաև տղամարդիկ: Երբ քարոզում եմ կանանց և տղամարդկանց միջավայրում, ես խրախուսում եմ կանանց, թե որքան հրաշալի են նրանք: Հազվադեպ եմ տեսնում, որ տղամարդիկ վիճեն դրա շուրջ: Ես միտումնավոր հայտնում եմ, որ տղամարդիկ նույնպես հրաշալի են: Վերջին մի քանի տարիներին բազմաթիվ արցունքներ եմ տեսել, որ հոսել են տղամարդկանց աչքերից: Ես տեսել եմ, թե ինչպես են ամուսիններն ու կանայք գրկախառնվում և դադարեցնում իրենց «ըմբշամարտի» մրցույթը: Ես սիրում եմ տեսնել, թե ինչ է տեղի ունենում, երբ նրանք միմյանցից ներողություն են խնդրում իրենց անհեթեթ ուժային պայքարների համար:

Սիրելի՛ քույր առյուծ, մեր խնդիրը տղամարդիկ չեն: Այս հարցն ավելի խորն է: Մեր թշնամին սատանան է, ով խաբեբա է. նա է երկու սեռերից խլում նրանց արժանապատվությունը: Չնայած խնդիրը տղամարդիկ չեն, սակայն նրանք կարող են և պետք է լինեն պատասխանի մի մասնիկը: Երբ տղամարդիկ կանանց հետ միասին վերցնում են արժանապատվության և իշխանության վերականգնման բեռի որոշ մասը, ինչ-որ շարժ է տեղի ունենում:

Երբեմն քեզ լսելի դարձնելը ավելի քան պայքարի կեսն է: Քո շրջապատում գտնվող տղամարդիկ պետք է կարողանան լսել քեզ և այն մարդկանց, ովքեր խրախուսում են տղամարդկանց և կանանց՝ միասին գործել: Եթե փոփոխություն է անհրաժեշտ, ապա բոլորս պետք է կողմնակից լինենք դրան: Եկե՛ք արձագանքենք Աստծո դիրքորոշմանը:

Դա անելու համար ցանկանում եմ խորը հայացք նետել Ա Կորնթացիների 11-րդ գլխին: Ես այն կբաժանեմ առանձին և որոշակի մասերի, հետո կնայենք ընդհանուր տեսանկյունից:

> «Ի միջիայլոց, շատ նշանակություն մի՛ տվեք տղամարդկանց և կանանց միջև տարբերություններին» (Ա Կորնթացիների 11.10, MSG):

Այստեղ Պողոսը ծառայողներին պատվիրում է այդքան շատ նշանակություն չտալ սեռերի միջև տարբերությանը: Այո՛, տարբերություններ կան, սակայն դրանք ոչ թե մեզ բաժանելու, այլ մեզ միաբանելու համար են:

> «Ո՛չ տղամարդը, ո՛չ կինն առանց մեկը մյուսի չեն կարող, ո՛չ էլ կարող են մեկը մյուսից առաջնահերթ լինել» (Ա Կորնթացիների 11.11, MSG):

Այս խոսքերով նա հռչակում է սեռերի միջև փոխադարձ կախվածությունը. եթե դա կա, ապա ոչ մի առաջնահերթություն որևէ սեռին չի տրվում:

> «Սկզբում ստեղծվեց տղամարդը՝ որպես Աստծո գեղեցկափայլ արտացոլանք. դա ճշմարիտ է: Բայց կինն իր գեղեցկությամբ գերազանցում է իր «գլխին»՝ ամուսնուն» (Ա Կորնթացիների 11.11, MSG):

Ճիշտ է՝ սկզբում ստեղծվեց տղամարդը՝ որպես Աստծո արտացոլանք: Հետո գալիս է «բայց»-ը. կնոջ գեղեցկությունը գերազանցում է ամուսնու գեղեցկությանը: Ուշադրությո՛ւն դարձրեք, որ սա հատկապես հասցեագրվում է ամուսնուն ու կնոջը:

> «Առաջին կինը եղավ տղամարդուց, ճիշտ է, բայց դրանից հետո ամեն տղամարդ կնոջից է» (Ա Կորնթացիների 11.12, MSG):

Սա էլ է ճշմարիտ, որ առաջին կինը՝ Եվան, եղավ տղամարդուց՝ Ադամից: Հետո Պողոսն օգտագործում է «բայց» բառը՝ հավասարակշռության համար՝ ասելով, որ «դրանից հետո» բոլոր տղամարդիկ կանանցից են:

> «Եվ քանի որ ամենն Աստծուց է, եկեք վերջ տանք «ով է առաջինը» սահմանված կարգին» (Ա Կորնթացիների 11.12, MSG):

Այժմ, երբ նժարները հավասարեցված են, Պողոսը սեռերի վերաբերյալ բանավեճից հետո ցույց է տալիս աստվածային տեսանկյունը. ամեն բան գալիս է Աստծուց, ուստի դադարե՛ք վիճել առաջնահերթության համար: Սա պետք է շատ բան վճռի: Միայն Աստված է առաջինը: Միայն Նա է սուրբ և արդար, Նա է սերը, ճշմարտությունը, ճանապարհը, կյանքը, սկիզբն ու վերջը:

Թող մեզ չթվա, թե Աստված առաջնորդվում է մեր հարանվանությունների օրենքներով: Նրա վրա չեն ազդում մեր օրենքները, թույլատրելի և ոչ թույլատրելի նորմերը: Աստված գործում է այնտեղ, որտեղ մարդիկ ճիշտ փոխհարաբերություն ունեն միմյանց հետ և Իր իշխանության ներքո են. այդ դեպքում Նա օրհնում է նրանց:

> «Որքա՜ն հրաշալի, որքա՜ն գեղեցիկ է, երբ եղբայրներն
> ու քույրերն իրար հետ մեկտեղ են... Այո՛, այդտեղ է,
> որ Աստված օրհնություն է ուղարկում, հավիտենական
> կյանք է հաստատում»: (Սաղմոս 133.1,3, MSG)

Ամբողջ պատմության ընթացքում եկեղեցին բաժանվել է այս հարցերի շուրջ, սակայն ինչ վերաբերում է ինձ, չեմ կամենում, որ դա մնա մեր ժառանգությունը: Բայց այն, ինչ մտածում և զգում եմ, փոքր բան է այն ամենի համեմատ, թե Աստված ինչպիսի որոշում ունի դրա վերաբերյալ: Շա՜տ բաներ կփոխվեն:

> «Եվ կլինի հետին օրերում,- ասում է Աստված,-
> և ձեր որդիները, և ձեր աղջիկները կմարգարեանան, և ձեր երիտասարդները տեսիլքներ կտեսնեն,
> և ձեր ծերերը երազներ կտեսնեն:
> Եվ Իմ ծառաների վրա և Իմ աղախինների վրա էլ
> այն օրերում Իմ Հոգուց կթափեմ,
> և կմարգարեանան:
> Եվ նշաններ կտամ վերևը՝ երկնքում,
> և նշաններ ներքևը՝ երկրի վրա,
> արյուն և կրակ և ծխի մառախուղ» (Գործք 2.17-19):

Վերջին օրերում Աստված կասի Իր Խոսքը: Արյան, կրակի

և ծխի մառախուղի պատկերը շատ նման է հրեական հնագույն զոհասեղանին:

Դա այն տեղն էր, որտեղ մարդիկ հավաքվում էին՝ բերելով այն, ինչ ընդունելի էր Բարձրյալ Աստծուն: Նրանց զոհաբերությունը կրակի միջոցով երկինք էր փոխադրվում:

Նոր կտակարանյան այս տեսիլքում ոչինչ չի հիշատակվում խոյերի, երինջների և եզների մասին, որոնք պետք է այրվեին զոհասեղանի վրա: Փոխարենը, մենք տեսնում ենք տարեց և երիտասարդ որդիների ու դուստրերի, ովքեր Բարձրյալի մարգարեական ծառաներն են: Մեր կրակը չի այրվում երկրպագության զոհասեղանին. այդ կրակը բոցավառվում է մեր ներսում, երբ Նրա Հոգին լցնում և բարձրացնում է մեզ:

Տարիներ առաջ ես միգուցե վախենայի այդպես ուղղակիորեն խոսել սեռերին վերաբերող հարցերի մասին: Սակայն, կյանքիս այս ժամանակահատվածում, անհրաժեշտության դեպքում ես պատրաստ եմ հնարավոր սահմաններից այն կողմ գնալ: Իմ ամուսինը չի վախենում իմ ուժից. նա ողջունում է այն: Իմ որդիներին չի գրավում թույլ, անձայն և ճնշված կնոջ կերպարը: Սակայն, մի՞թե ճիշտ է, որ ես այդպիսի աջակցություն ունենամ, իսկ մյուսները՝ ոչ: Մեր աշխարհն այնպիսի կանանց կարիք ունի, ովքեր իրենց ձայնը կտան ամենուրեք ճնշված մարդկանց օգտին: Սա նշանակում է, որ մենք մեկս մյուսի կողքին պետք է լիովին անկաշկանդ լինենք:

Ժամանակն է մի կողմ դնել սեռերին վերաբերող հարցերը և դուրս գալ ծայրահեղություններից, որոնք մեզ անկարող են դարձնում: Ժամանակն է արթնանալ և լինել այնպիսին, ինչպիսին Աստված նախատեսել է, որ լինենք. ուժեղ՝ Նրանում, արժեքավոր՝ տղամարդու համար, և որպես փրկագնման ձայն՝ այս աշխարհի կորածների ու վիրավորների համար:

7

Ողջունել և խնամել

«Գրավիչ շուրթեր ունենալու համար խոսի՛ր բարության խոսքեր: Հաճելի աչքեր ունենալու համար մարդկանց մեջ բարի՛ն փնտրիր: Նրբագեղ կազմվածք ունենալու համար կերակուրդ կիսի՛ր քաղցածների հետ: Գեղեցիկ մազեր ունենալու համար թույլ տուր, որ երեխան օրը մեկ անգամ իր մատիկները սահեցնի դրանց միջով: Ճախրելու համար քայլի՛ր այն գիտակցմամբ, որ դու երբեք մենակ չես քայլում»:

ՍԵՄ ԼԻՎԵՆՍՈՆ

Երբ էգ առյուծները լիզում են միմյանց, դա նրանց ողջույնի մի մասն է: Խնամքը սկսվում է դեռևս փոքր ժամանակվանից: Երբ առյուծի ձագը կեղտոտվում է, նրա համար էգ առյուծի պարտադիր համբույրներն անխուսափելի են դառնում. բոլոր կորյուններին անխտիր լիզում են: Ես պատկերացնում եմ նմանատիպ մի տեսարան. որոշ ժամանակ հետևելով, թե ինչպես են հասուն առյուծները որս անում կերակուրի համար, կորյունը կրկին միանում է խմբին: Եվ հանկարծ նա երկմտում է. *«Օ՜, ո՛չ: Ահա մորաքույրս գալիս է: Նա լիզելու է ինձ և թուքը քսելու է ամբողջ դեմքիս»:* Սա նման է նրան, երբ զարմիկը մտնում է սենյակ, որտեղ նրան սպասում են իտալացի հորաքույրները կամ մորաքույրները, որոնք եկել են նրան տեսնելու, այդպես չէ՞:

Կորյունները միակը չեն, որ մտերմիկ ողջույնի են արժանանում: Էգ առյուծները նույնպես լիզում են միմյանց երեսները: Այս ողջույնի արարողությունը հնարավորություն է տալիս ճանաչել մեկմեկու: Ինչպես որ բոլոր էգ առյուծները մեր

աչքին միանման են երևում, այնպես էլ նրանք մեկը մյուսի համար միևնույն տեսքն ունեն: Միակ ձևը, որով էգ առյուծը կարող է հստակ իմանալ՝ էգ առյուծն իր խմբի անդամ է, թե ոչ, հոտառության միջոցով է: Ինչպես բոլորս գիտենք, տեսքը կարող է խաբուսիկ լինել, սակայն հոտի միջոցով պարզ է դառնում ճշմարտությունը:

Յուրաքանչյուր էգ առյուծ ունի գեղձեր, որոնք գտնվում են նրա աչքերի վերևի մասում՝ հոնքերի վրա, և արտազատում են խմբին բնորոշ հոտը: Երբ էգ առյուծները վերախմբավորվում են, նրանք միմյանց հետ անմիջական շփում են հաստատում՝ այտերն իրար հպելով և գլուխները մեղմ հարվածելով: Այս ողջույնն ավելին է, քան ծանոթանալը: Ծանոթությունն առաջին հանդիպումն է, որը ներառում է հետևյալ հարցը. «Ահա՝ ով եմ ես: Իսկ դո՞ւ ով ես»: Սակայն էգ առյուծի ողջույնն ի զորու է ուժեղացնել մտերմության կապերը, կնքել դաշինքներ և բացահայտել խմբի ներսում գտնվող խաբեբաներին:

Էգ առյուծները սկզբում հոտ են քաշում, հետո ճանաչում են, իսկ մարդիկ ճանաչում են, հետո են հոտ քաշում: Օրինակ, վերջերս ամուսինս եկել էր օդանավակայան ինձ դիմավորելու: Ես տեսա նրա մեքենան և սկսեցի ձեռքով անել, սակայն մինչև նա ավտոմեքենայից դուրս չեկավ, և մենք չգրկախառնվեցինք, ես չզգացի նրա հոտը:

«Դու անուշ բուրում ես»,- ասացի ես՝ ճանաչելով նրա օծանելիքի բույրը:

Ես չեմ կարող պատկերացնել, թե ինչպես կարող եմ նրան ճանաչել այլ կերպ: Ահա տեսնում եմ, թե ինչպես է մի տղամարդ դուրս ցատկում մեքենայից և քայլում դեպի ինձ: Ես մոտենում եմ, որպեսզի նրանից հոտ քաշեմ և վստահ լինեմ, որ նրանից այնպիսի հոտ է բուրում, ինչպիսին որ իմ ամուսնուց է բուրում, և ապա ընդունում եմ, որ նա իմն է:

Հոտերը ճանաչելու համար էգ առյուծների ուշադրությունը մի շարք նպատակների է ծառայում: Միմյանց ողջունելն ու խնամելը (լիզելը) հնարավորություն է տալիս նրանց հայտնաբերել՝ արդյոք անցանկալի որևէ մեկը կամ որևէ բան միացել է խմբին: Բացի դա, երբ էգ առյուծները ողջունում և խնամում են միմյանց, նրանք ընդունելություն և պատկանելիություն են

ցուցաբերում: Որպես Աստծո դուստրեր՝ մենք պետք է նույնն անենք այն մարդկանց նկատմամբ, ովքեր շրջապատում են մեզ:

ՈՂՋՈՒՆԵԼ ԵՎ ԽՆԱՄԵԼ ՔՈ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Էգ առյուծն իր կորյունին բարևելիս՝ ասում է. «Դու մերն ես: Եղի՛ր ազատ, հայտնաբերի՛ր քո ուժեղ կողմերը և մեծացի՛ր մեր մեջ: Այստեղ՝ խմբի մեջ, դու ապահով և անվտանգ կլինես»: Նրա այդ ողջույնը նաև նրա համար է, որպեսզի որոշի, թե որտեղ են կորյունները եղել: Եվ դեմքն առաջ բերելով՝ նա հոտոտում է, ապա հարցնում. «Ինչո՞ւ եմ քեզ վրա բորենու հետք տեսնում»:

Երբ իմ դեռահաս տղաները երեկոյան տնից դուրս էին գալիս, ես նրանցից պահանջում էի վերադառնալիս ինձ բարի գիշեր ասել և մի համբույր տալ: Այս համբույրը մի քանի նպատակների է ծառայում: Առաջինը՝ ես սիրում եմ իմ որդիներին համբուրել: Երկրորդը՝ ես ստիպված չէի լինում արթուն մնալ, որպեսզի ճշտեի, թե որ ժամին էին նրանք տուն գալիս: Եվ երրորդը՝ դա հնարավորություն էր տալիս ինձ հոտ քաշել նրանցից:

Այդ փոխազդեցությունն այսպես էր տեղի ունենում. երբ որդիս տուն էր գալիս, նա բացում էր իմ ննջասենյակի դուռը և ասում. «Ես տանն եմ: Բարի գիշե՛ր, մայրի՛կ»:

Քանի որ նա կարծում էր, որ ես քնած եմ, արագ փակում էր դուռը, բայց ես ասում էի նրան. «Լավ ժամանակ անցկացրի՛ր: Ե՛կ, համբուրի՛ր ինձ»:

Եթե նա վարանում էր, ես կասկածում էի, բայց եթե մոտենում էր, և ես անանուխի ճնշող հոտ էի զգում, ապա հասկանում էի, որ նա ոչ ցանկալի ինչ-որ բան է արել: Երբ նա ավելի էր մոտենում, ես ձգվում էի և նրան ավելի էի մոտեցնում ինձ՝ փորձելով պարզել, թե արդյո՞ք որևէ ուրիշ հոտ չի գալիս նրանից, որը միգուցե թաքցնում է: Ի վերջո, մայրը ճանաչում է իր երեխաների հոտը:

Ուշ գիշերով նրանց այդքան մոտիկից զննելը միգուցե անհարմար լիներ, եթե մեր ընտանիքում վաղուց հաստատված չլիներ ողջունելու ամենօրյա սովորությունը: Մեր ընտանիքն

ամեն առավոտ ողջագուրվում է: Մենք օրվա ընթացքում անընդհատ գրկախառնվում ենք և քնելուց առաջ միմյանց համբուրելով՝ բարի գիշեր ենք ասում: Մենք հաճախակի ֆիզիկական շփում ենք ունենում միմյանց հետ՝ լինի եղբայրների միջև ձեռնամարտի միջոցով, խոհանոցը մաքրելիս միմյանց հրմշտելով կամ դուրս ու ներս անելիս գրկախառնվելով: Ողջունելու այս սովորությունը սկսվեց այն ժամանակ, երբ որդիներս փոքր էին, և այդ ժամանակվանից այն երբեք չի դադարել: Համոզված եմ, որ ձեր տանն էլ է այդպես. դուք միմյանց համբուրելով բարի գիշեր եք մաղթում, ողջունելիս գրկախառնվում եք, ուսերով իրար եք խփում, մեկդ մյուսի մազերն եք խառնում, բազկաթոռի մեջ փարվում եք...

Ավելի ուշ, երբ ավագ որդիս ամուսնացավ և առանձնացավ, ես նրանից այնպիսի արկածային պատմություններ լսեցի, որոնց մասին երբևէ տեղյակ չէի եղել: Երբ նրան հարցնում էի, թե երբ է դա եղել, կամ՝ թե ինչպես եմ դա բաց թողել, նա մեղմորեն ժպտում էր և պատասխանում. «Դա եղել է մի գիշեր, երբ դու քաղաքից դուրս էիր եկել», կամ՝ «Դա պատահել է այն ժամանակ, երբ գիշերն ընկերոջս տանն էի անցկացրել»:

Եթե ես տանը լինեի, ապա նրանից հոտ կքաշեի և կհասկանայի, թե ինչ էր տեղի ունեցել:

Բարևելը մայրերին թույլ է տալիս խուզարկություն անել և պարզել՝ արդյո՞ք իրենց երեխաները որևէ անցանկալի շփում են ունեցել: Սա օգնում է մեզ սիրով արձագանքել, դաստիարակել և կարգապահություն սովորեցնել մեր երեխաներին: Եթե ձեր ընտանիքում սովոր չեք բարևել միմյանց, ապա ձեզ քաջալերում եմ ձեռք բերել այդ սովորությունը: Միգուցե ձեր երեխաները սկզբում դիմադրեն, սակայն դուք մի՛ հանձնվեք: Ձեր ողջագուրվելը ոչ միայն կասի ձեր երեխային, որ դուք սիրում եք նրան, այլև հնարավորություն կտա երեխայից հոտ քաշել և տարբերել այն ձեր տան հոտից: Մայրե՛ր, եթե ձեր երեխան սովոր է գրկել ձեզ և հանկարծ սկսում է դիմադրել, ապա պարզեք պատճառը և թույլ մի՛ տվեք, որ նա խուսափի ձեզ հետ ֆիզիկական շփումից:

Երբ ձեր երեխաները հասունանում և չափահաս են դառնում, շարունակե՛ք նրանց բարևել գրկախառնության և համ-

բույրի միջոցով: Ձեր ֆիզիկական մտերմությունը նրանց կհիշեցնի, որ նրանք միշտ ձեր ընտանիքին են պատկանելու: Այսպես նրանք ապահով կլինեն, երբ չափահաս դառնան և կազմեն իրենց ընտանիքները:

ՈՂՋՈՒՆԵԼ ՄԻՄՅԱՆՑ

Երբ էգ առյուծները ողջունում են իրար, այդկերպ նրանք ասում են. «Մենք կապված ենք միմյանց հետ: Քո վրայից իմ քույրերի ծանոթ հոտն է բուրում, և ես այստեղ եմ, քանի որ դու ես այստեղ»:

Մենք այդքան էլ չենք տարբերվում մեր քույր առյուծներից: Ուրիշների կողմից ջերմ ընդունելությունն ասում է հետևյալը. «Նստիր մեզ հետ, մենք վստահում և սիրով ընդունում ենք քեզ»: Իսկ պաշտոնական ընդունելությունը հաղորդում է հետևյալը. «Քո կարգավիճակը մեր կողքին դեռ վերանայվում է: Մինչև քեզ ավելի լավ չճանաչենք, ոչ մի նշանակում չի արվի»: Այսպիսի փոխազդեցության դեպքում թե՛ ողջունողը, թե՛ ողջունվողն իրենց կաշկանդված են զգում: Եթե ընդհանրապես ոչ մի ողջույն չկա, այդ ժամանակ այցելուն զգուշանում է:

Կարդացե՛ք Կորնթացիներին ուղղված Պողոս առաքյալի խոսքերը միմյանց ողջունելու վերաբերյալ.

> «Իրար բարև տվե՛ք սուրբ գրկախառնությամբ: Բարև են տալիս ձեզ բոլոր եղբայրներն ու քույրերը: Տեր Հիսուս Քրիստոսի զարմանահրաշ շնորհքը, Աստծո շռայլ սերը, Սուրբ Հոգու մտերմությունը բոլորիդ հետ լինի» (Բ Կորնթացիների 13.12,13, MSG):

Երբ բարևում ես որևէ քրոջ, գրկախառնվի՛ր: Երբ հանդիպում ես որևէ ավագի, բարևի՛ր և գրկախառնվի՛ր՝ ցույց տալով, որ գնահատում ես նրան: Երբ բարևում ես մեկին, ում ցավ են պատճառել, գրկախառնվի՛ր՝ ցույց տալով քո մտահոգությունը: Երբեմն, նույնիսկ, խոսքեր հարկավոր չեն: Ժամանակի ընթացքում ես սովորել եմ, որ ողջագուրվելը ավելի բժշկարար է, քան ուղղակի բարևելը:

Պողոսը վարպետորեն ողջույնի ձևեր է գրում իր պատաս-

խանատվության տակ գտնվող եկեղեցիներին ուղղված նամակներում: Եթե Պողոսի համար այդքան կարևոր էր իր ողջույնները զետեղել նամակներում, ապա մեզ համար առավել կարևոր է ողջունելը դարձնել սովորություն:

Կարդանք Կորնթոսի եկեղեցուն ուղղված նրա ողջույնը.

> «Այս ամենը չեմ գրում իբրև կշտամբանք ձեզ ամաչեցնելու համար, այլ գրում եմ՝ *ինչպես հայրն իր երեխաներին: Ես սիրում եմ ձեզ և ցանկանում, որ ճիշտ հասունանաք և չփչանաք:* Ձեր շուրջը շատ մարդիկ կան, որոնք չեն համբերում ձեզ ասել, թե ինչն եք սխալ արել, սակայն *չկան շատ հայրեր, ովքեր պատրաստ են ժամանակ և ջանք տրամադրել, որպեսզի օգնեն ձեզ հասունանալու»* (Ա Կորնթացիների 4.14,15, MSG):

Սկզբում Պողոսը կորնթացիներին ներկայացնում է իր նամակի էությունը: Նրա նկատողությունը նրանց ամաչեցնելու համար չէր, այլ, ավելի շուտ, Պողոսը հստակեցնում էր այն, թե ինչպիսի փոխհարաբերությունների մեջ էին նրանք: Նա հայրն էր, իսկ կորնթացիները նրա զավակներն էին: Հետո Պողոսը խոսում է այն մասին, որ շատերը միգուցե հետևում էին, թե ինչպես են Կորնթոսի հավատացյալները ձախողվում, սակայն որպես հայր՝ նա ներդրել էր իր անձը, որպեսզի օգներ նրանց հաջողության հասնել: Պողոսի ողջույնը հաստատում էր այն, թե ով էր նա այդ նամակը ստացողների համար, ովքեր էին նրանք իր համար, ինչ էր նա ասում, ինչու էր ասում և ինչու պետք է նրան լսեին: Այս ամենը հաղորդվեց նրանց՝ նախքան բուն ուղերձը տալը:

ԽՆԱՄԵԼ ՄԻՄՅԱՆՑ

Եթե էգ առյուծի ողջույնի արարողությունը բարեհաջող է ընթանում, այն արագ վերածվում է հանպատրաստից խնամքի: Այս փոխադարձ խնամքն ամուր կապ է ստեղծում էգ առյուծների և ավելի մեծ կորյունների միջև, որն իր հերթին խմբին պահում է անձեռնմխելի և սերտ կապի մեջ:

Էգ առյուծները սկզբում լիզում են միմյանց գլուխն ու վի-

զը, դրանք մարմնի այն մասերն են, որոնք էգ առյուծի համար դժվար է ինքնուրույն լիզելը: Իրենց կոշտ լեզվով էգ առյուծները հեռացնում են արյունն ու կեղտը՝ միաժամանակ մեկը մյուսի մորթին մաքրելով տիզերից ու մակաբույծներից: Երբ որևէ բան ձեր մարմնից արյուն և սննդարար նյութեր է կլանում, ապա այն դանդաղորեն գողանում է ձեր կյանքը: Իհարկե լավ է, երբ մեր մարմնից հեռացվում է արյունն ու կեղտը, բայց փա՛ռք Աստծուն մորաքույրների և քույրերի համար, ովքեր պատրաստ են հեռացնել նաև տիզերն ու մակաբույծները:

«Խնամել» բառն ունի հետևյալ նշանակությունները. մաքրել, սրբել, պատրաստել, խոզանակով մաքրել, հավաքել, կարգի բերել, հարդարել, զուգել, սանրել, վարժեցնել և ուսուցանել: Այս սահմանման համաձայն՝ ես կարող եմ և պետք է իրականում խնամեմ իմ ատամները, իմ երեխաներին, խոհանոցը և այլն:

Ըստ սահմանման՝ «խնամելու» գործընթացը սկսվում է «մաքրելուց» կամ «սրբելուց»: Հիսուսը ցանկացավ «մաքրել» Պետրոսին և առաջարկեց լվալ նրա ոտքերը: Սակայն Պետրոսը հրաժարվեց: Բայց երբ Հիսուսը Պետրոսին հասկացրեց, որ եթե նա հրաժարվի ոտքերը լվալուց, ապա մաս չի ունենա այն ամենի մեջ, ինչ Ինքն անում է, այդ ժամանակ Պետրոսը ոչ միայն համաձայնեց, այլև Հիսուսի առաջարկն այն աստիճան ընդունեց, որ խնդրեց ոտքից գլուխ լվանալ իրեն: Մեր հրաշալի Հիսուսը ցույց տվեց, թե որն է այդ ամենի իմաստը.

> «Հիսուսն ասաց. «Եթե դու առավոտյան լողացել ես, ապա այժմ քեզ պետք է միայն ոտքերդ լվալ, և դու մաքուր կլինես գլխից մինչև ոտքի ծայրը: Այնպես որ, հիմա դու մաքուր ես»» (Հովհաննես 13.10, MSG):

Քանի որ մենք պատկանում ենք Հիսուսին, մենք մաքուր ենք: Սակայն, չնայած դրան՝ օրվա ընթացքում մեր ոտքերը կարող են կեղտոտվել, և երբեմն դա կախված է նրանից, թե որտեղ ենք եղել, ինչ ենք արել կամ ինչ ենք հագել. մեր ոտքերից կարող է նույնիսկ տհաճ հոտ գալ:

Կյանքի ընթացքում ճանապարհորդելով՝ մենք կարող ենք

ոտք դնել և անցնել կեղտոտ վայրերով (իմ պարագայում հաստատ այդպես է): Օրվա վերջում մենք կարիք ունենք լվալու և մաքրելու այդ օրվա ճանապարհի փոշին:

Դա է պատճառը, որ Հիսուսը շարունակում է ասել.

> «Արդ եթե Ես՝ Տերս և Վարդապետս, ձեր ոտքերը լվացի, դուք էլ պետք է իրար ոտքերը լվանաք: *Որովհետև Ես ձեզ օրինակ տվեցի, որ ինչպես Ես ձեզ արեցի, դուք էլ անեք:* Ճշմարիտ, ճշմարիտ ասում եմ ձեզ. ծառան իր տերից մեծ չէ, ոչ էլ ուղարկվածը մեծ է իրեն ուղարկողից: Եթե այս գիտեք, երանելի եք, թե որ այս անեք» (Հովհաննես 13.14-17):

Հիսուսը լվաց Իր աշակերտների ոտքերը և մեզ էլ պատվիրեց նույնկերպ վարվել միմյանց հանդեպ: Չեմ կարծում, որ Նա բառացիորեն նկատի ուներ, որ իմ ամուսինն ամեն գիշեր պետք է խնամի եղունգներս (չնայած որ դա հրաշալի կլիներ, սիրելիս): Սակայն ոտքերը լվալը, հավանաբար, խորհրդանշում է այն, թե ինչպես կարող ենք թարմացնել և վերականգնել մեկս մյուսին, հատկապես, երբ մեր անցած ճանապարհները կեղտոտում են մեզ:

Մի քանի անգամ մասնակից եմ եղել ոտքերը լվալու այդ անհարմար արարողություններին: Դա հատկապես անհարմար էր այն ժամանակ, երբ զուգագուլպաներ կրելը ծառայության մեջ պարտադիր պահանջ էր: Սակայն Հիսուսի ժամանակներում ոտքերը լվալը քո տուն մտած մարդուն ողջունելու ձև էր, ինչպես այսօր գրկախառնվելն ու համբուրելը:

Ես չեմ առաջարկում, որ մենք վերականգնենք ոտնալվան: Մենք ապրում ենք փակ կոշիկների և հարթ փողոցների ժամանակաշրջանում, մինչդեռ նրանք կրում էին սանդալներ, որոնցով շրջում էին փոշոտ փողոցներով: Ես առաջարկում եմ, որ երբ մտնում ենք ընկերոջ տուն կամ եկեղեցի, ժամանակ տրամադրենք թոթափելու օրվա փոշին, այնուհետև սկսենք շփվել միմյանց հետ:

Ինչպես Էգ առյուծը՝ մենք նույնպես մեկս մյուսի կարիքն ունենք, որպեսզի մեր կյանքից հեռացնենք կեղտը, տիզերն ու մակաբույծները:

«Ազգ կա, որ իր աչքին մաքուր է երևում,
բայց իր աղբից մաքրված չէ:
Ազգ կա, որ աչքերը շատ բարձր են,
և նրա արտևանունքները վեր-վեր են գնում:
Ազգ կա, որի ատամները սրեր են,
որի ժանիքները դանակներ են, որ աղքատներին
ուտի այս երկրի վրայից, և տնանկներին՝
մարդկանց միջից:
Տզրուկը երկու աղջիկ ունի,
որոնք են՝ տո՛ւր, տո՛ւր...» (Առակաց 30.12-15):

«Տո՛ւր, տո՛ւրը» մակաբույծներ են, որոնք պակասեցնում են մեր սննդարար նյութերը և մեզնից գողանում են մեր կյանքը: Ագահությունը և ինքնահաճեցումը կարծես արնախումներ լինեն: Եթե մենք հասարակության մասնիկն ենք, ապա պետք է խնամենք մեկս մյուսին և օգնենք միմյանց՝ մաքուր պահելու մեր կյանքը:

Ոչ շատ վաղուց ես հայտնվեցի մի իրավիճակում, երբ պետք էր որոշել՝ արդյո՞ք իրավունք ունեմ խորհուրդ տալու մի երիտասարդի: Նա խոստումնալից ավագ էր, և ես մեծ հարգանք ունեի նրա հանդեպ: Եվ քանի որ զգում էի, որ փոքրինչ պաշտպանական դեր ունեմ նրա կյանքում եղած Աստծո կանչի համար, այդ իսկ պատճառով ցանկանում էի նրա կյանքում որոշակի ուղղումներ մտցնել: Սակայն դա անելու համար սկզբում պետք է պարզեի, թե ինչպիսին էր մեր փոխհարաբերությունը, որպեսզի վստահ լինեի, որ նա կլսեր ինձ: Ուստի հարցրի նրան.

-Ո՞վ եմ ես քեզ համար եկեղեցում:

- Դու ինձ համար ավագ ես,- առանց երկմտելու պատասխանեց նա:

Ես հասկացա նրա պատասխանից, որ կարող եմ խոսել նրա հետ, և նա կլսի այն, ինչ ցանկանում եմ ասել: Եթե նա այլ կերպ պատասխաներ, ես նրան խորհուրդ չէի տա:

Այսպիսի «ոտնալվան» երկու ձևով է գործում: Մենք ոչ միայն պետք է խորհուրդ տանք միմյանց, այլև ուրիշներին էլ թույլ տանք, որ իրենց ներդրումն անեն մեր կյանքում: Ես մի շատ թանկ ընկեր ունեմ, ով ինձ համար կարծես մեծ քույր լի-

նի: Նա մի արտասովոր հովիվ է և մեծ փորձառություն ունի Աստծո դուստրերին մեկտեղ համախմբելու գործում: Մենք շատ երկար ժամանակ է, որ մտերիմ ընկերներ ենք, դրա համար նա գիտի իմ՝ թե՛ ուժեղ, և թե՛ թույլ կողմերը:

Վերջերս ես զգացի, որ պետք է նրան հրավիրեմ մասնակցելու իմ կյանքի «խնամքի» գործընթացին: Եվ սուրճ խմելիս ասացի նրան. «Ես քո խորհրդի կարիքն ունեմ: Եթե տեսնես կամ լսես, որ ես ինչ-որ հիմար կամ ոչ ճիշտ բան եմ ասում կամ անում, խնդրում եմ, որ ասես ինձ: Ես չեմ կարծում, որ արդեն հոգևոր այնպիսի հասուն վիճակում եմ, որ ինձ այլևս ուղղելու կարիք չկա, իրականում ես այնպիսի մարդու կարիք ունեմ, ով ունակ է առաջնորդել և իմաստուն խորհուրդ տալ ինձ»:

Նա մեծահոգաբար համաձայնեց «մաքրել» իմ կյանքի ցանկացած «անհրապույր» բնագավառ: Եվ որպեսզի դա տեղի ունենար, ես պետք է շփվեի նրա հետ: Ես միտումնավոր կապ էի պահպանում նրա հետ և հետևում նրա հրահանգներին՝ կարդալով նրա գրքերը և լսելով ձայնագրությունները: (Կարիք չկար, որ նա ինձ համար կրկներ այն, ինչ արդեն ասել էր): Նա ոչ մի ցանկություն չուներ վերահսկելու ինձ, պարզապես հետևում էր իմ «մաքրությանը»: Երբ մենք սկսում ենք «մաքրել» միմյանց, հասկանում ենք, որ եթե մենք կեղտոտ ենք, ապա դա անդրադառնում է նաև մյուս քույրերի վրա:

Եթե դու մտնում ես Աստծո տուն և այնտեղ քեզ չեն ողջունում ու փոխհարաբերություն չեն հաստատում քեզ հետ, ապա քաջալերում եմ քեզ գտնել այնպիսի եկեղեցի, որտեղ փոխադարձ շփում կա: Այն ընկերներն ու եկեղեցիները, որտեղ չկա շփում, չեն «մաքրի» քեզ Աստծո ծրագրերի համար: Երբ մենք «մաքրման» կարիք ենք ունենում, այն ակնհայտ է դառնում:

Մի օր ես հրավիրեցի իմ հովիվ ընկերուհուն՝ նրանից խորհուրդ հարցնելու համար, որովհետև նման խնամքի կարիք ունեի: Ես ինձ մեկուսացված էի զգում, որովհետև թվում էր, թե ոչ ոք չի հասկանում ինձ: Այս վիճակն ինձ դուր չէր գալիս. ես գիտեի, որ խորաթափանց մարդու օգնության կարիք ունեի, որպեսզի դա իմ կյանքից մաքրվեր և հեռացվեր:

Այս «խնամքի» գործընթացը պետք է մեր շփման հիմնական մասերից մեկը լինի: Կարծես թե կատվազգիներին պատկանող մեր հսկա «ընկերներն» ի ծնե գիտեն այն, ինչ մենք՝ մարդկային արարածներս, հաճախ մեծ գնով ենք սովորում. ինքդ քեզ խնամելը (մաքրելը) կարող է վտանգավոր լինել:

ՍՐԲՈՒԹՅՈՒՆ, ԱՅԼ ՈՉ ԹԵ ՀԻԳԻԵՆԱ

Հավանաբար կհիշեք, որ սկզբում Պետրոսը թույլ չտվեց, որ Հիսուսը լվա իր ոտքերը, բայց հետո առաջարկեց Նրան լվալ ամբողջ մարմինը, սակայն Հիսուսը հասկացրեց նրան, որ չպետք է այդքան բծախնդիր լինել և ասաց.

> «Հասկացի՛ր, Իմ մտահոգությունը սրբությունն է, այլ ոչ թե հիգիենան» (Հովհաննես 13.10, MSG):

Հիսուսի մտահոգությունը սրբությունն էր, այլ ոչ թե հիգիենան: Մենք նույնպես պետք է մտահոգված լինենք սրբությամբ և պահենք այն ամբողջ օրվա ընթացքում:

Երբ մեր ուշադրության կենտրոնում «ես»-ն է լինում, այդ ժամանակ մենք դառնում ենք ագահ և ցանկասեր: Որոշ քրիստոնյաներ ձգտում են սրբության կերպարանք ունենալ, միաժամանակ մեղադրելով մյուսներին անսուրբ լինելու մեջ: Հիսուսը խոսում էր հենց սրա մասին:

> «Այնքան ուշադիր եք բաժակի և սկավառակի դրսի կողմը մաքրելու հարցում, սակայն ներսից դուք կեղտոտ եք՝ լի ագահությամբ և ինքնահաճեցմամբ» (Մատթեոս 23.25, NLT):

Մենք չպետք է անտեսենք սրբության իրական նշանակությունը. այն ավելի շատ կապ ունի ոչ թե հիգիենայի, այլ սրտի հետ: Ճիշտ է, օրվա ընթացքում կարող են կեղտոտվել մեր ձեռքերն ու ոտքերը, սակայն չի կարող կեղտոտվել այն, ինչն Աստված է մաքրում: Նա է միակ Տեր Աստվածը, Ով մեզ սուրբ է դարձնում:

Խառնաշփոթությունն ի հայտ է գալիս այն ժամանակ, երբ

մեր ուշադրությունն ավելի շուտ կենտրոնացված է լինում վատ բանից խուսափելու, քան՝ լավ բան անելու վրա: Այդ ժամանակ է, երբ մեր դատարկ կյանքը հայտնվում է զավթիչների և կողոպտիչների հարձակման վտանգի մեջ: Հիսուսը շրջում էր բարի գործելով, այլ ոչ թե չարից խուսափելով: Մեղք բառի հականիշը առաքինությունն է:

Չարը հաղթվում է բարիով: Չարը չի հեռացվում կանոններով կամ նրանից թաքնվելով: Այո՛, մենք պետք է սահմաններ ունենանք և կիրառենք մեր իմաստությունը. մենք չպետք է մասնակից լինենք չարին: Բայց մի՞թե մենք մաքրում ենք մեզ այն ամենից, ինչը կարիք չկա հեռացնելու: Եկե՛ք չփորձենք ինքներս մեզ և ուրիշներին մաքրել այն ամենից, ինչը կարիք չկա հեռացնելու:

Ահա Հիսուսի խորհուրդը՝ մարմինը ագահությունից և ինքնահաճեցումից մաքրելու վերաբերյալ.

> «Ուստի՝ *մաքրե՛ք ձեր ներսը*՝ աղքատներին պարգևներ տալով, և դուք ամբողջովին մաքուր կլինեք» (Ղուկաս 11.41, NLT):

Աստծո մտահոգությունն այն է, որ մենք ներսից մաքուր լինենք: Նա քաջալերում է ինձ՝ հորդորել նրա մարմնին, այսինքն՝ եկեղեցուն, որ ժամանակն է դուրս գալու մաքուր շենքերից, մաքրելու կեղտոտ ձեռքերն ու հագուստները և օգնելու ուրիշներին:

Սա մի դաս էր, որ պետք է Սիմոն փարիսեցին սովորեր:

ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԽՆԱՄՔԸ

Հիսուսը հրավիրվեց ճաշելու Սիմոն փարիսեցու տանը: Դա «մաքուրների» հավաքույթ էր, մինչև այն պահը, երբ հայտնվեց քաղաքի շնացող կինը: Նա լսել էր, որ Հիսուսն այնտեղ է լինելու: Եվ բացի այն, որ այդ կինը Սիմոնի տուն մտավ, նա նաև հանեց թանկարժեք յուղի անոթը, ծնկի իջավ Հիսուսի առջև, և արցունքներն աչքերին՝ անուշահոտ յուղը լցրեց նրա ոտքերին: Խե՜ղճ Սիմոն... Նա ցանկանում էր Հիսուսի և Նրա ընկերների համար մի լավ ճաշկերույթ կազ-

մակերպել: Եվ երբ Սիմոնն այդ ամենը տեսավ, ինքն իրեն ասաց. «...Եթե սա մարգարե է, ապա կգիտենար՝ թե ով, կամ՝ ինչպիսի կին է նա, որ Իրեն մոտենում է...» (Ղուկ. 7.39):

Եվ այն ժամանակ Հիսուսը Սիմոնին մի առակ պատմեց, ցանկանալով իմանալ, թե պարտքի շնորհման դեպքում ո՞վ ավելի երախտապարտ կլինի. այն մարդը, ով քիչ էր պա՞րտք, թե՞ նա, ով շատ էր պարտք: Եվ Սիմոնը ճիշտ պատասխանեց՝ ասելով, որ նա, ում շատ ներվեց, ավելի երախտապարտ կլինի:

Իսկ Հիսուսը խոսքն ուղղեց սենյակում գտնվող շնացող կնոջը.

> *«Եվ դառնալով դեպի կինը՝ Սիմոնին ասաց.* «Տեսնո՞ւմ ես այս կնոջը. Ես քո տուն մտա, Իմ ոտքերի համար դու ջուր չտվիր, բայց սա իր արտասուքով թրջեց ոտքերս և իր գլխի մազերով սրբեց: Դու Ինձ համբույր չտվիր, իսկ սա, քանի որ այստեղ եմ մտել, ոտքերս համբուրելուց չդադարեց: Դու յուղով չօծեցիր Իմ գլուխը, սա անուշահոտ յուղով օծեց Իմ ոտքերը: Դրա համար ասում եմ քեզ՝ սրա շատ մեղքերն իրեն թողված կլինեն, որովհետև շատ սիրեց. բայց որին, որ քիչ կթողվի, նա քիչ կսիրի»» (Ղուկաս 7.44-47):

Սրանք այն խոսքերն են, որ կրոնական գիտակների ներկայությամբ Հիսուսն ասաց *այդ կնոջ մասին*, բայց ավելի կարևոր են այն խոսքերը, որ Նա ասաց հենց *կնոջը*.

> «Եվ նրան ասաց. *«Քո մեղքերը թողված լինեն քեզ»:*
> Եվ նրա հետ սեղան նստողները սկսեցին իրենց մտքում ասել. «Սա ո՞վ է, որ մեղք էլ է թողնում»: Եվ Նա ասաց այն կնոջը.
> «Քո հավա՛տքն ապրեցրեց (անգլ.-ում՝ փրկեց) քեզ. գնա՛ խաղաղությամբ»» (Ղուկաս 7.48-50):

Այստեղ հատկանշականն այն է, որ Հիսուսն այս ազատագրումը տվեց նրան, ով չէր հրավիրվել խնջույքին: Իսկ ինչո՞ւ. որովհետև, ի տարբերություն Սիմոնի, այդ կինը ողջունեց Հիսուսին և լվաց Նրա ոտքերը, իսկ Սիմոնը, ի տարբերութ-

յուն այդ կնոջ, իրեն չափազանց բարձր էր համարում Հիսուսի առջև խոնարհվելու համար:

Արդյո՞ք մեղքերի թողությունը հասանելի էր Սիմոնին. իհա՛րկե, այն հասանելի էր բոլոր ներկա գտնվողներին: Իր պատմած առակի մեջ Հիսուսը շատ բան հոչակեց, սակայն այդ պահին Սիմոնը չգիտակցեց կամ էլ չընդունեց, որ ինքը սիրտը մաքրելու կարիք ուներ, որը միայն Հիսուսը կարող էր անել:

Երբ մենք կարծում ենք, թե կարիք չունենք մաքրել մեր սրտերը, այդ ժամանակ սկսում ենք դատել ուրիշներին: Դատելով՝ մենք մերժում ենք ուրիշներին այն, ինչի կարիքն ինքներս ունենք: Եվ սա այն է, ինչ տեղի ունեցավ Սիմոնի հետ. Սիմոնը կարիք ուներ, որ իր ոտքերը լվացվեին: Նա խաղաղության ողջույնի կարիք ուներ, նա օծության բալասանի կարիք ուներ: Բայց քանի որ նա կարծում էր, որ ողջույնի և խնամքի կարիք չունի, ուստի դրանցից ոչ մեկը չառաջարկեց իր հյուրերին:

ՊԱՏՎԻ ԱՐԺԱՆԻ

Այս մասին գրելիս պատկերացնում եմ, թե ինչպես է Հիսուսը դիմում մեր օրերի օրինապաշտ առաջնորդներին. «Դուք կարծում եք, որ կնոջ մեղքը չափազանց մեծ է, որպեսզի նա արժանանա ընդունելության, այդ պատճառով էլ անտեսում եք նրան: Ձեզ թվում է, թե ինչ-որ առումով նա հարմար չէ Ավետարանը քարոզելու համար: Սակայն ես ընդգծեցի այս կնոջ օրինակը, որպեսզի վերականգնեմ կանանց պատիվը: Դուք պատկերացնում եք, որ Եվայի մեղքն ավելի մեծ էր, քան Ադամինը, և այդ պատճառով մերժում եք նրա դուստրերի՝ Իմ սեղանից օգտվելու հնարավորությունը, սակայն մի՛ մոռացեք, որ ավելի երախտապարտ են լինում նրանք, ում որ շատ է ներվում: Եվ այսպիսի դուստրերը պատվի կարժանանան նույնիսկ Իմ ոտքերը լվալու և օծելու համար»:

Սիրելի՛ կին առյուծներ, ժամանակն է, որ մեր փառավոր Տիրոջը տանք մի բան, որով կարող ենք պարծենալ: Եվ որպեսզի դա կատարվի, ես պատրաստ եմ լվալ ուրիշների ոտքերը և թույլ տալ, որ նրանք էլ իմ ոտքերը լվան: Եկե՛ք հո-

ժարակամ լինենք անելու որևէ բան կամ գնալու որևէ տեղ, եթե գիտենք, որ դա Հիսուսին հիացմունք կպատճառի: Սիմոնը կարծում էր, թե այս թեթևաբարո կինն «ամբողջությամբ ընկել էր Հիսուսի վրա», սակայն Հիսուսն ընդունեց նրա «անշնորհք» արարքը: Մի՛ անհանգստացիր, եթե քո փորձերը սկզբում անշնորհք թվան: Պարզապես նվիրվի՛ր ու սկսի՛ր: Ես ցանկանում եմ, որ մենք այնպիսի տպավորություն թողնենք, որ Հիսուսն ասի. «Ես տպավորված եմ այն բանից, թե որքան մեծ սեր նրանք ցուցաբերեցին Իմ հանդեպ»:

Եկե՛ք ինչ-որ զարմանալի ու նշանակալից բան անենք մեր Տիրոջ համար: Երբ մենք ուրիշներին սեր, բարություն, խնամք և ողջույն ենք շռայլում, մեր մեծարանքը Նրան ենք տալիս: Եկե՛ք միմյանց օծենք Նրա գալուստի և մեր հարության համար: Եկե՛ք լվանք մեկս մյուսի ոտքերը, նույնիսկ եթե դա մեր արցունքներով լինի: Թող այդ արցունքներն անարգել հոսեն այնքան, մինչև բավական լինի՝ եկեղեցու ոտքերի կեղտն ու փոշին լվալու և մաքրելու համար: Եկե՛ք լաց լինենք մեր իսկ մեղքերի համար և աղաղակենք այն անարդարության համար, որ աշխարհով մեկ տիրում է մեր քույրերի ու երեխաների կյանքում: Եթե այն ողորմությունը, որ շռայլել են քեզ, բավական չէ, որ ստիպի քեզ արտասվել, ապա թո՛ւյլ տուր, որ գերի ընկած դուստրերի դաժան վիճակը շարժի քո սիրտը: Քո արցունքները լվանում են ուրիշների ոտքերը և մեծարում են մեր Տիրոջը:

Էգ առյուծի ողջույնը և խնամքը խորհրդանշում են այն, թե ինչպես ենք ընդունում միմյանց, և ցույց են տալիս, որ մենք պատկանում ենք իրար. ինչպես ողջունում ենք, այդպես էլ ընդունում ենք միմյանց (որպես ավագների, հավասարակիցների կամ աշակերտների):

Ինչպես մարդիկ տեսնեն քեզ, այնպես էլ կխնամեն: Էգ առյուծի օրինակը ցույց է տալիս, որ երբ խնամում ենք մյուսներին, մեր արժեքը բարձրանում է: Եվ այս ընդունելությամբ միմյանց հանդեպ պատիվ, խոնարհություն և հարգանք ենք ցուցաբերում: Մեր ողջույնը պետք է ասի. «Ես ճանաչո՛ւմ եմ քեզ: Ես գնահատո՛ւմ եմ քեզ: Ես այստեղ եմ քե՛զ համար, իսկ այժմ թո՛ւյլ տուր օգնել քեզ և մաքրել քո կյանքի այդ բնագավառի կեղտը»:

Ես նոր եմ վերադարձել կին առյուծների հետ անցկացրած իմ երկօրյա հանդիպումից: Այսպիսի հանդիպումներ հաճախակի ենք ունենում: Երբ հանդիպում ենք, գրկախառնվում ենք և մխիթարվում մեկս մյուսի ներկայությամբ: Այս անգամ վեց կանանցով երկու հյուրանոցային սենյակ էինք զբաղեցրել: Մենք միասին քնում և միասին արթնանում էինք, ամբողջ օրը միասին «լատե» սուրճ էինք ըմպում և միասին ճաշում էինք: Եվ մինչև ուշ գիշեր գիշերազգեստով նստում, ողջունում և հոգ էինք տանում միմյանց համար. մենք սովորել էինք մեկս մյուսի կողքին ազատ և անկաշկանդ լինել: Ընկերների այս քաղցր «կորիզը» բաղկացած է սրտացավ մայրերից, ժամանակավոր բնակություն հաստատած մի քրոջից, հոգնատանջ պատերազմողից և հզոր տեսիլքի մարդուց:

Առաջին երեկոն մենք անցկացնում ենք մեկս մյուսին ողջունելով (ես սիրում եմ քեզ, ես կարոտել եմ քեզ): Իսկ հաջորդ օրն արթնանում և սկսում ենք հոգ տանելու գործընթացը (ինչպես ես): Մենք գիտենք միմյանց ուժեղ և թույլ կողմերը և հասկանում ենք, որ երբեմն այդ կողմերը համընկնում են: Մենք միմյանց դժվար հարցեր ենք տալիս, միասին ծիծաղում ենք, լաց լինում, աղոթում ու խոստովանում մեր վախերը, մեղքերը և տկարությունները: Եվ երեկոն եզրափակում ենք աղոթելով մեկս մյուսի համար, մեր երեխաների ու մեր ապագայի համար: Ես վերադառնում եմ ուժասպառ, սակայն մաքրված, փոշուց սրբված և ոտքերս լվացած:

Ես սովորել եմ գրկաբաց ընդունել «մաքրման» այդ գործընթացը, որովհետև գիտեմ, որ այդ քույր առյուծները սիրում են ինձ և պատրաստ են օգնել: Ես գիտեմ, թե ովքեր են նրանք իմ կյանքում, իսկ նրանք գիտեն, թե ով եմ ես իրենց կյանքում: Երբեմն մենք համաձայն չենք լինում միմյանց հետ, սակայն դա չի նշանակում, որ մենք ցրվում ենք:

Քո կյանքում կա՞ն այնպիսի կանայք, ովքեր ողջույնի, հոգատարության և մաքրման կարիք ունեն: Կա՞ արդյոք մեկը, ում կարող ես առաջարկել մասնակցություն ունենալ քո «մաքրման» գործընթացի մեջ:

8

Էգ առյուծները ռազմավարական են

«Եռանդ և արդարության գիտություն նրանց, ովքեր առաջնորդում և որոշում են կայացնում. ուժ և վարպետություն նրանց, ովքեր պահպանում և պաշտպանում են»:

ԵՍԱՅԻ 28.6, MSG

Էգ առյուծները սավաննայի ամենաուժեղ արարածները չեն, սակայն այն, ինչ նրանց պակասում է ուժի առումով, նրանք դա լրացնում են ռազմավարությամբ և սրտով: Մեր առյուծ քույրերն աշխատում են միասին՝ որպես ազգակցական էգերի ռազմավարական թիմ: Նրանք խմբի քույրերն են, մորաքույրները, հորաքույրները, մայրերը, դուստրերն ու զարմուհիները: Նրանք ազգակիցներ են և լավ ճանաչում են միմյանց ուժեղ և թույլ կողմերը: Երբ բանը հասնում է կերակուրի համար որս անելուն, կորած ձագին փնտրելուն կամ փոքրերին վարժեցնելուն և պաշտպանելուն, այդ ժամանակ խմբի մեջ յուրաքանչյուր էգ առյուծ ունենում է իր դերն ու ներդրումը:

Սկսենք խոսել որսից: Երբ էգ առյուծները որս են անում, գործի է դրվում երեք կարևոր գործոն՝ ժամանակի հաշվարկ, քողարկում և հեռավորություն: Էգ առյուծի համար ժամանակի հաշվարկն ամեն ինչ է: Նա սովորել է մի հմտություն, որը լավ կլիներ, որ մենք էլ որդեգրեինք. դու պետք է թույլ տաս, որ ժամանակը գործի քո օգտին: Էգ առյուծը որս է անում՝ հաշ-

վի առնելով օրվա ժամերն ու լուսավորությունը: Նա որսում է ամենաբարենպաստ միջավայրում՝ մթնշաղին և լուսաբացից առաջ: Ոչ ոք չի կարող արագացնել մայրամուտը կամ ուշացնել արևածագը, ուստի այս հարցում էգ առյուծները համբերատար և նպատակասլաց են: Լույսի նվազումը առավելագույնս նպաստում է նրա քողարկմանը, ինչը նրան զոհին մոտենալու հնարավորություն է տալիս: Գիշերն աֆրիկական հարթավայրի կենդանիների մեծ մասի տեսողությունը նվազում է, բայց ոչ էգ առյուծներինը (դրա մասին կխոսենք ավելի ուշ):

Հաշվի առնելով լուսավորումը՝ նա հավասարաչափ գործի է դնում ժամանակի հաշվարկն ու տեղակայումը:

Մեծ մասամբ էգ առյուծները բաց տեղերում են թաքնվում: Նրանք հայտնվում են օրը ցերեկով, դիրքավորվում են զոհի ուղղությամբ և զբաղեցնելով իրենց հիմնական դիրքը՝ պառկում են:

Էգ առյուծը կենդանիների խմբի վրա սովորական ազդեցություն չունի: Նրա ներկայությունից խուճապի են մատնվում շրջակայքում գտնվող կենդանիները: Նրանք ցրվում են այս ու այն կողմ՝ վախենալով էգ առյուծի հետապնդումից, սակայն նա տեղից չի շարժվում. դեռ ժամանակը չէ: Նա հանգիստ է և գրեթե աննկատելի պառկած է ոսկեգույն խոտերի մեջ: Սպասելու ժամանակահատվածում էգ առյուծը կարող է ննջել, քանի որ նրա քունը խորը չէ, այնուհետև նա ուժ է հավաքում, որպեսզի ճիշտ ժամանակին շարժվի տեղից:

Աշխուժացած կենդանիները խաղաղվում են և էգ առյուծին մոռանում: Նրանք գլուխները կախում են և շարունակում կերակուր փնտրել: Իր համբերությամբ էգ առյուծը կարծես դառնում է բնատեսարանի մի մասնիկը: Նրա զոհը խաղաղվում է և իրեն հարմարավետ է զգում էգ առյուծի ներկայությամբ՝ մոռանալով, որ դա վտանգավոր է իր համար: Ահա առյուծը սպասում էր այս անհոգության մթնոլորտին, և այժմ նրա գործողությունները խիստ կանխամտածված են դառնում:

Երբ մթնշաղը մոտենում է, էգ առյուծն ավելի է ցածրանում և հավասարվում գետնին, իսկ նրա հսկա թաթերն անշարժանում են: Գլուխը ցածր պահած՝ նա փորձում է ճշտել իր և որսի միջև հեռավորությունը. անսպասելիությունը և ճշգրիտ

հեռավորությունը ճակատագրական են հաջող ցատկ կատարելու համար: Նա գիտի, որ իմպալայի արագությունը չունի:

Հանկարծ էգ առյուծը դուրս է պրծնում թփուտից: Սարսափած այծյամը մի կողմ է ցատկում. նրա ետևի վերջույթները պատառոտվում են առյուծի սուր ժանիքներից: Հետապնդումը սկսված է. սարսափած այծյամը չգիտի, որ իրեն դարանակալել են: Մեկ ուրիշ էգ առյուծ կտրում է նրա ճանապարհը: Նա շրջվում է և վազելով կանգ է առնում մեկ այլ առյուծի առջև: Որսը կատարվում է արագ և վարպետորեն. արդյոք առաջին էգ առյուծը պարտվեց: Միգուցե՝ այո, միգուցե՝ ոչ, սակայն մեկ բան հաստատ է. նա զգուշությամբ իրականացված ռազմավարական ծրագրի մասնիկն էր: Էգ առյուծները միակ խոշոր կատուներն են, որոնք միասին են որս անում: Վագրերը, հովազները, ընձառյուծներն ու հեպարդները մենակ են որս անում, բայց էգ առյուծները՝ միասին: Նրանք հմուտ որսորդներ են: Խմբի մյուս քույրերի ընկերակցությամբ յուրաքանչյուրը զբաղեցնում է իր դիրքը և կատարելագործում իր որսորդական հմտությունները: Արու առյուծները հայտնի են նրանով, որ նրանք հարձակվում են հոտի վրա՝ փորձելով ճանկել այն, ինչ կարող են: Նրանք դաժանաբար սպանում են իրենց զոհին: Իսկ էգ առյուծները չեն շտապում. նրանք կարծես պարում են: Նրանց համակարգված որսը ապշեցուցիչ տպավորություն է թողնում: Սա է պատճառը, որ էգ առյուծին համարում են *որսորդական վարպետության կամ հմտության գագաթնակետ:*

ՀՄՏՈՒԹՅՈՒՆ

Ինձ դուր է գալիս, թե ինչպես է հնչում այս բառը:

Որոշ ժամանակ ես միտումնավոր իմ խոսքի մեջ օգտագործում էի *«հմտություն»* բառը: Այն լսելով՝ չես կարող անտարբեր մնալ: Ինչպես էգ առյուծը, այնպես էլ *«հմտությունը»* որոշ չափով զարմանքի և առեղծվածի տարրեր է պարունակում:

Երիտասարդ կանայք, ովքեր ճանապարհորդում են ինձ հետ, այս բառն օգտագործում են տարբեր զուգակցություններում, որպեսզի տեսնեն, թե ինչպես է այն հնչում այլ բառերի

կողքին: Նրանք խոսում են ճանապարհորդական *հմտության*, ուղեբեռի հանձնման *հմտության*, փաթեթավորման *հմտության* և աղոթքի ու քարոզչության *հմտության* մասին: Մենք ցանկանում ենք, որ *հմտությունը* նորովի օգտագործվի:

Հմտություն բառն ունի այնպիսի նշանակություններ, որոնք կցանկանայի, որ կանայք բացահայտեին և դրսևորեին: *«Որսորդություն»* բառը *«հմտություն»* բառի հետ միացնելուց բացի (քանի որ որսորդական հմտության գագաթնակետը էգ առյուծն է) կցանկանայի օգտագործել այն այնպիսի բառերի հետ, ինչպիսիք են՝ *մոլեգին, ռազմավարական, նորարարական, ծնողական, ոճ և հաղորդակցում:*

Տարբերակներն անվերջ են, սակայն հմտությունը էգ առյուծի հատկանիշներից մեկը չէ, նա հե՛նց հմտություն է:

Եթե «հմտությունը» ձև ունենար, այն հաստատ կատվազգի կլիներ: Չնայած ես շուն եմ սիրում, սակայն չեմ կարող պատկերացնել, որ այդ արտահայտությունը կարելի է վերագրել իմ Տերիերին (որսաշուն): Եթե «հմտությունը» գույն ունենար, այն հավանաբար ոսկեգույն կլիներ, իսկ տեսքը՝ ալիքաձև մորթու պես: «Հմտությունը» քայլում է նպատակաուղղված և անհրաժեշտության դեպքում՝ զգուշորեն: «Հմտությունը» հնարավոր չէ պարտադրել կամ կեղծել, սակայն այն հնարավոր է և պետք է զարգացնել: Եթե դու ձեռք բերես այս հատկանիշը, ապա այն մշտապես քոնը կլինի: Հմտությունն էգ առյուծին զորավոր է դարձնում. նա չի վախենում իր ուժից, ընդհակառակը՝ մխիթարվում է դրանով:

Ըստ իմ համակարգչի բառարանի՝ հմտությունն ընդգրկում է *կարողություն, վարպետություն, փորձագիտություն, ունակություն, ճարպկություն, ընդունակություն և փորձառություն* բառերը: Ի հավելումն դրա՝ ինձ դուր է գալիս այս երկսայր սահմանումը.

1. բացառիկ կարողություն, հմտություն կամ ուժ,
2. բացառիկ քաջություն կամ հերոսություն[1]:

Ինչպես էգ առյուծը՝ այնպես էլ դու օժտված ես հմտությամբ: Կա բացառիկ կարողություն, ուժ կամ խիզախություն, որոնք պետք է դրսևորվեն քո կյանքում: Դրանք միգուցե թաքնված են և սպասում են իրենց դրսևորմանն ու զարգաց-

մանը: Աստված յուրաքանչյուրիս տաղանդներ ու կարողություններ է տվել, և մեր գործն է դրանք բացահայտելն ու զարգացնելը: Հմտությունը կարող է ասել. *«Ես ամեն բան չէ, որ գիտեմ, կամ՝ կարող եմ, բայց այն, ինչ գիտեմ, նախընտրում եմ լավ անել»:* Հմտությունը հաճախ բացահայտվում է խաղերի և սպորտաձևերի միջոցով: Արդյո՞ք քո ներսում կա ինչ-որ բան, որն արտահայտվելու կարիք ունի: Այն բնագավառը, որում դու հմուտ ես, ոգևորում է քեզ. դրանով դու նմանվում ես էգ առյուծներին, որոնք անվեհեր գործում են: Լինի որսորդություն, պաշտպանություն, թե վարժեցում՝ նրանք անում են այն, ինչը լավ գիտեն:

Իսկ ինչո՞ւ են էգ առյուծներին համարում որսորդական վարպետության գագաթնակետ. որովհետև նրանք *միասին* են որս անում՝ առանց մրցակցության և առանց աստիճանակարգը խախտելու: Ոչ մեկի բաժինը կամ ներդրումն ավելի կարևոր չէ, քան մյուսինը: Մեզ պետք է, որ դու *լինես դու.* ուրիշի տաղանդները կրկնօրինակելը ոչ մեկի օգտին չի ծառայում, առավել ևս՝ քո օգտին: Անհատականությունը չի ծնվում համեմատության, ընդօրինակման կամ մրցակցության միջոցով: Յուրաքանչյուր էգ առյուծ զարգացնում է իր հմտությունների համակարգը. լավ կլիներ, եթե հետևեինք նրա օրինակին.

> «Այնպես էլ մենք, որ գերազանցորեն ձևավորված և հիանալիորեն գործող անդամներ ենք Քրիստոսի մարմնում, եկե՛ք *պարզապես առաջ գնանք և լինենք այն, ինչ ստեղծված ենք լինելու*՝ առանց նախանձի կամ հպարտության, առանց մեկս մյուսի հետ համեմատվելու, կամ՝ փորձելու լինել այն, ինչ՝ չենք» (Հռոմեացիների 12.5,6, MSG):

Հաճախ ես մասնակից եմ լինում կոնֆերանսների, որոնց հրավիրված են լինում պարգևներով լի քարոզիչներ: Շատ սխալ կլինի ընդօրինակել նրանցից որևէ մեկին: Փորձի ու սխալի միջոցով սովորել եմ, որ մարդկանց ներկայանալու լավագույն ձևը պարզապես քո «լավագույն տարբերակը» լինելն է: Հիշի՛ր, որ ոչ մեկը քեզ չի հրավիրում, որ նմանակես մեկ ուրիշին. նրանք հենց քե՛զ են ուզում:

Երբ վերոհիշյալ խոսքում կարդում եմ «գերազանցորեն ձևավորված և հիանալիորեն գործող» արտահայտությունը, հիշում եմ «վարպետություն» բառը և այն փաստը, որ դու ահավոր և զարմանալի կերպով ես ստեղծված: Աստված քո մեջ չդրեց վախի հոգի, այլ՝ սիրո, զորության և զգաստության Հոգի (տե՛ս Բ Տիմոթ. 1.7): Դու ստեղծվեցիր ահավոր կերպով, այլ ոչ թե վախեցած ու երկչոտ: Սիրելի՛ս, դու գտնվում ես համաշխարհային սարսափի այսպիսի ժամանակաշրջանում, որպեսզի արտահայտես Աստծո զարմանալի հատկանիշները. դու կանչված ես Քրիստոսի մարմնում հիանալի կերպով գործող մաս լինելու համար, որը, կարծում եմ, հմտության մեկ այլ դրսևորում է:

Աստված յուրաքանչյուրիս հրավիրում է էգ առյուծի պես ստանձնելու մեր դիրքը՝ յուրաքանչյուրս մեր տեղում և մեր զորությամբ:

Էգ առյուծի որսորդական հմտությունն առանձնահատուկ կերպով նշվում է շատ աֆրիկյան քաղաքակրթություններում: Ուշագրավ մարտիկները կամ որսորդներն արժանանում են «էգ առյուծի որդի» անվանը: Եվ, իհարկե, հասկանում ես, որ էգ առյուծն է, որ սովորեցնում է կորյուններին որս անել: Սուրբ Գիրքը նույնիսկ ընդգծում է սա.

> «Ինչ է քո մայրը՝ մի մատակ առյուծ,
> որ առյուծների մեջ է պառկում,
> որ իր լակոտներին կորյունների մեջ է մեծացնում:
> Եվ նա մեծացրեց իր լակոտներից մեկին,
> որ մի կորյուն եղավ և սովորեց հափշտակություն
> (անգլ.-ում՝ որսորդություն) անել...»:
>
> Եզեկիել 19.2,3

Սակայն էգ առյուծի հոգատարությունը չի սահմանափակվում ձագերին մեծացնելով. շատ կենդանիներ են դա անում: Էգ առյուծները հայտնի են նաև խմբում ավելի ծեր կամ վիրավորված էգերին խնամելու հարցում: Նրանց շնորհիվ ամբողջ խումբը միաբան է և լիարժեք է գործում:

Արու առյուծը աչքի ընկնող կերպար է, որը չի վախենում հայտնել իր ներկայությունը: Դրան հակառակ՝ էգ առյուծի

ուժը նրա՝ գրեթե անհետանալու կարողության մեջ է: Նա ջանում է աննկատ մնալ որսի ժամանակ, և երբ բանը հասնում է ձագերին կերակրելուն, քողարկումն անվիճելի առավելություն է դառնում: Իսկ եթե ձագերի կյանքը վտանգի տակ է, դա բոլորովին այլ բան է:

> «Կարո՞ղ ես էգ առյուծին սովորեցնել ծածուկ
> հետապնդել իր զոհին և բավարարել նրա ձագերի
> ախորժակը, երբ նրանք կուչ են գալիս իրենց որջում»:
>
> Հոբ 38.39,40, MSG

Այս խոսքը Աստծո և Հոբի միջև խոսակցությունից մի հատված է: Այն հայտնում է, որ Աստված Միակն է, Ով էգ առյուծին սովորեցնում է որսալ, հետապնդել և կերակուրով ապահովել իրեն սպասող ձագերին: Ես զարմանում եմ, թե ինչպես է դա իրականացվում: Արդյո՞ք մեր մեծափառ Աստված հուշումներ և ազդանշաններ է դնում էգ առյուծի միջավայրում, որտեղ մշտապես կատարելագործվում են նրա հմտությունները: Արդյո՞ք արարչագործության տարրերը, որ ոգեշնչված են Աստծուց, սովորեցնում են էգ առյուծին որսալ և կերակրել, ինչպես որ արարչագործության զարմանալի հատկանիշները ցանկություն են արթնացնում մեր մեջ փնտրել Աստծուն և սիրել մեկս մյուսին:

ՎԱՅՐԻ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

Ես ցանկանում եմ ընդլայնել որսորդության մասին քո հասկացողությունը: Որսորդությունը չի սահմանափակվում միայն *սպանելով և ուտելով: Որսորդությունը* նաև ենթադրում է որոնում կամ, նույնիսկ, փրկություն: Որսալ՝ նշանակում է հետապնդել, հետամուտ լինել, ծածուկ հետևել, հալածել կամ պառկել և սպասել: Հետաքրքիրն այն է, որ ես հայտնաբերեցի, որ այդ բայերն օգտագործվում են Աստծուն ուղղված մեր որոնումները նկարագրելու համար:

> «Աստվա՛ծ, Աստվա՛ծ, դեպի Քեզ եմ վազում ցանկալի
> կյանքի համար. այս հետապնդումը վայրի է»:
>
> Սաղմոս 7.1, MSG

Այս որսորդությունը հիասքանչ է: Ինձ դուր է գալիս «Աստծո վայրի հետապնդում» հասկացությունը: Այն շատ հեռու է առավոտյան կիսաքնած հանգստի վիճակից: Այս խոսքերը հրատապություն, արագություն և կենտրոնացած հետապնդում են ակնարկում: Աստվածաշնչյան այս համարին կարելի է նաև մոտենալ մեկ այլ տեսանկյունից: Այն կարող է ինչ-որ վայրի և վտանգավոր բանից փախչելու կամ Աստծուն վայրի բնության միջոցով հետապնդելու նկարագրություն լինել: Երկուսն էլ գործում են, և երկուսն էլ հետաքրքիր են, չնայած ես նախընտրում եմ Աստծուն վայրի, վտանգավոր կերպով հետապնդելու գաղափարը: Ինձ դուր է գալիս նաև Աստծո կողմից ինձ վայրի կերպով հետապնդելու գաղափարը: Երբեմն երբ նայում եմ մեր տան առջևի պատուհանից երևացող լեռնաշղթային, ես շշնջում եմ. «Աստվա՛ծ, Ո՞վ ես Դու: Ես ցանկանում եմ ճանաչել ինձ Քո հզոր կարողության լույսի ներքո»:

Իհարկե, ոչ ոք չի պատկերացնում, որ կարող է որսալ Աստծուն: Նույնիսկ անհեթեթ կլինի մտածել, որ կարող ենք Նրան հավասարակշռությունից գցել. մենք կարող ենք փոքրիշատե վերապրել Նրան: Նրանում թաքնված է այն, ինչ ես պետք է փնտրեմ: Սիրելի՛ս, ես երբեք որսորդության այսպիսի հրատապ կանչ չեմ զգացել: Ժամանակն է վայրի կերպով հետապնդել Աստծուն:

Ինչպես էգ առյուծն է համբերությամբ սպասում իր որսի ժամին, այնպես էլ մեզ համար Աստծուն սպասելու ժամանակը Նրան հետապնդելու կարևոր մաս է կազմում: Սաղմոսերգուն գրում է.

> «Տե՛ր, առավոտից լսի՛ր իմ ձայնը: Ամեն առավոտ խնդրանքներս Քեզ մոտ եմ բերում և ակնկալությամբ սպասում» (Սաղմոս 5.3, NLT):

Որսալ նաև նշանակում է «նայել, փնտրել կամ հետամուտ լինել»: Սրանք արձագանքն են այն ամենի, ինչ ես արդեն ասել եմ: Եվ վերջում՝ *որսորդություն*՝ նշանակում է որոնում, հետապնդում կամ արշավ:

Որպես Բարձրյալ Աստծո դուստրեր՝ մենք իմաստություն, ուժ և պատասխաններ ենք փնտրում: Մենք հետապնդում ենք

Աստծուն, որպեսզի Նա բռնի մեզ, և բռնվելով՝ Նրա լույսն ու կյանքն ենք արտացոլում ուրիշներին:

> «Քո գեղեցկությունն ու սերը հետապնդում են ինձ իմ կյանքի բոլոր օրերում:
> Ես Աստծո տանը կբնակվեմ իմ կյանքի մնացած օրերում» (Սաղմոս 23.6, MSG):

Իմաստություն և խորհուրդ կա այն կանանց ընկերությունում, ովքեր ոչ միայն հետապնդում են Աստծուն, այլև հետապնդվում են Աստծո կողմից: Վայրի կերպով արթնացած այս կանանցից յուրաքանչյուրն Աստծո սիրո և սրտացավության որոշակի բաժինն ունի, որը պետք է ուրիշների հետ կիսի: Աշխարհը ցանկանում է տեսնել, թե ինչ տեղի կունենա, երբ Աստծո գեղեցկությունն ու սերը և՛ գրավեն, և՛ համախմբեն կանանց: Սիրելի՛ս, դու ճշմարտության համար կազմակերպված արշավի և լուծումների հայտնության մասնիկ ես: Աստվածային կապեր հաստատելու մեր որոնումներն ի հայտ են գալիս մեր Առյուծի՝ Հիսուսի հայտնության միջոցով: Կան հարցեր, որոնք միայն կանայք են տալիս, և կան պատասխաններ, որ Աստված մեզ է վստահել, որ հայտնենք, իսկ որպեսզի այս ամենն իրականացված տեսնենք, մենք պետք է հավաքվենք միասին:

Նախքան որս անելը մեր առյուծ քույրերը հավաքվում են: Նրանք միասին հանգստանում են, միասին սովածանում, միասին ձգվում և միասին էլ վեր են կենում: Միասին նրանք գրավում են իրենց որսորդական դիրքը, և երբ որսն ավարտվում է, միասին խնջույք են անում: Հետո այս փուլը կրկնվում է. դիրքերը կարող են փոփոխվել, սակայն, վերջին հաշվով, առյուծները միշտ միասին են:

Մարգարիտ Միդը, որը մշակույթի բնագավառում փայլուն մարդաբան (անտրոպոլոգ) էր, տարիներ շարունակ տարբեր մշակույթներ ուսումնասիրելուց հետո հետևյալ դիտարկումն էր կատարել. «Ընտանիքում քույրերի միջև փոխհարաբերությունը թերևս ամենամրցակցայինն է, սակայն, երբ քույրերը հասունանում են, այն դառնում է ամենաուժեղ փոխհարաբերությունը»[2]:

Այս խոսքերը կարդալով՝ մտածեցի. *«Ահա թե ինչ է կա-*

փարվում. մենք հասունանում ենք»:

Երբ գրում էի իմ *«Հոգափարություն»* գիրքը, նկատեցի, որ այնտեղ չկան աստվածաշնչյան օրինակներ քույրերի մասին, ովքեր միասին ռազմավարական կյանք են վարում: Իրականում ես հուսալքվեցի՝ մտածելով, թե որտեղից կարող եմ գտնել այնպիսի կանանց օրինակ, ովքեր ընկերներ և սրտակից բարեկամներ են: Ես չափազանց շատ էի ուզում իմանալ դա, հասկանո՞ւմ եք. մինչև Աստծո Հոգին չառաջնորդի մեզ այդ գործընթացի միջով, մենք չենք բարձրանա իբրև կին առյուծներ:

Մինչև Սուրբ գրքում օրինակներ էի փնտրում, զգացի, թե ինչպես Աստծո Հոգին շշնջաց. *«Դուստրերի մասին գլուխը հենց հիմա է գրվում: Ասա՛ իմ դուստրերին, որ լավ գրառեն իրենց կյանքը»*[3]*:*

Ես չեմ ցանկանում, որ հայտնվես վտանգի տակ՝ չիմանալով, թե որքան վճռական և անբաժանելի է քո ներդրումը: Հասկանո՞ւմ ես, թե ինչ է սա նշանակում: Մենք անհատապես և խմբովի գրում ենք Աստծո դուստրերի պատմությունը՝ պատասխանատու լինելով յուրաքանչյուր բառի, գործողության և ընտրության համար: Հավաքվելով միասին իբրև քույրերի ազգակցական միություն՝ մենք արթնացնում ենք կին առյուծին իր վայրագ ուժով, շնորհքով և հմտությամբ:

ՀԵՏԱՄՈՒՏ ԼԻՆԵԼ ԱՐԴԱՐՈՒԹՅԱՆԸ

Մենք ոչ միայն պետք է արթնանանք, որ հետամուտ լինենք Աստծուն և Նրա պատասխաններին, այլև ժամանակն է, որ մենք արթնանանք և հետամուտ լինենք արդարությանը: Արդարությունն իրավական աստիճան չի պահանջում, այն պետք է լինի ապրելակերպ: Մեր երկիրը հիմնադրվել է որպես ապաստարան անարդարության ավերածություններից: Մեր իրավական համակարգը ստեղծել է դատարաններ, որոնք ծառայում են իբրև ճշմարտության «սրբարաններ»: Սակայն վերջին վճիռները մեզ մտածելու առիթ են տալիս, թե արդյո՞ք այդ դատարանները թատերաբեմ չեն խորամանկ իրավաբանների համար:

> «Եռանդ և արդարության միտք նրանց, ովքեր առաջնորդում և որոշումներ են կայացնում. ուժ և հմտություն նրանց, ովքեր պահպանում և պաշտպանում են» (Եսայի 28.6, MSG):

Այս խոսքը նշանակալից միտք է հաղորդում. արդարությունն ավելին է, քան կանոններ կատարելը, այն միտք և եռանդ է պահանջում: Մենք իմաստության կարիք ունենք, որպեսզի և՛ դատավորը, և՛ երդվյալ ատենակալներն այնպիսի դատավճիռներ կայացնեն, որոնք, վերջին հաշվով, երկրին և նրա քաղաքացիներին անարդարությունից արդարություն կառաջնորդեն: Ճշմարիտ արդարության պահպանումը ուժեղ և գերազանց պաշտպաններ է պահանջում:

Կար ժամանակ, երբ արդարությունն օգտագործվում էր մեր երկիրը նկարագրելու համար: Երբ պատանի էի, մեր ժամանակվա գերհերոսներից մեկի նշանաբանն էր՝ «Ճշմարտություն, արդարություն և ամերիկյան ճանապարհ»:

> «Որ դատաստանը դեպի արդարություն դառնա, և նրա ետևից կգնան բոլոր սրտով ուղիղները» (Սաղմոս 94.15):

Մենք արդարության արթնության կարիք ունենք: Ես վախենում եմ, որ մեր արդարադատության համակարգը կորցրել է արդարացի դատի զգացողությունը. սրտով ուղիղները հետամուտ են արդարությանը: Երբ քո սիրտն ուղիղ է, անարդարությունը նողկալի է դառնում քեզ համար: Սա չի սահմանափակվում դատական համակարգով, այն պետք է տարածվի կյանքի յուրաքանչյուր բնագավառում: Մինչև մենք սպասում ենք, որ կառավարությունը, եկեղեցին կամ մեկ ուրիշը կուղղի այն, ինչը սխալ է մեր աշխարհում, երեխաներն ու կանայք մահանում են: Ես կարծում եմ, որ գրեթե բոլորը կհամաձայնեն, որ արդարությունը ներառում է նաև երեխաներին վտանգից ազատելը:

Էգ առյուծները միասին պաշտպանում են խմբի կորյուններին: Եթե կորյունների կյանքին վտանգ է սպառնում, էգ առյուծը դառնում է ռազմավարական մարտիկ: Ես դիտել եմ մի

փաստագրական ֆիլմ, որտեղ կոբրային հաջողվել էր մտնել առյուծների խմբի մեջ: Նկատելով թունավոր կոբրային՝ էգ առյուծները խուճապի չմատնվեցին, և պահպանելով իրենց հանգստությունը՝ նրանք անմիջապես ձեռնարկեցին ձագերին ապահով վայր տեղափոխելու գործողությունը: Յուրաքանչյուրը բռնեց ամենամոտ գտնվող ձագի վզից և նրան կոբրայից հեռու տարավ: Առյուծներից մեկը մնաց ձագերի հետ, մինչ նրա քույրերը վերադարձան նրանց մոտ, որոնք մնացել էին այնտեղ՝ օձի շարժումներին հետևելու համար:

Ես տպավորված էի նրանից, որ այս էգ առյուծները բավականաչափ իմաստուն էին, որ իրենց ձագերին չթողեցին կոբրայի մոտ: Կորյունները ոչ միայն վտանգի տակ կլինեին, այլև կխանգարեին իրենց: Ուստի, երբ ձագերն արդեն ապահով տեղում էին, ժամանակն էր պայքարել կոբրայի դեմ: Էգ առյուծների բնազդային մոտեցումը մարտավարական էր և ռազմավարական:

Էգ առյուծները մոլեգին պաշտպանում են խմբի *բոլոր* ձագերին: Էգ առյուծը ուրիշ առյուծի ձագի կյանքն ավելի չի վտանգի, քան իր ձագինը: Էգ առյուծները ոչ միայն միասին են որս անում, այլև միասին մայրություն են անում: Նույնպես և մենք պետք է երկրագնդի բոլոր երեխաներին հեռու պահենք այն ամենից, ինչը սպառնում կամ վտանգում է նրանց կյանքը: Բավական չէ միայն մեր երեխաներով մտահոգվելը. մենք պետք է պատերազմ մղենք թե՛ տանը, թե՛ դրսում. եկե՛ք արթնանանք մեր հեռու և մոտ հարևանների համար:

Էգ առյուծների մեջ պաշտպանական բնազդն այնքան ուժեղ է, որ նույնիսկ նախքան բեղմնավորումը նրանք իրենց մտքում արդեն ունեն ձագի պաշտպանության գաղափարը: Էգ առյուծներն ունեն Աստծուց տրված կարողություն ժամանակով համապատասխանեցնել իրենց ամսական կամ վերարտադրողական ցիկլը: Սա հնարավորություն է տալիս նրանց հղիանալ և ծնել միասին:

Էգ առյուծները հասկանում են, որ նույն տարիքի կորյունները գոյատևման ավելի մեծ հնարավորություն ունեն, քանի որ կարող են հավասարաչափ օգտվել կերակուրից և սովորել մայր առյուծներից: Բոլոր այս ոսկեգույն ձագուկները, որ այս ու այն կողմ գլուխկոնծի են տալիս, ապահովված են կե-

ռակրող մայրերով: Քանի որ խումբը բաղկացած է ազգակից էգերից, նրանք կերակրում և վարժեցնում են մեկը մյուսի ձագերին: Մեծ առավելություն կա նույնանման փորձառություն և տարիք ունեցող եղբայրների և քույրերի կողքին մեծանալու մեջ: Դա նշանակում է, որ նույնանման ռիթմ գոյություն ունի վարժվելու, կերակրվելու, հանգստանալու և խաղալու ձևերի մեջ: Եվ սա վերջին հաշվով նպաստում է հմտությունների ձևավորմանը, ինչն էլ օգնում է ոչ միայն ձագերի, այլև նրանց ապագա խմբի գոյատևմանը:

Էգ առյուծներն իրենց ձագերին վարժեցնում են օրինակ ծառայելով: Վայրի բնության մեջ սխալվելը գրեթե անթույլատրելի է: Եթե հմտությունները ճիշտ չփոխանցվեն, ձագերի գոյատևումը վտանգված կլինի, և առյուծների խումբը ժառանգություն չի ունենա:

Էգ առյուծները սովորում են որս անել խաղի միջոցով: Քանի դեռ շատ փոքր են, նրանք սովորում են տարրական բաները. մայր առյուծը պառկում է, իսկ ձագերը ցատկոտում ու խաղում են: Մայրերը նույնպես միանում են նրանց խաղին: Էգ առյուծները ոչ միայն ըմբշամարտում են ձագերի հետ, այլև լավ խաղում են միմյանց հետ: Երբ ձագերը թավալվում են, իրար վրա են հարձակվում և ցատկոտում են, այդ ժամանակ մայրերը թույլ են տալիս, որ ձագերն իրենց ուժեղ զգան: Եթե նրանք շատ հեռու են գնում, մայր առյուծը միշտ հայտնվում է նրանց կողքին. նա կա՛մ մռնչոց է արձակում, կա՛մ թեթևակի ապտակում է նրան, ով վերահսկողությունից դուրս է գալիս:

Եվ այս զվարճալի խաղի ժամանակն էլ ունի իր նպատակը, քանի որ այն անխուսափելիորեն ընդգծում է խմբի յուրաքանչյուր անդամի ուժեղ կողմերը: Աստված սիրում է, երբ մենք ծիծաղում ենք, հանգստանում և թարմանում: Կարելի է ասել, որ մենք հանգստանում և թարմանում ենք այն ժամանակ, երբ խաղում ենք:

> «Որովհետև Դու միշտ սատար ես եղել ինձ, ես ազատ կարող եմ վազել և խաղալ» (Սաղմոս 63.7, MSG):

Երբ իմացա, որ էգ առյուծները հղիանում և ծնում են միա-

սին, որպեսզի միասին մասնակից լինեն ձագերին կերակրելու և վարժեցնելու գործին, այդ ժամանակ լսեցի, թե ինչպես Աստծո Հոգին շշնջաց. «Լիզա, յուրաքանչյուր երեխա գոյատևման հավասար հնարավորության է արժանի, և յուրաքանչյուրը պաշտպանության, կերակրման, ուսուցման և ապահովվածության կարիք ունի»: Երկրագնդի երեխաների բարեկեցությունը մեր գործն է, և մենք պետք է ռազմավարական լինենք նրանց համար արդարություն փնտրելու գործում:

ՎԱՅՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔ

Նայելով էգ առյուծներին՝ հասկանում ենք, թե որքան առավել մայրը պետք է ազատի այն երեխաներին, որոնք իրենը չեն:

> «Մի՞թե կինը կմոռանա իր կաթնակեր մանուկին, որ չգթա իր որովայնի ծննդյան վրա. նրանք *եթե* մոռանան էլ, բայց Ես քեզ չեմ մոռանա» (Եսայի 49.15):

Չեմ կարող պատկերացնել, որ մայրը կարող է մոռանալ իր երեխային: Կենդանի Աստված ասում է. «Նույնիսկ եթե նրանք մոռանան»: Այս խոսքն ընդգծում է, թե որքան անբնական է, երբ կանայք չեն խնամում կամ գիտակցաբար վնասում են իրենց երեխային: Ցավոք, մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ անհավատալին դարձել է իրականություն: Այժմ բավականին շատ ենք լսում պատմություններ այն մայրերի մասին, որոնք իրենց երեխաների անվտանգությունն ու բարեկեցությունը փոխել են թմրադեղերով, ալկոհոլով կամ փողով:

Վերջերս լրատվամիջոցները լուսաբանեցին մի պատմություն երկու երիտասարդ աղջիկների մասին, որոնց առևանգել էին տարբեր ամուսնական զույգեր: Աղջիկներից մեկը տասնութ տարի գերության մեջ էր մնացել, և այդ ժամանակահատվածում ծննդաբերել ու խնամել էր երկու դուստրերի: Մյուս աղջկան առևանգել էին հենց տնից և գերության մեջ էին պահել ինն ամիս: Դաժան առևանգիչները բռնաբարել ու չարչարել էին դեռահաս աղջիկներին, և երկու դեպքում էլ ամուսինների հանցանքին որպես մեղսակից մեղադրվել էին

նրանց անզավակ կանայք:

Երբ իմ որդի Ալեքն իմացավ, որ այդ հանցանքում ներգրավված էին կանայք, ցնցվեց. «Ինչո՞ւ կանայք չէին փրկել աղջիկներին»,- հարցրեց նա՝ անկարող լինելով ընկալել այն աշխարհը, որտեղ կանայք չեն փրկում երեխաներին:

Ես միայն կարողացա նրան պատասխանել, որ այդ կանանցից ոչ մեկը ողջամիտ չի եղել: Նրանք ունեին ընտրության հնարավորություն, բայց քանի որ ինչ որ պատճառով նրանցից ոչ մեկի մեջ չարթնացավ մոր սիրտը, նրանք լուռ մնացին:

Մենք հակված ենք մտածելու, որ կանայք ճնշվում են տղամարդկանց կողմից, սակայն միշտ չէ, որ այդպես է: Այդ կանայք գիտեին՝ ինչ էր կատարվում, և ոչինչ չարեցին, նրանք իրականում, հնարավոր դարձրին այս աղջիկների բռնությունը:

Հետաքրքիր է նշել, որ բռնությունն իրականացրած երկու տղամարդիկ էլ խեղաթյուրում էին Աստծո Խոսքը և օգտագործում էին հնազանդության անառողջ տեսանկյուններ՝ իրենց կանանց և այդ աղջիկներին մանիպուլյացիայի ենթարկելու (նենգությամբ վարվելու) համար: Ցանկանալով հաճեցնել իրենց ամուսիններին՝ այդ կանայք իրենց գործած հանցանքով պարզապես ցնցեցին երկիրը:

Բայց, ի հակադրություն այս ամենի, էգ առյուծը կկանգներ ձագերի և վտանգի միջև: Ես կարդացել եմ պատմություններ այն մասին, որ էգ առյուծները նույնիսկ միասին դեմ են դուրս եկել իրենց խմբի առյուծներին, եթե վերջիններիս գործողությունները սպառնացել են խմբի ձագերի կյանքին:

Այսօր, քան երբևէ, մեզ համար վճռական ժամանակ է. մենք պետք է լինենք ողջամիտ կանայք, որոնք կարողանում են տարբերել ճիշտը սխալից և ապրել Աստծո Խոսքով: Մենք պետք է իմաստուն և խոհեմ լինենք այնպիսի հարցերի շուրջ, ինչպիսիք են գենդերային խնդիրները և ամուսնական անվերապահ հնազանդությունը: Աստված երբեք նկատի չի ունեցել, որ այս սկզբունքներից որևէ մեկը ուրիշներին վտանգի տակ դնի. դրանք նախատեսվել են բարու համար:

Մեր պատասխանատվությունն է պաշտպանել փոքրերին

ու խոցելիներին, և ինչպես էգ առյուծը, այնպես էլ մենք պետք է միշտ ձգտենք երեխաներին դուրս հանել վտանգավոր ճանապարհից: Էգ առյուծները աստվածատուր բնազդով հասկանում են այն, ինչ որոշ կանայք արդեն մոռացել են: Մայրերը փրկում են երեխային, նույնիսկ եթե նա իրենցը չէ. միայն ծննդաբերելը քեզ մայր չի դարձնում...

Մի քանի ամիս առաջ մեր երկիրը սարսափահար եղավ մի գեղեցիկ, ժպտերես հնգամյա աղջկա պատմությունից, որի մայրը նրան վաճառել էր սեռական ստրկության: Փոքրիկ աղջկա մարմինը գտել էին Հյուսիսային Կարոլինայի անտառապատ տարածքներից մեկում: Ես սարսռում եմ, երբ մտածում եմ, թե էլ ինչ զարհուրելի դեպքեր կարող եմ լսել լուրերով, մինչև այս գիրքը կտպագրվի:

Շնորհակա՛լ եմ Աստծուց, որ շատերիս համար մայրական այսպիսի քայլը դեռևս աներևակայելի է: Սուրբ գրքում գրված է, որ լինելու են դաժան ժամանակներ, երբ մարդիկ, որոնք մոլորվել են ճիշտ ճանապարհից, կմոռանան, թե ինչ է նշանակում մարդ լինելը (տե՛ս Հռոմ. 1.26): Լինել մարդ՝ նշանակում է լինել Աստծո նման, ունենալ Նրա սրտի պես սիրտ և մարդկային խղճմտանք: Աստծուն բարկացնում է այն, երբ մարդիկ արժեզրկում են կյանքը և Իր պատկերով ստեղծված երեխաներին օգտագործում են սեռական նպատակների համար: Իմանալով, որ սա Նրա արձագանքն է, մենք էլ պետք է նույն արձագանքն ունենանք՝ գործելով սիրով և մոլեգնությամբ: Մենք պետք է բացենք մեր տան դռները և որդեգրության միջոցով ներս ընդունենք վտանգի տակ գտնվող կամ անցանկալի երեխաներին: Մենք պետք է մեծահոգի լինենք և կախում չունենանք կառավարությունից՝ սպասելով, թե երբ է նա շտկելու այն, ինչը սխալ է: Եկե՛ք իսկապես սիրենք մեր մերձավորներին:

Եթե մենք լուռ մնանք ճնշումների և անարդարության առջև, վտանգ կա, որ մեկ օր այդ երևույթները կթակեն մեր դուռը: Ես փափագում եմ տեսնել, թե ինչպես է եկեղեցին բարձրանում և դեմ կանգնում մարդկային թրաֆիքինգին և սեռական ստրկության առևտրին: Այս ցանկությունը երբեք չի հեռանում իմ սրտից, և այն հաճախ արտահայտվում է իմ խոսքում: Վերջերս, երբ ինքնաթիռով ճանապարհորդում էի,

զրույցի բռնվեցի կողքիս նստած մի երիտասարդ կնոջ հետ և պատմեցի նրան այս ամենը՝ ասելով, թե որքան եմ փափագում տեսնել ամբողջ աշխարհի կանանց՝ հավաքագրված մի շարժման մեջ, որը հակառակ կկանգնի այս հիմնահարցերին: Նա շրջվեց իմ կողմը և ասաց. «Դուք ինչ իշխանությամբ եք խոսում այս խնդրի դեմ»:

Նրա հարցի ուժգնությունն ինձ հանկարծակիի բերեց: Ես ապշեցի և մի փոքր լռությունից հետո ասացի. «Իսկ ինչ իշխանությամբ ես պիտի համարձակվեմ *լուռ* մնալ»: Իջեցնելով ձայնը՝ այդ կինը փորձեց բացատրել, որ ինքը ցանկանում էր իմանալ՝ արդյոք ես որևէ կրթական կամ մասնագիտական որակավորում ունեմ: Ես նայեցի նրա աչքերին և բացատրեցի, որ վերջին անգամ, երբ ստուգել եմ օրենսդրությունը, ոչ մի օրենք չեմ հայտնաբերել, որն արգելում է ձայն բարձրացնել անարդարության դեմ, և այս հարցի շուրջ ոչ մի «մասնագիտական» պատասխան չեմ տեսել: Իսկ այս հրեշավոր հանցագործությունների համար շատերի արձագանքն է պահանջվում:

Ակնհայտ անարդարություն է երեխաներին զրկել իրենց անմեղությունից և հպատակեցնել մեծահասակի կրքերին ու անառակությանը: Ինչպե՞ս կարող է մեզնից որևէ մեկը լուռ մնալ այն ժամանակ, երբ լռեցվել են այդքան շատ երեխաների ձայներ:

Ինչպե՞ս կարող ենք չաղաղակել այս հարցի շուրջ և որքա՞ն պետք է լսենք այս արտահայտությունը. «Որպեսզի չարը հաղթի, ընդամենը պետք է, որ բարի մարդիկ ոչինչ չանեն»: Ժամանակն է, որ ոչ միայն ընդունենք դա, այլև գործենք դրա հիման վրա: Երբ երկրից դուրս եմ գնում և քայլում եմ զարհուրելի աղքատ վայրերով, նայում եմ մայրերի աչքերին ու խորհում. «Տեսնես ինչ են նրանք մտածում»: Գուցե հարցնում են. *«Իմ երեխան պակա՞ս արժանի է, քան քոնը»:*

Աստված չանի, որ մենք թույլ տանք նրանց այդպես կարծել: Երբ Հարավային Ասիայում էի, երկու անգամ մայրերն առաջարկեցին իրենց երեխաներին: Նրանցից մեկը նույնիսկ երեխային դրեց ձեռքերիս մեջ: Մինչ պահում էի փոքրիկին, նրա մայրը նայեց ինձ և ինչ-որ անհասկանալի բառեր ասաց: Մի ուրիշ անգամ, երբ մոր ներկայությամբ գովե-

ցի նրա երեխայի գեղեցկությունը, նա թարգմանչի միջոցով հարցրեց, թե արդյոք չե՞մ ցանկանա վերցնել նրա դստերը. տեսնո՞ւմ եք նրանց հուսահատությունը: Նրանք փորձում էին իրենց երեխաներին տալ ինձ՝ մի օտարականի, ով նույնիսկ նրանց լեզվով չէր խոսում: Հավանաբար նրանք գումարի կարիք ունեին, սակայն ես հավատում եմ, որ նրանք առավել ևս հույսի կարիք ունեին իրենց երեխաների համար: Մեր մշակույթում երեխա վաճառելն անըմբռնելի հասկացողություն է, սակայն, ի՞նչ կանեիր դու, եթե ոչինչ չունենայիր երեխայիդ տալու:

Արդյո՞ք կարող ենք մեր երեխաներին այնպես դաստիարակել, որ ցանկանան աշխարհը և նրա ռեսուրսները կիսել այս կանանց երեխաների հետ: Ես հավատում եմ, որ Աստված ցանկանում է, որ ես ու դու այդպես վարվենք և նույնը սովորեցնենք մեր երեխաներին:

ՓՐԿԵԼ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Այո՛, մեծ ցավ ես ապրում, երբ տեսնում ես, թե ինչպես է որոշ երկրներում աղքատությունը խոշտանգում մարդկային հոգին, սակայն տեղական մակարդակով նույնպես կա պայքար, որը մեր ուշադրությունն է պահանջում: Երբ գրում էի այս գիրքը, մի հետաքրքիր դեպք պատահեց: Ես հպանցիկ տեսա, թե ինչպիսին կարող էր լիներ ռազմավարական հմտությունը, եթե այն կիրառվեր տեղական կրթական համակարգում: Ես ասում եմ հպանցիկ, որովհետև խնդիրը լուծելու նպատակով ընդամենը մեկ անգամ այցելեցի դպրոց և գիտակցում եմ, որ կան շատերը, ովքեր աչալուրջ են և ակտիվորեն ներգրավված են կրթական համակարգերում ու գործընթացներում: Ես շնորհակա՛լ եմ Աստծուց ուսուցիչների և մանկավարժների համար, որոնք անխոնջ աշխատում են՝ սեղմ բյուջեի պայմաններում որակյալ կրթություն ապահովելու համար: Եվ սա է պատճառը, որ կան ժամանակներ, երբ նրանք մեր կարիքն ունեն:

Մի հանգստյան երեկո իմ ավագ որդին՝ Արդենը, ընթերցանության տնային աշխատանք ուներ անելու: Քանի որ նա գերհոգնել էր բասկետբոլի պարապմունքներից, խնդրեց ինձ

իր համար ընթերցել նյութը: Նա վախենում էր, որ իր կարդալու ընթացքում կարող է քնել: Քանի որ ընտանիքի մյուս անդամները հյուրասենյակում աղմկելով հետևում էին ֆուտբոլային խաղին, մենք գնացինք իմ ննջասենյակ:

Երբ կարդում էի գիրքը, ներսումս աստիճանաբար տագնապ բարձրացավ դրա բովանդակության վերաբերյալ: Այն հագեցած էր դեռահասների ինքնասպանության, վայրագության, ամուսինների և երեխաների բռնության, դաժանության, անչափահասների կողմից ալկոհոլի օգտագործման, հարբեցողության, ծնողների կողմից երեխաներին լքելու և խանութում գողություն կատարելու ամենատարբեր մտքերով: Երբ մտածում էի, որ այդքանից հետո ավելի վատ բաներ գրված չէին լինի, մենք հասանք խիստ առարկելի սեռական թեմային վերաբերող հատվածին:

Որդիս շրջվեց ու ասաց. «Մայրիկ, ես այլևս չեմ ուզում, որ այս գիրքը կարդանք»: Հետո ասաց, որ կան նաև ուրիշ հատվածներ, որոնք նույնքան անպարկեշտ են: Խնդիրն այն էր, որ այս գիրքը նախատեսված էր առաջին կուրսի տղաների գրականության դասի համար: Եվ ես որոշեցի առավոտյան զանգել դպրոց ու խնդրել, որ Արդենին մեկ ուրիշ գիրք հանձնարարեն կարդալու: Հաջորդ առավոտյան, երբ խոսեցի ուսուցչի հետ, նա համաձայնեց Արդենին մեկ ուրիշ գիրք տալ: Ես կախեցի լսափողը՝ մտածելով, որ ամեն բան արդեն լավ է, սակայն այդ օրն ավելի ուշ այնպիսի բաներ կատարվեցին, որոնք համոզեցին ինձ, որ ես ավելին պետք է անեմ: Համաձայն դպրոցի կանոնադրության՝ այս գիրքն իր առարկելի նյութի պատճառով պահանջում էր ծնողի թույլտվությունը: Ես մտածեցի, որ մյուս ծնողները հավանաբար գաղափար չունեին, թե ինչ էր գրված այդ գրքում: Իսկ ես տեղեկացա այդ գրքի բովանդակությանը զուտ այն պատճառով, քանի որ որդիս խնդրել էր ընթերցել այն: Հակառակ դեպքում ես էլ չէի իմանա դրա մասին:

Մի՞թե ճիշտ էր այն, որ միայն իմ որդին պաշտպանված լիներ այդ գրքի բովանդակությունից: Իսկ դասարանի մյուս տղաների համար ինչպիսի՞ հեռանկարներ կստեղծվեին, երբ նրանք կարդային պոռնոգրաֆիայի, սեռական հարաբերությունների, ալկոհոլի, գողության, բռնության և ինքնասպա-

նության մասին: Իմանալով այս ամենը՝ մի՞թե կարելի էր լուռ մնալ. արդյո՞ք իմ պատասխանատվությունը չէր պաշտպանել նաև մյուս երեխաներին ու նրանց ծնողներին:

Ինտերնետային կայքում ես մի բլոգ բացեցի, որպեսզի այդ մասին տեղեկություն տարածեի և աջակցություն ստանայի՝ դպրոցին տեղյակ պահելով, որ միայն ես չէի մտահոգված: Ավելի քիչ քան քսանչորս ժամում հինգ հարյուրից ավելի մարդ (նրանցից շատերը մանկավարժներ էին) արձագանքեց՝ ասելով, որ իրենք նույնպես անհամապատասխան են համարում այդ գիրքը: Նրանց մեջ կային մայրեր, ովքեր իրենց երեխաներին հանել էին հանրակրթական դպրոցից հենց նման բաների պատճառով, և այժմ նրանք կրթվում էին տնային պայմաններում:

Ես կասկածի տակ չէի դնում հեղինակի իրավունքը այդպիսի պատմություններ գրելու համար. իմ մտահոգությունն այն էր, որ գիրքը պարտադիր պետք է կարդային տասնչորսամյա պատանիները: Այդ գիրքը պաշտպանում էր պոռնոգրաֆիան, իսկ սեռական թրաֆիքինգը սկիզբ է առնում պոռնոգրաֆիայից: Պիղծ պատկերները աներևակայելի ձևերով կարող են բառացիորեն խեղաթյուրել երիտասարդ տղայի կողմից կնոջ ընկալումը: Այդ կասկածելի գիրքն ակնհայտ էր դարձնում այն, որ պոռնոգրաֆիան զուգակցված մաստուրբացիայի (սեռական ինքնաբավարարում) հետ բնական վարքագիծ էր տասնչորսամյա տղայի համար: Պոռնոգրաֆիան ի զորու է ստեղծելու այնպիսի մտածելակերպ, որը ստրկացնում և թակարդն է գցում իր զոհերին (թե՛ կին, թե՛ տղամարդ): Այն կարող է հանգեցնել կնոջ հանդեպ ատելության, հուզական ու սեռական անտարբերության, նաև սեռական կապվածության. այս ամենն էլ հող է նախապատրաստում սեռական թրաֆիքինգի համար:

Ես գիտեի, որ մեր տեղական կրթական համակարգը ցանկանում էր առաքինություն սերմանել իր երիտասարդների կյանքում: Այն ազդեցիկ քաղաքականություն ուներ այս նպատակին հասնելու համար, սակայն ինչ-որ ձևով այս գիրքը սողոսկել էր դպրոցական ծրագրի մեջ: Ես պայմանավորվեցի դպրոցի տնօրենի հետ և նրան տեղյակ պահեցի այն մասին, որ դպրոցական ծրագրերում որոշ կանոններ խախտվել են:

Եվ հանդիպման ժամանակ իմ մտահոգությունն արտահայտեցի՝ նշելով, որ անմիջականորեն ականատես եմ եղել սեռական թրաֆիքինգի հետևանքներին, և այժմ ինձ անհանգստացնում է այն, որ այդ գիրքը կանանց ներկայացնում է որպես սեռական հարաբերությունների առարկա:

Մեկ շաբաթում գիրքը հանվեց ծրագրից, և դպրոցի տնօրինությունն ուրախ էր, որ ընտրական գործընթացում կատարված սխալը հայտնաբերվել է: Դրանից հետո որոշակի փոփոխություններ կատարվեցին՝ հետագայում նման վրիպումները կանխելու համար:

Հանրակրթական դպրոցներում աշխատում են մարդիկ, որոնք նվիրված են երեխաների կրթությանն ու դաստիարակությանը: Ինչպես և յուրաքանչյուրս, նրանք նույնպես կարող են սխալվել իրենց կայացրած որոշումներում: Նրանց վրա հարձակվելու փոխարեն ավելի լավ չէ՞ կանգնել նրանց կողքին որպես կրթական գործընթացի դաշնակիցներ. մենք ոչ միայն պետք է պաշտպանենք մեր երեխաներին, այլև պետք է խրախուսենք անել լավագույնը *բոլոր* երեխաների համար:

Իմ առաջարկից հետո պարզվեց, որ այդ գիրքը նշանակվել էր բոլոր առաջին կուրսերի համար, և իմ որդու դասարանն առաջինն էր եղել, որին հանձնարարվել էր կարդալ: Քանի որ տագնապի ազդանշան հնչեց, և դպրոցն արձագանքեց այդ խնդրին, շատ երեխաներ զերծ մնացին այդ անպարկեշտ և կասկածելի նյութը կարդալուց:

Այս ամենի ընթացքում ես «քրիստոնյայի քարտ» չբարձրացրի և աղմուկ-աղաղակով դուրս չեկա դպրոցի ուսուցիչների կամ ղեկավարության դեմ. ես պարզապես դիմեցի նրանց՝ համաձայն իրենց սահմանած կանոնադրության, և խնդիրը մատնանշելուց բացի՝ խելամիտ լուծում առաջարկեցի՝ հայտնելով նրանց, որ պարտավորվում եմ մինչև վերջ հետևել խնդրի լուծմանը: Իմացե՛ք, որ յուրաքանչյուրդ կարող եք նույնն անել:

ՈՐՍԱԼՈՒ ԺԱՄԱՆԱԿՆ Է

Աստված քեզ և ինձ առաջարկում է լինել որսորդության մի մասնիկը: Երբ մենք փնտրենք և հետևենք Նրան, կգտնենք

այն իմաստությունն ու պատասխանները, որոնց կարիքն ունենք: Բաժանությամբ և հուզական անտարբերությամբ ծվեն-ծվեն եղած աշխարհում մենք երկնային ընկերությունների և ռազմավարական փոխհարաբերությունների կարիք ունենք, որպեսզի կրթենք և պաշտպանենք մեկս մյուսի երեխաներին: Աշխարհի կորած և վտանգի տակ գտնվող երեխաների փրկությունն իրականացնելու համար անհրաժեշտ են այնպիսի ռազմավարություններ և պատասխաններ, որոնք գալիս են Երկնքից: Մեզնից ոչ ոք առանձին կղզի չէ, մենք միասին ենք, այդ պատճառով էլ այն, ինչ դու անում ես, ի զորու է ազդելու ինձ վրա, և այն, ինչ ես եմ անում, ի զորու է ազդելու քեզ վրա: Համակարգված ջանքերով մենք հնարավորություն ունենք փոխելու իրադարձությունների ընթացքը մեր տներում, եկեղեցիներում և համայնքներում: Մենք ապրում ենք այնպիսի ժամանակներում, երբ սոցիալական ցանցերի մեծ հնարավորություն կա: Եվ այստեղ որոշում կայացնողը մենք ենք՝ արդյո՞ք այդ կապերը կօգտագործենք բարիքի համար:

Երբ սկսեցի ուսումնասիրել էգ առյուծներին, չէի գիտակցում, որ առյուծները կատվազգիներին պատկանող միակ կենդանիներն են, որ ապրում են խմբերով: Որտեղ մի էգ առյուծը թույլ է, մեկ ուրիշն է ուժեղ: Որտեղ մեկը սխալվում է, մյուսը հաջողություն է ունենում, և այս ամբողջը տեղի է ունենում հզոր առյուծի հովանավորությամբ:

Սա չի վերաբերում մեկուսի ապրող կատվազգիներին. հզոր հովազը, ընձառյուծը կամ հեպարդը չունեն նման պաշտպանություն: Ամեն անգամ նրանք վտանգի են ենթարկում իրենց ձագերին, երբ թողնում և գնում են որսորդության, քանի որ վերադառնալիս կարող են իրենց որջն ավերված վիճակում գտնել: Մի փաստագրական ֆիլմ պատմում էր մայր հեպարդի մասին, որն աղիողորմ ճիչեր էր արձակում, քանի որ որսից վերադառնալով իր որջը դատարկ էր գտել: Նա խղճալի ձայնով ամբողջ գիշեր կանչում էր՝ հույս ունենալով, որ ձագերից մեկն ինչ-որ ձևով փրկված կլիներ:

Ես ու դու չենք ստեղծվել մեկուսացած լինելու համար: Ես նույնիսկ չեմ կարող արտահայտել, թե ինչպիսի մխիթարություն եմ վերապրել, երբ իմացել եմ, որ իմ ընտանիքից դուրս

կան մարդիկ, որոնք իրենց հարազատ երեխայի պես հոգ են տարել իմ երեխաների մասին: Մենք օրհնված ենք այնպիսի մարդկանցով, որոնք աղոթում են մեզ համար: Նրանց մեջ կան նույնիսկ այնպիսի մարդիկ, ում մենք երբեք չենք հանդիպել, և միայն վերջերս ենք իմացել նրանց մասին: Շատերն առատաձեռնությամբ զոհաբերել են Ավետարանի տարածման և այն գերիներին ազատելու համար, որոնց երբեք չեն հանդիպի: Թող երկինքը առատապես վարձահատույց լինի յուրաքանչյուրիդ, ով հոգ է տանում ուրիշների ընտանիքների մասին:

ՓԱԿԻՐ ՆՐԱ ՕԴԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Երբ էգ առյուծը սպանում է իր զոհին, սովորաբար նա չի պատառոտում կամ ծվատում նրան, այլ՝ շնչահեղձ է անում՝ փակելով օդային ուղիները: Նույնպես և ես հավատում եմ, որ ժամանակն է, որ մենք էլ փակենք թշնամու օդային ուղիները: Եվ դա անելու ճանապարհներից մեկն այն է, որ դադարենք նրան տալ մեր շունչը: Շատ հաճախ մենք նրան չափից շատ բան ենք տալիս աշխատելու համար, փոխարենը, մեկս մյուսի դեմ չխոսելով, պետք է զրկենք նրան իր զորությունից. եկե՛ք հմտորեն օգտագործենք մեր խոսքերը, որպեսզի կարողանանք կառուցել, հորդորել, ուղղել և խրախուսել:

Այս որսորդության մեջ ես այն կանանց *կարիքն* ունեմ, որոնք հասկանում են իմ թույլ կողմերը և աջակցում են ինձ: Նույնը քեզ է վերաբերում. սա իրականացնելու համար ես նպատակաուղղված շրջապատել եմ ինձ այնպիսի մարդկանցով, ովքեր ուժեղ են այնտեղ, որտեղ ես թույլ եմ: Իմ անկեղծ աղոթքն է, որ կարողանամ իմ ուժեղ կողմերով օգնել այդ ընկերներին այն բնագավառներում, որտեղ նրանք թույլ են: Առողջ և հավասարակշռված փոխհարաբերությունն այն է, որ յուրաքանչյուր անդամ ունի իր ներդրումը:

Թող մեզնից ոչ ոք չբավարարվի միայն իր երեխաների ապահովությամբ, այլ՝ փոխարենը հասկանա և գիտակցի այն, որ մենք պատասխանատու ենք այս երկրագնդի բոլոր երեխաների համար և պետք է ուշադիր լինենք՝ նրանց վտանգավոր ճանապարհից դուրս հանելու հարցում: Մեզ-

նից ոչ ոք թող չկարծի, թե տեղական ներգործությունը չի կարող հեռահար ազդեցություն ունենալ: Երբեք չկարծես, որ քո դերն աննշան է. ոչ ոք թող չպատկերացնի, թե մեն-մենակ կարող է նվաճել աշխարհը:

> «Միասնական կանգնե՛ք և տեսիլքում մեկ եղեք՝ ջանալով շահել մարդկանց վստահությունը Աստվածաշնչի՝ Բարի լուրի հանդեպ, նույնիսկ մի փոքր չնահանջելով կամ խույս չտալով հակառակորդներից: Ձեր համարձակությունն ու միաբանությունը ցույց կտան նրանց, թե ինչի դեմ են դուրս եկել. պարտություն նրանց համար, հաղթանակ ձեզ համար, և երկուսն էլ Աստծո շնորհիվ» (Փիլիպ. 1.27,28, MSG):

Միասին մենք կարող ենք լինել ռազմավարական:

9

Էգ առյուծներն ապրում են լույսի մեջ և որս են անում խավարում

«Չար մարդիկ բորբոքված են մեղքով՝ պատրաստ փախչելու, երբ ոչ ոք իրենց չի հետապնդում, իսկ ազնիվ մարդիկ հանգիստ, վստահ և համարձակ են՝ ինչպես առյուծները»:

ԱՌԱԿԱՑ 28.1, MSG

Էգ առյուծները ոչ միայն ի ծնե գիտեն, թե ինչ կարող են անել և ինչպես հմտորեն անեն դա, այլև նրանց առօրյան բավականին պարզ է: Նրանք հանգստանում են, երբ հոգնած են. որս են անում և ուտում, երբ քաղցած են, իսկ մնացած ժամանակը հիմնականում խաղում են:

Դուք միգուցե տեսել եք, թե ինչպես են էգ առյուծները հանգստանում. նրանք կարծես կիսով չափ քնած լինեն: Արևի ոսկեգույն ճառագայթների տակ հանգստանալիս՝ նրանք երբեմն շրջվում են մեջքի վրա՝ կարծես հետագայի համար էներգիա հավաքելու նպատակով: Այս ու այն կողմ ցատկոտող կորյուններին նույնիսկ հազիվ է հաջողվում հանգստացող էգ առյուծներից արձագանք ստանալ: Երբեմն կորյուններն անցնում են սահմանը և ամենամոտ գտնվող մայրիկից մի թեթև հարված ստանում: Սակայն նրանք կարծես թե լարվածության մեջ չեն լինում, քանի որ օրվա մեջ նրանք մոտավորապես քսան ժամ ննջում են:

Հանգստի ժամից հետո էգ առյուծները ձգվում են՝ անցնելով իրենց երկրորդական կեցվածքին, և մարտական բարձր

պատրաստակամությամբ միանում են խմբային խաղին: Ինչևէ, լինելով նույնիսկ մարտական բարձր պատրաստակամ վիճակում, նրանք կենտրոնացած են, բայց ոչ՝ լարված:

Այս կենտրոնացած, սակայն հանգիստ կեցվածքը էգ առյուծի վարպետության մեկ այլ վճռական տարրերից է, որը մենք՝ դուստրերս, կարիք ունենք որդեգրելու: Հետևյալ խոսքը մեզ որոշակի հասկացողություն է տալիս այդ մասին:

> «Չար մարդիկ բորբորքված են մեղքով՝ պատրաստ փախչելու,
> երբ ոչ ոք իրենց չի հետապնդում, իսկ ազնիվ մարդիկ հանգիստ, վստահ և համարձակ են՝
> ինչպես առյուծները» (Առակաց 28.1, MSG):

Ահա նրանք՝ հանգիստ, վստահ և համարձակ: Սովորաբար հանգիստ և վստահ լինելը մարդիկ չեն կարողանում կապել համարձակ լինելու հետ, բայց Աստված կապում է դրանք միմյանց հետ: Եվ ես դա կարող եմ տեսնել էգ առյուծի մեջ: Նրա կեցվածքը շարունակ հաղորդում է հետևյալը. «Ես այն եմ, ինչ կամ. հզոր եմ և հմուտ, խաղասեր եմ, նաև՝ մահացու, հանգիստ եմ, կենտրոնացած և հոգատար»:

Ինչպես ցանկացած կին, այնպես էլ էգ առյուծը շատ հակասություններ ունի: Եվ աստվածաշնչյան այս խոսքը վերաբերում է բոլոր առյուծներին. արու, թե էգ, նրանք բոլորն էլ ունեն այս վերաբերմունքը: Հավանաբար այն պետք է նաև մերը դառնա:

Երբ էգ առյուծը որս չի անում, նա ստվերում շարժվելու ոչ մի պատճառ չունի. նա շրջում է լույսի մեջ, միանում է իր քույրերին և կյանքն անցկացնում աֆրիկյան հարթավայրի բաց և լուսավոր տարածքներում: Եվ ահա այդ անստվեր տարածությունում էլ նրանք հանգստանում են, խաղում, միմյանց խնամում, կերակրում, վարժեցնում և նույնիսկ զուգավորվում են: Ինչո՞ւ պետք է նա որևէ ամոթ զգա կամ թաքնվելու կարիք ունենա:

Նրանց աշխարհում չկա մի թշնամի, որ այնքան խիզախ կամ հզոր լինի, որ կարողանա նրանց կռվի բացահայտ մարտահրավեր նետել: Նրանք ոչ մեկի առջևից ետ չեն դառ-

նում (միայն փղերին են ճանապարհ տալիս, երբ վերջիններս սրընթաց վազում են): Երբ էգ առյուծը որս չի անում, նա քողարկվելու ոչ մի կարիք չունի. առյուծներն իրենց տիրույթի անվիճելի արքաներն ու թագուհիներն են և իրենց գոյատևման համակարգում գլխավորում են «սննդային շղթան»:

Եթե շատ շոգ օր է լինում, էգ առյուծը հանգստանում է ստվերում, սակայն դա չի անում թաքնվելու համար: Ի տարբերություն հովազի և հեպարդի, որոնք մենակ են ապրում և որս անում, էգ առյուծը ծառ մագլցելու կամ թփերի մեջ մտնելու կարիք չունի, չնայած որ երկուսն էլ կարող է անել: Ո՛չ, էգ առյուծներն առանց վախենալու հանգստանում են ցերեկվա լույսի ներքո՝ իրենց ձագերի, քույրերի, մորաքույրների, զարմիկների, մոր և արուի հետ:

Ես էլ եմ ցանկանում, որ առանց վախենալու՝ մեր քույրերի, դուստրերի, զարմիկների և մայրերի հետ հանգստանանք արևի տակ և ժպիտով նայենք մեր երեխաներին ու համոզված լինենք, որ մեր միջավայրում չկա մի բան, որ կարողանա մեզ պարտության մատնել:

Ես այս տեսարանին ականատես եղա այն ժամանակ, երբ Ջոնի հետ գտնվում էինք սաֆարիում և հետևում էինք մայր առյուծին, նրա ձագին և երկու ուրիշ էգ առյուծների: Այդ խումբը կարծես աննպատակ թափառում էր աշնանային խոտերի մեջ: Նրանց ստամոքսը լիքն էր, և ես չկարողացա չնկատել, որ նրանց դեմքին արյան հետքեր կային, քանի որ նրանք նոր էին կերել իրենց զոհին և կարծես մի փոքր քնկոտ տեսք ունեին: Հեռվից ծառերի մի շարք նկատեցի և պատկերացրի, որ առյուծները կարող էին գնալ այդ ուղղությամբ, բայց ես սխալվում էի. հենց այդ ժամանակ նրանք փռվեցին ճանապարհի եզրին՝ մեր մեքենայից մոտավորապես տասը ոտնաչափ հեռու, լիզելով մաքրեցին իրենց, պայծառ արևի լույսից փակեցին ոսկեգույն աչքերը և միասին քնեցին մոտավորապես հինգ րոպե:

Առյուծները բոլորովին չանհանգստացան, որ իրենցից քիչ հեռու, հսկա մեքենայի մեջ, զենքերը ձեռքներին մի խումբ մարդիկ կային (զենքերը գտնվում էին պահակների մոտ): Դա առյուծների առավոտյան քնի ժամանակն էր:

ԱՊՐԵԼ ԼՈՒՅՍԻ ՄԵՋ

Ես անմիջապես մտածեցի և պատկերացրի, թե մեզ համար ինչ է նշանակում ապրել լույսի մեջ: Մի դեպքում դա կապված է կյանքդ բացահայտ կերպով ապրելու գաղափարի հետ: Քո սրտի պատուհաններն ու դռները բաց են ընդունելու թե՛ ընտանիքի անդամներին, թե՛ ընկերներին: Մեր տան խոհանոցը միշտ բաց է, որովհետև տղամարդկանցով լցված տանը ինչ-որ մեկի բերանը միշտ բաց է լինում: Սակայն մեր առողջության և կյանքի համար ավելի վճռական բան չկա, քան բաց և լուսավոր սիրտը:

> «Բացե՛ք ձեր կյանքերը, ապրե՛ք բացահայտ և ընդարձակ կյանքով» (Բ Կորնթացիների 6.13, MSG):

Այս հանձնարարությունը շատ պարզ է և ազատագրող, բայց երբեմն՝ սարսափեցնող: Միայն մենք ունենք իշխանություն բացելու մեր կյանքերը: Սկզբում մենք բացում ենք, հետո ապրում բացահայտ կյանքով, իսկ հետո մեր կյանքն ընդարձակվում է. քո կյանքը բացելը և բացահայտ ապրելը երկակի գործընթաց է, քանի որ դու կարող ես *բացել քո կյանքը, սակայն չապրել բացահայտ կյանքով:* Ես գիտեմ մարդկանց, որոնք շատ բան են հայտնում իրենց կյանքի և փոխհարաբերությունների որոշակի բնագավառների մասին, սակայն, եթե նրանք բացահայտ ապրեին, ավելի շատ բան հայտնի կլիներ նրանց մասին: Կան մարդիկ, որոնք իրենց կյանքի մի բնագավառը հայտնում են մեկ ուրիշը քողարկելու նպատակով:

Մինչդեռ, երբ մտորում եմ Պողոսի խոսքերի շուրջ, տեսնում եմ, որ այս հանձնարարականը գրեթե անդիմադրելի է, և դա ստիպում է ինձ մտածել, որ մեր կյանքը բացված նվեր է մեր կենդանի Աստծո համար: Պողոսի խոսքերը նկարագրում են այնպիսի կյանքի պատկերներ, որոնք բաց են ընդունելու այն ամենը, ինչ հայտնվում և բաց է թողնվում Երկնքից: Դրանք բացահայտ և շարունակ ընդարձակվող կյանքեր են:

Ես ցանկանում եմ, որ պատկերացնես, որ քո կյանքը միշտ շարժման մեջ է. այն աճում է, զորանում և տարածվում՝ կապ հաստատելով քեզ շրջապատող աշխարհի յուրաքանչյուր կողմի հետ:

> «Այժմ դուք բաց տարածքում եք, և Քրիստոսի պայծառ լույսը հարթում է ձեր ճանապարհը: Ուստի, այլևս ոչ մի սայթաքում. գնացեք այդ ճանապարհով և գործեք բարին, արդարը, ճշմարիտը, քանի որ սրանք են ցերեկվա ժամերի պատշաճ գործողությունները: Պարզեք, թե ինչն է հաճելի Տիրոջը, և արեք» (Եփեսացիների 5.8-10, MSG):

Լսո՞ւմ ես. ինչպես էգ առյուծը, այնպես էլ դու բաց տարածքում ես, և քեզ համար վախի ոչ մի ստվերոտ տեղ չկա: Չկա ոչ մի ամոթալի, ստվերոտ վայր, որ կարողանա իշխել քո կյանքում: Ինձ դուր է գալիս գործի անցնելու այս կոչը. ճանապարհը հարթ է՝ գնա դրանով:

Այնքան շատ մարդիկ կան, որոնք ցանկանում են իմանալ, թե ինչի համար են կանչված: Լա՛վ, եկեք չբարդացնենք այն, ինչ Աստված այդքան պարզ է դարձրել. Նա կանչել է մեզ անելու այն, ինչը բարի է, արդար և ճշմարիտ: Սրանք այն բաներն են, որոնք մեզ չեն ամաչեցնի, եթե իրականացվեն օրը ցերեկով: Մենք լույսի զավակներ ենք և կանչված ենք գործողություններն իրականացնելու լույսի ներքո: Մենք խուսափում ենք շատ գործողություններից, որոնք կատարվում են ստվերում. պարզում ենք, թե ինչն է հաճելի Աստծուն, այնուհետև գործում ենք:

Մեր կյանքը Քրիստոսում նման է ճառագայթի, որը շարունակ տարածվում և ընդարձակվում է այն ապշահար պահից սկսած, երբ Նրա փառավոր լույսը նվաճեց մեր խավարը: Յուրաքանչյուր նետ կարելի է նմանեցնել լույսի և ջերմության ճառագայթի, որ արձակվում է այդ շեշտադրված ժամանակից:

Ինձ դուր է գալիս, երբ եղանակն այնքան պարզ և տաք է լինում, որ կարողանում ես պատուհանները բաց թողնել և օդափոխել սենյակը: Հրաշալի է, երբ մեղմ քամին փչում, հեռացնում է տան կեղտոտ օդը և միաժամանակ ներս բերում վայրի բնության օդը՝ տան մթնոլորտը լցնելով դրսի անուշահոտությամբ: Հրաշալի է, երբ նոր քաղած խոտի, ծաղկած յասամանների, անանասի խեժի և անձրևի թարմ հոտը լցվում է մարդկանց տան պատերից ներս:

Եվ այդ վայրի բնությունը ներս բերելն է պատճառը, որ մենք այդքան շատ ենք ուշադրություն դարձնում էգ առյուծին, որովհետև ինչ-որ ձևով այն շքեղորեն մարմնավորում է անկաշկանդության և ուժի, հանգստության և վարպետության, վայրիի ու անվտանգի ցնցող հավասարակշռությունը, և հենց այդ մասին է նկարագրում այս խոսքը.

> «Դուք հոգնել և հյուծվե՞լ եք, սպառվել եք կրոնի լծի՞ց. եկե՛ք Ինձ մոտ, *Ինձ հետ եղեք և կվերականգնեք ձեր կյանքը: Ես ձեզ ցույց կտամ, թե ինչպես հանգստանաք, ինչպես քայլեք և գործեք Ինձ հետ. տեսե՛ք, թե ինչպես եմ Ես անում: Սովորե՛ք շնորհքի բնական ռիթմերը:* Ես ձեզ վրա ոչ մի ծանր կամ անհարմար բեռ չեմ դնի: Ինձ հետ մնացե՛ք և կսովորեք ապրել ազատ ու թեթև կյանքով» (Մատթեոս 11.28-30, MSG):

Մենք, որ մեծացել ենք որպես կրոնի դուստրեր՝ ապրելով կրոնական կյանքով, պետք է կրկին սովորենք ինչպես պարել Աստծո հետ: Մեր երեխաներն ունեն այնպիսի բնական ռիթմ, որը ես ու Ջոնը կարծես կորցրել ենք: Երաժշտության հանդեպ նրանց արձագանքն ավելի ազատ է, քան մերը, որովհետև մեզ սովորեցրել են ճնշել այն երաժշտության հանդեպ արձագանքները, որը ստեղծվել է եկեղեցուց դուրս: Եվ սա մեզ դարձնում է ավելի կարծր, քան՝ արձագանքող: Շնորհքի բնական ռիթմերը մեր հոգում Աստծո գերբնական աշխատանքի նկատմամբ բնական արտահոսքն ու արձագանքն են:

Սիրելինե՛րս, մի՞թե դուք պայքարում և տանջվում եք, երբ աշխատում եք Աստծո համար: Արդյո՞ք մոռացել եք, թե ինչ է նշանակում ապրել Նրա հետ: Երբեմն մենք հիշեցման կարիք ունենք: Ես գիտեմ, որ հաստատ դրա կարիքն ունեմ: Մեկ տարի առաջ ես պայքարի մեջ էի: Դուք եղե՞լ եք այնպիսի իրավիճակում, երբ անընդհատ լարված եք: Միգուցե ձեզ հետ չի պատահել, սակայն ես դա վերապրել եմ այն ժամանակ, երբ պետք է ունենայի մի հանդիպում, որին դեռ երեք ամիս կար:

Ես իմ պայքարի մասին բացահայտ խոսեցի ընկերուհուս հետ, և նա իմ անհանգստության հետ կապված մի իմաստուն խորհուրդ տվեց: Նա քաջալերեց՝ ասելով, որ ինձ ընդամենը

հարկավոր է իմ բաժինը բերել Աստծո մոտ, և հունձքի փառավոր Տերը այն կբաժանի ու կբազմացնի: Ես շունչ քաշեցի և հիշեցի, որ մեր Աստված կարող է այդ թվացյալ քիչը շատերին բաժանել:

Կրկին սովորենք, թե ինչպես պետք է ազատ և թեթև ապրել: Մեղանչումից հետո մեր ունեցած դիրքը մեր գործերն էին ու պայքարը, սակայն փրկագնումից հետո այն դարձավ մեր հանգիստը:

> «Եվ դա ամբողջը չէ. մենք մեր դռները լայն բացում ենք Աստծո առջև և միևնույն ժամանակ հայտնաբերում ենք, որ Նա արդեն Իր դուռը լայն բացել է մեզ համար: Մենք կանգնած ենք այնտեղ, որտեղ միշտ հուսացել ենք կանգնել. Աստծո շնորհքի և փառքի ընդարձակ տարածքներում՝ փառաբանելով Նրան» (Հռոմեացիների 5.2, MSG):

Ինձ դուր է գալիս այս բաց հրավերը: Որովհետև շատ վաղուց բազմաթիվ դռներ և պատուհաններ էին փակվել մեր կողմից և մեր առջև: Միայն դու, սիրելի՛ս, իշխանություն ունես բացելու և փակելու քո կյանքի դռներն ու պատուհանները: Դո՛ւ ես դռնապանը, ով իշխանություն ունի ընտրելու, թե որ դռները բացի, և որը՝ փակի: Իհարկե, սահմաններ դնելը կարևոր է, սակայն Աստված Մեկն է, Ում հանգիստ կարող ես ներս հրավիրել: Երբ Նրա առջև բացում ես քո կյանքի դարպասները, հայտնաբերում ես, որ ժամանել ես հույսի մի վայր, որը բաց է Աստծո շնորհքի և փառքի համար:

Այս բացահայտումը շարունակվում է հետևյալ խոսքում:

> «Մենք գաղտնիքներ չենք պահում, մենք հայտնում ենք դրանք. մենք ոչ մի բան չենք թաքցնում, մենք հայտնի ենք դարձնում դրանք» (Մարկոս 4.22, MSG):

Այս խոսքը քեզ է վերաբերում. Աստծո բարությունը գաղտնի կերպով չի պահվում քեզնից: Նա սիրել է քեզ հավիտենական սիրով և քեզ դուրս է հրավիրում Իր սրտացավությունից մղված: Ինչպես Աստված է հայտնում Իր գաղտնիքները, դու էլ հանգիստ կարող ես հայտնել Նրան քո՛ գաղտնիքները:

Ազատագրող զորություն կա նրանում, երբ դու գիտես, որ չունես ոչ մի գաղտնի մեղք կամ ամոթ, և դու զորանում ես, երբ գիտակցում ես, որ Աստված գիտի նույնիսկ քո ամենամութ գաղտնիքները, և դեռ շարունակում է բացահայտ կերպով հռչակել Իր սերը քո հանդեպ:

Ի պատասխան՝ Նա խնդրում է, որ մենք նույնն անենք: Աստծո ուղերձն այն մասին, որ Հայր Աստված սեր է, և Նրա միածին Որդին՝ Հիսուսը, մահացավ մեզ հաշտեցնելու համար, չափազանց մեծ է և շռայլ՝ մեզ լուռ պահելու համար: Ավետարանը գաղտնիք չէ. այն Աստծո սիրո ուղերձն է:

Ո՞վ ենք մենք, որ մեր երկնային Հայրն այդքան մտածում է մեր մասին և այդպիսի փառավոր նվեր է շնորհել: Նա հայտնել է Իր սիրո ծրագիրը և խնդրել է մեզ այն ձրի կիսել բոլորի հետ, ինչպես որ մեզ տրվեց: Յուրաքանչյուր մարդ արժանի է լսել Աստծո սիրո մասին:

Երբ դու կարդացիր բաց տարածքներ ոտք դնելու Աստծո հրավերի մասին, միգուցե գիտակցեցիր, որ քո կյանքում կան բնագավառներ, դռներ, որոնք դեռևս փակ են: Դա կարող է լինել վախի կամ ամոթի փակված վայրը, դուռը կամ պատուհանը, որ վախենում ես բացել... Ես հասկանում եմ քեզ:

Հաճախ երբ մեր ընտանիքը ճանապարհորդում է, մենք հյուրանոցում հարևան սենյակներ ենք վարձում: Այդ սենյակները կողք-կողքի են, սակայն նրանց միջև երկու դուռ կա, և մի սենյակից մյուսն անցնել չես կարողանա, մինչև երկու դռներն էլ բաց չլինեն: Մտնելով սենյակ՝ ես և Ջոնն անմիջապես բացում ենք մեր դուռը, իսկ մի փոքր ուշ՝ իրերը տեղավորելուց և հագուստները փոխելուց հետո, իրենց դուռն են բացում մեր տղաները: Երբ երկու դռներն էլ արդեն բաց են, մենք նրանց մոտ մտնելու հնարավորություն ենք ունենում, իսկ նրանք էլ՝ մեզ մոտ: Եվ այդ ժամանակ կարող ենք ազատ ելումուտ անել երկու սենյակներով:

Սիրելի՛ս, բացի՛ր դուռը. մյուս կողմում ընտանիքով լի լուսավոր սենյակ կա: Մի՛ վախեցիր, Աստված չի փակել Իր դուռը քո առջև, և ո՛չ էլ նախկինում բացված դուռը կփակվի քո առջև. Նրա դուռը բաց է, պարզապես բացի՛ր քո կողմի դուռը:

Ես առաջարկում եմ քեզ Աստծո առջև բացել յուրաքանչյուր ցավոտ բնագավառ: Թո՛ւյլ տուր, որ Նրա լույսը քո կյանքից հեռացնի ստվերի ամեն նշույլ:

Քո հոգու թշնամին ցանկանում է, որ մնաս ստվերում: Խավարը բարդացնում և խճճում է այն, ինչը պարզ և ակնհայտ է լույսի մեջ: Մեր Աստված ոչ միայն ցանկանում է, որ ապրենք լույսի մեջ, այլև ցանկանում է, որ թեթև ապրենք: Դու կարող ես քայլել առանց բեռի, և դա կարող է տեղի ունենալ հենց հիմա. սա է աղոթքի գեղեցկությունն ու զորությունը:

Ես մի քանի խոսք եմ գրել, որ օգնեմ քեզ բացելու քո դուռը, սակայն դու պետք է թույլ տաս, որ քո սիրտն առաջնորդի քեզ այս աղոթքում.

> «Սիրելի՛ երկնային Հայր.
>
> Քեզ մոտ եմ գալիս Հիսուսի անունով: Ների՛ր ինձ, որ երբևէ թաքնվել եմ: Ես ցանկանում եմ մտնել լույսի մեջ և բացում եմ ցանկացած փակ դուռ՝ ոտք դնելով քո սիրո լույսի ու բարության մեջ: Ես ընդունում եմ իմ ներվելու իրավունքը և ընտրում եմ քայլել ճշմարտության մեջ, որովհետև միայն դա է ինձ հաստատում ազատության մեջ: Ես Քոնն եմ և հանձնվում եմ Քո սիրուն: Ես կհետևեմ Քո բոլոր ճանապարհներին: Լուսավորի՛ր իմ առջև դրված ճանապարհը: Ամե՛ն»:

ԳԻՇԵՐԱՅԻՆ ՏԵՍՈՂՈՒԹՅՈՒՆ

Այժմ, լույսի՛ քույր, ցանկանում եմ քեզ հետ խոսել էգ առյուծի մեկ այլ կարևոր հատկանիշի մասին: Ինչպես գիտեք, էգ առյուծներն ապրում են լույսի մեջ և որս են անում խավարում: Բայց ինչպե՞ս են նրանք կարողանում մթության մեջ որս անել: Արդյո՞ք դա նրանց հոտառության սուր զգացողության կամ լավ լսելու ընդունակության շնորհիվ է: Ամենևին՝ ո՛չ:

Մեր քույր առյուծները կարողանում են տեսնել խավարում. բայց ինչպե՞ս:

Էգ առյուծները և կատվազգիներին պատկանող մյուս կենդանիները լույսը բեկելու, ապա արտացոլելու և որսալու

առանձնահատուկ կարողություն ունեն: Նրանք ընդունակ են միջավայրի ցանկացած լույս փոխակերպելու տեսողության: Լիակատար խավարում էգ առյուծը նույնքան կույր է, որքան ես և դու: Սակայն եթե խավարի մեջ լույսի նշույլ թափանցի, այն տեսնելու հնարավորություն կտա: Նույնիսկ լուսնի ստվերը կամ աստղերի հեռավոր փայլը նպաստում է էգ առյուծի գիշերային տեսողությանը:

Նրանց աչքի բիբը, որի միջոցով լույսը թափանցում է աչքերի մեջ, տարբերվում է մեր աչքի բիբից: Եվ սա նրանց կարողություն է տալիս կենտրոնացնելու իրենց տեսողությունը այն դեպքում, երբ ուրիշները ոչինչ չեն կարողանում տեսնել: Ինչ-որ առումով այն լույսը, որ նրանք տեսնում են, ավելի շուտ գալիս է իրենց աչքի միջից, քան միջավայրից: Սա է պատճառը, որ կատվի աչքերը երբեմն փայլում են խավարում: Նրանք կլանում և արտացոլում են ցանկացած լույս, որ հասանելի է իրենց:

Մենք պետք ավելին անենք: Քանի որ այս աշխարհի խավարը հետզհետե ավելանում է, մեր շրջապատում չի լինի բավարար լույս, որպեսզի կլանենք: Ուստի, ժամանակն է լույսի աղբյուր ունենալ մեր ներսում և կենտրոնանալ այդ լույսի աղբյուրի վրա:

> «Եվ եթե ասեմ՝ թող խավարն ինձ ծածկի,
> այն ժամանակ գիշերն էլ լույս կլինի իմ շուրջը:
> Մութն էլ քեզ համար խավար չէ,
> գիշերն էլ ցերեկի պես լույս է. խավարն էլ
> լույսի պես է քեզ համար» (Սաղմոս 139.11,12):

Եթե երբևէ էգ առյուծի գիշերային տեսողության այս հմտությունն ունենալու կարիք լինի, ապա՝ հիմա է: Իհարկե, շատերը կարող են ցերեկով տեսնել, սակայն ես առաջարկում եմ զարգացնել խավարում տեսնելու կարողությունը: Այն լույսը, որն օգնում է էգ առյուծներին տեսնել, իրենց աչքե-

> Աստված հիպոթեզ չէ, որ բխել է տրամաբանական ենթադրություններից. Նա ակնհայտ է, ինչպես լույսը: Նա մի բան չէ, որին պետք է որոնել խավարի մեջ բանականության լույսով: Նա՛ է լույսը:
> – ԱԲՐԱՀԱՄ ՋՈՇՈՒԱ ՀԵՇԵԼ

րի միջի լույսն է: Եվ եթե մենք լուսավորվենք ներսից, ապա չենք ենթարկվի մեզ շրջապատող խավարին: Անելով սա՝ կբարելավվի մեր տեսողությունը, և մենք կունենանք ավելի մեծ հնարավորություններ և առավելություններ Աստծո մեջ:

Աստված լույս է, և Նրանում խավար չկա. արդյո՞ք մենք իսկապես կարող ենք ընկալել սա մեր մտքով: Որտեղ կա լույս, այնտեղ կա տեսողություն: Որտեղ կա տեսողություն, այնտեղ կա հույս և տեսանելիություն: Որտեղ կա տեսանելիություն, այնտեղ կա հայտնություն:

Ես հիշում եմ առաջին խոսքը Եփեսացիների առաջին գլխից, որը նվիրել էին ինձ նամակի միջոցով:

> «Որ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Աստվածը՝ Փառքի Հայրը, տա ձեզ Իմաստության և Հայտնության Հոգին՝ Իր գիտությունով, որ *ձեր սրտերի աչքերը* լուսավորվելով՝ գիտենաք, թե ինչ է Նրա կոչումի հույսը...» (Եփեսացիների 1.17,18):

Այս հատվածը դարձավ իմ ամենօրյա աղոթքը: Ես ամեն գիշեր փակում էի աչքերս, շշնջում էի այն և Աստծուն հրավիրում էի իմ երազների մեջ: Ցերեկը, նախքան Սուրբ Գիրքը կարդալը, ես հռչակում էի Նրա տված խոստումները: Ես ամբողջությամբ կլանվել էի աստվածաշնչյան հետևյալ խոսքերով՝ լուսավորված աչքեր, որոնք կարողություն ունեն տեսնելու, թե ինչպես է երկինքն ուղեկցում երկրին:

Ինչին նայում ես, այն էլ դառնում ես, և ինչ տեսնում ես, այն էլ արտահայտում ես: Ես վախենում եմ, որ մենք մեր ուշադրությունից բաց ենք թողել այն հսկայական հրաշքը, որ Նա ունի մեզ համար. *Աստվա՛ծ, տո՛ւր մեզ աչքեր, որ տեսնենք:*

Այս խնդրանքը հայտնում է, թե որքան մաքուր և մանկական պարզություն պետք է ունենա մարգարեական տեսիլքը: Մենք դրա արձագանքը տեսնում ենք Սամուելին ուղղված Հեղիի խոսքի մեջ:

> «...Գնա՛ պառկիր, և եթե քեզ կանչի, ասա. «Խոսի՛ր, Տե՛ր, որովհետև Քո ծառան լսում է...»» (Ա Թագավորաց 3.9):

Երբ մանուկ Սամուելը հանգստանում էր, Աստծո ձայնը կանչեց և արթնացրեց նրան: Մենք էլ պետք է նույն կերպ արձագանքենք. «Խոսի՛ր, Տե՛ր, որովհետև Քո ծառան լսում է»:

Սամուելը միայն վերապրել էր Աստծուն, Ով կանչել էր նրան անունով: Սակայն մինչև Սամուելը պատասխան չտար և չիրավիրեր Աստծուն խոսելու իր հետ, նա չէր կարողանա հետագայում խոսել Աստծո անունով:

Մեզնից քանի՞սն են վերապրել Աստծուն, Ով կանչում է մեզ անունով: Հավատացե՛ք, ես չեմ թերագնահատում այդ փորձառությունը, սակայն դա միայն սկիզբն է: Եկե՛ք ավելի առաջ գնանք, որին փափագում է յուրաքանչյուրս: Մենք փափագում ենք իմանալ Աստծո խորհուրդը և գործել Նրա հետ, որն էլ նշանակում է թույլ տալ Նրան խոսել մեր միջոցով:

> «Այն ժամանակ Տերը Սամուելին ասաց. «Ահա Ես Իսրայելի մեջ մի բան կանեմ, որ ամեն նրան լսողի երկու ականջները կինչեցնեն»» (Ա Թագավորաց 3.11):

Ես չեմ կասկածում, որ նույնիսկ հիմա Աստված ասում է մեզ. «Դուստրե՛ր, լսե՛ք ուշադիր: Ես պատրաստվում եմ երկրի վրա մի բան անել, որը կցնցի ամեն ինչ և կգրավի աշխարհի ուշադրությունը»: Աստված փափագում է ունենալ մի ժողովուրդ, որն իր վրա կկենտրոնացնի աշխարհի ուշադրությունը:

Սամուելի օրերում Տիրոջ ձայնը հազվադեպ էր լսվում, և Աստծո ժողովրդի զոհաբերությունը և Աստծո երկրպագությունը արհամարհվում էին: Սեռական մեղքը տիրում էր տաճարում: Հոգևոր առաջնորդն անկարող էր կամ չէր կամենում սանձել իր որդիներին, որովհետև նա անխուսափելիորեն շահում էր իր որդիների օրինազանցություններից:

Ի պատասխան, Աստված երես թեքեց Հեղիի տնից և արթնացրեց մի նվիրված պատանու, ում կարող էր վստահել: Մեր ժամանակի հանցանքներն այնքան էլ չեն տարբերվում նրանց հանցանքներից, և այսօր Աստված ունի զավակներ, որոնք արթուն և կենդանի են:

> «Բայց Սամուել մանուկը կյանքով լեցուն էր և օրեցօր մեծանում էր. Աստծուց օրհնված էր, և մարդկանց կողմից՝ ճանաչված» (Ա Թագավորաց 2.26, MSG):

Ես տեսել եմ երիտասարդների, որոնք հենց այսպիսին են՝ *կյանքով լեցուն,* Աստծուց օրհնված և մարդկանց կողմից ճանաչված: Երկինքը բաց է նրանց համար, և Աստված ցանկանում է, որ նրանք լինեն մեր կողքին, որպեսզի միասին անենք Նրա գործը:

Եվ որպեսզի դա տեղի ունենա, մեր աչքերը պետք է տեսնեն այն, ինչ Աստված անում է, իսկ մեր ականջները պետք է լսեն այն, ինչ Նա ասում է, և մենք պետք է կարողանանք այնպես հայտնել Նրա Խոսքը, որ այն հեռացնի մարդկանց սրտի արգելքները:

Այս լույսի ներքո ցանկանում եմ, որ այս գրքի էջերը մարգարեական լինեն քեզ համար: Եվ ցանկանում եմ, որ դու ակնկալես ու թույլ տաս, որ նրանք դիպչեն քո ներսում թաքնված հրաշքին: Իմացի՛ր, որ այս գրքի աստվածաշնչյան խոսքերը, օրինակներն ու հատվածները կարող են բորբոքել կամ արթնացնել քո ներսի Աստծո պարգևը:

Սուրբ Հոգին է, որ լայնացնում է քո կյանքի «արգանդը» և մեծացնում է քո լսելու, տեսնելու և հասկանալու կարողությունը:

Մի օր, հավաքույթից հետո, մի գեղեցիկ երիտասարդ կին, ում Աստված հզոր ձևով օծել է, մոտեցավ ինձ ու ասաց. «Ամեն անգամ ձեզ լսելիս իմ ներսի երեխան շարժվում է»: Նա երեխայի չէր սպասում, համենայն դեպս, այդպես էր երևում: Նա նկատի ուներ, որ իր ներսում Աստծուց դրված ինչ-որ բան էր շարժվում, և իրականում չգիտեր, թե ինչպես դա արտահայտեր:

Միգուցե դու էլ ես զգացել, որ քո ներսում ինչ-որ բան է բորբոքվում, սակայն, հիմա հակառակվում ես դրան և ասում. «Ես մարգարե չեմ: Ես տնային տնտեսուհի եմ, դեռահաս աղջիկ, զբաղված գործարար կին կամ տատիկ»: Միգուցե երբ դու լսում ես *մարգարե* բառը, մտաբերում ես բանտարկված Երեմիային կամ կետի փորում հայտնված Հովսանին:

Ես համաձայն եմ, որ քո կյանքը շատ է տարբերվում

նրանց կյանքից: Եվ թերևս դու մարգարե չես, սակայն ես պնդում եմ, որ դա չի նշանակում, որ մարգարեական հոգի չունես:

Մարգարեական հոգի ունենալ՝ նշանակում է լինել և՛ հեռատես, և՛ տեսիլքի մարդ, ինչը քեզ կանխատեսելու ռազմավարական ընդունակություն է տալիս: Նույնիսկ մեր աղոթքներում ենք կանխատեսումներ անում: Մենք գիտենք, որ Աստված լսում է, այդ պատճառով գիտենք, որ Նա մեզ կպատասխանի և ցույց կտա մեծ ու հզոր բաներ, որոնց մասին չգիտենք: Մենք աղոթում և սպասում ենք:

Նախքան Հիսուսի գալը, փարիսեցիներն արդեն կորցրել էին իրենց տեսնելու կարողությունը: Հիսուսի կյանքն ու խոսքերը մշտապես հանդիմանում էին փարիսեցիներին՝ կուրության համար, ինչը զայրացնում էր նրանց: Հովհաննեսի 5-րդ գլխում Հիսուսը կրկին բարկացրեց նրանց, բայց այս անգամ այն պատճառով, որ շաբաթ օրը բժշկություն արեց: Չէ՞ որ սա քանդում էր նրանց Շաբաթի օրենքը: Սակայն կարևոր է նկատել, որ այն, ինչ Հիսուսն արեց, Աստծո պատվիրանը պահելով արեց, որովհետև այն պատվիրում էր հիշել և սուրբ պահել Շաբաթը և պատվել Աստծո ժողովրդին:

Ի՞նչը կարող է ավելի սուրբ համարվել, քան կաղ մարդուն բժշկելը: Նրանց կարծիքով, սուրբ կհամարվեր ոչինչ չանելը կամ, եթե պետք է բժշկել, ապա գոնե շաբաթվա մեկ ուրիշ օր լիներ: Կանոնների և օրենքների մեջ կուրացած՝ նրանք շարունակ սայթաքում էին:

> «Եվ Հիսուսը պատասխանեց նրանց. «Իմ Հայրը մինչև հիմա գործում է, և Ես էլ գործում եմ»:
>
> Նրա համար հրեաներն էլ ավելի ուզում էին սպանել Նրան. որ ոչ թե միայն շաբաթ օրն էր քանդում, այլ Աստծուն էլ Իրեն Հայր էր ասում՝ Իր անձն Աստծուն հավասար անելով:
>
> Հիսուսը պատասխանեց և ասաց նրանց. «Ճշմարի՛տ, ճշմարի՛տ ասում եմ ձեզ, թե՝ Որդին Իրենից չի կարող ոչինչ անել, *եթե չտեսնի Հորն անելիս, որովհետև՝ ինչ որ Նա անում է, հենց Որդին էլ այն բանը Նրա նման է անում:* Որովհետև Հայրը սիրում

> է Որդուն *և ամեն բան ցույց է տալիս Նրան, որ Ինքն անում է*...»» (Հովհաննես 5.17-20):

Շաբաթը վերաբերում է ոչ թե աշխատելուն, այլ Աստծո գործի մեջ հանգստանալուն: Հիսուսի դիպուկ խոսքը մի շարք հարցերի տեղիք տվեց, որոնց պետք է պատասխանել:

Առաջին՝ արդյո՞ք դու Աստծո դուստր ես:

Դու ցանկանո՞ւմ ես տեսնել, թե ինչ է ասում քո Հայրը:

Դու ցանկանո՞ւմ ես ներգրավված լինել:

Դու ցանկանում ես լույսը կրող լինել, թե՞ խավարը մատնանշող:

Դու երջանի՞կ ես, որ այս քրիստոնեական կյանքն ինքնուրույն ես ապրում:

Դու ցանկանո՞ւմ ես Նրա հրաշքը բերել այս չարչարված, հիասթափված, վիրավոր և կործանվող աշխարհին:

Հիսուսը արտասովոր չէր, սակայն ուր գնում էր, Աստծո հրաշքն էր բերում: Եթե Հիսուսը՝ Աստծո Որդին, Ինքն Իրենով ոչինչ չէր կարող անել, ապա մենք էլ մեզնով ոչինչ չենք կարող անել, մինչև մեր միտքը չլուսավորվի Սուրբ Հոգով: Ինչպես Նա էր քայլում, այնպես էլ մենք պետք է քայլենք. Նա խոստացել է օգնել մեզ: Սա ընդգծելու համար կվերանայենք Գործք առաքելոցի 2-րդ գլուխը.

> «Եվ կլինի հետին օրերում,- ասում է Աստված,-
> որ Իմ Հոգուց կթափեմ ամեն մարմնի վրա,
> և ձեր որդիները և ձեր աղջիկները կմարգարեանան,
> և ձեր երիտասարդները տեսիլքներ կտեսնեն, և ձեր
> ծերերը երազներ կտեսնեն:
> Եվ Իմ ծառաների վրա և Իմ աղախինների վրա էլ
> այն օրերում Իմ Հոգուց կթափեմ, և կմարգարեա-
> նան: Եվ նշաններ կտամ վերևը՝ երկնքում, և նշան-
> ներ կտամ ներքևը՝ երկրում, արյուն և կրակ և ծխի
> մառախուղ: Արեգակը խավար կդառնա, և լուսինը՝
> արյուն, Տիրոջ մեծ և երևելի օրը դեռ չեկած: Եվ
> կլինի՝ նա, ով որ Տիրոջ անունը կկանչի, կփրկվի»
> (Գործք 2.17-21):

Այս վերջին օրերին դեռ հողմաշունչ խոսքերի խոստում կա: Հավատացեք ինձ, առաջին հայացքից ես զարմանում եմ, թե ինչու Աստված մեզ ընտրեց: Երբ ճանապարհորդում եմ աշխարհով մեկ և նայում եմ շուրջս, մտածում եմ, որ սա այն ժողովուրդը կամ ժամանակահատվածը չէ, որ կարելի էր ընտրել Նրա Հոգին թափելու համար: Ես կընտրեի ավելի լավ, ավելի մաքուր և ավելի անվտանգ ժամանակ, երբ ամեն բան այդպես խճճված և անորոշ չէր լինի:

Մտածում եմ, որ ամենանպաստավոր ժամանակը կլիներ մ.թ. 50-ական թվականները՝ նախքան քրիստոնյաներին սպանելը: Բայց այն ժամանակ ինչ վիճակում մենք կհայտնվեինք կամ, միգուցե, դու չես ցանկանում կամ կարիք չունես Հոգու թափմանը: Միգուցե քո եկեղեցին չի՞ հավատում դրան: Սակայն, իրականում, կարևոր չէ, թե ինչ եմ ես ասում, կամ ինչ ես դու ուզում: «Եվ կլինի հետին օրերում,- ասում է Աստված,- որ Իմ Հոգուց կթափեմ ամեն մարմնի վրա»:

Ինձ թվում է, որ վերջին օրերում Նա թե՛ ժողովուրդ կունենա, թե՛ Իր ասելիքը կասի: Իսկ ի՞նչ է դա նշանակում, և ինչպիսի՞ն կլինի Նրա Հոգու թափվելը: Եկե՛ք ավելի խորը ուսումնասիրենք և նկարագրենք Հոգու թափվելու ընթացքը:

Մոտավորապես 2000 տարի առաջ Սուրբ Հոգին ուղարկվեց երկիր՝ Հիսուսին հայտնելու և մոտավոր ու հեռավոր հավատացյալների սրտերը նորոգելու համար: Այնպես որ, Սուրբ Հոգին ակտիվորեն գործում է Քրիստոսի մարմնի, այսինքն՝ եկեղեցու մեջ և նրա միջոցով: Սակայն ես դժվարանում եմ Հոգու թափվել անվանել այն, ինչ մենք հիմա ունենք:

Այսպիսով, ի՞նչ է Հոգու թափվելը:

Սա բացահայտելու համար պետք է իմանանք «հոգի» բառի նշանակությունը: Հոգին ունի չորս առանձին իմաստ: Առաջին իմաստը «ուժն» է, որի ներքո մենք կարող ենք տեսնել հետևյալ նշանակությունները՝ *խիզախություն, բնավորություն, կամք, ուժ, տոկունություն, բարոյական ջիղ, իմաստություն, նպատակասլացություն, հանդգնություն, սիրտ և ավյուն:*

Հետևյալ խոսքը օրինակ է, թե ինչպես է Հոգու թափման արդյունքում մարդը համարձակություն և ֆիզիկական ուժ ստանում:

> «Եվ Տիրոջ Հոգին նրա վրա եկավ, և նա նրան պատառեց՝ ինչպես մի ուլ կպատառեն, և ձեռքում մի բան չկար...» (Դատավորաց 14.6):

Այս օրինակն այնքան էլ նման չէ աղավնու պես իջնող Հոգու պատկերին:

Հոգու՝ որպես իմաստության և բարոյական տոկունության օրինակը կարող է լինել այս խոսքը.

> «Եվ նրա վրա կհանգչի
> Իմաստության և Հանճարի Հոգին,
> Խորհրդի և Զորության Հոգին,
> Գիտության և Տիրոջ երկյուղի Հոգին» (Եսայի 11.2):

Նաև.

> «Սուրբ սիրտ ստեղծի՛ր ինձանում, ո՛վ Աստված,
> և ուղիղ հոգի նորոգի՛ր իմ ներսում» (Սաղմոս 51.10):

Իսկ սա Հոգու՝ որպես կարողության և հմտության օրինակ է.

> «Եվ լցրի նրան Աստծո Հոգով՝ իմաստությունով և հանճարով և ամեն ճարտարությունով» (Ելից 31.3):

Եվ վերջում՝ ահա մի աստվածաշնչյան համար, որտեղ Հոգին ներկայացվում է որպես սիրտ.

> «Եվ նրանց պիտի մեկ սիրտ տամ և նոր հոգի պիտի դնեմ ձեր ներսում և պիտի հեռացնեմ քարե սիրտը նրանց մարմնից և նրանց մի մսեղեն (անգլ.-ում՝ փափուկ) սիրտ տամ» (Եզեկիել 11.19):

Հոգու երկրորդ հիմնական սահմանումը կապված է «անձ» բառի հետ: Այս իմաստին մոտ են *ներսի մարդ, կյանքի շարժիչ ուժ և էություն* բառերը:

> «Մարդկային հոգին կարող է դիմանալ հիվանդ մարմնին, բայց ո՞վ կարող է տանել կոտրված հոգին» (Առակաց 18.14):

> «Ուրախ սիրտը կզվարթացնի երեսը, բայց սիրտը վշտանալիս՝ *հոգին կճնշվի»* (Առակաց 15.13):

Հոգու հաջորդ սահմանումն է՝ «ոգի, ուրվական, երևույթ» (միանգամայն համոզված եմ, որ կարիք չկա ավելի խորն ուսումնասիրել սա):

Եվ վերջում՝ հոգին սահմանվում է որպես «ընդհանուր զգացողություն, վերաբերմունք, տրամադրություն, հակում և մթնոլորտ»: Դուք հավանաբար լսած կլինեք, որ մարդիկ ասում են. «Այստեղ լավ հոգի կա»: Նրանք չեն խոսում հոգու կամ աղավնու մասին, այլ՝ մթնոլորտի կամ զգացողության մասին: Ավելի, քան հավանական է, որ նախքան առաջին անգամ Սուրբ Հոգու թափվելը, երբ մարդիկ միաբան հավաքված էին վերնատանը, այնտեղ տիրում էր մի մթնոլորտ, տրամադրություն կամ հոգի, որը պատրաստ էր ընդունելու և պատվելու այն, ինչ Աստված կկամենար անել:

> «Որովհետև Տերն է Հոգին. որտեղ որ Տիրոջ Հոգին է, այնտեղ ազատություն է» (Բ Կորնթացիների 3.17):

Այսպիսով, այստեղ մենք տեսնում ենք, որ Հոգին ստեղծում է ազատության մթնոլորտ՝ Աստծուց որևէ բան ստանալու համար:

Հավանաբար նկատեցիք, որ ես *հոգի* բառը չսահմանեցի որպես լեզուների պարգև: Լեզուների պարգևը Սուրբ Հոգու ներկայության դրսևորումներից կամ ապացույցներից է, սակայն այն Սուրբ Հոգու լիարժեք արտահայտումը չէ:

Աստվածաշնչում տեսնում ենք, թե ինչպես է Սուրբ Հոգին դրսևորվում վերը նշված ձևերով: Հոգին Սամսոնին լցրեց գերմարդկային ուժով, որպեսզի նա կարողանար տաճարը փուլ տալ փղշտացիների վրա: Եղիան վազելով անցավ թագավորի կառքից: Աստծո համարձակությունն իջավ Գեդեոնի վրա, և նա առանց զենքի համախմբեց բանակն ու պարտության մատնեց ժողովրդի կեղեքիչներին: Հոգու զորությամբ Դեբորան, որը անապատում միայնակ մի կին էր, զորք հավաքեց՝ Իսրայելի թշնամի կեղեքիչների դեմ պայքարելու համար: Հոգու զորությամբ Հիսուսը ամենուրեք ցույց տվեց Աստծո բնավորությունը:

Իսկ հետո մեր հերթն է. Աստվածաշնչում ասվում է, որ մեր օրերում սրտերը կմոլորվեն և կնվաղեն վախի պատճառով: Ինչպե՞ս կարող ենք հաղթել այս վախը. միգուցե պետք է աստվածային խիզախությո՛ւն թափվի...

Քանի որ մենք ապրում ենք մարգարեական վերականգնման ժամանակաշրջանում, երբեմն մարդիկ կարող են տեսնել այն, ինչ կա հորիզոնում, սակայն դա կրկնելը կամ ասելը անբնական և բռնի կարող է թվալ: Ձեզնից ոմանք միգուցե անցյալում ականատես են եղել մարգարեական շարժումների, որը մի փոքր տարօրինակ կամ սխալ է թվացել:

Լա՛վ, եկեք ավելի պարզ լինենք. Աստծուն այդքան էլ չեն հետաքրքրում ինչ-որ պաշտոններ կամ տիտղոսներ ունեցող մարդիկ: Նրան հետաքրքրում են Իր սրտի համեմատ մարդիկ: Մենք մարգարեական հոգի ենք ստացել միայն այն պատճառով, որ ծնվել ենք այս ժամանակահատվածում: Դա ինչ-որ սեմինարի մասնակցելու շնորհիվ չէ, այլ՝ որ Սամուելի պես մենք էլ ուշադրություն դարձրինք մեր Աստծուն: Սեմինարի մեջ ոչ մի սխալ բան չկա, պարզապես սա ավելին է, քան սեմինարը:

Աստված երբեք նկատի չի ունեցել, որ մարգարեական պարգևը պետք է լինի բացառիկ, ընտրովի կամ սահմանափակ: Նա նախատեսել է, որ արարչագործությունը, մարգարեական վերապրումները բացեն մեր աչքերը՝ տեսնելու, ականջները՝ լսելու, բերանը՝ խոսելու և սրտերը՝ հասկանալու համար:

Թեև հասկանալով, որ կարող եմ չափից ավելի հասարակ պատկերել մարգարեական պարգևը, այնուամենայնիվ ցանկանում եմ մի քանի ուղեցույց տալ, որոնք ձեռք եմ բերել՝ ուսումնասիրելով իմ սիրելի Եսայի մարգարեի մարգարեությունները: Նրա ոգեշնչող մարգարեական գրքերից մենք սովորում ենք հետևյալը.

> «...և Նա կսովորեցնի մեզ Իր ճանապարհներից, և մենք կգնանք Նրա շավիղներով...» (Եսայի 2.3):

Ինձ դուր է գալիս սա: Աստված մեզ հայտնում է, թե ինչպես է Նա գործում, որպեսզի կարողանանք ապրել այնպես,

ինչպես ստեղծվել ենք. մենք ստեղծվել ենք մեր Աստծո հետ ներդաշնակ ապրելու համար: Նա ցանկանում է մեզ հայտնել Իր ճանապարհներն ու գործերը: Այս լույսի ներքո Եսայի 49-րդ գլխում գտել եմ մի քանի հիմնական ցուցումներ, որոնց Պողոսն անդրադառնում է Հռոմեացիների 9-րդ գլխում.

1. Վե՛ր նայիր:
2. Շո՛ւրջդ նայիր:
3. Լա՛վ նայիր:
4. Առա՛ջ նայիր:
5. Ասա՛ ճշմարտությունը:

Առաջինն է՝ *վե՛ր նայիր:* Եթե չգիտես՝ ինչպես վեր նայել, ապա պարզապես կարդա Հայտնության գիրքը՝ երկնային տեսանկյուն ունենալու համար: Խնդրում եմ, մի՛ մտածիր, որ այդ գիրքը վերջին ժամանակների մարգարեական ձեռնարկ է, որը միայն վախ է ներշնչում: Դա հայտնությունների հավաքածու է Նրա մասին, որ «էր» և որ «է» և որ «գալու է»: Աստված կախված չէ ժամանակից. Նա հավերժ է և հաճախ մեզ հետ խոսում է հենց այդ դիրքից:

Քոլեջում ես մի ամբողջ կիսամյակ տրամադրեցի Հայտնության գրքին և մինչև հիմա զարմանում եմ, թե ինչպես են մարդիկ փորձում հարմարեցնել այդ գրքի իրադարձությունները մեր ժամանակներին: Ես նույնիսկ կասկածում եմ, որ Հովհաննեսը, ով գրել է Հայտնության գիրքը, հասկացել է այն ամենը, ինչ շարադրել է այդ գրքում: Երբեմն բնական է չիմանալ այդ ամենը. պարզապես պետք է հավատալ, որ վարագույրներից այն կողմ շատ ավելի մեծ ներկայացում է սկսվել:

Իրականում մենք վեր նայելու խիստ կարիք ունենք: Մենք դեռ քարոզում ենք, թե ինչպես էր Հիսուսը քայլում Գալիլեայի ափերով, կատակում տղաների հետ և Իր աստվածությունը թողած՝ որպես մարդու Որդի, քայլում երկրի վրա: Ի՞նչ կասեք այն Հիսուսի մասին, Ով Իրեն հայտնեց Հովհաննեսին. եթե կարող եք, պատկերացրե՛ք սա.

«Եվ այն յոթ ճրագակալների միջում
Մեկը՝ մարդու Որդու նման,
պճղնավոր պատմուճան հագած և

ստինքների մոտ ոսկի գոտի կապած:
Եվ Նրա գլուխը և մազերը սպիտակ բրդի և
ձյան պես սպիտակ էին,
և Նրա աչքերը՝ կրակի բոցի պես:
Եվ Նրա ոտքերը՝ կարմրած պղնձի պես՝
իբրև հնոցի մեջ կրակ եղած, և նրա ձայնը՝ շատ ջրե-
րի ձայնի պես:
Եվ Իր աջ ձեռքում յոթ աստղեր ուներ,
և Նրա բերանից սրած երկբերան սուր էր դուրս գա-
լիս,
և Նրա երեսն՝ ինչպես արեգակը,
որ ճառագում է իր զորությամբ:
Եվ երբ որ տեսա Նրան, մեռածի պես ընկա Նրա ոտ-
քերի առջև: Եվ Նա Իր աջ ձեռքն ինձ վրա դրեց և
ասաց.
«Մի՛ վախեցիր, Ես եմ Առաջինը և Վերջինը և Կեն-
դանին, և Ես մեռած էի և ահա կենդանի եմ հավիտ-
յանս հավիտենից, ամե՛ն: Եվ ունեմ դժոխքի և մահ-
վան բանալիները: Գրի՛ր՝ ինչ որ տեսնում ես, ինչ որ
է, և ինչ որ նրանից հետո լինելու է»»:
(Հայտնություն 1.13-19)

Եկե՛ք իրատես լինենք. Հովհաննեսը, հավանաբար, տասներկու առաքյալներից ամենակայուն առաքյալն էր: Ասում են, որ նա Հիսուսի սիրելի աշակերտներից մեկն էր, որին Նա վստահեց Վերջին Ընթրիքի ժամանակ: Հովհաննեսը տեսավ Հիսուսին Երկնքում՝ որպես Աստծո Որդի, և մեռածի պես ընկավ Նրա ոտքերի առջև: Այն, ինչ նա տեսավ, ավելին էր, քան գառներ պահող և ձկներ եփող Հիսուսը: Նա Բարձրյալ Աստծո Որդին էր և հայտնի էր իբրև աստղեր պահող, զինված, մեծափառ, պատերազմող Թագավոր: Ինչ կլիներ, եթե մենք քարոզեինք Հիսուսի այս զորավոր հայտնությունը:

Նայենք, թե ինչ է գրված Հայտնության գրքի սկզբում.

«Հիսուս Քրիստոսի հայտնությունը, որ Աստված
տվեց Իր ծառաներին՝ ցույց տալու՝ ինչ որ շուտով
պիտի լինի, և իմացրեց Իր հրեշտակի ձեռքով՝
ուղարկելով Իր Հովհաննես ծառային, որ վկայեց

> Աստծո Խոսքին և Հիսուս Քրիստոսի վկայությանը, որ տեսավ: Երանելի են այս մարգարեության խոսքերը կարդացողները և լսողները և սրանում գրվածները պահողները. որովհետև ժամանակը մոտեցել է» (Հայտնություն 1.1-3):

Այս գիրքը, նախ և առաջ, Հիսուսի հայտնության մասին է, և օրհնություն է հռչակված գիրքը կարդացողի, լսողի և պահողի համար, ուստի կարծում եմ, որ այն արժանի է մեր ուշադրությանը: Ինչո՞ւ պետք է այս հայտնությունն անհրաժեշտ լիներ. մի՞թե մենք չունենք գրառումներ այն մասին, թե ինչպես է Հիսուսն ապրել և քայլել երկրի վրա:

Ես հավատում եմ, որ սա մի ակնարկ է այն մասին, թե Ով է իրականում հաղթանակ տարած Հիսուսը՝ մեր Մեսիան: Նա թողեց Իր աստվածությունը և դարձավ մեզ նման, որպեսզի մենք էլ թողնենք մեր մարդկային բնությունը և դառնանք Նրա նման: Հիսուսը զորավոր է, սուրբ է և փառավոր... ուստի՝ *վե՛ր նայիր:*

Երկրորդ ցուցումը՝ *շո՛ւրջդ նայիր:* Երկնային տեսանկյունը ձեռք բերելով՝ մենք սկսում ենք ինքներս մեզ, մեր շրջապատը և երկրի բնակիչներին տեսնել նորովի: Եսային վերապրեց սա, երբ Աստծուց ստացած հայտնությունից ամբողջովին կորցրեց իրեն: Եսայի 6-րդ գլխում գրված է, որ սկզբում նա տեսավ, որ իր շրթունքները պիղծ են, հետո մտածեց, որ այն մարդիկ, ում հետ ապրում է, նույնպես պիղծ են: Նրա անօրենությունն ու մեղքը մաքրվեցին կրակի կայծի միջոցով, որից հետո Եսային ասաց. «Ուղակիր ի՛նձ»: Նա մաքրվեց և պատրաստ եղավ գնալու այն ժողովրդի մոտ, որը, ինչպես Աստված նախօրոք ասել էր, իրեն չէր լսելու:

Մեր սրտերը պետք է ցավեն՝ տեսնելով, թե որքան է այս աշխարհը հակառակվում և հակասում սուրբ, արդար Աստծուն: Պարզապես շո՛ւրջդ նայիր: Նայի՛ր նորությունները՝ ի՞նչ ես տեսնում. ես տեսնում եմ մեղք և անարդարություն, բայց նույնպես տեսնում եմ, թե ինչպես են լույսի զավակները դուրս գալիս թաքստոցից՝ հակառակվելու թանձր խավարին, որն ավելի էր սաստկացել՝ մինչ նրանք թաքնված էին լույսի մեջ:

Հաջորդ ցուցումն այն է, որ մենք պետք է *լա՛վ նայենք:* Ես

համոզված եմ՝ սա նշանակում է, որ մենք պետք է այս աշխարհում միջոցներ որոնենք նորոգելու այն, ինչ խարխլված է, և բժշկելու այն, ինչ վատառողջ է: Մենք պետք է լույս լինենք խավարի գործերը բացահայտելու համար, պետք է հույս տանք անհույսներին, դադարենք մեր անօրինություններից և արդարություն գործենք: Մենք պետք է վերականգնենք ուժերն այնտեղ, որտեղ տկարություն կա: Սա կարող է վերաբերել թե՛ տնտեսական և կրթական ոլորտներին, և թե՛ մեր փոխհարաբերություններին:

Երբ նայենք մեր շուրջը, կտեսնենք ամուսնություններ և ընտանիքներ, որոնք վերականգնման կարիք ունեն, կտեսնենք նաև մարդկանց, ովքեր առողջության, դեղորայքի, մաքուր ջրի և ուտելիքի կարիք ունեն: Մենք կարող ենք տեսնել միայնակ մարդկանց, որոնք ընտանեկան ջերմ մթնոլորտի կարիք ունեն. որբերի, որոնք որդեգրման կարիք ունեն. գերիների, որոնց պետք է ազատել: Կարող ենք տեսնել նաև կեղեքված և խոցելի տղամարդկանց ու կանանց, որոնց պետք է բարձրացնել. ուստի՝ *լավ նայեք:*

Հաջորդ ցուցումը *առաջ նայելն* է. սա անելու համար պետք է հասկանանք, որ կրելու ենք մեր ներկա ընտրությունների հետևանքները, այդ իսկ պատճառով մենք պետք է ոչ միայն լավ նայենք, նույնպես և առաջ նայենք: Երբ մոտենում ենք կյանքի խաչմերուկներին, մենք պետք է խորաթափանց լինենք ճիշտ ճանապարհն ընտրելու համար:

Ես «Նինջա» մակնիշի մոտոցիկլետ ունեմ: Այն իմ ունեցած իրերից ամենաանվտանգը չէ: Եվ որպեսզի ամուսինս հանգիստ լիներ, մենք որոշեցինք, որ ես մոտոցիկլետի անվտանգության դասընթացների հաճախեմ (ի դեպ՝ ես մեր կուրսի միակ կինն էի): Մեր դասերի ընթացքում իմացանք, որ խաչմերուկներում ամենաշատ վթարները տեղի են ունենում ոչ թե այն պատճառով, որ մոտոցիկլետ վարողի պահվածքը վտանգավոր է, այլ՝ որ մեքենաների վարորդները պարզապես չեն նկատում նրան: Պատահարից խուսափելու համար մեզ մի տերմին սովորեցրին, որը հիշեցնում է զգոն լինելու մասին. ՈՒԳԳ, նշանակում է՝ ուշադիր լինել, գնահատել և գործել:

Երբ իմ «Նինջայով» մոտենում եմ որևէ խաչմերուկի, ես ավելի տեղյակ եմ լինում մեքենաների ներկայությունից,

քան նրանց վարորդները՝ ինձնից: Քանի որ ես ավելի տեղյակ եմ, քան նրանք, ես սկսում եմ ուշադիր զննել վարորդներին. զննում եմ շուրջս գտնվող մեքենաները և ուշադրություն դարձնում, թե ով է խոսում հեռախոսով, ով է շրջվում, ով է նկատել կամ չի նկատել ինձ, ինչպես նաև ուշադրություն եմ դարձնում ճանապարհային պայմաններին: Մանրախիճը և ավազը մոտոցիկլետ վարողի համար խնդիրներ են ստեղծում. ես զննում եմ յուրաքանչյուր խաչմերուկը, որպեսզի հայտնաբերեմ հնարավոր խնդիրներն ու ուղիները:

Երբ զննումն ավարտվում է, ես գնահատում եմ պայմանները և որոշում, թե որն է իմ լավագույն մոտեցումը տվյալ պարագայում: Երբեմն, երբ ես և Ջոնը միասին ենք վարում, նա առջևից է գնում, որովհետև նրա մոտոցիկլետն այնքան բարձր ձայն է արձակում, որ բոլորն իմանում են նրա մասին: Բայց եթե մեքենաները մեր ետևից են ընթանում, նա ցանկանում է, որ ես առջևից գնամ, որպեսզի ետևից ծածկի ինձ:

Երբ որոշումը կայացված է, մենք գործի ենք անցնում. մենք խառը ազդանշաններ չենք տալիս մեքենաներին, այսինքն՝ ես ձախ շրջվելու ազդանշան չեմ տալիս, հետո ուղիղ գնում, պարզապես մենք այնպես ենք անում, որ մեր մտադրությունները հստակ լինեն, և որ կարողանանք դրանք հաղորդել միմյանց:

Մոտոցիկլետ վարելիս ես ևս մեկ դաս եմ քաղել. եթե ներքև ես նայում, հայտնվում ես ջախջախման վտանգի տակ, դրա համար դու պարզապես պետք է գլուխդ բարձր պահես և հետևես շրջադարձերին: Դու ճիշտ շրջադարձ կկատարես, եթե աչքերդ պահես այն ուղղությամբ, ուր որ գնում ես, այլ ոչ թե նայես կողքերդ. նայի՛ր նպատակակետին:

Որտեղ մենք ներկայումս գտնվում ենք, այն տեղը չէ, ուր պետք է ուղևորվենք. մեր առջև ավելին կա. ավելի շատ ուրախություն, ավելի շատ վտանգ, ավելի շատ Աստված, ավելի շատ չարիք, ավելի շատ արդարություն, ավելի շատ ազատություն, ավելի շատ զորություն, ավելի շատ լույս, ավելի շատ հույս:

Մենք իսկապես գտնվում ենք ներկայի և ապագայի խաչմերուկում: Սա նշանակում է, որ մեզ կշրջապատեն շատ անտեղյակ վարորդներ, ովքեր ընթանում են այս կյանքի միջով:

Նրանք պարտավոր չեն մեզ համար զգուշանալ. եկեք մե՛նք զգուշանանք նրանց համար:

Եվ հաջորդ ու վերջին պատվերը հետևյալն է՝ ասա՛ *ճշմարտությունը:* Պողոսն ասում է, որ Եսային նայեց առաջ ու ասաց ճշմարտությունը: Նրա կյանքում իր իսկ խոսքերը միշտ չէ, որ ընդունվում էին որպես ճշմարտություն: Որոշ պատմաբանների համաձայն՝ նրան երկու մասի սղոցեցին ճշմարտությունը խոսելու համար: Այդ ճշմարտությունն ընդունելի և հարմար չէր, սակայն Եսային ոչ միայն խոսեց այն ապագայի համար, այլև ապրեց դրանով:

> «Աստծո առջև հաշվի է առնվում այն, թե ով եք դուք և ինչպես եք ապրում: Ձեր երկրպագությունը պետք է ընդգրկի ձեր հոգին, որը հետամուտ է ճշմարտությանը: Այդպիսի մարդկանց է Հայրը փնտրում. մարդկանց, որոնք պարզ և անկեղծ կանգնած երկրպագում են Նրան» (Հովհաննես 4.23, MSG):

Հետևյալ հատվածը Հիսուսի աղոթքից է.

> «Նրանց սուրբ արա Քո ճշմարտությունով.
> Քո Խոսքը ճշմարտություն է:
> Ինչպես Դու Ինձ ուղարկեցիր աշխարհ,
> Ես էլ նրանց ուղարկեցի աշխարհ:
> Եվ Ես նրանց համար Իմ Անձը սուրբ եմ անում, որ
> նրանք էլ ճշմարտությունով սրբված լինեն»
> (Հովհաննես 17.17-19):

Եթե մենք չգիտենք, թե որն է ճշմարտությունը, այդ ժամանակ ունենք Աստծո Խոսքը, որը լուսավորում է մեր ճանապարհը, որպեսզի ճանաչենք Հիսուսին, Ով ճշմարտությունն է:

Կան մարդիկ, որոնք վեր են նայել, սակայն շուրջը չեն նայել և այդ պատճառով թաքնվել են: Կան նաև այնպիսիները, ովքեր շուրջն են նայել, բայց քանի որ երբեք վերև չեն նայել, կոտրվել են, դրա համար էլ ոչինչ չեն արել: Ոմանք էլ նայել են առաջ, սակայն չեն ասել ճշմարտությունը, ուստի ապրել են ստի մեջ: Իսկ մյուսներն էլ ասել են ճշմարտությունը, սա-

կայն երբեք շուրջը չեն նայել, ուստի այդ ճշմարտությունը չի օգնել մարդկանց:

Այս գիրքը գրելիս իմ նպատակն է, որ կարողանանք կրկին վերագտնել այն կորսված ուժը, որն անհրաժեշտ է յուրաքանչյուրիս: Եվ սա մենք անում ենք ոչ թե հոգու թափվելու, այլ՝ տեսիլքի միջոցով:

Խնդրում եմ, նույնիսկ մեկ վայրկյան չկարծեք, որ այն, ինչ ձեզ հետ կիսում եմ այս գրքի միջոցով, ինչ-որ տարօրինակ բան է: Ո՛չ, այդպես չէ, դա տրվել է ինձ հայտնության հրաշքի միջոցով: Ես փորձում եմ ձեզ հետ կիսվել մի հայտնությամբ, որը շատ ավելի մեծ է, քան իմ սահմանափակ բառերը կարող են նկարագրել:

Լուսավորված միտքը վճռական դեր ունի այս խավար աշխարհում: Ճշմարիտ է այն, որ ինչին նայում ես, այն էլ դառնում ես: Մենք պետք է թույլ տանք, որ մեր ներքին տեսողությունն ու լույսը գերազանցեն այն, ինչ շրջապատում է մեզ: Ժամանակն է, որ մենք նայենք ճչացող իրականությունից այն կողմ և նշմարենք այն, ինչ Աստված անում է անհուսության ժամանակ:

Չնայած, որ տեսնում ենք խավարը, մենք պետք է լույս հոչակենք:

Հասկացողության աչքերով մենք կվերականգնենք այն հրաշքը, թե որքան մեծ է մեր Աստված. թող Աստված մեզ աչքեր տա, որ տեսնենք:

Երբ Աստծո լույսն ավելանա, ես հավատում եմ, որ աստվածային մարգարեական արթնություն կլինի: Աստված մեզ կտա աչքեր, որ տեսնենք այն, ինչ Նա անում է, կտա մեզ ականջներ, որ լսենք այն, ինչ Նա ասում է, և կտա մեզ համարձակություն, որ իշխանությամբ խոսենք Նրա Խոսքը: Երբ այս արթնությունը տեղի ունենա, այդ ժամանակ մարդկային սրտի արգելքները կքանդվեն:

Սպասե՛ք և թո՛ւյլ տվեք Աստծուն, որ խոսի Իր այն հրաշքի մասին, որը կա ձեր ներսում: Աստծո տեսողությունը փոքրիշատե ունենալու մարգարեական կարողությունը հնարավոր է դարձնում տեսնելու և հասկանալու Նրա հրաշքը: Առանց այդ տեսողության՝ կյանքը, լավագույն դեպքում, զբոսանք է խավարում:

> «Եթե մարդիկ չեն կարողանում տեսնել, թե ինչ է Աստված անում, նրանք սայթաքում և վայր են ընկնում: Բայց երբ ուշադիր հետևում են, թե ինչ է Նա հայտնում, շատ օրհնված են լինում» (Առակաց 29.18, MSG):

Հիսուսն արտասովոր չէր, սակայն ուր գնում էր, այնտեղ Աստծո հրաշքն էր տեղի ունենում: Իսկ ինչո՞ւ. որովհետև Նա միայն անում էր այն, ինչ տեսնում էր Հորն անելիս: Նա միաժամանակ կարողանում էր տեսնել ցավից տանջվող մարդկանց և դրա հանդեպ Իր Սուրբ Հոր արձագանքը: Հիսուսը խոսում էր լույս և ճշմարտություն՝ ցրելով այն խավարն ու կրոնի ստերը, որոնք մշուշել էին Աստծո զավակների աչքերը և նրանց բաժանել կենդանի Աստծուց:

Մարգարեին այլ կերպ կոչում էին նաև *տեսանող*. Հիսուսը տեսնում էր այն, ինչ ուրիշները բաց էին թողնում: Նա նկատում էր վիրավորներին ու թշվառներին և դիպչում էր անմաքուրներին: Նա պարզապես ամբոխ չէր տեսնում. Նա տեսնում էր մարդկանց և անհատների, Նա տեսնում էր մարդկանց սրտերը: Հիսուսը տեսնում էր լույս՝ խավարի մեջ, և մերկացնում էր այն խավարը, որ ձևացնում էր, թե լույս է. Նա էր աշխարհի լույսը, և այժմ այդ լույսը կրողը դո՛ւ պետք է լինես:

> «Որ լինեք անբիծ և անարատ որդիներ Աստծո՝ առանց մեղադրանքի՝ այն կամակոր և ծռած ազգի մեջ, որոնց մեջ երևաք՝ ինչպես լույս տվողներ աշխարհի մեջ» (Փիլիպեցիների 2.15):

Սիրելինե՛րս, մենք որս ենք անում խավարում և Նրա լույսը բերում ենք խավարի մեջ: Մենք թույլ ենք տալիս, որ կորած և վիրավոր աշխարհը տեսնի մեր փոխակերպված կյանքը: Մենք չենք թաքնվում խավարից, ավելի շուտ մենք այն ցրում ենք մեր ներկայությունով: Երբ լույսը մոտենում է ստվերին, մենք տեսնում ենք, թե ինչ խավար է մնացել ետևում: Շատերը թաքնվել են մութ վայրերում՝ սպասելով լույսի շողարձակմանը:

Ժամանակն է, որ որսորդություն անենք և ազատենք նրանց, ովքեր դեռ գերության մեջ են և հույսի ուղերձի կարիք ունեն:

ՈՐՍՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԽԱՎԱՐՈՒՄ

Վերջերս, երբ Հնդկաստանի աղքատ թաղամասերում էի, հնարավորություն ունեցա որս անել խավարում:

Եվ այն, ինչ գտա խավարում, զարմացրեց ինձ: Ես գնացել էի Մումբայ՝ որպես «Կյանք» սոցիալական ծրագրի հյուր: Նրանք դաշինք էին կնքել մի քանի տեղական կազմակերպությունների հետ, որոնք աշխատում էին ազատել այն կանանց և երեխաներին, ովքեր գերված էին հասարակաց տների աղտի և թշվառության մեջ:

Հնդիկները հրաշալի ժողովուրդ են, և նրանց մշակույթը կարող է լինել թե՛ գեղեցիկ, թե՛ բարի, սակայն այդ աղքատ թաղամասի պայմանները ողբալի էին: Այն, ինչին ականատես եղա, *«Եփնախորշի միլիոնատերը»* կինոնկարի իրական պատկերն էր: Առնետները, որոնք փոքր կատուների չափ էին, սողում էին մարդկային և կենդանական կեղտի միջով, որը տարածվում էր նրբանցքներով ու փողոցներով:

Երբ դուրս եկա օդափոխիչով ապահովված մեքենայից, որն ինձ ապահով տեղափոխել էր Մումբայի խելագար երթևեկության միջով, ես հայտնվեցի ամբողջովին օտար մի աշխարհում: Կարելի է ասել ոչ թե օտար, քանի որ այն գտնվում էր էկզոտիկ տարածքում, այլ՝ որ այն անմարդկային միկրոքաղաքակրթությամբ մի աշխարհ էր:

Այդ ժամանակ Մումբայում անձրևային եղանակներ էին, և խոնավությունն ու շոգը հեղձուցիչ էին դարձրել օդը: Ես անմիջապես զգացի ետնախորշերի հոտը, քանի որ կեղտի և մեզի բարկ համակցությունը խառնվել էր փտած ուտելիքի, գարշելի կենսապայմանների և կեղտոտ մարդկանց հոտին: Օդն ինքնին դարձել էր ծանր ու ճնշող այդ խավարի ոգու ազդեցությունից:

Ես զգացի, որ այդ «խաղի մեջ» ընդրգկված էր երկու կերպար՝ գեղեցիկ հնդիկ ժողովուրդը և այն դաժան ոգին, որ նրանց գերության մեջ էր պահում: Ետնախորշում ոչ ոք չէր

կարող խույս տալ այդ ոգու ազդեցությունից: Տղամարդիկ և կանայք երերում էին նրա ծանրության տակ: Աղքատությունը, այլասերվածությունն ու անբարոյականությունն իրենց ծանր ձեռքը դրել էին բոլորի վրա:

Որպեսզի կարողանայինք աննկատ անցնել ամբոխի միջով, մեր թիմը հնդկական ազգային տարազ էր հագել: Սակայն շուտով ամեն բան փոխվեց, քանի որ մենք նկատելի եղանք նրանց կողմից, ում կողքով անցնում էինք:

Մեր հովիվն ու միսիոներ ուղեկցողները շտապեցրին մեզ դեպի բժշկական կենտրոն: Այս կենտրոնը մարդկանց մեջ ձեռք էր բերել վստահություն և նրանց սիրելու ու ծառայելու համբավ: Ես մտա անշուք սպասասրահը, որտեղ հիվանդները լուռ սպասում էին բժշկին: Նախկին մարմնավաճառներից կազմված մի ծառայողական թիմ սպասում էր մեր ժամանելուն: Մենք սողոսկեցինք կողքի սենյակ, որտեղ ինձ ասացին, որ ես այնտեղ եմ եկել պարզապես «օրհնելու» հասարակաց տներում գտնվող կանանց:

Հանկարծ հասկացա, որ իմ պայուսակում եղած քարոզն անօգուտ էր, քանի որ անկարող էի վերահսկել իրավիճակը և խորապես համոզված էի, որ Լիզա հեղինակն ու քարոզիչն այստեղ գլուխ չի հանի: Քանի որ մենք ծպտված էինք, ես չէի կարող օգտագործել իմ Աստվածաշունչը. իմ թարգմանիչը սահմանափակ անգլերենով էր խոսում, իսկ ես հնդկերեն չգիտեի: Այս մարդկանց հետ կապ հաստատելը կարող էր լինել միայն Աստծո Հոգով:

Հասարակաց տներում ապրող կանանց պատմությունները գրանցելու համար մենք վերնազգեստիս տակ միկրոֆոն ամրացրինք և լարը փաթաթեցինք դաստակիս, իսկ ձայնագրիչն ամրացրինք տաբատիս: Թաքնված տեսախցիկն ամրացրինք մեկ այլ կնոջ սև շարֆին: Մենք բռնեցինք միմյանց ձեռքից, աղոթեցինք և ոտք դրինք գարշահոտ փողոցներ:

Ես անմիջապես նկատեցի, որ մեզ նայում են, բայց դա ավելի շատ սուր, քան թշնամական հայացք էր: Ես վեր նայեցի և փողոցի այն կողմում տեսա մի շինություն, որի երկրորդ հարկի պատուհանից մի գեղեցիկ ասիացի աղջկա դեմք էր երևում: Նա մոտավորապես տասնհինգ տարեկան էր: Նրա երիտասարդ դեմքին ցավ և անհուսություն կար. միայն այդ

ժամանակ գիտակցեցի, որ նա փակված էր հասարակաց տան ճաղերի ետևում:

Ինչպե՞ս կպատասխանեք այդպիսի հայացքին:

Ժպտալ անհնար էր: Ես չէի կարող գլուխս շարժել և *նրա* վրա այնպիսի տպավորություն թողնել, թե դատում կամ գարշանք եմ զգում այդ ամենից: Ես այնքան հետևեցի նրա հայացքին, մինչև որ նա գլուխը թեքեց: Երբ ներքև նայեցի, աստիճաններ տեսա: Ամենացածր աստիճանին նստած էին մի խումբ բարկացած տղամարդիկ, որոնք բացահայտ արհամարհանքով նայեցին ինձ՝ կարծես ասելով. «Ինչի՞ տեղ ես քեզ դրել, դո՛ւրս արի. դու այս միջավայրին չես պատկանում»:

Իսկապես որ չէի պատկանում այդ միջավայրին. Աստծո պատկերով ստեղծված ոչ մի մարդ չէր կարող պատկանել այդպիսի սարսափելի միջավայրի, քանի որ դա վայր չէր, որին պետք էր պատկանել. դա մի վայր էր, որտեղից պետք էր փախչել:

Կանանցից մեկը զգաց իմ անհանգստությունը և ձեռքը գոտկատեղիս դնելով՝ ասաց. «Ե՛կ, ես քեզ կօգնեմ անցնել փողոցը»: Նա ինձ ացկացրեց մարդկանց, հեծանիվների և մեքենաների միջով, որոնք, առանց կանոնների, երթևեկում էին ցեխոտ փողոցներով:

Ետնախորշում մեկ օր անցկացնելուց հետո ես իմացա, որ այնտեղ հետիոտնի համար գործում է մի կանոն. հետիոտնը փողոցն անցնելու ժամանակ չպետք է կանգնի: Դու պետք է համարձակ քայլես, անկախ նրանից, թե քանի հեծանիվ, մոտոցիկլետ կամ մեքենա է գալիս քո ուղղությամբ: Մեկ անգամ ես վարանեցի ճանապարհի մեջտեղում. այդ պահին երկու նախկին մարմնավաճառ թևանցուկ արին ինձ և հրելով անցկացրին փողոցը՝ շարժելով գլուխները:

«Կանգնել չկա, մենք քեզ պաշտպանում ենք»:

Եվ այդպես էլ արեցին:

Առաջին հասարակաց տունը, որին մենք մոտեցանք, մի ընդհանուր տարածք ուներ, որի լայնությունը հինգ ոտնաչափ էր, իսկ երկարությունը՝ ութ ոտնաչափ: Սա այն տեղն էր, որտեղ հաճախորդները սպասում էին աղջիկներին, որոնք պիտի ծառայեին իրենց: Այդտեղ նաև հավաքվում էին կանայք՝

կերակուր պատրաստելու, միմյանց հետ շփվելու և իրենց երեխաներին հոգ տանելու համար: Ստվերոտ սենյակից նրանք կարողանում էին ուսումնասիրել դռնից դուրս գտնվող փողոցի թշվառությունը: Եվ այս փակ տարածքում հավաքվել էին մի քանի կոտրված սրտով կանայք, որպեսզի լսեին Աստծո սիրո մասին:

Ես ներս մտա և չկարողացա չնկատել այն դուռը, որը տանում էր դեպի նեղ միջանցք, որտեղ իրար հաջորդող լոգախցիկ հիշեցնող սենյակներ կային: Հետո ես իմացա, որ աղջիկներն այդտեղ էին հանգստանում և ծառայում իրենց հաճախորդներին: Նայելով այդ նեղ սրահին՝ նկատեցի, որ մի քանի դռներ փակված էին. դա նշանակում էր, որ կա՛մ այդ սենյակը զբաղված էր, կա՛մ էլ աղջիկը հանգստանում էր:

Ես ուշադրությունս ուղղեցի իմ առջև նստած կանանց: Նրանք այնպես էին նստել հատակին, կարծես ամբողջությամբ ծածկել էին այդ նստարանանման հատվածը, որը ձգվում էր սենյակի երկու կողմով: Նրանք կիտվել էին ծածկոցների տակ և կասկածամտորեն մեզ էին նայում, մինչև մենք ներս կմտնեինք:

Թարգմանիչը հնդկերեն ողջունեց նրանց, իսկ նրանք ուշադիր լսեցին և իրենց յուրօրինակ հնդկական ձևով հարգալից շարժեցին գուխները:

Կարճ ժամանակ անց՝ հնդկերեն բառերի մեջ լսեցի իմ անունը, և նրանց գլուխները շրջվեցին իմ ուղղությամբ: Ես հուսահատորեն նայեցի հովվին, և նա արձագանքեց դրան՝ ձեռքերը բարձրացնելով և կրկնելով իր՝ ավելի վաղ ասածը. «Օրինի՛ր նրանց... երկու ժամ է՝ նրանք քեզ են սպասում»:

Ես ներկայացա և ասացի, թե որտեղից եմ եկել, ասացի նաև, որ ունեմ չորս որդի և սպասում եմ առաջին թոռնիկի ծնվելուն: Դրանք կարծես դատարկ խոսքեր լինեին, որ հասան միայն իմ ականջներին: Ես մտածում էի, թե ի՞նչ կարող էր նրանց տալ իմ չափանիշների համակարգը, քանի որ այն ամենը, ինչ նրանք գիտեին, հակասում էր իմ ամերիկյան «նորմերին»: Սակայն նրանք քաղաքավարի էին և շարունակ գլխով էին անում:

Ես ասացի, թե ինչպիսի մեծ տարածություն ենք անցել, որպեսզի նրանց հայտնենք, որ նրանք մենակ չեն, և որ նրանք գտնվում են աշխարհի շատ կանանց սրտերում, որոնք լաց են

լինում նրանց ծանր կացության համար:

Ինչ էր սա. նրանք մենակ չէին... Նրանց հուսահատության խոսքը դուրս էր եկել ետնախորշերից, իսկ մյուսներն աղաղակում էին նրանց կորստի համար... Ես նրանց ասացի, թե որքան շատ կանայք են Աստծո գահի առջև աղոթում Հնդկաստանի այդ թաքնված դուստրերի համար: Նրանք լուռ էին, սակայն նրանց աչքերից արտասուք էր հոսում:

Երբեմն մտածում եմ, թե արդյոք մենք իսկապես հասկանում ենք փոխհարաբերության զորությունը. չէ՞ որ մենք միայնակ չենք մեր հույսերի մեջ և միայնակ չենք պայքարում: Հիսուսը խոստացավ ընդմիշտ մեզ հետ լինել:

Ես պատմեցի նրանց իմ անձնական կյանքից, թե որքան եմ զղջում, որ երիտասարդ տարիքում վատնել եմ ժամանակս՝ կորցնելով սեռական մաքրությունս ու արժանապատվությունս, որն այժմ այդպես բռնի կերպով գողացվել է նրանցից: Ես ընտրել էի ոչ ճիշտ սեռական կյանքը, սակայն, հետագայում դուռ բացեցի Աստծո առջև, և Նրա սերը ողողեց կյանքս և փրկեց ինձ կործանումից:

Կանայք ուշադիր լսում էին, և ես զգում էի, թե ինչպես էր Սուրբ Հոգին կարևորում յուրաքանչյուր կնոջը: Նրանք պարզապես մի խումբ կանայք չէին. նրանք անհատ դուստրեր էին: Ես հերթով դիպա յուրաքանչյուրի դեմքին՝ վստահ լինելով, որ Աստված նմանապես կմեկներ Իր ձեռքը և Իր Հոգով իմ մարդկային խոսքերը ավելի տպավորիչ կդարձներ: Դիպչելով նրանց՝ մեղմորեն հռչակում էի. «Աստված ծրագիր ունի քո՛ կյանքի համար»:

Նրանք արտասվում էին, երբ լսում էին մի Աստծո մասին, Ով փնտրել և այցելել էր նրանց խավարի մեջ: Նրանք գիտեին, թե ինչ է նշանակում ապրել մեկ ուրիշի ճնշման և թելադրանքի տակ:

Յուրաքանչյուր կին ապրում էր մի գիշերային մղձավանջում, որը ինչ որ մեկը ծրագրել էր նրա կյանքի համար: Այն կանայք, ում հետ կարողացա հարցազրույց անցկացնել, առևանգվելով կամ խաբվելով ոտք էին դրել սեռական ստրկատիրական կյանքի մեջ: Նրանք գերի էին բռնվել «հույս» ասվածի խոստումով, որն այժմ առաջարկում էի նրանց:

Յուրաքանչյուրը համարձակվել էր հավատալ ավելիին.

նրանք մտածել էին, որ կարող են ունենալ ավելի լավ աշխատանք, կրթություն կամ, պարզապես, կարող են սիրված լինել: Նրանցից ոմանք հույս էին ունեցել փախչել իրենց գյուղի ծանր աղքատությունից: Եվ այդ կանայք այժմ խաբված էին այն տղամարդկանց և կանանց կողմից, ում մի ժամանակ վստահել էին: Նրանք պատմություններ էին պատմում իրենց ամուսինների, եղբայրների, մորեղբայրների, զարմիկների, մորաքույրների ու հորաքույրների և նույնիսկ ընկերների մասին, որոնք վաճառել էին նրանց: Ավելի լավ կյանք ունենալու երազանքն օգտագործվել էր որպես միջոց՝ նրանց ստրկության մատնելու համար: Ես խնդրեցի կանանց՝ կրկին հուսալ և վստահել Հիսուսին՝ Աստծո Որդուն, Ով չէր կարող ստել:

Հիշում եմ, որ նրանց ուրիշ բաներ էլ ասացի, որոնք այժմ մոռացել եմ, այնպիսի արտահայտություններ և խոսքեր, որոնք, եթե գրվեին այս գրքի էջերին, միգուցե ամոքիչ լինեին մեր արևմտյան հասարակության համար. սակայն այն ժամանակ դրանք երկնքից էին ներշնչված:

Ահա թե ինչ տեղի ունեցավ. առանց որևէ հանդիսավորության՝ նեղ տարածք ներխուժեց երկնային մթնոլորտը: Կանայք արձագանքեցին կենդանի Աստծուն, և նրանցից յուրաքանչյուրին Նա հույս առաջարկեց:

Զգալով այս փոփոխությունը և հաղորդակցվելու իմ անկարողությունը՝ ես շրջվեցի դեպի հովիվը. նա աղոթեց այդ կանանց համար, նրանք ջերմորեն փարվեցին մեր խմբի հրաշալի ու թանկ կանանց, որոնք նույնպես աղոթեցին նրանց համար: Այդ պահին կարծես գերության պատերը նահանջեցին...

Ես նկատեցի մի հաճախորդի, որը դուրս էր գալիս սենյակներից մեկից՝ տաբատն ամրացնելով և մեզ վրա գարշելի հայացք նետելով. մենք նրա համար անսովոր այցելուներ էինք:

ԿԵՆՏՐՈՆԱՑԱԾ ԵՎ ՄՈԼԵԳԻՆ

Խորհե՛ք հետևյալ խոսքի շուրջ.

> «Ես համարձակվում եմ հավատալ,
> որ դժբախտները մեկ օր Քո մեջ երջանիկ կդառնան:
> Դու չես թողնի նրանց. որբերը հավիտյան որբ չեն
> մնա:

Կոտրի՛ր չարերի աջ բազուկը,
  կոտրի՛ր բոլոր չարերի ձախ բազուկը:
Որոնի՛ր և կործանի՛ր հանցանքի ամեն նշան:
  Աստծո շնորհքը հաղթում է,
ամբարշտությունը պարտվում է:
Զոհի թույլ զարկերակը հազիվ է խփում.
  անհույսների սրտերն ուրախանում են,
երբ Քո ականջը նրանց աղաղակին է:
  Որբերը ծնողներ են ձեռք բերում,
անտունները տուն են ստանում:
  Ահաբեկության թագավորությունը վերջացած է,
ավազակապետերի տիրապետությունն
  ավարտված է» (Սաղմոս 10.14-18, MSG):

Դու կարո՞ղ ես իսկապես լսել սա. այն ներառում է յուրաքանչյուր մասնիկ, որ մենք պետք է որսանք խավարում. հավատք, արդարադատություն, հաղթանակ, բժշկություն, հույս, որդեգրություն, վերականգնում, արդարություն, ավարտ և նոր սկիզբ: Եկել է այս խոսքերով աղոթելու ժամանակը, և եթե մենք հոչակենք Աստծո Խոսքը, Նա կհետևի, որ այն կատարվի:

Սա սովորական աղոթք չէ: Ես ինքս էլ հոգնել եմ անվտանգ և հաճելի աղոթքներից: «Կոտրի՛ր նրանց բազուկները և անկարող դարձրու նրանց, Աստվա՛ծ». սա վտանգավոր աղոթք է, այն ուժգին աղաչանք է: Եվ ես չեմ կարող պատկերացնել, որ դա կարելի է հանգիստ կամ պասիվ ձևով աղոթել: Սաղմոս 10-ն իրականում Աստծո խոստման մասին է, որը վերջերս վերցրի որպես սուր՝ Հարավային Ասիա մեկնելիս, և ամեն անգամ, երբ անարդարություն էի տեսնում, ես բարձրացնում էի իմ սուրը:

Քո աղոթքում եղի՛ր կենտրոնացած և մոլեգին: Փակի՛ր աչքերդ ակնհայտ բաների առջև և նայի՛ր վերականգնման ու արդարության տեսիլքին: Սա այն է, ինչ Աստված ցանկանում է բերել երկրի վրա: Կան մարդիկ, որոնք կարիք ունեն, որ իրենց համար աղոթելիս դու փակես աչքերդ և տեսնես նրանց: Ես նկատի ունեմ իսկապես համառ աղոթքները, որոնք կհասնեն երկինք և նույնիսկ շուրթերիցդ դուրս գալուց կվախեցնեն քեզ:

Պասիվ եկեղեցին երկար չի դիմանա. եկեղեցու համար լավագույն հույսն այն է, որ մենք խավարում որսորդություն անենք, մինչև Խաղաղության Իշխանը կգա և վերջ կտա այս ահաբեկության տիրապետությանը: Իսկ որպեսզի դա կատարվի, մենք պետք է անհատապես և խմբովի փնտրենք, խուզարկենք և վերականգնենք այն, ինչ այժմ թաքնված է:

Հավատա ինձ՝ քեզ պետք չէ ճանապարհորդել Հնդկաստան, որպեսզի խավարում գերության մեջ հուսահատ մարդիկ գտնես. ամենուրեք կան գերության մեջ գտնվող տղամարդիկ, կանայք և երեխաներ, որոնք սպասում են, որ քայլ անենք, բացենք ազատություն տանող դուռը և դուրս գանք խավարից, որպեսզի կարողանանք բերել նրանց լույսի մեջ:

Երբ մենք լցվենք Աստծո լույսով, այդ ժամանակ կկարողանանք կորածներին հանել խավարից: Ժամանակը չէ վիճելու դոկտրինաների շուրջ կամ մրցելու մեծ ծառայություն և մեծ եկեղեցի ունենալու համար. մենք պետք է ծառայենք, այլ ոչ թե իշխանության դիրք գրավենք՝ ուրիշներին մեզ հետ համեմատելով:

Արթնացեք. որբերը որդեգրության և խնամքի են սպասում: Հազարավոր միայնակ, մեկուսացած մարդիկ աղոթում և հույս են փայփայում, որ անկախ բոլոր հանգամանքներից, նրանք մենակ չեն:

Ես «խավարում որս անելու» գաղափարը նկարագրեցի ավելի խոշոր, միջազգային մակարդակով՝ խոսելով Հնդկաստանում տիրող տանջանքի և թրաֆիքինգի մասին, սակայն խորհուրդ կտամ՝ մտածես սրա մասին և կիրառես առօրյայում: Այս ամենով հանդերձ՝ մի՛ պատկերացրու, թե քո ցավը կամ քո մերձավորների ցավն աննշան է. Աստված շատ մոտ է գտնվում նրանց, ովքեր ցավ են զգում: Գերության, մեկուսացվածության, դավաճանության, բռնության, դաժանության և անհուսության տանջանքն այցելում է բոլոր ազգերի մարդկանց: Մարդիկ ամեն տեղ նույն կարիքներն ունեն, սակայն ոչ բոլոր մարդիկ ունեն միևնույն միջոցները:

Եկե՛ք հավատարիմ տնտեսներ լինենք և մեր բարգավաճումը տարածենք այլ տեղեր: Դու օրինվում ես ուրիշներին օրհնելու համար: Բազմաթիվ վայրեր կան, որ քո օրհնության կարիքն ունեն, իսկ օրհնելու համար չպետք է հեռու գնալ.

անհուսություն կարող ես գտնել թե՛ քո աշխատավայրում, թե՛ այնտեղ, որտեղ գնումներ ես կատարում: Բռնության կարող ես հանդիպել հենց քո ընկերոջ ամուսնական կյանքում: Մեկուսացված կարող են լինել այն մարդիկ, որոնց հետ երկրպագում ես: Քո երեխաները կարող են ինչ որ մեկի կողմից դպրոցում իրենց դավաճանված զգալ:

Հաճախ ուրիշներին հույս տալով մենք բժշկություն ենք ստանում: Աշխարհով մեկ մարդիկ այն սիրո և արժեքի կարիքն ունեն, որոնցով Հիսուս Քրիստոսը վեհացնում է մարդկային հոգին, անկախ նրանից՝ նրանք խեղդվում են աղքատության մեջ, նստում են փղոսկրյա աշտարակներում, թե անհանգիստ կյանքով են ապրում. սահմանները դրված են: Կա կյանք, մահ ու կործանում, կա հույս և հուսահատություն, կա լույս և խավար. սահմանները երբեք ավելի հստակ չեն եղել, և երբեք վտանգն այսքան մեծ չի եղել:

Էգ առյուծներն ապրում են լույսի մեջ և որս են անում խավարում: Ուստի, խիզախ քույրեր, կարծում եմ, սրանից լավ օրինակ չկա, թե ինչպես պետք է մեզ պահենք: Ես հավատում եմ, որ այս գիրքը քո ձեռքում է, որովհետև դու խոստումի դուստր ես և լայն բացել ես դուռը, իսկ այժմ սովորի՛ր ապրել և հանգստանալ Նրա փառավոր լույսի մեջ: Եկե՛ք նաև թեթև ապրենք. թույլ մի՛ տուր, որ հոգսը կամ անհանգստությունը մեկուսացնի և խեղդի քեզ:

Եկե՛ք մեր աչքերը լայն բացենք և սովորենք տեսնել խավարում. հնարավորից այն կողմ նայենք և տեսնենք սրտեր ու թաքնված գանձեր: Եկե՛ք միասին որսորդություն անենք խավարում և ուրիշներին բերենք Աստծո լույսի մեջ, և ինչպես էգ առյուծը, այնպես էլ մենք պահենք հավասարակշռությունը հանգստի, բացահայտի, ուժգինի և մոլեգինի միջև. ապավի՛նե՛ք Նրան, հանգստացե՛ք իրար հետ և կատաղի ձևով միասին դե՛մ կանգնեք խավարին:

10

Քայլել առյուծի հետ

«Լաց մի՛ լինիր, ահա՛ հաղթեց Առյուծը, որ Հուդայի ցեղից է՝ Դավթի արմատը»:

ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ 5.5

Սովորաբար քեզ թվում է, թե դու մենակ ես քայլում մարտահրավերների ժամանակ: Սակայն, իրականում, կա զորավոր Մեկը, որ քայլում է քո առջևից՝ առաջնորդելով քեզ: Երբ շարունակես կարդալ այս գիրքը, կգիտակցես, որ առանց իմանալու դու քայլել ես մեր Առյուծի՝ Հիսուս Քրիստոսի հետ:

Երբեմն Աստծո ասածին հետևելը կարող է վախեցնող թվալ: Մեր մարտահրավերն անպայմանորեն այն չէ, որ հասկանանք, թե ինչ է Աստված ասում մեզ, որ անենք, այլ՝ այն, թե ինչպես դա անենք: Շատ մարդիկ հուսահատորեն ցանկանում են Աստծո հետ համընթաց գնալ, սակայն նույնիսկ գաղափար չունեն, թե ինչպես:

Հիսուսը նախապես պարզ թվացող մի հրահանգ տվեց: Նայե՛ք Մատթեոսի Ավետարանի 16.24-ի այս երկու տարբերակներին.

> «Եթե մեկը կամենում է Իմ ետևից գալ, թող իր անձն ուրանա և իր խաչն առնի և Իմ ետևից գա» (Մատթեոս 16.24):

ԵՎ ԱՎԵԼԻ ՊԱՐԶ...

> «Ով որ մտադիր է Ինձ հետ գալ, պետք է թողնի, որ Ես առաջնորդեմ նրան: Մեքենայի ղեկին դու չես, այլ՝ Ես: Չարչարանքից մի՛ փախիր. ընդունի՛ր այն: Հետևի՛ր Ինձ, և Ես ցույց կտամ, թե ինչպես անես դա» (Մատթեոս 16.24):

Հրահանգը պարզ է. ուրացի՛ր քո անձը, վերցրո՛ւ քո խաչը և հետևի՛ր: Բայց ինչպե՞ս դա անել. ահա հենց սա է մարտահրավերը: Ինչպե՞ս ուրանաս քո անձը և՝

ի՞նչ է նշանակում վերցնել խաչը,

ինչպե՞ս պետք է հետևես մեկին, ում չես կարող տեսնել:

Պատասխանը պարզ է. Հիսուսն առաջնորդում է, իսկ մենք հետևում ենք:

ՔԱՅԼԵԼ ՀԱՎԱՏՔՈՎ

Ֆորումների ժամանակ ես հաճախակի հնարավորություն եմ ունենում խոսելու երիտասարդ աղջիկների հետ: Եվ երբ պատասխանում եմ նրանց հարցերին, զարմանում եմ, որ նրանցից լսում եմ «Բայց ինչպե՞ս» հարցը:

Բայց ինչպե՞ս կարելի է իմանալ, որ Աստված խոսում է: Ինչպե՞ս կարող եմ ներել իմ հայրիկին: Ինչպե՞ս դուք կարողացաք ազատվել սխալ սնվելու սովորությունից: Ինչպե՞ս կարելի է իմանալ՝ ճիշտ տղայի հետ ես հանդիպում, թե՝ ոչ: Ինչպե՞ս կարողացաք ազատագրվել վախից, ամոթից և մեղքի զգացումից:

Ժամանակին վերոհիշյալ խնդիրներին և իրավիճակներին բախվելիս ես պարզապես հավատում էի, որ Աստծո Խոսքը ճշմարիտ է, և առաջնորդվում էի դրանով: Հիսուսը Խոսքն է, որ մարմին դարձավ: Կարդալով Աստծո Խոսքը՝ մենք տեսնում ենք, թե ինչպես էր Նա քայլում, և ուր է Նա առաջնորդում: Շատ մարդիկ, որոնց Աստված առաջնորդել է դժվար ճանապարհներով, սկզբում իրենց անկարող են զգացել, բայց հետո քաջացել են և հավատքով հետևել Հիսուսին.

> «Որոնք հավատքով թագավորությունների հաղթեցին, արդարություն գործեցին, խոստմունքներ ստացան...» (Եբրայեցիների 11.33):

Քանի որ մարդիկ հավատքով գործեցին, անբարո թագավորությունները պարտվեցին, հանցագործությունը բախվեց արդարադատությանը, և Աստծո խոստումներն իրական դարձան: Մենք հավատքով ենք մտնում Աստծո ծրագրի և խոստմունքի մեջ: Մեզ հավատք է անհրաժեշտ մեր Առյուծի առաջնորդությանը հետևելու համար:

Հավատքը հաղթում է կասկածանքին: Մենք երբեմն հարցնում ենք Աստծուն. «Դու այստեղ ես, ես չեմ կարողանում զգալ Քեզ»: Հավատքով մենք լսում ենք մեր Առյուծի պատասխանը. «Չեմ թողնի քեզ և երեսից չեմ գցի» (Եբրայեցիների 13.5):

Մենք աղոթում ենք և հավատքով սպասում. հավատքով արված աղոթքը կբժշկի հիվանդին, և Տերը վեր կկացնի նրան: Եվ եթե մեղք գործած լինի, կներվի (տես Հակոբ. 5.14):

Ինչ է հավատքի քայլը:

Աբրահամի՝ մեր հավատքի հոր համար դա Աստծուն հետևելն էր. նա քայլում էր անապատով՝ գաղափար չունենալով, թե որտեղ էր կանգ առնելու: Երբ կարդացի Աբրահամի և Սառայի ճանապարհորդության մասին, նկատեցի, որ Աստված նրանց տվեց այն երկիրը, որի միջով նրանք անցել էին և որը կարողացել էին հեռվից տեսնել:

> «Հավատքով՝ Աբրահամը երբ որ կանչվեց, հնազանդ եղավ դուրս գնալու այնտեղ, որ ժառանգության համար ստանալու էր, և դուրս եկավ գնաց՝ առանց գիտենալու, թե ուր է գնում» (Եբրայեցիների 11.8):

Եթե Սառան ու Աբրահամը մնային Ուր քաղաքում, որտեղ ամեն բան հարմարավետ էր և ծանոթ, նրանք չէին ժառանգի Աստծո խոստմունքը:

Օ՜, որքան դժվար է մեզ համար քայլել հավատքով: Մենք ցանկանում ենք առաջնորդվել քարտեզով, որը միանգամից մեր աչքի առջև է, բայց Աստված ցանկանում է աստիճանաբար հայտնել մեզ Իր խորհրդավոր ճանապարհները:

Այսպիսի հավատքը համարձակություն է տալիս մեզ: Մեզնից յուրաքանչյուրի առջև խոչընդոտների մի ուղի կա, որը լի է արկածներով, և այդ ուղին անցնելիս մենք պետք է վստահ

լինենք, որ մեր Առյուծը մեզ չի առաջնորդի մի ճանապարհով, որով Ինքը չի անցել: Երբ Աստված մեզ ինչ-որ բանի մեջ է կանչում, որը նախկինում չենք տեսել կամ չենք արել, դա վախեցնում է մեզ: Երբեմն Աստված առաջնորդում է մեզ գնալ մի ուղղությամբ, որի մասին ոչ ոք երբևէ չի մտածել, և որով ոչ ոք չի գնացել: Մենք միայն զգում ենք Նրա կանչը և լսում Նրա առաջարկը. «Դո՛ւստր, կհետևե՞ս Ինձ... նույնիսկ եթե վախենում ես»:

Ոչ շատ վաղուց իմ ընկերուհիներից մեկը զանգեց ինձ և պատմեց իր ստացած առաջարկի մասին, որը միաժամանակ թե՛ վախեցնող էր թվում, թե՛ ռազմավարական: Նրան խնդրել էին մասնակցել տղամարդկանց հավաքույթի, որտեղ պետք է ներկա լինեին ազդեցիկ տղամարդ առաջնորդներ: Այդ առաջարկը դուր չէր եկել նույնիսկ նրա ամուսնուն:

Ստանալով կոնֆերանսի գրքույկը և այնտեղ տեսնելով իր նկարը՝ որպես միակ կին խոսնակի, նա շփոթվել և վախեցել էր՝ մտածելով, որ չի կարողանա գլուխ հանել: Ուստի, զանգել էր ինձ, իսկ ես նրա հետ խոսելիս անգիտակցաբար բերանիցս թռցրել էի հետևյալ խոսքերը. «Դու ամբողջ կյանքդ նախապատրաստել ես այս պահի համար. դու կարող ես դա անել և կարող ես լավ անել: Ես համոզված եմ, որ դա կանես գրավիչ, աստվածային և իմաստուն ձևով»:

Ես լսեցի, թե ինչպես նա դանդաղ շունչ քաշեց, և զգացի, որ գլխով համաձայնության նշան արեց: Ես գիտեի, որ նա մենակ չէր կանգնելու այդ մարտահրավերի առջև. Առյուծը նրա կողքին էր լինելու, նա հետևելու էր Նրան և չէր շեղվելու իր ճանապարհից. թեկուզ և վախենար, բայց կիմանար, որ ինքը մենակ չէ:

Ովքեր հետևում են Հիսուսին, մնում են Առյուծի կողքին: Հիսուսը մեր Գառն է, որ մորթվեց, և հարություն առավ որպես Հուդայի Առյուծ:

> «...ահա՛ հաղթեց Առյուծը, որ Հուդայի ցեղից է՝ Դավթի Արմատը» (Հայտնություն 5.5):

ԿԱՆԳ ՄԻ ԱՌ

Որպեսզի քո քրիստոնեական աստվածապաշտության մեջ կրկին մի փոքր դող և երկյուղ ավելացնեմ, ես ցանկանում եմ, որ քեզ պատկերացնես առյուծի հետ քայլելիս: Ո՞վ գիտի, միգուցե Աստված խնդրի քեզ ինչ-որ վախեցնող բա՞ն անել:

Երբ Հիսուսին նկարագրում ենք Գալիլեայի ծովի մոտով քայլելիս և լեռան վրա սովորեցնելիս, բավական չէ, որ հասկանանք, թե Ով է Նա հիմա. Աստծո Որդին եկավ այս երկիր որպես մարդ՝ թողնելով Իր աստվածային արտոնությունները: Սակայն Նա այլևս չի քայլում երկրի վրա՝ մարդկային կերպարանք հագած. այսօր Նա երկրի վրա քայլում և գործում է Իր որդիների և դուստրերի միջոցով: Նա նստած է բարձրում՝ վայրի, շռայլ, երկնային շքեղության մի վայրում, որն ուժի և ճոխության դրսևորում է:

Բարձրացրո՛ւ քո աչքերը և տե՛ս Նրան որպես Հուդայի Առյուծ՝ Իր փառահեղ մեծությամբ և ուժով: Նա ցանկանում է, որ դու ապրես զարմանքի և հրաշքի վայրում, այլ ոչ թե կանոնների ու պարտականությունների տիրույթում: Թո՛ւյլ տուր, որ Նրա ձայնը քո ներսում անզուսպ և վայրի մի բան արթնացնի, և այն խոստումները, որ Աստված տվել էր մանուկ Երեմիային, այսօր քեզ է տալիս՝ Աստծո անվախ և մարգարեական հոգի ունեցող դո՛ւստր.

«Քեզ որովայնում չստեղծած՝
  Ես քեզ գիտեի,
և արգանդից դեռ դու դուրս չեկած՝
  Ես քեզ սրբեցի, Ես քեզ ազգերի մարգարե եմ դրել:
Եվ ես ասացի. «Ո՛հ, ով Տե՛ր Եհովա, ահա ես խոսել
չգիտեմ,
  որովհետև ես մանուկ եմ»:

Եվ Տերն ասաց ինձ. «Մի՛ ասա, թե ես մանուկ եմ,
  այլ՝ ուր որ քեզ ուղարկեմ՝ գնա՛,
և ամեն, ինչ որ քեզ պատվիրեմ՝ խոսի՛ր:
  Մի՛ վախեցիր նրանց երեսից, որովհետև
Ես քեզ հետ եմ, որ քեզ ազատեմ,- ասում է Տերը»»
(Երեմիա 1.5-8):

Երեմիայի նման ազդեցիկ լինելու համար դու պետք է հաստատվես այն ճշմարտության մեջ, որ Աստված քեզ հետ է: Սա դնում է քեզ այնպիսի դիրքում, որ երբեք չվախենաս՝ անկախ նրանից, թե ինչ են ուրիշներն ասում կամ անում:

Քո կյանքի ճանապարհն ուղեկցվում է բազմաթիվ ձայներով և ազդեցություններով: Ոմանք ուժեղացնում և հաստատում են քո բռնած ուղղությունը, ուրիշները շեղում և տարհամոզում են քեզ քո ճանապարհից: Որոշ ձայներ դրդում են քեզ գնալու դեռևս անհայտ վայրեր, իսկ մյուսներն էլ քեզ ետ են պահում: Կան անցյալից եկող՝ ընտանիքի, հիասթափության և վախի ձայներ, որոնք պարբերաբար գոռում և շշնջում են. «Մի կո՛ղմ շրջվիր, ետ շրջվիր. դու կարող ես ձախողվել և վնասվել»: Այս բացասական և կործանարար ձայները հորդորում են պաշտպանել ինքդ քեզ, բայց սրանց մեջ լսվում է նաև հզոր և կենսատու ձայների կանչը: Այդ ձայները միշտ կան, սակայն, եթե ուշադիր չլինես, կարող ես դրանք բաց թողնել: Երկնային այն զորքի ձայնը, որը քեզնից առաջ է գնացել, Սուրբ Գրքի միջոցով կանչում է քեզ՝ քաջալերելով առաջ գնալ և կանգ չառնել. «Մի՛ լսիր քո վախերին կամ քո շուրջը տիրող սարսափին: Մի՛ լսիր քո թշնամու ստերին, որը դատապարտված է հավիտենական տանջանքի: Մի՛ հուսահատվիր. մենք քո կարիքն ունենք: Ճանապարհից մի՛ շեղվիր և վազի՛ր քո ասպարեզը»:

Հիշի՛ր, որ առյուծի ներկայությունից բոլոր գազանները դողում են: Չնայած Սուրբ գրքում ասվում է, որ սատանան առյուծի պես շրջում է երկրով և փնտրում է, թե ում կարող է կուլ տալ (տե՛ս Ա Պետր. 5.8): Նա առյուծ չէ, այլ պարզապես նմանակում է առյուծին: Սատանան ընդհանրապես մրցակից չէ մեր իսկական Առյուծի հետ. խավարի իշխանն ու նրա կամակատարները ձևացնում են, թե աստվածային մոնչոց են հանում, և փորձում են աղոտ կերպով արտացոլել Աստծո լույսն ու ստեղծագործական հանճարը:

ՎՍՏԱՀԻ՛Ր ԱՌՅՈՒԾԻ ՀԵՏ ՈՒՆԵՑԱԾ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԻՆ

Երբ փոքր աղջիկ էի, Սուրբ Ծննդյան տոների առթիվ ինձ նվիրեցին «Նարնիայի քրոնիկոնները» պատմվածքնե-

րի վիպաշարը: Ամեն մի պատմությունը կարծես թաքնված գանձ լիներ: Երբ ավարտեցի բոլոր գրքերի ընթերցումը, ես լաց եղա, բայց ոչ թե այն պատճառով, որ պատմություններն ավարտվեցին, այլ որովհետև ես կորցրի իմ կապը հրաշալի և տարաշխարհիկ մի վայրի հետ: Ես հասկացա, որ Ասլանը ներկայացնում էր Հիսուսին, սակայն չէի կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ ինձ ներկայացրած Հիսուսը նույն վայրի, անսանձ, սակայն հասանելի առյուծն էր, որին ես սիրեցի այդ պատմվածքները կարդալիս:

Նա քայլում էր Իր զավակների հետ, և ես չէի ցանկանում վերադառնալ լուռ, սրբացված սրբապատկերներին և սուրբ սառը ջրերին. ես ուզում էի կենդանի առյուծին, նաև Աստծո հետ այնպիսի խորը, ջերմ և կենդանի հանդիպում էի ցանկանում, որ Նրա շոշափելի ներկայությունն անհերքելի լիներ: Ես այնպիսի հզոր սեր էի ուզում, որ այն վախեցներ ինձ: Ես այնքան մաքուր արդարություն էի ուզում, որ այն շնչահեղձ աներ ինձ:

Ես ցանկանում էի լինել Լյուսի մի աշխարհում, որտեղ կենդանիներն ու ծառերը խոսում են, որտեղ առաքինությունն ու ճշմարտությունը վարձատրվում են, որտեղ սխալները ներվում են առանց պատժի կիրառման:

Աստված հրավիրում է մեզ գալ Իր առջև՝ մանկական անմեղ աչքերը լայն բացած, և ընդունել Նրա սիրո ու փրկագնման հրաշքը, բայց կրոնական կարգերն ու ժամանակի բարքերը մեզնից շատերին ստիպում են շեղվել: Եվ մենք մոռանում ենք մեր մանկության Առյուծին:

Այս գաղափարը պահելով ձեր մտքում՝ այցելենք Լյուսիին՝ թերթելով «Արքայազն Կասպիանը» գրքի էջերը, որը «Նարնիայի քրոնիկոնները» շարքի չորրորդ գիրքն է:

Ճանապարհը կորցրած և հոգնատանջ եղած երեխաները պատրաստվում են ևս մեկ սխալ շրջադարձ կատարել, երբ Լյուսին հանկարծ տեսնում է Ասլանին՝ իր Առյուծին:

- Նայե՛ք, նայե՛ք, նայե՛ք,- բացականչեց Լյուսին:

- Որտե՞ղ: Ի՞նչ,- հարցրին բոլորը:

- Առյուծը,- ասաց Լյուսին,- ահա Ասլանը, չտեսա՞ք:

Նրա երեսն ամբողջովին փոխվեց, և աչքերը փայլեցին:

- Դու իսկապե՞ս նկատի ունես…,- ասաց Պետրոսը:

- Քո կարծիքով որտե՞ղ տեսար նրան,- հարցրեց Սյուզանը:

- Մի՛ խոսիր մեծահասակի պես,- ասաց Լյուսին՝ ոտքը գետնին դոփելով,- ես չեմ կարծում, որ տեսա նրան. ես իսկապե՞ս տեսա նրան:

- Որտե՞ղ, Լյո՛ւ,- հարցրեց Պետրոսը:

- Հենց այնտեղ՝ այս սնձենիների մեջտեղում: Ո՛չ, կիրճի այս կողմում, վերևում, հակառակ այն ուղղության, որ դուք ցանկանում եք գնալ: Եվ նա ցանկանում էր, որ մենք գնայինք այն ուղղությամբ, որ նա կանգնած էր՝ դեպի վերև:

- Ի՞նչ գիտես, որ դա այն է, ինչ նա ցանկանում էր,- հարցրեց Էդմունդը:

- Նա….ես…ես… պարզապես գիտեմ,- ասաց Լյուսին,- դա երևաց նրա դեմքից:

Իսկ մյուսներն իրար նայեցին՝ շվարած լռությամբ[1]:

Երբ Առյուծը հայտնվում է, քո դեմքի արտահայտությունն արտացոլում է դա: Տեսիլքի հետ գալիս է իմացություն:

Ես հիշում եմ, որ այդ *իմացությունը* տեսա իմ որդու՝ Էդիսոնի դեմքին, երբ ինձ ասաց, որ համոզված է, որ Ջուլիանան իր ապագա հարսնացուն է: Ես նոր էի վերադարձել Կիևում տեղի ունեցած կանանց կոնֆերանսից, և իմ կարճատև բացակայության (վեց օր) ընթացքում իմ որդին հանդիպել էր իր ապագա կնոջը: Նա ցանկանում էր, որ ես հենց այդ օրը նրանց հետ ընթրիքի մասնակցեի: Էդիսոնն ինձ ասաց, որ վստահ է, որ այդ աղջիկը հենց «նա» է:

Երբ նրան հարցրի, թե որտեղից գիտի դա, նա նայեց ինձ ու ասաց.

-Պարզապես *գիտեմ:*

Այդ պահին ես նույնպես հասկացա, որ իմ որդին այդ երիտասարդ աղջկա մեջ ինչ-որ բան էր տեսել, որ նրան ուժ էր տվել գնալ մի ճանապարհով, որը նա չէր կարող բացատրել: Եվ որպես մայր՝ ես պետք է աջակցեի նրան այդ հարցում: Նույնիսկ նախքան Ջուլիանայի հետ հանդիպելը ես հավատում էի, որ նա իմ որդու համար էր ստեղծված:

Երբ մենք պարբերաբար հանդիպում ենք Առյուծին, պետք է վստահենք այն գիտելիքին, որը ստանում ենք այդ հանդի-

պումների շնորհիվ, նույնիսկ եթե մյուսները չեն հասկանում այն, ինչն ակնհայտ է մեզ համար:

Չնայած մյուս երեխաների թերահավատությանը՝ Լյուսին վստահեց այն ամենին, ինչ տեսել էր, և գիտեր, որ ճշմարիտ է:

Երբ Լյուսին երեխաներին ցույց է տալիս այն ուղղությունը, որով Ասլանը ցանկանում է, որ նրանք գնան, երեխաները կասկածանքով են վերաբերվում. նրանք ոչ միայն կասկածում են, որ նա տեսել է Ասլանին, այլև զարմանում են, թե ինչու է Ասլանը հենց նրան հայտնվել, և որոշում են քվեարկել՝ կա՛մ հետևել Լյուսիին և նրա Առյուծին, կա՛մ ավելի ուղիղ ճանապարհ ընտրել: Լյուսին պարտվում է, և երեխաները շրջվում ու այլ ճանապարհ են ընտրում: Նա հետևում է խմբին՝ լաց լինելով, որ նրանք հակառակ ուղղություն են բռնել:

Կարծում եմ, որ բոլորս գիտենք, թե ինչպես էր իրեն զգում Լյուսին:

Երբ դու Աստծուց ինչ որ նշան ես տեսնում, որն ուրիշները չեն տեսնում, միշտ հարցեր են առաջանում, և մարդիկ ուզում են իմանալ, թե ինչու քեզ ցույց տրվեց մի բան, որն իրենք բաց են թողել: Ես հասկացել եմ, որ միայն Աստված կարող է պատասխանել այդ հարցին. Նա կարող է անել այնպես, ինչպես ցանկանում է, քանի որ Աստված տարբեր մարդկանց տարբեր ձևով է հայտնում Իրեն: Եվ սա պետք է Քրիստոսի մարմնի, այսինքն՝ եկեղեցու մեջ փոխկախվածություն ստեղծի, այլ ոչ թե հարցեր առաջացնի: Եթե մեզնից յուրաքանչյուրը Աստծուց ստանա իր բաժինը, առաջնորդները կզորացնեն և կխրախուսեն մեկը մյուսին. սարսափելի է, երբ քեզ չեն հասկանում և առաջնորդվում են սխալ ուղղությամբ: Սոսկալի է, երբ քեզ շրջապատողները չեն արժեքավորում քո աստվածատուր իմացությունը: Հիշի՛ր, որ նույնիսկ այս ամենի մեջ Աստված գործում է ավելի մեծ նպատակի համար: Թույլ մի՛ տուր, որ մերժվածությունը և չհասկացված լինելը դատաստան կամ դառնություն բերեն քո հոգուն. կարողացի՛ր անցնել դրանց միջով:

Այժմ վերադառնանք մեր պատմությանը *«Արքայազն Կասպիանը»* գրքից: Բազմաթիվ սխալ շրջադարձերից և գրեթե ճակատագրական հանդիպումից հետո երեխաները վերա-

դարձան այնտեղ, որտեղից սկսել էին: Նրանք ուժասպառ ընկան և քնեցին: Ասլանը գիտեր, որ Լյուսին ցավ էր զգում, և հետագա վտանգը կանխելու նպատակով կրկին այցելում է նրան:

Նրանց վրանից հեռու ստվերների միջից Ասլանը կանչում է Լյուսիին, ով տարօրինակ կերպով արթուն էր մնացել այդպիսի հոգնեցուցիչ օրվանից հետո: Նրա ձայնից ցնցված և ուրախությամբ լցված՝ աղջիկը գնում է նրա մոտ: Նկարագրելով անցած օրը՝ Լյուսին քննադատում է իր եղբայրներին ու քույրերին՝ նրա խորհրդին չհետևելու համար: Առյուծի սրտի խորքից «դժգոհության մռնչոց» է դուրս գալիս: Լյուսին ապշած հարցնում է նրան, թե արդյո՞ք որևէ սխալ բան է արել:

- Բայց դա իմ մեղքը չէ, այդպես չէ՞:
Առյուծն ուղիղ նայեց նրա աչքերին:
- Օ՜, Ասլա՛ն,- ասաց Լյուսին,- ես ինչպե՞ս կարող էի մյուսներին թողնել և միայնակ քեզ մոտ գալ:
Ասլանը ոչինչ չասաց[2]:

Առյուծն ուղիղ նայեց նրա աչքերին: Աստծո ներկայության մեջ այդ ի՞նչն է, որ այդպիսի հստակություն է բերում մեր աղավաղված մարդկային տեսողությանը: Հաճախ, երբ մտնում եմ Նրա ներկայության մեջ, սկզբում այն կարծիքին եմ լինում, թե ես զոհ եմ, որին սխալ են հասկացել և զրպարտել են, սակայն հետո գիտակցում եմ, որ որոշ ընտրություններ ինքս եմ կատարել: Բայց և այնպես, մեր Առյուծի ներկայությամբ ես չեմ ամաչում, այլ՝ զորանում և փոխվում եմ, պատրաստ եմ լինում առաջ գնալու:

Ժամանակ առ ժամանակ բոլորս հայտնվում ենք այսպիսի դժվար իրավիճակում. դու Աստծուց ստանում ես, որ պետք է գնաս մի ուղղությամբ, մինչդեռ հավասարակիցները կամ ընտանիքի անդամները ճնշում են քեզ, որպեսզի հետևես մեկ այլ ուղղության: Լինում են ժամանակներ, երբ գայթակղվում ես փոխզիջման գնալ քո հավատքի կամ բարոյականության հարցում՝ պարզապես խմբի հետ քայլելով և լուռ մնալով: Անկախ ամեն տեսակի ճնշումներից՝ դու արդեն գիտես, որ երբ կանգնում ես մեր Առյուծի առջև, արդարացումները դեր չեն

խաղում. Նա պատասխանում է դրանց լռությամբ: Ես հաճախ լսել եմ, որ եթե Աստված լռում է, վերհիշիր, թե ինչ է Նա վերջին անգամ ասել, որ անես: Դու ընդունե՞լ ես դա, արե՞լ ես, ասե՞լ ես կամ տվե՞լ ես... Եթե ոչ, Նա դեռ սպասում է քո արձագանքին:

«ԴՈՒ ԿԻՆ ԱՌՅՈՒԾ ԵՍ...»

Աստված չի փոխում Իր հրահանգները զուտ այն պատճառով, որ մարդիկ քվեարկության են դնում Նրա ասածները կամ չեն համաձայնում Նրա հետ: Աստված նույնպես մեղավորներ չի փնտրում. Նա պարզապես սպասում և լսում է, մինչև որ մենք դադարենք մեղադրել և սկսենք անկեղծ խոսել: Խոնարհության այս դիրքը լիազորում է մեզ վեր կենալ և Նրա հետ մտնել վայրի բնության մեջ:

Կ. Ս. Լյուիսը շատ լավ ըմբռնեց այս խորը ճշմարտությունը՝ նկարագրելով Լյուսիի և Ասլանի միջև փոխազդեցությունը: Լյուսին հասկացավ, որ պետք է հետևեր Ասլանին, նույնիսկ եթե մյուսները նրան չմիանային: Եվ այս հայտնությամբ եկավ նոր պատասխանատվություն. Ասլանը Լյուսիին ևս մեկ հնարավորություն տվեց ու խնդրեց, որ արթնացնի իր եղբայրներին ու քույրերին և ասի, որ կրկին տեսել է իրեն և իսկապես իրեն հետևելու ժամանակն է:

- Բայց նրանք չեն հավատա ինձ,- ասաց Լյուսին:

- Կարևոր չէ,- ասաց Ասլանը:

- Օ՜, սիրելի՛ս, օ, սիրելի՛ս,- ասաց Լյուսին,- ես այնքա՜ն ուրախ եմ, որ կրկին գտա քեզ... կարծում էի, որ դու եկել ես նախորդ անգամվա պես մռնչալու, վախեցնելու և հեռացնելու բոլոր թշնամիներին: Իսկ հիմա ինչ-որ ահավոր բան է լինելու:

- Քեզ համար դժվար է, փոքրի՛կս,- ասաց Ասլանը,- սակայն մի բանը երբեք նույն ձևով չի կրկնվում:

Եկե՛ք մի պահ կանգ առնենք: Ինձ դուր է գալիս Աստծո հրահանգին ուղղված մարդու արձագանքը: Նա մեզ արկածների է պատրաստում, իսկ մենք պատկերացնում ենք, թե մի ահավոր ձախողում է լինելու: Լյուսին, դադարելով հուսալ, սկսում է թաքնվել:

Եկե՛ք շարունակենք.

Լյուսին գլուխը մտցրեց Ասլանի բաշի տակ՝ փորձելով թաքնվել Նրա երեսից, սակայն նրա բաշի մեջ ինչ-որ հրաշք բան էր թաքնված: Նա զգաց, թե ինչպես առյուծի ուժն իրեն անցավ: Եվ հանկարծ ոտքի կանգնեց:

- Ներողությո՛ւն, Ասլա՛ն, այժմ ես պատրաստ եմ,- ասաց նա:

- Այժմ դու կին առյուծ ես,- ասաց Ասլանը,- և այսուհետև ամբողջ Նարնիան կվերականգնվի[3]:

Երբ կարդացի «Այժմ դու կին առյուծ ես...» խոսքերը, ապշեցի: Ես հավատում եմ, որ Աստված ցանկանում է այս նույն հռչակումն անել Իր դուստրերից յուրաքանչյուրի կյանքում, ով կդադարի լաց լինելուց և կպատրաստի իր անձը: Եվ այդ ժամանակ արդեն Աստված կարող է հռչակել. «Այժմ դու համարձա՛կ ես և ունես Իմ տեսանկյունը: Դու գիտակցում ես քո ուժեղ կողմերը և հարմար ես կռվի համար»: Հիշի՛ր, որ դու բանակի մի մասն ես, որը ներգրավված է ընդհանուր մարտի մեջ:

ԱԶԴԵՑԻԿ ԼԻՆԵԼՈՒ ԽԻԶԱԽՈՒԹՅՈՒՆ

Իսկ ի՞նչ մարտ է դա: Թվում է, թե խավարն ավելի է շատանում, երբ մեր լույսն առկայծում է:

Ժամանակն է հայտարարելու, որ Առյուծը մեր մեջ է: Հավանաբար, մենք բաց ենք թողել Նրան, քանի դեռ վիճում էինք անկարևոր բաների շուրջ: Մեր շարքերը բաժանվել են, և մեր ուշադրությունը ցրվել է, և խավարի ուժերն ավերածություն են բերել այն երկրագնդի վրա, որը մենք պետք է պահեինք: Մեր շուրջը կատաղի մարտ է ընթանում, սակայն մենք չափազանց զբաղված ենք մեր բանակի մեջ կռվելով:

> «Բայց հավիտենից Թագավորին, այն անեղծին և աներևույթին, այն մեկ Աստծուն լինի պատի՛վ և փա՛ռք հավիտյանս հավիտենից, ամե՛ն: Այս պատվիրանն ավանդում եմ քեզ՝ Տիմոթեոս որդյա՛կ, սկզբում քեզ վրա եղած մարգարեությունների պես, որ նրանցով պատերազմես բարի պատերազմը՝ ունենալով հավատք և բարի խղճմտանք, որ մի քանիսը դեն գցելով՝ հավատքում ալեկոծություն քաշեցին» (Ա Տիմոթեոս 1.17-19):

Սրանք խոստումներ են, որ բաց են թողնվել մեր ապագայի մեջ: Մենք պատերազմում ենք լույսի և հույսի զենքերով: Նա կրկին չի հաղթելու մահվանը. Նա արդեն տարել է այդ հաղթանակը, և ժամանակն է քայլենք Նրա հաղթանակի մեջ և մյուսներին էլ քաջալերենք նույնն անելու համար:

Այսօր մեր երկիրը բարոյական, տնտեսական և հոգևոր փլուզման եզրին է: Մենք դրսից ու ներսից շրջապատված ենք թշնամիներով և ահաբեկիչներով: Վախն ու դավաճանությունն իրենց տարածայնությունն են տարածում ամենուրեք, և ոմանց թվում է, թե մենք չենք կարող ինքնուրույն մտածել:

Կարծես մեր ներկա մթնոլորտը նման է մի քանի հարյուր տարի առաջ տիրող Անգլիայի մթնոլորտին: Աղքատ ու մասերի բաժանված երկրից մի կայսրություն ստեղծվեց, և Մեծ Բրիտանիայի ժողովուրդը վերականգնվեց, երբ մի երիտասարդ կին արթնացրեց իր միջի առյուծին:

Քսանհինգ տարեկանում թագուհի Եղիսաբեթ Առաջինը տիրեց մի երկրի գահին, որը ֆինանսական և բարոյական սնանկության էր մատնված: Անգլիային բոլոր կողմերից սպառնում էին ավելի ուժեղ երկրները, որոնք կաթոլիկության շուրջն էին միավորվել: Հակառակ դրան՝ երկրի ներսում մղվող կրոնական պատերազմների հողի վրա Անգլիան բաժանվել էր մասերի: Մեծ Բրիտանիան թագավոր Հենրի Ութերորդի և թագուհի Մերիի աղմկոտ գահակալության դառը հետևանքներն էր կրում:

Չնայած այս ամենին՝ լսեք, թե ինչ ասաց թագուհի Եղիսաբեթը իր թագադրման ելույթի ժամանակ. «Այն բեռը, որ ընկել է ինձ վրա, հիացնում է ինձ»[4]: Կարծում եմ, դարեր անց նրա խոսքերը շարունակում են արդիական և սադրիչ հնչել: Այդ ո՞ր կինն է հիանում, երբ պետք է հսկայական բեռ կրի:

Ես ուրախ եմ, որ այս թագուհին չարդարացավ նրանով, որ ինքը չափազանց երիտասարդ, չափազանց փխրուն կամ «սխալ» սեռի ներկայացուցիչ էր, և գահին տիրելու նրա իրավունքն անընդհատ կասկածի տակ էր դրվում: Սակայն թագուհին չէր թուլանում, նույնիսկ երբ նրա մասին ասում էին, որ նա թագավոր Հենրի Ութերորդի ապօրինի դուստրն է: Փոխարենը նա ընտրեց ապշել ու հիանալ, և նրա հիացմունքը ստիպեց նրան մտնել ահի, հրաշքի և Աստծուց կախվածության մեջ:

Փոքր հասակից Եղիսաբեթը սովորել էր զգուշությամբ ընտրել իր խոսքերը: Եթե նա այդպես չվարվեր, ապա կենդանի չէր մնա մինչև քսանհինգ տարեկանը. ծնունդից մինչև մահ նա շրջապատված էր այնպիսի մարդկանցով, որոնք ցանկանում էին նրան միայն վնաս պատճառել: Թագուհու պալատում և երկրում ապրում էին դավաճաններ ու զավթիչներ, որոնք պատրաստ էին սխալ գտնել նրա խոսքերի մեջ: Նրա խորթ քույր Մերին, որ այն ժամանակ Անգլիայի թագուհին էր, վաստակել էր «Արյունոտ Մերի» տիտղոսը իր գահակալության օրոք կատարված մի շարք մահապատիժների պատճառով: Մերին ամեն հնարավորություն օգտագործում էր Եղիսաբեթին սպանելու համար: Նա այնքան հեռու գնաց, որ աղջկան բանտարկեց Լոնդոնի աշտարակում, որտեղ նախքան գլխատվելը փակված էր եղել Եղիսաբեթի մայրը՝ Աննա Բոլեյնը: Եղիսաբեթի դեմ ուղղված թագուհի Մերիի հարձակումներն ու դավադրություններն ավարտվեցին իր իսկ մահվամբ:

Եղիսաբեթի թագադրվելուց կարճ ժամանակ անց նրա զարմուհի Մերին՝ Շոտլանդիայի թագուհին, որին աջակցում էր կաթոլիկ եկեղեցին, վերադարձավ Մեծ Բրիտանիա և շարունակ փորձեր էր անում՝ Անգլիայի գահը գողանալու համար: Ի վերջո, Եղիսաբեթը նրան մահվան դատապարտեց այն ժամանակ, երբ հայտնի դարձավ նրա ակնհայտ մարդասպանության փորձը: Եղիսաբեթին դավաճանեցին, մերժեցին և չվստահեցին, սակայն նա թույլ տվեց, որ դժվարություններն իրեն ձևավորեն ու դարձնեն լավագույն ղեկավար, որը Անգլիան երբևէ տեսել է:

Ամուսնանալու և ժառանգ թողնելու փոխարեն թագուհի Եղիսաբեթ Առաջինը երդվեց իր թագավորության համար լինել թե՛ հարսնացու, թե՛ մայր: Այսպիսի խորը նվիրվածությունը հնարավորություն տվեց նրան ուշադրությունը կենտրոնացնելու այն հզոր ռազմավարությունների վրա, որոնցով հաստատվել էր նրա թագավորությունը: Շարունակ կրթվելուց և կատարելագործվելուց բացի՝ թագուհին իր շուրջը իմաստուն խորհրդականների էր հավաքել և ուշադիր հետևում էր իր հպատակների տեսքին ու բարեկեցությանը:

Եղիսաբեթ թագուհու գահակալության օրոք՝

- կրոնական առանձին խմբերը միավորվեցին Անգլիայի եկեղեցու ներքո,
- Անգլիայի մեկուսացած տնտեսությունը դարձավ բազմաճավալ և անկախ տնտեսություն,
- գիտությունն ու արվեստը ծաղկեցին,
- Անգլիայի ռազմածովային ուժերը դարձան ամենաազդեցիկը աշխարհում,
- լայն թափ առան Ամերիկայի հետազոտությունն ու բնակեցումը:

Եղիսաբեթ թագուհին իր երկիրը մտցրեց Ոսկե դարաշրջանի մեջ և փոքր թագավորությունը վերածեց կայսրության:

Զարմանալի չէ, որ նրան կին առյուծ են անվանել: Նույնիսկ այս բոլոր ձեռքբերումներով հանդերձ նրա դերը՝ որպես թագուհի, երբեք չդադարեց բեռ լինելուց: Նա ասաց.

> Թագավոր լինել և թագ կրել՝ ավելի փառավոր բան է նրանց համար, ովքեր տեսնում են այն, և ոչ այդքան հաճելի նրանց համար, ովքեր կրում են այն[5]:

Պատմական գրքերում ասվում է, որ Եղիսաբեթ թագուհին արեց ավելին, քան պարզապես թագ կրելը. նա նորարարության, առևտրի և հետազոտությունների նախաձեռնող եղավ և հասկացավ անբաժանելի հավատարմության հետևում գտնվող ուժը և հոգ տարավ պետության զարգացման համար, այն դեպքում, երբ Ֆրանսիայի նման երկրները հեղափոխության պատճառով մասնատման եզրին էին կանգնած:

Եղիսաբեթն անվախ էր մարտի դաշտում: Ահա նրա ելույթից մի հատված, երբ պատրաստվում էր իր զորքերի հետ մտնել կռվի դաշտ.

> «Թո՛ղ բռնակալները վախենան, ես միշտ եղել եմ Աստծո իշխանության ներքո և իմ կարևորագույն ուժն ու ապահովությունը դրել եմ իմ հպատակների հավատարիմ սրտերում և բարի կամքի մեջ: Եվ այդ պատճառով այս անգամ ձեզ եմ միանում ոչ թե զվարճանքի և հաճույքի համար, այլ՝ մարտի կիզակետում կանգնելու համար: Թե՛ ողջ մնամ, թե՛ մեռ-

> նեմ, թող ձեր մեջ լինեմ: Ես պատրաստ եմ նույնիսկ փոշիացնելու իմ պատիվն ու արյունը Աստծո համար, իմ թագավորության և իմ ժողովրդի համար...
>
> Ես գիտեմ, որ թույլ և փխրուն կնոջ մարմին ունեմ, սակայն ունեմ տիեզերքի Արքայի և Անգլիայի թագավորի սիրտն ու հոգին: Եվ եթե Պարման, Իսպանիան կամ Եվրոպայի որևէ իշխան համարձակվի նվաճել իմ թագավորության սահմանները, ինչն անարգանք է ինձ համար, ապա ես ինքս զենք կբարձրացնեմ... Մենք շուտով նշանավոր հաղթանակ կունենանք Աստծո, իմ թագավորության և իմ Ժողովրդի թշնամիների նկատմամբ»[6]:

Այդպես էլ եղավ:

Տեսնո՞ւմ եք, թե ինչ տեղի ունեցավ, երբ մի կին ընտրեց ավելի շուտ ապշել, քան սարսափել: Եղիսաբեթն անվեհեր հետևեց Աստծուն՝ ուշադիր լինելով իր ճակատագրին: Նա մակերեսային չէր Աստծո խորհրդի որոնումներում, և երեք տարբեր լեզուներով աղոթքի օրագրեր էր պահում: Եվ արդյունքներն ապշեցուցիչ էին: Միգուցե դու զգում ես, որ Աստված քեզ ինչ-որ արտասովոր կամ վախեցնող բանի մեջ է կանչում: Եթե այդպես է, ուրեմն թո՛ւյլ տուր, որ Լյուսիի և Եղիսաբեթ Առաջին թագուհու օրինակները խրախուսեն քեզ առաջ գնալ:

Կարևոր չէ, թե ուրիշներն ինչ են տեսնում քեզ համար. եթե Աստված խոսել է, հավատա՛ Նրան: Գնա՛ այնտեղ, որտեղ Նա է ասում. լսի՛ր այն, ինչ Նա է ասում քեզ: Հետևի՛ր քեզ առաջնորդող Առյուծին և վստահի՛ր «իմացությանը», նույնիսկ եթե ուրիշները չհասկանան քեզ:

Դու պատրաստ ես հիանալու:

11

Շշնջոցից՝ մռնչոց

«Ես առյուծ չէի, սակայն ինձ վրա դրվեց մռնչալու պարտականությունը»:

ՈՒԻՆՍԹՈՆ ՉԵՐՉԻԼ

Առյուծները մռնչում են:

Անկասկած, դու դա գիտես, բայց գիտեի՞ր արդյոք, որ էգ առյուծներն էլ են մռնչում:

Որպեսզի առյուծների մռնչոցն ազդեցիկ լինի, նախ և առաջ, նրանք պետք է փոխեն իրենց դիրքը: Հզոր մռնչոց արձակելու այս ձևը գլխի խոնարհում է պահանջում: Առյուծները կախում են իրենց հզոր գլուխները և երկարացնում են վիզը, որպեսզի թոքերն օդով լցնեն: Ինձ հետաքրքիր է՝ արդյո՞ք նրանք զգում են, որ պատրաստ են արձակելու այդ մռնչոցը, որն, ինչպես հայտնի է, լսվում է մինչև ութ կիլոմետր տարածության վրա՝ գիշերային հանդարտ օդում, և ցնցում է մարդկանց ու կենդանիների սրտերը: Առյուծի մռնչոցն իր ահասարսուռ հրաշքով կարող է համակել և կանգնեցնել քեզ քո ճանապարհին:

Նմանապես, եթե մենք՝ Աստծո կին առյուծներս, երբևէ պատրաստվում ենք այսպիսի ուժգնության ձայն արձակել,

ապա դա մեզնից պահանջում է, որ փոխենք մեր ներկա դիրքը: Մռնչալու կարողություն ունենալու համար մենք պետք է կախենք մեր բարձրացված գլուխները և խոնարհվենք: Խոնարհության այս կեցվածքը աղոթքի հետ միասին մեզ այնպիսի դիրքում կդնի, որը հնարավորություն կտա մեզ ընդունելու Աստծո Հոգու թարմ ներհոսքը: Ես հավատում եմ, որ այս մռնչոցը կարձակվի այն ժամանակ, երբ Հոգու հոսքը մեր մեջ ավելին կլինի, քան Նրա կյանքի լիությունն ընդունելու մեր կարողությունը: Այդ ժամանակ, այլևս չկարողանալով պահել Նրա ճշմարտությունը, սերն ու բարությունը, մենք կարձակենք այն «մռնչոցը», որը հռչակում է, թե Ով է Աստված:

Սակայն, ի տարբերություն էգ առյուծի մռնչոցի, մեր մռնչոցն ավելին կլինի, քան միայն ձայն արձակելը: Մեր մռնչոցը (հռչակումը) կլինի հավատքի խոսքերի, արարքների և գործերի աստվածային միահյուսում: Երբ հավատքի, հույսի և սիրո բոլոր անշոշափելի տարրերը շոշափելի դառնան անհատների մեջ և արտահայտվեն աշխարհի կարիքների ու Աստծո սիրո հանդեպ մեր միավորված արձագանքի մեջ, այդ ժամանակ մեր մռնչոցը լսելի կլինի: Երբ մենք նմանակենք մեր Առյուծին, աշխարհը կլսի Նրա մռնչոցը: Այն ժամանակ բոլոր աղմուկները կդադարեն, և մի աղաղակ կբարձրանա. «Միայն Աստծո՛ւն երկրպագիր»:

Մեր աշխարհը լի է մռնչոցներով: Երբ ես ուսումնասիրեցի մռնչոցի գաղափարը, հայտնաբերեցի, որ շատ բաներ են ընդունակ մռնչալու... Օվկիանոսները, անսանձ քամին, ջրվեժները, երբ հսկայական ծավալով գահավիժում են մեծ բարձրություններից, մարզադահլիճներում հավաքված երկրպագուները և այլն:

Երկնքի գահի առջև մռնչում են չորս կենդանի արարածները. «Սո՛ւրբ, սո՛ւրբ, սո՛ւրբ», և այս մռնչոցի ձայնը ցնցում է երկնային ճարտարապետության հիմքերը (տե՛ս Եսայի 6.4): Երկրագնդի վրա մենք կրկնում ենք նրանց խոսքերը երգերի տեսքով, սակայն Սուրբ Աստծո այս հռչակումն ի սկզբանե մռնչոցով է արտահայտվել:

Մեր Բարձրյալ Աստված՝ ամենի Տերը... մռնչում է:

> «... Տերը բարձրից որոտալու (անգլ.-ում՝ մռնչալու) է և Իր սուրբ բնակությունից տալու է Իր ձայնը...» (Երեմիա 25.30):

Եվ կրկին.

> «...Ես Սուրբ եմ, և Ես այստեղ եմ՝ ձեր մեջ: Ժողովուրդն ի վերջո Աստծո հետևից է գնալու: Ես մռնչալու եմ առյուծի պես. օ՜, ինչպես եմ մռնչալու: Իմ վախեցած զավակները վազելով գալու են արևմուտքից» (Ովսե 11.9,10, MSG):

Ի՞նչն է ավելի ուժեղացնում բառերի արտասանությունը, որ այն ավելի հնչեղ է դառնում, քան շշնջոցը, մռմռոցը, աղաղակը կամ գոչյունը: Արդյո՞ք միայն ձայնի բարձրությունը բավական է այն սարսափազդու մռնչոց դարձնելու համար:

ԱՅՆ ՍԿՍՎՈՒՄ Է ՇՇՆՋՈՑՈՎ

Այս հարցին պատասխանելու համար նախ՝ ուսումնասիրենք, թե ինչ է շշնջոցը:

Սաղմոսերգուն գրում է.

> «Լսում եմ ամենամեղմ շշնջոց Մեկից, որ երբևէ չէի ենթադրի, որ կխոսեր ինձ հետ» (Սաղմոս 81.5, MSG):

Ահա սաղմոսերգուն բացատրում է իր հիացմունքը, երբ վերապրեց Աստծո շշնջոցը: Մի՞թե մինչև այդ նա չէր գրել և երգել Աստծո հանդեպ իր նվիրվածության մասին: Հավանաբար այս Սաղմոսում նա վերանայում է այն հրաշքը, թե ինչպես սկսվեց Աստծո հետ իր հաղորդակցությունը. մենք չենք կարող ճանաչել այն, ինչը նախկինում չենք լսել: Դավիթն առաջին անգամ լսեց Աստծո շշնջոցը, երբ դեռ երիտասարդ հովիվ էր, և դրանից հետո նա ամենուրեք լսում էր Աստծո ձայնը: Նրա ձայնը նկարագրվում է որպես «ամենամեղմ շշնջոց»: Մեծափառ Արքան խոսում է մեղմ և ցածր ձայնով՝

ընդգծելով մեր մարդկային կյանքի դաժան իրականությունը: Նա առաջարկում է մեզ հանգիստ ու լուռ լինել. «Դադարե՛ք և ճանաչե՛ք, որ Ես եմ Աստված» (Սաղմոս 46.10):

Ես վստահ եմ, որ Բարձրյալ Աստված և ամեն բանի Արարիչը գիտեր, որ Իր զավակները կանգ կառնեին և կհանդարտվեին հենց Իր շնչոցից:

Ես ավելի զարմանալի եմ համարում այն Աստծո գաղափարը, ով շնչում է, քան այն Աստծո, ով գոռում է: Այսպիսի հզոր Աստծուց կարող եք ակնկալել որոտընդոստ ձայն, բայց շնչոցն անսպասելի է: Մեղմ և ցածր ձայնով Աստված մեր ուշադրությունը գրավելու կարողություն ունի. ինչպես որ անդունդն անդունդին է կանչում, այնպես էլ Աստծո շնչոցը Արարչի արձագանքն է, որ արձագանքում է Նրա զավակների մեջ:

Եղիան փնտրում էր Աստծուն քամու, երկրաշարժի և կրակի մեջ, սակայն լսեց Նրա շնչոցը (տե՛ս Գ Թագ. 19.12): Երբ Եղիան լսեց հանդարտ ու մեղմ ձայնը, դուրս եկավ իր քարանձավից և ականջ դրեց, թե ինչ էր Աստված ասում իրեն:

Հանդարտ ու մեղմ ձայնը (շնչոցը) խորը և մտերմիկ բաներ է հաղորդում այն մարդկանց, որոնք բավականաչափ լուռ են մնում այն լսելու համար: Այս լռության մեջ մեր հոգին լսում է Հոր որդեգրող շնչոցը: Մեզնից յուրաքանչյուրը փափագում է լսել Աստծո շնչոցը. դու ստեղծվել ես քո Արարչին լսելու համար: Թո՛ւյլ տուր, որ Նա խոսի քո հոգու հետ և բավարարի քո սրտի փափագը:

Ես հավատում եմ, որ երբ Աստված խոսում է, այն միշտ սկսվում է շնչոցով: Ցանկացած մեծ բան սկսվում է շնչոցով:

Երբ ես հղի էի և զգում էի, թե ինչպես էր կյանքն աշխուժանում իմ ներսում, դա կարծես նման լիներ մի շնչոցի, որը գալիս էր լույս աշխարհ եկող երեխայից. աղաղակը սկսվում է ներսի շնչոցից: Հավանաբար առաջին անգամ դու Աստծո շնչոցը լսեցիր՝ ի պատասխան քո հոգու խորքից եկող ճիչի. «Աստվա՛ծ, ես քաղցած եմ, վախեցած և միայնակ»:

Եվ Նա շնչաց. «Մի՛ վախեցիր, Ես այստեղ եմ, զավա՛կս»:

Երբեմն ես նույնիսկ կանանց պատկերացնում եմ իբրև

«շշնջոցների»: Վախեցած երեխային օրորելիս մայրը չի գոռում նրա վրա, այլ՝ շշնջում է: Տարիներ շարունակ ես լսում եմ, թե ինչպես են Աստծո դուստրերը միմյանց շշնջում այն բաների մասին, որոնք արթնանում են իրենց ներսում: Գրեթե երեք տասնամյակ է՝ ես շշնջում եմ իմ ամուսնու ականջին, երբ միասին պառկած ենք լինում մեր անկողնում: Գիշերվա ժամին տաքուկ անկողնում բարձրաձայն խոսելը բոլորովին տեղին չէ: Անկողինը շշուկների, հանգստի և մտերմության տեղ է:

Լինում են ժամանակներ, երբ ծառայության ժամանակ որևէ կոպիտ կամ ոչ ճիշտ բան լսելով՝ ես չեմ կարողանում ինձ զսպել և շշնջում եմ. «Դա ճիշտ չէ»: Ջոնը և որդիներս, որոնք սովորաբար նստած են լինում իմ կողքին, լուռ գլխով են անում և երբեմն արմունկիս թեթև թփթփացնում են՝ ցանալով ասել. «Մենք հասկանում ենք, թե ինչու ես դու անհանգստացած, և կարիք չկա, որ բարձրաձայն ասես դա: Մենք քեզ լսում ենք»:

Կարծես ինչ-որ բան ինձ ստիպում է շշնջալ: Եվ ես կարծում եմ, որ սխալ է լուռ մնալ և չընդդիմանալ նրան, ինչը չափազանց փոքր է, չափազանց բացառիկ, աղավաղված կամ պարզապես սխալ: Միգուցե պատճառն այն դերն է, որ ես ունեմ. ես պետք է շշնջամ ճշմարտությունը, որպեսզի հեռացնեմ այդ սերմերը, նախքան դրանք արմատ կգցեն. իմ շշնջոցը հերքում է այն, ինչը ասվում է բարձրաձայն:

Ես շշնջում եմ այն ժամանակ, երբ իմ լսածը չի համապատասխանում նրան, ինչ Աստված շշնջացել է ինձ և կարևորություն տվել իմ կյանքում: Անկասկած, եղել են ժամանակներ, որ դու էլ նույնն ես զգացել: Եթե դու լսել ես Աստծո շշնջոցը, ապա գիտես, որ այն սուրբ է և արժանի է մեր ուշադրությանը: Հաճախ երբ մենք սովորեցնում կամ քարոզում ենք, պարզապես կրկնում ենք այն, ինչ ուրիշները սովորեցրել են մեզ: Բայց երբ Աստված է խոսում, դա բոլորովին այլ է: Աստծո շշնջոցը հասարակ բան չէ, և այն պետք է պատվել:

Աստված շշնջում է Իր որդիներին և դուստրերին: Դու զգո՞ւմ ես, որ սա շշնջալու և Աստծո շշնջոցը լսելու ժամա-

նակ է, իսկ միգուցե արդեն լսո՞ւմ ես այդ շշնջոցը. շշնջոցներն Աստծո խորհուրդների և կանխագիտության բարբառն են հանդիսանում:

Հազարավոր տարիներ մարդիկ փնտրել են Աստծո շշնջոցը և շատ հաճախ հանդիպել են լռության:

> «Որովհետև ասում եմ ձեզ, թե շատ մարգարեներ և թագավորներ կամեցան տեսնել այն, որ դուք եք տեսնում, և չտեսան, և լսել այն, որ դուք եք լսում, և չլսեցին» (Ղուկաս 10.24):

Հին մարգարեներն ու թագավորները ձգտել են լսել, սակայն Աստված նույնիսկ չի էլ շշնջացել: Նրանք ջանացել են տեսնել ապագան, բայց նրանց հորիզոնում ոչինչ չի երևացել: Ոչ մի ձայն, տեսիլք կամ պատկեր չի եղել, որ ստիպեր նրանց հարցնել իրենց կողքիններին. «Լսեցի՞ք դա»:

Հետո եկավ ժամանակը, երբ տրվեց ուղերձը՝ սակայն ոչ թե շշնջոցով, այլ՝ մարդու կերպարանքով: Շշուկով ասված Խոսքը մարմին դարձավ և բարձրաձայն խոսեց՝ մարդկանց դիպչելով, նրանց սովորեցնելով, բժշկելով և մեռելներին հարություն տալով: Դժբախտաբար, նրանք, ովքեր լարել էին իրենց ականջները լսելու համար, այլևս չեն կարողանում լսել: Եվ նրանք բաց թողեցին Քրիստոսին, որովհետև Աստված երևաց և խոսեց այլ կերպ, քան նրանք սպասում էին: Հիսուսը շշնջում էր մաքսավորների և ձկնորսների ականջներին, սակայն բղավում էր փարիսեցիների վրա:

Հիսուսն Իր Ով լինելը չբացատրեց խոսքերով, այլ այն հայտնեց Իր կյանքով: Նրա գործերը ցանկացած խոսքերից ավելի բարձր էին խոսում:

ՇՇՆՋՈՑԻՑ՝ ԱՂԱՂԱԿ

Ինչպես մեզնից շատերը՝ իմ ընկերուհի Բոբի Հյուսթոնը լսում է երկնքի ձանը և տեսնում, թե ինչպես է Բարձրյալի Հոգին մանդատ տալիս Իր դուստրերին: Եվ նրա համար պարզ են դարձել այս բանաստեղծական խոսքերը.

> «Աստծո շշնջոցն աղաղակ է դարձել»:

Աշխարհով մեկ կանայք ընկալում են այս խոսքերը, և Աստծո դուստրերից շատերն են լսում Նրա շշնջոցը: Իսկ ի՞նչ է այդ շշնջոցը, և ինչո՞ւ է այն հետզհետե ուժեղանում: Մենք հոչակում ենք մեր հույսը՝ ի պատասխան արդարության համար արված աղաղակների: Երբ Հիսուսի մայր Մարիամը ժողովրդի փրկության համար ստացավ Աստծո խոստումը, նա ոչ ոքի ոչինչ չասաց և այն գանձի պես պահեց իր սրտում: Այսօր ավելանում է Աստծո դուստրերի քանակը, որոնք հոչակում են այն կյանքն ու ազատությունը, որ Աստված դնում է նրանց սրտերում: Եվ արդյունքում այն, ինչն անհատների սրտում սկսվել էր իբրև շշնջոց, դառնում է միասնական աղաղակ: Ուղերձը դուրս է գալիս երկարատև լռության շրջանակներից:

> «Ինչ որ շշնջում եմ ձեր ականջին, աղաղակե՛ք
> կտուրներից, որ բոլորը լսեն» (Մատթեոս 10.27, NLT):

Հիսուսը սկզբում շշնջաց, ապա աշակերտներին կոչ արեց աղաղակել: Նա իմաստություն և գիտություն հաղորդեց աշակերտների նեղ շրջանակին, ապա հորդորեց բացահայտ հոչակել այն, ինչ ասվել էր ծածուկում:

Ես հավատում եմ, որ մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, որ Աստծո երեկվա շշնջոցները վաղվա աղաղակները կդառնան: Ես համոզված չեմ, որ մենք հասկանում ենք սրա կարևորությունը, սակայն զգում եմ, որ ձեզնից շատերն արդեն ականջ են դնում և լսում: Երբ ավելի մոտենաք Նրան, կզգաք, որ ինչ-որ բան է բարձրանում ձեր ներսում:

Աստծո շշնջոցն այնքան ահռելի է, որ կարող է նույնիսկ վախեցնել, այնքան առանձնահատուկ է, որ կարող է մեկուսացնել, այնքան հզոր է, որ երբ որևէ բան շարժման մեջ է դնում, այլևս անհնար է կանգնեցնել:

> «Որոտը թնդում և դղրդում է երկինքներում:
> Լսե՛ք. Աստված բարձրացնում է Իր ձայնը:
> Իր զորությամբ Նա հանդարտեցնում է ծովային փոթորիկները,
> Իր իմաստությամբ սանձում ծովային հրեշներին:
> Մեկ շնչով Նա մաքրում է երկինքը,

Մեկ մատով Նա կործանում է ծովային վիշապին:
Եվ սա ընդամենը սկիզբն է,
Միայն շշնջոցը՝ Նրա իշխանության:
Ինչ էինք անելու, եթե Նա *իսկապես*
բարձրացներ Իր ձայնը» (Հոբ 26.11-14, MSG):

Իսկապես՝ ի՞նչ էինք անելու... հաստատ կդողայինք: Սակայն նրանք, ովքեր ճանաչել և վստահել են շշնջոցին, չեն ընդդիմանա Նրա աղաղակին: Ինչ-որ բան մեր ներսում երկյուղով լսում է Նրա շշնջոցը, մինչ սպասում ենք, որ Նա բարձրացնի Իր ձայնը: Աստծո ամբողջ զորությունն ու իշխանությունը սկսում է գործել, երբ Նա շշնջում է: Նրա «շնչառությունը» մաքրում է երկինքը:

Երբ Աստված իմ աշխարհի մեջ սկսեց շշնջալ կյանք, ազատություն, հույս, ուժ, վայրիություն, արժեք և նույնիսկ գեղեցկություն, դա կարծես ընդլայնեց իմ մտահորիզոնը: Նա ինձ առաջարկեց ընդարձակվել այն դեպքում, երբ թվում էր, թե ինձ համար ընդարձակվելու կամ աճելու ոչ մի տեղ չկար:

Ես իմ վախը լավագույնս կարող եմ նկարագրել հետևյալ կերպ. դու լսում ես մի շշնջոց այն մասին, որ քո կյանքի համար կա ավելին, քան դու գիտես, և այն ամենը, ինչ դու ընդունել ես քո կյանքի համար, երբեք իրականում ճշմարիտ չի եղել: Այդ շշնջոցը հակասում է քո իմացածին:

Մինչդեռ շշնջոցը քեզ տանում է դեպի ծածուկ ու խորը մի վայր և քո ներսում դեռևս չարտահայտված փափագ է արթնացնում: Այն ավելի ճշմարիտ է հնչում, քան այն ամենը, ինչ լսել ես հեռուստատեսությամբ կամ կարդացել ես գրքերում ու ամսագրերում: Եվ այս շշուկով ասված հայտնության շնորհիվ դու այլևս նույնը չես: Հանկարծ, այլևս քեզ հարմարավետ չես զգում՝ գտնվելով այնպիսի վայրերում, շփվելով այնպիսի մարդկանց հետ և խոսելով այնպիսի թեմաների շուրջ, որոնցում անկաշկանդ ես եղել մեկ ամիս, մեկ շաբաթ կամ մեկ օր առաջ:

Երբ առաջին անգամ լսեցի Աստծո շշնջոցը, ահա թե ինչ կատարվեց ինձ հետ: Ես հասկացա, որ ինչ-որ առումով խզել եմ կապերս, բայց ոչ՝ ուխտս, այն բաների հետ, որոնց ծանոթ

էի: Ես կարծես զգացի, որ ընթացքից շեղվել եմ՝ գաղափար չունենալով, թե ինչպես էի հասնելու հաջորդ «նավահանգիստ»: Այն ամենը, ինչ նախկինում կայուն էր, այժմ անհաստատ, անորոշ և անհարմար էր թվում: Միակ հաստատուն բանն իմ կյանքում այն էր, որ ինչ-որ բան փոխվել էր, և ես երբեք նույնը չէի լինելու:

Այո՛, շշնջոցն ունի զորություն արագությամբ բաժանելու մեզ նրանից, ինչ գիտենք: Միգուցե ոմանք դա անվանեն հանկարծակի հայտնություն, իսկ մյուսներն էլ՝ արմատական փոփոխություն:

Ամեն անգամ, երբ փնտրում եմ Աստծուն, Նա պատասխանում է շշուկով:

> «Մոտեցի՛ր և շշնջա՛ քո պատասխանը. ես իսկապես
> Քո կարիքն ունեմ» (Սաղմոս 55.2, MSG):

Նրա պատասխանները կարող են որոշակի բաժանում պահանջել և ինչ-որ առումով անհարմար լինել: Այդ պատճառով, երբ մենք Աստծո շշնջոց ենք լսում, շատ կարևոր է, որ հանդարտվենք, ականջ դնենք և ընկալենք մեր ներսի շշնջոցը:

Լյուդվիգ վան Բեթհովենը գրել է. «Ձայնի տոները հնչում, որոտում և փոթորկում են իմ շուրջը, մինչև որ նրանց չեմ տեղադրում նոտաների մեջ»[1]: Իսկ ի՞նչ կլիներ, եթե նա չգրեր այն նոտաները, որ իր ներսում լսում էր: Մենք ոչ միայն կզրկվեինք նրա երաժշտությունից, այլև բաց կթողնեինք այն մտքերը, սերը, երազանքներն ու ներշնչանքները, որոնք մեր ներսում արթնանում են նրա սիմֆոնիաները լսելիս:

Երբ Աստծո շշնջոցն իմ ներսում մտքերի փոթորիկ կամ որոտմունք է արթնացնում, ես անհանգիստ եմ լինում, մինչև դրանք չեմ գրառում: Աստծո շշնջոցն արտահայտելու շատ միջոցներ կան. մեզնից ոմանք միգուցե այն գրի կառնեն, ոմանք կարտահայտեն երաժշտության մեջ: Մեկ ուրիշը կներկայացնի դրա բովանդակությունը ուղերձների, պիեսների կամ պատմությունների միջոցով: Իսկ մյուսները պատկերում են այդ շշնջոցը արվեստի և ճարտարապետության միջոցով՝ հաղորդելով դրան ձև և գործունեություն:

Մեթոդը կարևոր չէ, սակայն արձանագրելը կարևոր է:

ԼՍԵԼԻ ԴԱՐՁՐՈՒ ՇՇՆՋՈՑԸ

Բոլորս լսել ենք այս ասացվածքը. «Բարձրաձայն ապրիր», սակայն ես կցանկանայի ավելացնել՝ բարձրաձայն ապրիր այն, ինչը քո ներսում է:

Ռալֆ Ուալդո Էմերսոնն ասել է. «Մեզնից ոչ ոք երբևէ որևէ գերազանց կամ ազդեցիկ բան չի իրականացնի, եթե ականջ չդնի այն շշնջոցին, որը լսելի է միայն իր համար»[2]:

Սովորի՛ր լսել քեզ և քեզ համար. մի՛ խնդրիր ուրիշներին ասել քեզ այն, ինչը միայն դու կարող ես լսել: Այդպես անելով՝ դու իշխանություն կտաս նրանց այն բանի վրա, ինչն Աստված շշնջացել է քո սրտում: Պատվի՛ր այն, ինչ Աստված շշնջում է, և ժամանակ տրամադրի՛ր լսելու այն, ինչ Նա գերազանց կերպով փոխանցում է քեզ:

Մենք հաճախ մենակ ենք լինում, երբ շշնջոց ենք լսում: Սակայն մենք միակը չենք, ով շշնջոց է լսում. Աստված կամենում է խոսել նրանց հետ, ովքեր բավականաչափ լուռ են լսելու համար: Որպեսզի կարողանաս Սուրբ Հոգուն պարզ լսել և ընկալել Նրա խոսքերը, հարկավոր է ամեն բան թողնել և բավականաչափ լուռ մնալ: Երբ մենք ընկալենք այդ շշնջոցը, պատրաստ կլինենք այն ճանաչել նաև ուրիշների մեջ: Լուռ լսելու ժամանակաշրջանը կարող է մեզ համար անհարմար լինել, սակայն դա մի գործընթաց է, որով պիտի անցնենք, եթե ուզում ենք կրկին վերականգնել մեր կապը և ապահով «նավահանգիստ» հասնել:

Իմ մենակ մնալու և լսելու ժամանակաշրջանը մոտեցավ ավարտին 2006 թվականին, երբ ես մի քանի ուժեղ և բարի կանանց՝ Հելենի, Բոբիի, Լիզայի և Դեբորայի հետ Ֆիլիպիններում էի: Մենք եկել էինք տարբեր երկրներից, որպեսզի մասնակցեինք նոր ուսումնական դասընթացին, որն օգնեց կանանց ամբողջ աշխարհում հաստատվել և արժևորել իրենց:

Ես անտեղյակ էի, որ այդ կոնֆերանսի ընթացքում իմ ներսում արմատական փոփոխություն էր կատարվելու: Այս հանդիպումը փոխեց ոչ թե այն, ինչ ես ասում էի, այլ այն, թե ինչպես էի ասում: Ինձ համար հաճելի է հիշել, որ 2006 թվականի ավարտին իմ խոսքերն ավելի քիչ հարցեր և արդարացումներ էին պարունակում:

Կոնֆերանսից հետո ավելի մոտեցա Աստծո շշնջոցին: Նախքան այդ ես ներքին պայքարի մեջ էի և ինձ մեկուսացած ու միայնակ էի զգում:

Կոնֆերանսի ժամանակ ես խոսեցի առաջինը: Եվ երբ ավարտեցի, նստեցի և խորասուզվեցի մյուս կանանց քարոզած ուղերձների մեջ: Ամեն քարոզից հետո հոգնած ու թափառող հոգիս կյանքով էր լցվում: Կանանցից յուրաքանչյուրը կարծես արտաբերում էր իմ շշնջոցներն ու գաղտնիքները՝ խոսելով ամենայն պարզությամբ, զորությամբ, օծությամբ և բարությամբ: Ես չէի կարողանում զսպել արցունքներս, որոնք այտերովս հոսում և ջրում էին այն, ինչ չորացել էր իմ ներսում. իմ բուռն ցանկություններն ու հարցերն իրենց պատասխանն էին գտնում:

Վերջին հավաքույթից հետո մի քանի կանանց հետ վերադարձա հյուրանոց: Ես կմկմում էի՝ փորձելով բառերով արտահայտել այն, ինչ տեղի էր ունենում իմ ներսում:

- Բայց դրանք այն բաներն են, որոնց մասին դու գրում և խոսում ես,- ասաց Բոբին:

Նա ճիշտ էր, սակայն մինչև այդ ես չէի լսել, որ դրանք բարձրաձայն արձագանք ստանային: Տարիներ շարունակ ես զգացել էի, որ մենակ եմ և խոսում եմ բաներ, որոնք սահմանափակ տարածությունից այն կողմ չեն գնում: Ես կարողանում էի տեսնել դուրսը, սակայն չէի կարողանում դուրս գալ, մինչև որ ինչ-որ մեկը հանկարծ բացեց դռները և հրավիրեց ինձ ընդարձակ և բաց տարածք՝ լի լույսով ու խինդով:

Բոբին ոտքս շոյելով ասաց. «Դու այլևս մենակ չե՛ս»: Ես գլխով արեցի և երեխայի պես լաց եղա: Այդ գիշերն առանձնացավ մյուս գիշերներից: Եվ ես հասկացա, որ այլևս մեկուսացած չէի: Ես իսկապես դարձա այն քույրերից մեկը, ով պատրաստ էր միանալ իր եղբայրներին և միասին փոխել աշխարհը: Այնպիսի զորություն և ազատություն կա նրանում, երբ միանում ես ուրիշներին, որոնք լսել են այդ նույն շշնջոցը:

Միգուցե դու էլ ես վերապրել սա: Երբևէ զգացե՞լ ես, որ դու դրսից ներս ես նայում և հանկարծ հայտնաբերում ես, որ

դու էլ ես ներգրավված այդտեղ. դո՛ւստր, քո՛ւյր, մա՛յր և բարեկա՛մ, իմացի՛ր, որ դու պատկանելիություն ունես, և դու մենակ չես: Դու երբեք մենակ չես եղել, և քեզ նայում ու սիրով ընդունում են նրանք, ովքեր իրենց ներսում կրում են Աստծո շշնջոցը:

Դու չես ներգրավվել պարտավորությունից ելնելով. ամենևի՛ն: Դու ներգրավված ես, որովհետև պատկանում ես այն կանանց և տղամարդկանց խմբին, որոնք արթնանում և ոտքի են կանգնում Աստծո արքայության համար:

> «Բայց դուք պատկանելիություն ունեք. Սուրբը օծել է ձեզ, և բոլորդ գիտեք դա: Ես սա չեմ գրում, որպեսզի ասեմ ձեզ մի բան, որը չգիտեք, այլ՝ որ հաստատեմ այն ճշմարտությունը, որը դուք գիտեք, և հիշեցնեմ ձեզ, որ ճշմարտությունը սուտ չի ծնում» (Ա Հովհաննես 2.20,21, MSG):

Երբ հայտնաբերեցի, որ պատկանում եմ ինչ-որ հզոր բանի, դա ինձ համար մեծ նշանակություն ուներ: Չնայած նրան, որ ես ճանապարհորդում էի և ամեն շաբաթ խոսում էի հարյուրավոր կանանց հետ, ես հաճախ ինձ այցելուի պես էի զգում: Այդ իսկ պատճառով կարող եմ ասել, որ մշտապես այցելելը և երբեք չպատկանելը երբեմն մենակության զգացում են առաջացնում: Ուստի, եկեք հե՛նց հիմա լուծենք այս հարցը. դու այցելու չես, դու ընտանիքի անդամ ես: Երբ շատերը միաբանվում են, խոսքերը մեկ են դառնում, փոխհարաբերությունները ամրանում են, և ձայնն ուժգնանում է: Եվ այսպիսի շշնջոցը մեզ միանալու առաջարկ է անում:

Իսկ ի՞նչ կասեք աղաղակի մասին:

> «... Աղաղակ մի՛ հանեք, և ձեր ձայնը չլսվի, և ձեր բերանից մի խոսք դուրս չգա, մինչև այն օրը, որ ես ձեզ ասեմ, թե՝ աղաղակե՛ք, այն ժամանակ աղաղակե՛ք» (Հեսու 6.10):

Ժամանակ է հարկավոր, որպեսզի շշնջոցը վերածվի աղաղակի: Դուք հասկանո՞ւմ եք, որ այս երկրագնդի վրա մենք ապրում ենք ռազմավարական և վտանգավոր ժամանա-

կաշրջանում: Ինչպես որ Երիքովի հետ պատահեց, այնպես էլ Աստված գաղտնի կերպով շրջապատելու է որոշ «բերդեր», և ճիշտ ժամանակին, միասնական աղաղակով կործանելու է դրանք:

> «Որովհետև Ինքը՝ Տերը, հրամանով (անգլ.-ում՝ աղաղակով), հրեշտակապետի ձայնով և Աստծո փողով վայր կգա Երկնքից» (Ա Թեսաղոնիկեցիների 4.16):

Նրա ձայնից մահվան և կործանման իշխանությունը գետնին կտապալվի:

Իսրայելցիները յոթ անգամ պտտվեցին Երիքովի շուրջը, նախքան եկավ աղաղակելու զորությունը: Նույնպես էլ իմաստուն էգ առյուծները չեն մռնչում, մինչև վստահ չեն լինում իրենց դարանակալության մեջ: Եվ սա ոչ այդքան լսելի լինելու և աղաղակ բարձրացնելու հարց է, որքան ռազմավարական լինելու հարց: Մեզնից ոչ մեկը չպետք է հռչակի այն, ինչն անելու համար զորություն չունի:

Մենք չպետք է բոլոր շշնջոցները հասցնենք աղաղակի ուժգնության:

> «Ինչպես որ հղին ծնելուն
> մոտենալով՝ երկունքի մեջ
> տանջվում և աղաղակում է...» (Եսայի 26.17):

Տարիներ շարունակ մենք առանձին և խմբովի աղաղակել ենք մեր դժվարությունների համար: Սակայն մենք պատասխան կունենանք, երբ ջանք գործադրենք և պտուղ բերենք այն իրավիճակում, որում գտնվում ենք: Եկե՛ք չվախենանք ոչ մի ջանքից, մարդկանց նախապաշարմունքից և, նույնիսկ, ցավից, որպեսզի կարողանանք ուժեղ և կենսունակ դուստրերի սերունդ բարձրացնել:

ԵՐԲ ԱՂԱՂԱԿԸ ԴԱՌՆՈՒՄ Է ՄՌՆՉՈՑ

Յուրաքանչյուրը կարող է բղավել, սակայն ոչ բոլորը կարող են ճիշտ ժամանակին մռնչալ:

Այսպիսով, ի՞նչ է մռնչոցը: Մռնչոցը գերբարձր աղաղակ

չէ, այն, նախ և առաջ, համարձակ հռչակում է, որն անչափ կարևոր է և հաճախ՝ անհասկանալի: Բոլորս ունենք մռնչալու ներուժ, բայց՝ ոչ որպես անհատներ: Ես հավատում եմ, որ մարդկանց համար մռնչոցն ավելի քան մեկ ձայնի հավաքական արտահայտումն է: Նրանք այսպես բարձրաձայնում են իրենց հավատքը՝ հույս տալով մարդկանց և դրսևորելով Աստծո սերը:

Ոմանք միգուցե հիշում են 1970-ական թվականների երգչուհիներից մեկի՝ Հելեն Ռեդիի երգի հետևյալ խոսքերը. «Ես կին եմ, լսե՛ք, թե ինչպես եմ մռնչում»: Խնդրում եմ, հասկացե՛ք ինձ, ես չեմ առաջարկում, որ միայն կանայք մռնչան, ո՛չ էլ խրախուսում եմ կանանց՝ մռնչալ տղամարդկանց վրա, կամ էլ տղամարդիկ մռնչան կանանց վրա: Ես հավատում եմ, որ ժամանակն է՝ բարձրացնենք մեր ձայները և մռնչանք միասին:

Նույնիսկ հիմա հոգուս մեջ լսում եմ այս խոսքերը. «Պատրաստե՛ք ձեր անձերը՝ դուստրեր, որովհետև ձեր միասնական աղաղակը կարող է մռնչոց դառնալ, որը կբարձրանա երկրից և դուռ կբացի երկնային մատակարարման համար»: Ինչպես Ուինսթոն Չերչիլն է ասել. «Ես առյուծ չէի, սակայն ինձ վրա դրվեց մռնչալու պարտականությունը»:

Նմանապես և մենք առյուծ չենք, սակայն մեզ վրա է դրվել մեր Առյուծի մռնչոցը լսելի դարձնելու պարտականությունը: Հիսուսն է Քրիստոսը և Հուդայի ցեղի Առյուծը, իսկ մենք Նրա հետևորդներն ենք, որոնք լսելի են դարձնում Նրա մռնչոցը: Ի՞նչն է ստիպում մեր Առյուծ Արքային մռնչալ: Ես հավատում եմ, որ պատասխանները կբացահայտվեն այն ժամանակ, երբ կուսումնասիրենք, թե վայրի բնության մեջ ինչն է ստիպում արու և էգ առյուծներին մռնչալ:

Չնայած այս երկու խոշոր կատուներն էլ մռնչում են, բայց յուրաքանչյուրը մռնչում է տարբեր պատճառներով: Արու առյուծի մռնչալու առաջին պատճառն իր տարածքը պաշտպանելն է և հայտնելը, որ դա իրենն է: Երբ մութն ընկնում է, առյուծների առաջնորդը (կամ առաջնորդները) կանգնում է, գլուխը կախում, կրծքավանդակը ձգում և գիշերվա օդը ներս

է քաշում թոքեր: Հետո մռնչում է, և նրա ձայնն արձագանքում է ամբողջ տարածքով՝ հռչակելով. «Ես հզոր եմ, այստեղ եմ և արթուն եմ: Ես պատրաստ եմ պաշտպանելու իմ տարածքը և առյուծների խմբին նրանցից, ովքեր կհամարձակվեն մարտահրավեր նետել ինձ: Ես լուռ չեմ մնա, եթե որևէ մեկը փորձի գողանալ իմ էգ առյուծներին կամ ձագերին: Եվ այդ անպիտանները, որոնք մեր ընտանիքի մաս չեն կազմում, բաժին չեն ունենա մեր կերակուրից»:

Առյուծի մռնչոցը վախեցնում է բորենիներին: Նրա զորությունն ամենուրեք զգալի է դառնում և ստվերում դարան մտածներին զգուշացնում է, որ նրանց չի հանդուրժի, եթե իրեն անհանգստացնեն: Առյուծի մռնչոցը սարսափեցնում է նվաճողներին և պաշտպանում իր տարածքը:

Առյուծները նաև մռնչում են իրենց խմբի անդամների տեղն իմանալու համար: Մռնչալով՝ առյուծն ասում է. «Ահա՛ ես, դո՛ւ որտեղ ես»: Իսկ դրան հետևում է համապատասխան արու կամ էգ առյուծի մռնչոցը:

Բարձր և ուժեղ մռնչոցը շատ բան է հայտնում առյուծի առանձնահատկությունների մասին: Մռնչոցով որոշվում է նրա չափը, տարիքը և ֆիզիկական վիճակը: Ըստ էության, առյուծի մռնչոց՝ նշանակում է. «Ես գիտեմ, որ դու ինձ չես տեսնում, սակայն մի՞թե չես լսում կամ զգում այս մռնչոցը, տե՛ս, հանկարծ չշփոթվես»: Եվ ահա առյուծների մռնչոցի վերջին, կարևոր նշանակությունը. առյուծները մռնչում են, երբ նրանց բարկացնում են:

Երբ գրում եմ այս խոսքերը, չեմ կարողանում չմտածել, թե ինչպիսի նախանձավորությամբ էր Հիսուսը լցված Աստծո տան համար: Արդյո՞ք մենք նույնպիսի ջերմեռանդությամբ ենք լցված, որ կարողանանք խոնարհել մեր գլուխները, լցնել մեր կյանքերը և հռչակել, թե ով ենք մենք Նրա հետ ունեցած փոխհարաբերությունների շնորհիվ:

Այժմ տեսնենք, թե ի՞նչն է էգ առյուծին ստիպում մռնչալ:

Ինչպես արու առյուծը՝ նա նույնպես մռնչում է, որպեսզի պաշտպանի իր տարածքը, և հաստատի իր հարաբերությունները խմբի անդամների հետ: Նա մռնչում է, որպեսզի օգ-

նություն և պաշտպանություն խնդրի մյուս էգ առյուծներից և զգուշացնի թշնամու ներկայության մասին: Նա մռնչում է կորած կամ թափառող ձագերին կանչելու համար: Սակայն էգ առյուծի մռնչալու հիմնական պատճառը ձագերին պաշտպանելն է:

Սա լուսաբանելու համար մի մեջբերում կանեմ, որը վերցված է առյուծների մռնչոցի պատճառները հայտնաբերելու համար կատարված երկամյա ուսումնասիրությունից:

> «Պարզվում է, որ էգ առյուծները միախմբվելով՝ կարողանում են ոչ միայն լավ պաշտպանել իրենց ձագերին այն արուներից, որոնք սպանում են իրենց կորյուններին, այլև միասին մռնչալով նվազեցնում են այդ բախումների հավանականությունը»[3]:

Էգ առյուծները հիմնականում միասին են մռնչում, որովհետև միայն մեկ առյուծի մռնչոցը կարող է խմբին չպատկանող առյուծի կողմից ընդունվել որպես զուգավորվելու հրավեր: Եվ կա մի բան, որի համար էգ առյուծները չեն ուզում մռնչալ: Նրանք չեն ցանկանում մռնչալ՝ մեկ այլ արուի հրապուրելու համար, որը կսպանի իրենց կորյուններին և կլինի խմբի առաջնորդ: Խորամանկ առյուծը հաճախ սպանում է կորյուններին, որպեսզի էգ առյուծները ցանկանան շուտ զուգավորվել նրա հետ (ձագեր մեծացնելու ժամանակ էգ առյուծները չեն զուգավորվում): Սա հնարավորություն է տալիս արուին ավելի արագ հաստատել իր ժառանգությունը:

Պատմության ընթացքում «բիհեյվիորիստները» (20-րդ դարի ուղղություն՝ ամերիկյան հոգեբանության մեջ, որը դիտարկում էր մարդու վարքը՝ որպես ֆիզիոլոգիական հակազդեցությունների խումբ արտաքին ազդակներին) համոզված էին, որ էգ առյուծները միասին են ապրում հիմնականում այն պատճառով, որ կարողանում են ավելի լավ որս անել: Այժմ նրանք հարցականի տակ են դնում նախկին ուսումնասիրության եզրակացությունները և հավատում են, որ առաջին պատճառը, որ էգ առյուծները մնում են ազգակցական խմբում, ձագերի պաշտպանությունն է, իսկ երկրորդ պատ-

ճառը նրանց որսորդական ջանքերի համակարգումն է:

Երբ կարդացի, որ առյուծների խմբակային մռնչոցի պատճառն իրենց ձագերի սպանությունը կանխելն է, գրեթե լաց եղա: Ուսումնասիրությունը ցույց էր տվել, որ երեք առյուծներից բաղկացած խումբը, որ միասին մռնչում է, բավական է կորյունների սպանությունը կանխելու համար[4]:

Ի՞նչ է սա մեզ ասում:

> «Եվ եթե մեկը նրան բռնություն անի,
> երկուսը նրա դեմ կկանգնեն, և երեքպատիկ թելը
> շուտով չի կտրվի» (Ժողովող 4.12):

Եթե էգ առյուծները գիտեն, որ իրենց ձագերն ապահով չեն, երբ նրանք առանձնացած են մյուս էգ առյուծներից, ապա ինչո՞ւ ենք մենք փորձում այդպես անկախ լինել: Մենք միասին կարող ենք պաշտպանել փոքրերին մահից և կործանումից, բայց մեկուսացած լինելով՝ չունենք այդ հնարավորությունը:

> Երբեք մի՛ հավատացեք, որ մի քանի հոգատար մարդիկ չեն կարող փոխել աշխարհը: Որովհետև, իրականում, հենց նրանք են փոխել աշխարհը:
> – ՄԱՐԳԱՐԻՏ ՄԻԴ

Այս հանգամանքը հաշվի առնելով՝ ինչո՞ւ ենք մենք վախենում ընդունել, որ մեկս մյուսի կարիքն ունենք: Մեզ հարկավոր չէ ներգրավել բազմությանը. մենք պարզապես մի քանի հոգատար, սրտացավ մարդկանց կարիք ունենք, որոնց միջոցով կփոխենք աշխարհը:

ԱՂՈԹՔԻ ՄՌՆՉՈՑՆԵՐ

Միայն ազգակցական էգ առյուծներն են համարձակվում խիզախորեն մռնչալ: Նրանք գիտեն, որ ոչ միայն իրենց քույրերի ձայնի կարիքն ունեն, այլև՝ նրանց պաշտպանության:

Այսպիսով, ինչո՞ւ պետք է մենք՝ Աստծո առյուծ դուստրերս, մռնչանք:

Մենք բարձրացնում ենք մեր ձայնը Աստծո հզոր տիրապետությունը և մեր հավատարմությունը հռչակելու համար:

Մենք մոնչում ենք՝ կորածներին կանչելու համար: Մեր ձայնը երիտասարդներին և մոլորվածներին ապահով տուն է ուղեկցում: Մենք ցնցում ենք մթնոլորտը, որպեսզի բացահայտենք ոտնձգություն անողներին, թշնամիներին և գողերին: Մենք միասին մոնչոց ենք արձակում՝ մեր երիտասարդներին մահից ու կործանումից պաշտպանելու համար. մենք խավարի դեմ լուռ չենք կանգնի:

Վերոնշյալ պատճառներից ավելի լավը չեմ կարող գտնել, և հիմա նույնիսկ բարկացած եմ, որ այսքան երկար ժամանակ մենք լուռ ենք մնացել: Մենք ոչ մի իրավունք չունեինք լռելու, երբ մեզ հանձնարարվել էր խոսել նրանց համար, ովքեր ձայն չունեն: Մենք վերջին ժամանակներում ենք ապրում. խավարն անվերահսկելի է դարձել, մինչ մենք քնած էինք: Իսկ այժմ, երբ արթուն ենք, պետք է աղոթենք, որ Աստված բազմապատկի մեր ջանքերը՝ Նրա լույսը տարածելու համար: Աղոթքը՝ միասին հավաքվելու մեր ամենահզոր պատճառն է: Այս պատերազմը մղելու համար մենք երկնքի պաշտպանության, իմաստության և ռազմավարությունների կարիքն ունենք:

Հիսուսն ասաց. «Սիրի՛ր քո Տեր Աստծուն քո ամբողջ ջերմեռանդությամբ, աղոթքով և մտավոր կարողությամբ» (Մատթեոս 22.37, MSG):

Ահա երեք օժանդակ միջոց, որոնցով կարող ենք մեր ձայնը մինչև մոնչոցի մակարդակ բարձրացնել. ջերմեռանդություն, աղոթք և մտավոր կարողություն: Երբ նվիրաբերում ենք մեր կյանքի այս երեք բնագավառները, դրանք միահյուսվում են, և արդյունքում մենք սիրում ենք Աստծուն մեր ջերմեռանդ ու խելամիտ աղոթքներով:

Մենք սկսում ենք փոքրից և հետո հավատում ավելի մեծին: Աստված խոստանում է ներկա լինել այնտեղ, որտեղ երկու կամ ավելի մարդ հավաքվում է Նրա անունով. աղոթքը ճանապարհ է հարթում մատակարարման, նպատակի և ռազմավարությունների համար: Առյուծ քո՛յր, ես համոզված եմ, որ դու կարող ես գտնել երկու կին, որոնք կաղոթեն քեզ հետ... նույնիսկ եթե դա հեռախոսով լինի:

Երբ մենք արթնանանք, միասին հավաքվենք և բարձրաց-

նենք մեր ձայները, այդ ժամանակ թող Աստված երեք հոգանոց խմբերն արագ բազմապատկի և դարձնի երեսուն հոգանոց խմբեր: Հետո թող այդ երեսուն քույրերը տասնապատիկ ավելանան և դառնան երեք հարյուր: Թող այդ երեք հարյուրը բազմապատկվի և դառնա երեք հազար, ապա՝ երեսուն հազար, և այսպես շարունակ, մինչև որ մենք դառնանք մի բանակ, որի աղոթքները երկրից բարձրանում են երկինք՝ որպես հզոր մի մռնչոց: Ժամանակն է, որ մենք արձագանքենք մեր Առյուծի մռնչոցին:

Արթնացե՛ք, ինչպես առյուծներ՝ նիրհից,
Քանակներով անպարտելի:
Ցողի պես թա՛փ տվեք շղթաները ձեր,
Որ կապել էին ձեզ քնած ժամանակ.
Դուք շատ եք, նրանք՝ քիչ:

- Պերսի Բիշի Շելլի[5]

Կի՛ն առյուծ, բարձրացրո՛ւ քո ձայնը:

Նշումներ

Chapter 2: A Force Unseen

1. Nicholas D. Kristof and Sheryl WuDunn, Half the Sky: Turning

Oppression Opportunity for Women Worldwide (New York: Knopf, 2009), xx.

2. Kristof and WuDunn, Half the Sky, xx.

3. Kristof and WuDunn, Half the Sky, xxi.

4. Kristof and WuDunn, Half the Sky, 250.

Chapter 3: Dangerously Awake

1. Nicholas D. Kristof and Sheryl Wuduun, *Half the sky: Turning Oppression into Opportunity for Women Worldwide (New York: Knopf, 2009), xviii.*

Chapter 6: Under the Same Mission

1. Lisa Bevere, *Fight Like a Girl: The Power of Being a Woman* (New York: Warner Faith, 2006) 42.

2. Sue Monk Kidd, *The Dance of the Dissident Daughter: A Woman's Journey from Christian Tradition to the Scared Feminine* (New York: HarperCollins, 1996), 27.

3. Marianne Willamson, *A Woman's Worth* (New York: Random

House, 1993), 20.

4. Williamson, A Woman's Worth, 21.

5. Williamson, A Woman's Worth, 21.

6. "What's Your Quotation Quotient?" *Monterey County Herald,May 4, 2010*, www.montereyherald.com /entertainment /

ci_14961372.

Chapter 8: Lonessess Are Strategic

1. Random House Webster's College Dictionary, s.v. "prowess."

2. Margaret Mead, ThinkExist.com, http://thinkexist.com / quotation/ sister_is_probably_the_most_competitive/12512.html.

3. Lisa Bevere, N*urture: Give and Get What You Need to Flourish* (New York: Hachette, 2008), 57.

Chapter 10: Walking with a Lion

1. C.S. Lewis, *Prince Caspian: The Return to Narnia (New York*:

HarperCollins, 1979), 131-32.

2. Lewis. *Prince Caspian*, *149*

3. Lewis, *Prince Caspian, 150*.

4. Alan Axelrod Elizabeth I, CEO: *Strategic Lessons from the Leader Who Built an Empire (Paramus, NJ: Prentice Hall, 2000)*, 6.

5. Axelrod, Elizabeth I, CEO, 250.

6. Axelrod, Elizabeth I, CEO, 83-85

Chapter 11: From a Whisper to a Roar

1. Ludwig van Beethoven, ThinkExist.com,http:/thinkexist.com/ quotes/ludwig_van_beethoven_/2.html.

2. Ralph Waldo Emerson, ThinkExist.com, http://thinkexist.com/ quotation/none_of_us_will_ever_accoplish_anything/223531 .html.

3. Jon Grinnell, "The Lion's Roar: More Than Just Hot Air," *Zoogoer*, May_June 1997,http: //natioanlzoo,si.edu/ Publications / ZooGoer/ 1997 /3/lionsroar.cfm.

4. Grinnell, "The Lion's Roar."

5. Percy Bysshe Shelley, *The Mask of Anarchy*, Art of Europe, www.artofeurope.com/shelley/she5.htm.

ԱՆԿՈՏՐՈՒՄ՝ ԻՆՉՊԵՍ ԱԴԱՄԱՆԴԸ

Գտնել ճշմարտությունը կարծիքների աշխարհում

Այսօր, ավելի քան երբևէ, մենք պետք է անկոտրում պահպանենք մեր սերը և ճշմարտությունը: Աստված Սեր է: Աստված Ճշմարտություն է: Եվ սերը, և՛ ճշմարտությունն անժամանակյա են և վեր են մերօրյա միտումներից ու կարծիքներից: Երբեմն մեծագույն սերը, որը կարող ենք ցուցաբերել, ճշմարտությունը խոսելն է, սակայն ճշմարտությունը խոսելը սկսվում է ճշմարտությամբ ապրելուց:

Օգտվելով Սուրբ գրքից և օգտագործելով մի շարք պատմություններ՝ հանրաճանաչ հեղինակ Լիզա Բիվերը սովորեցնում է ոչ միայն բնակվել Աստծո անսասան ճշմարտության և սիրո մեջ, այլև դառնալ անկոտրում մարդ՝ ով հաստատակամ է, աներեր և նպատակաուղղված:

Աստծո ծրագիրն ի հայտ է գալիս, երբ մենք բնակվում ենք Նրանում: Նրանում է, որ կերտվում և ձևավորվում ենք: Բնակվելով Քրիստոսի մեջ, Ով մեր Անկյունաքարն է, մենք դառնում ենք անկոտրում անձնավորություն:

Հասանելի է MessengerX.com կայքում

ԹՐԵՐ ԿՐՈՂ ԿԱՆԱՅՔ

Ինչպես հերոսաբար կրեք ձեր խաչը

Եթե երբևէ եղել է ժամանակ, որ կանայք պետք է զինված լինեն, ապա հիմա՛ է: Աշխարհով մեկ նրանք նախապաշարմունքների, թրաֆիքինգի, բռնության և նույնիսկ սեռասպանության թիրախներ են: Լիզա Բիվերը գրում է, որ այս հարձակումներն ավելի շատ ցույց են տալիս, թե ինչպիսին կարող են կանայք լինել ապագայում, քան՝ թե ինչպիսին են նրանք եղել անցյալում: «Թրեր կրող կանայք» գրքում նա ցույց է տալիս, որ մեր հոգևոր թշնամին ձգտում է զինաթափել կանանց՝ բոլոր կողմերից: Ժամանակն է, որ կանայք դառնան այնպիսի հերոսուհիներ, ինչպիսին Աստված ստեղծել է նրանց, և զբաղեցնեն իրենց դիրքը՝ լինելով խիզախ, զանազանող, ներող և իմաստուն:

Հասանելի է MessengerX.com կայքում

MessengerX

Աշակերտական ընթացք յուրաքանչյուրի համար, ամենուր



- **Անվճար ավելի քան 120 լեզուներով**
- Հասանելի որպես հավելված և առցանց
- Նյութեր՝ նախատեսված ձեր աճի համար
- Հետևե՛ք ձեր դիտումներին և աշակերտական ուղուն

Ստացե՛ք «Messenger»-ի աշակերտական նյութերի ամբողջական դարանը՝ էլեկտրոնային գրքեր, աուդիո գրքեր, կարճամետրաժ ֆիլմեր, վիդեո ուսուցումներ, Աստվածաշնչեր և ավելին. դիտե՛ք, կարդացե՛ք և լսե՛ք ձեր բոլոր սարքերով:



MessengerX.com

Download on the App Store

GET IT ON Google Play

Հասանելի է աշխարհով մեկ «App Store»-ում և «Google Play»-ում

Արթնացի՛ր

Երբ Էգ առյուծը արթնանում է իր նիրհից, այդ ժամանակ ականատես ենք լինում ուժի, ջերմեռանդության և գեղեցկության վեհաշուք պատկերի: Միայն նրա ներկայությունը բավական է բնաշխարհին տիրելու, ձագերին պաշտպանելու և արու առյուծին զորացնելու համար: Էգ առյուծները գործում են խմբերով և դառնում ստեղծագործական ու ռազմավարական մի ուժ, որը պատրաստ է փոխել շրջապատող աշխարհը, իսկ այդ ուժի հետ հնարավոր չէ հաշվի չնստել:

Դու նույնպես կին առյուծ ես

«Երբ արթնանում են կին առյուծները» գրքի հեղինակ և քարոզիչ Լիզա Բիվերը ներկայացնում է էգ առյուծի կյանքն ու նկարագիրը՝ որպես կնոջ վայրագ և քնքուշ օրինակ: Խոսելով այս զարմանահրաշ արարածի ապշեցուցիչ առանձնահատկությունների մասին՝ Լիզան մարտահրավեր է նետում կանանց, որպեսզի նրանք իրենց մեջ հայտնաբերեն ջերմեռանդություն, վարպետություն և կյանքի նպատակ:

Իմացի՛ր, թե ինչ է նշանակում.

- ունենալ ուժի ապշեցուցիչ դրսևորում,
- վայրագ կերպով պաշտպանել փոքրերին,
- ձայն բարձրացնել ձայն չունեցողների համար,
- ապրել լույսի մեջ և որս անել խավարում,
- բարձրացնել խմբակային մռնչոց, որը փոխում է ամեն բան:

Էգ առյուծների մասին բնությունից վերցված նշանակալից գիտելիքներով և խորը աստվածաշնչյան վկայակոչումներով հագեցած այս գիրքը կոչ է անում կանանց՝ զորությամբ վեր կենալու և փոխելու իրենց աշխարհը:

Մենք Նրա կին առյուծներն ենք, որ պետք է վեր կենանք:

Ջերմեռանդ, դիպուկ, ընկալելի, հզոր, զվարճալի. սրանք այն խոսքերն են, որ նկարագրում են Լիզա Բիվերին, ով միջազգային քարոզիչ է, հանրաճանաչ հեղինակ և ավելի քան երկու հարյուր տասնվեց երկրներում հեռարձակվող «Մեսինջեր» հեռուստահաղորդման համահաղորդավար:

Իր թափանցիկ ոճով Լիզան կիսում է Աստծո Խոսքը՝ այն միահյուսելով անձնական վերապրումներով և մարդկանց կյանքում ազատություն ու վերափոխում բերելով: Լիզայի սիրտը ցավում է սոցիալական անարդարության համար և, որպես փոփոխության ջատագով, նա կոչ է անում մյուսներին՝ պատասխան լինել աշխարհի սարսափելի խնդիրներին:

Անվճար ներբեռնումների և հոսքային հեռարձակման համար այցելեք **MessengerX.com**

MessengerX

MESSENGER INTERNATIONAL
MessengerInternational.org

Այս գիրքը նվեր է Հեղինակից
և ՎԱՃԱՌՔԻ ԵՆԹԱԿԱ ՉԷ

Ցանկանում եք ավելի՞ն:
Տեսնեք դեպ ներսը

© 2024 Messenger International